




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Երբեք

2015
Ս. Էջմիածին



ՆՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԻ

ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

«Էջմիածին»

կրօնագիտական-հայագիտական հանդես

Խմբագրակազմ

Գլխավոր խմբագիր՝ Արշակ Մադոյեան

Խմբագիրներ՝

Ռսկան քահանայ Յովհաննիսեան, Արմինէ Պօղոսեան, Արփինէ Չանթիկեան

Տեխնիկական խմբագիր՝

Անգելինա Ալեքսանեան

Լեզուադասական խմբագիր՝ Վազգէն Սաֆարեան

Խմբագրական խորհուրդ

Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեան (Ֆրանսիա), Անուշաւան Եպիսկոպոս Ժամկոչեան (Երեւանի պեպրական համալսարան, Աստրուածաբանութեան ֆակուլտետ), Գէորգ Եպիսկոպոս Սարոյեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գանիէլ վարդապետ Ֆնտրգեան (ԱՄՆ Նայոն Արեւելեան թեմ), Շահէ վարդապետ Անանեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Զաքարիա վարդապետ Բաղդումեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գարեգին արեղայ Նամբարձումեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Նրաչ սարկաւազ Սարգիսեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գէորգ Տէր-Վարդանեան (Մաշտոցի անուան Մարկեմադարան, Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գոհար Յարութիւնեան-Թումա (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Պեպրոս Յովհաննիսեան (Երեւանի պեպրական համալսարան, Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Անահիտ Աւագեան (Գէորգեան հոգեւոր ճեմարան (աստրուածաբանական համալսարան), Գոհար Մուրադեան (Մաշտոցի անուան Մարկեմադարան), Ազատ Բողոյեան («Վաչէ և Թամար Մանուկեան Մարկեմադարան», ՆՂ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ), Ալեքսան Յակոբեան (ՆՂ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ), Միհր Նաւոյեան (Երեւանի պեպրական կոնսերւատորիա), Աննա Արեւշապեան (Երեւանի պեպրական կոնսերւատորիա), Արամ Մարտիրոսեան (Ֆրանսիա, Փարիզ-Նանսերի համալսարան), Իգարէլ Էօթէ (Ֆրանսիա, Մոնպելիէի համալսարան), Աննա Շիրինեան (Իտալիա, Բոլոնիայի համալսարան)

“Etchmiadzin”

Religious-Armenological Review

Editorial staff

Editor in chief - **Arshak Madoyan**

Editors


Fr. Voskan Hovhannisyan, Armine Poghosyan, Arpine Chantikyan

Technical editor - **Angelina Aleksanyan**

Linguistic-stylistic editor - **Vasken Safaryan**

Editorial Council

Bishop Vahan Hovannisian (*France*), **Bishop Anushavan Zhamkochyan** (*Yerevan State University, Faculty of Theology*), **Bishop Kevork Saroyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Daniel Findikyan** (*USA, Eastern Armenian Diocese*), **Archimandrite Shahe Ananyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Archimandrite Zakaria Baghumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Rev. Fr. Karekin Hambardzumyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Deacon Hratch Sarkissian** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gevorg Ter-Vardanyan** (*Matenadaran, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gohar Harutiunyan-Thomas** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Petros Hovhannisyan** (*Yerevan State University, Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Anahit Avagyan** (*Kevorkian Theological Seminary (Theological University)*), **Gohar Muradyan** (*Matenadaran, Yerevan*), **Azat Bozoyan** (*“Vatche and Tamar Manoukian Library”, Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Alexan Hakobyan** (*Institute of Oriental Studies, National Academy of Sciences of the Republic of Armenia*), **Mher Navoyan** (*Yerevan State Conservatory*), **Anna Arevshatyan** (*Yerevan State Conservatory*), **Aram Martirosian** (*France, University of Paris-Nanterre (Université Paris-Nanterre)*), **Isabel Augé** (*France, University of Montpellier (Université Paul Valéry-Montpellier)*), **Anna Sirinian** (*Italy, University of Bologna (Università di Bologna)*)



ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔԻ ՓՈԽԱՐԷՆ

ԱՊՐԻԼ 24-Ը ՆԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ ԱՐԵԱՆ ՄԿԻՆՆ Է

*«Մարդ բարի ի բարի գանձուց սրտի
խրոյ բղիւէ գրարի, եւ մարդ չար
ի չարէն բղիւէ գճար...»
(Մալք. ԺԲ. 35):*

Աւետարանական վերոնշեալ Համարի ընդմէջէն մեր Տէրը կը յիշեցնէ մարդ-արարածին երկու Հիմնական ճշմարտութիւններ, թէ բարիի ու չարի ակունքը մարդուն սիրտն է, այսինքն՝ իր կամեցողութիւնն է, եւ թէ բարին ու չարը յաւիտենապէս պայքարի մէջ են:

Եկեք նկարագրենք, թէ ինչպէս բարին ու չարը դրսեւորուեցան Հայ Ժողովուրդին Հասարակական կեանքին մէջ, թէ ինչպէս Հայը խրոխտութեամբ դիմագրաւեց չարին ու յաղթական դուրս եկաւ՝ նուիրաբերելով իր ամբողջը Ազգիս զոհասեղանին վրայ:

Այս տարի՝ 2015-ին, Մայր Հայաստանէն սկսեալ մինչեւ անծայրածիր մասերը աշխարհին, ուր Հայու սիրտ մը կը տրոփէ, պիտի նշուի տխուր յիշատակը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի, զի մեր ոսոխները՝ Օսմանեան կայսրութեան գաղանաբարոյ ղեկավարները, մահուան մանգաղը սանձաբաժակ թողուցին Արեւմտեան Հայաստանի մեր ազգաբնակչութեան վրայ, որոնք կ'աշխատէին, կը ստեղծագործէին, կը սորվէին եւ կը պաշտէին իրենց իսկ Հողերուն վրայ... Հող, որ եղած էր մերը չորս Հազար տարիներէ ի վեր, Հող, որը շինած ու շէնցուցած էր Հայ Ժողովուրդի Հանճարը դարեր շարունակ, Հող, որը Հերկած եւ բարեբեր դարձուցած էր Հայ գիւղացին իր «Հորովէր»-ով, սրբազան Հող, որուն Հետ մեզի պսակած

Էր Հայոց Հայրիկն իր «Պապիկ եւ թոռնիկ» բարեխօսական գիրքով, որը Հրատարակուեցաւ 1894-ին, եւ որուն մէջ Խրիմեան Կաթողիկոսը կը յորդորէ մեզի՝ յետագայ սերունդներուն Հայկազեան ազգիս, սա նուիրական եւ Հայրենասիրական պատգամով: «Ես կը թողում Ձեզ մեր Հայրենի ժառանգութիւն, դաշտեր ու Հողեր... թէ մենիմ, երթամ գերեզման, եւ այլեւս չկարեմ խօսիլ Ձեզ Հետ կենդանի բարբառով ու գրով, ահա կը թողեմ Ձեզ գիրս իբրեւ մշտախօս կտակ ու յիշատակ, որուն միակ նպատակն է, որ Հայն իր Հայրենաստուր Հողէն չը բաժնուի... Այսպէս, թոռնիկ, Հողն պէտք է կենաց եւ մահու օր, սորա Համար Պապիկն զքեզ Հողին Հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկէս զՀողն, չը թողուս, որ ուրիշներ ձեռքէդ յափշտակեն, գու անհող մնաս»: Եւ այս Սրբազան Հողն էր՝ չորս Հազար տարիներու պատմութիւն ունեցող Արեւմտեան Հայաստանը, որ պարտադրուած բռնագրաւումով Հայ Ժողովուրդը կորսնցուց իր նուիրական կառույցներով եւ երկու միլիոն ազգաբնակչութեամբ:

Այսօր, երբ ազգովին կանգնած ենք զանազան մարտահրաւերներու դիմաց, ունկնդիր ըլլալով Հայ մեծաց գարերու խորերէն մեզի Հասած կոչերուն՝ այսօրուաններս՝ 100-ամեակի ներկայ սերունդը, ինչպէ՞ս պարտի ընթանալ ազգային կեանքի ուղիներով Ապրիլ 24-ի Հրայրքը ունենալով որպէս խթանիչ ուժ եւ առհասարակաց գալիք յաղթութեանց, զի մեր օրերու Հայ Ժողովուրդը այլեւս 100 տարիներու Հեռաւորութենէն կը դիտէ Հայոց ցեղասպանութեան սահմակեցուցիչ եղելութիւնը: Ի՞նչ աւանդ պիտի թողունք մեր տեղը եկող պատանիին եւ պարմանուհիին, երիտասարդին ու երիտասարդուհիին: Նոր սերունդը ինչպէ՞ս պիտի վերարժեւորէ իրեն դիմաց բացուող միւս էջը՝ Ցեղասպանութեան 100-ամեակին իրարայայտորդ տարիներուն Հայուն լինելութեան կերպը:

Մեր կարծիքով Ապրիլ 24-ը պէտք է վերածուի կողմնացոյցի, որով երիտասարդութիւնը կը կարողանայ կողմնորոշուիլ դէպի Հայոց ապագան՝ բարի գործերով յաղթահարելու չարը՝ ըլլալով եւ մնալով պարկեշտ, շինարար ու քաջարի քրիստոնէայ Հայեր:

Ապրիլ 24-ը՝ Հայոց պատմութեան տխրագոյն էջերէն մէկը, կը Հրաւիրէ այսօր Հասակ նետող երիտասարդութեան ունենալու:

Առաջին՝ լաւ յիշողութիւն Հայոց պատմութեան սրտաճմլիկ պաշերու նկատմամբ: Ըլլալ ու մնալ Հարազատ մեր նախնիներու թողած աւանդին՝ իր բազմազան երեւներով ու գրաւորումներով: Ազգի մը Համար կենսական է պաշտօնաւոր ամուր կապն իր արմատներուն Հետ՝ երբէք չմոռնալ մեր Հարազատ աւանդութիւնը:

Երկրորդ՝ զարգացնել կարողութիւնը մեր ներկան ճշգրտապէս ըմբռնելու այս աշխարհի յարափոփոխ քաղաքական միճակներուն դիմաց, որոնք բոլորն ալ կը միտին մահացու Հարուած Հասցնել Համրանքով փոքր ազգերու գոյութեան: Նկատի ունիմ, այսպէս կոչուած, «աշխարհայնացում» միշտապէս, որը ցայտուն Հոմանիշն է մշտական կերպով շարունակող սպիտակ ջարդի: Յաղթահարելու Համար այսպիսի չարիքը Հարկ է մեր զաւակները զինել Հայրենասնուէր ուսմամբ՝ ապագան

ճշգրտապես դիտելու եւ մեր ազգին շահերն ուղիղ վերծանելու կարողութեամբ: Այլ խօսքով՝ ո՛ր է մեր ժողովուրդն այսօր աշխարհի թատերաբեմին վրայ եւ ի՞նչ վտանգներ կը սպառնան իր լինելութեան՝ որպէս ինքնուրոյն ազգութիւն իր իւրայատուկ ու վաւերական մշակոյթով:

Երրորդ՝ ի՞նչ է Հայ ժողովուրդի ապագան: Այս կ'ենթադրէ ոնենալ քաջութիւն, ըլլալ շրջաՀայեաց եւ ցուցաբերել խոհեմութիւն, մեր ազգին դիմաց ծառացած վտանգները կշռադատելու եւ չեղըացնելու Հմտութիւն. այլապէս կույ կ'երթանք մեծ պետութեանց գաղտնի ծրագիրներուն եւ դաւերուն: Ո՛ր էն եւ որո՞ն Հետ էն մեր շահերը թէ՛ որպէս Հայրենիք, թէ՛ որպէս ազգութիւն եւ թէ՛ որպէս փոքրամասնութիւն: Դիտելու այսօրն ու կերտելու մեր Հիմնորոշ ապագան՝ կարիք ունինք Հայոց պատմութեան թափանցող աչքերուն, որը մեր ընթացումի ուղեցոյցն է:

Ուրիշ ազգեր մեզի կ'արժեւորեն մեր ցուցաբերած կեցուածքին Համեմատ, որն անցաւ նաՀատակութեան արիւնոտ ճամփաներէն: Մենք ցոյց տուինք արար աշխարհին, թէ ինչ եղանակով ապրեցանք աստուածատուր մեր կեանքը, թէ ինչպէս ստեղծագործեցինք, զարգացուցինք մեզի վիճակուած անկիւնը, թէ ինչ վստահութեամբ կերտեցինք մեր բնաշխարհը, մեր Հայաստանը, եւ երբ պատմութեան մէկ դժբախտ ու սեւ պաՀուն յոշոտուեցանք, եաթաղանուեցանք եւ եղանք ցան ու ցրիւ, գիտցանք՝ ինչպէս ի մի գալ՝ կերտելու մեր բուռ մը Հայաստանը եւ շէնացնելու մեզի վիճակուած Սփիւռքը: Այո՛, Հայ Սփիւռքի մէջ կերտեցինք Հոգեւոր Հայրենիք մը՝ Մայրենի Եկեղեցիով ու զանազան ազգախնամ՝ կառուցներով, որոնք ապացոյց մըն էն մեր արարող ժողովուրդի կենսունակութեան եւ յանձնելու խիզախումին:

Հայոց սիրագործութեամբ վիշտի Հայրենիքը եղաւ յոյսի Հայրենիք, որն իր Հերթին մեր ժողովուրդի առողջ բնազդներու պրկումով եղաւ ու կը մնայ լոյսի Հայրենիք՝ ի՛ր Արարատով, ի՛ր Արցախով եւ ի՛ր ափիւռքեան իրականութեամբ:

Այսպիսի խիզախումներէ ծնած էն, կը ծնին ու պիտի ծնին Հայ ազգի սուրբերը:

Այս պահուն, երբ կը յիշատակենք մեր մարտիրոսներու զոհաբերումը, չենք կրնար չյիշել այլ քրիստոնէաներու նաՀատակները, որոնք սպանուեցան թուրքերու ձեռամբ, ինչպիսիք եղան ասորիները, ասորեստանցիները, քաղդէացիները եւ Պոնտոսի յոյները: Թուրքին վայրագութիւնը երբեւիցէ սաՀման չէ ունեցած:

Հայոց ցեղապանութեան տարիներուն շարք մը եւրոպացի ու ամերիկացի անձնաւորութիւններ, իրենց Հեղիկանաւոր ձայնը բարոյապէս բարձրացնելով, սատար Հանդիսացան, եւ ուրիշներ օգնութեան ձեռք մեկնեցին մարտիրոսացած, աքսորուած ու վտարանդի դարձած Հայութեան: Որպէս երախտապարտութեան շնորհք ունեցող ժողովուրդ՝ մեր պարտականութիւնն է յիշել քանի մը անուններ. Պենեդիկտոս ԺԵ. Պապը, Ամերիկայի դեսպան Հենրի Մորկընթաւ (Sr. Henry Morgenthau), գերմանացի Արմին Վեգները (Armin Wegner), ով Հարիւրաւոր լուսանկարներով ապացուցեց Թուրքիոյ իրականացրած ցեղապանութիւնը, նորվեգացի բուժքոյր Պօւլ Պիորնը (Bodel Biorn), ով 1915-ին ականատես եղաւ

Մուշի՝ իր խնամած որբերու եւ Հայ Հոգեւորականներու սպանդին, ինք, որպէս կարող լուսանկարիչ, լուսանկարներով վկայեց թուրքերու վայրագութեանց մասին: Նորվեգացի Ֆրիտյոֆ Նանսենը (Fridtjof Nansen) թողած է գիտական-գրական ժառանգութիւն, որուն մէկ մասը կը զբաղի Հայ ժողովուրդի եւ Հայաստանի մասին զեկուցագրեր ու փաստաթուղթեր ներկայացնելով: Մեծ դեր կատարած է՝ նրա անունը կրող «Նանսենեան» անցագիրը, որուն շնորհիւ Հայեր կարողացան բնակիչ շարք մը երկիրներու մէջ: Հիճազի թագաւոր արաբազգի Հիւսէն Իպն Ալի եւ Հաշիմին, որու գրութեան շնորհիւ արաբ երկիրներ Հիւրընկալեցին Հայ ժողովուրդի բեկորները արաբական աշխարհի տարածքներուն միայ, յատկապէս՝ Սիրիա, Լիբանան, Յորդանան, Եգիպտոս եւ Իրաք:

Նաեւ յիշատակումի արժանի կը գտնենք անգլիացի Բենեամին Ուիթքըրին (Benjamin Whitaker), որը անցեալ տարւոյ յունիս ամսուն կնքեց իր մաշկանագուն՝ անցնելով միւս ափը կեանքին:

Անշափ է Տիար Ուիթքըրի վաստակը՝ Մեծ Եղեռնը Համարել տալու որպէս «Ցեղասպանութիւն» իր պատրաստած տեղեկագրի միջոցաւ, Հետեանքը եղաւ, որ Հայոց դէմ գործադրուած նախճիրը, Միացեալ ազգերու կազմակերպութեան (ՄԱԿ) յատուկ յանձնաժողովի որդեգրած չափանիշի Համեմատ, 1985-ի օգոստոս ամսուն ճանչուեցաւ որպէս «Ցեղասպանութիւն»: Ուստի, այս տարի ըլլալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը՝ է՛նաեւ 30-ամեակը ՄԱԿ-ի կողմէ Մեծ Եղեռնի ճանաչման:

Վստահաբար, շատ աւելի են անունները անոնց, որոնք Ցեղասպանութեան մովթ տարիներուն քաջութիւնն ունեցան կանգնելու Հայ եղեռնուած ժողովուրդի կողքին, եւ որոնց վեհանձնութիւնը Հայութեան Հաւաքական յիշողութեան մէջ մնացած է ցայսօր եւ միշտ պիտի պաշէ իր արժեքաւորութիւնը:

Այո՛, վերոնշեալ բոլոր անձինք նմանեցան մեր Տիրոջ բնորոշած այն մարդոց, որոնց սրտերու բարի գանձերէն բարիք Հորդեցաւ մերազն տարագրեալ զաւակաց նկատմամբ: Իսկ մեր դարաւոր ոստիները, բղխեցնելով չարիք, Համամարդկային պատմութեան էջերուն մէջ որակուեցան իբրեւ չար մարդիկ, որոնց կ'սպասէ տանջանք յաւիտենական:

Տ. ԱՒԱԳ ԱՐՔ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
Առաջնորդ Իրաքի Նայոց թեմի



**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍ-ՔԸ ՆՐԸՄ ԵՐԵՒԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԲԱՅՄԱՆ ԱՌԻԹՈՎ
(4 ապրիլի, 2015 թ., Երևան)**

Մեծարգո՝ Նախագահ ՆՇ, Տիար Սերժ Սարգսյան,
Մեծարգո՝ նախագահ ՆՐԸՄ, Տիար Պերճ Սեդրակյան,
Նարգելի՛ անդամներ ՆՐԸՄ,
Սիրելի՛ ներկաներ.

Սրբի անհուն բերկրանքով ողջունում եւ Նայրապետական Մեր օրինությունն ու շնորհավորանքն ենք բերում ամենքիդ: Օրը փոնական է, քանի որ ժամեր անց Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցու խորաններից պիտի ազդարարվի Նարության կենդանարար ու հոգեւորոգ ավերիսը: Ուրախ ենք նաեւ, որ այսօր քաղաքամայր Երևանում կատարվեց բացման արարողությունը ՆՐԸՄ գրասենյակի, որին իր բարձր մասնակցությամբ պատվում է ՆՇ նախագահ Տիար Սերժ Սարգսյանը:

Նայկական բարեգործական ընդհանուր միության մասին խոսելիս ամեն անգամ Մեր հոգին լցվում է հպարտության ու երախտագիտության զգացումներով: Անցնող ավելի քան մեկդարյա պատմության ընթացքում չափազանց ծանրակշիռ է Միության ներդրումը աշխարհասփյուռ հայության կյանքում: Միությունը հիմնադրվել է պարմական դժվարին ու ծանր մի ժամանակաշրջանում՝ նպատակ ունենալով նպաստելու մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային կյանքը զորացնելուն ու կարիքները հոգալուն: Սակայն Օսմանյան կայսրության իրագործած սարսափելի ոճրագործությունը՝ Նայոց ցեղասպանությունը, սրիպեց, որ Միությունը առաջնահերթ լծվի տոսկալի հալածանքների ենթարկված եւ փարբեր երկրներում ապաստանած արեւմտահայության փրկված բեկորների ինամբին ու հոգածությանը, կենսական պայմանների ապահովմանը:

Ժամանակի հետ ազգային-հայրենական կյանքում սրելոված նոր պայմաններում մեր ժողովրդի առջև ծառացան նոր մարտահրավերներ: Մենք գնահատանքով ենք անդրադառնում, որ ՆԲԸՄ երբեք կաղապարված չմնաց, այլ յուրաքանչյուր ժամանակաշրջանի մեջ համարժեքորեն արձագանքեց ազգային մեր կյանքի մարտահրավերներին՝ որպես շարժառիթ ու գործունեության գլխավոր ազդակ ունենալով մերձավորի հանդեպ սիրո փրկունավանդ պարզամբ:

Մեր ժողովրդի նորագույն պարսության ամենակարևոր իրադարձությունը եղավ Նայասարանի անկախացումը: Նայկական բարեգործական ընդհանուր միությունն անկախությունը հրավեր դարձրեց՝ Նայասարանում իր առաքելությունը նոր թափով և առավել մեծ ծավալով շարունակելու համար: Ակնառու է ահռելի այն ջանադիր աշխատանքը, որ այդ փարիներին իրականացվեց ՆԲԸՄ կողմից՝ նախագահությամբ մեծագնիվ Տիկին Լուիզ Սիմոն Մանուկյանի, ով հավատարիմ մեծանուն իր ծնողի՝ Ալեք Մանուկյանի ավանդած ազգասիրությանն ու հայրենասիրությանը, կարողացավ առավել ամուր ու կայուն կապեր սրելով Նայրենիքի և Սփյուռքի միջև: Նայկական բարեգործական ընդհանուր միությունը Մայր հայրենիքում ամբողջապես լծվեց նորանկախ մեր երկրի հզորացման մեջ ներդրում բերելու անգնահատելի գործին: 2002 թվականից ՆԲԸՄ նախագահի բարձր պաշտոնն սրանձնեց մեծարգո Տիար Պերճ Մեղրակյանը, ով բոլորանվեր ջանադրությամբ շարունակեց առաջնորդել Միության աշխատանքները՝ ի խնդիր աշխարհասփյուռ մեր ժողովրդի, մեր Սուրբ Եկեղեցու, հայրենի մեր երկրի գորացման ու առաջընթացի: Գոհունակություն է Մեզ համար հասարակել, որ այսօր ևս Միությունը, պարվարժան իր նախագահի հմուտ ղեկավարությամբ, մշտապես ուշադրության կենտրոնում է պահում ազգանպաստ այն ծրագրերն ու նախաձեռնությունները, որոնցով շարունակում է ներկա մնալ մեր երկրի կրթության ու գիտության, մշակույթի ու արվեստի, սպորտի ու առողջապահության, հայրենի երկրի պաշտպանության և բազում այլ կարևոր ոլորտներում: Բարեգործականը մշտապես գորակից է նաև մեր Եկեղեցու՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը՝ արդյունավետ իրագործելու համար ողջ հայության հոգևոր խնամքը, քաջարթուն ու պայծառ պահելու ազգային և եկեղեցական մեր անդասարանը: Մենք մշտապես զգացել ենք Նայկական բարեգործական ընդհանուր միության որդիական նվիրումն ու ջերմ վերաբերմունքը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ:

Միքելիներ, երեսնյան սքանչելի այս նոր կենտրոնի բացումը ուղղակիորեն վկայում է ՆԲԸՄ հայաստանյան ծրագրերի շարունակական լինելու մասին: Վստահ ենք, որ քաղաքամայր Երևանում վեր հառնած գեղեցկակառույց այս նոր շենքի հովանու ներքո առավել հաջողությամբ պիտի ընթանան Միության հայրենաշեն ծրագրերի կազմակերպման ու համակարգման աշխատանքները: Այս պահին առանձնակի գոհունակությամբ Նայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ենք բերում մեծարգո Տիար Նազար Նազարյանին, իր

ազնիվ Տիկնոջն ու զավակներին, որոնց ազնիվ նվիրաբերությամբ կյանքի կոչվեց Միության երեսանյան կենտրոնի կառուցումը: Նավարավոր մեր ժողովորդին քաջածանոթ է անունը Նազարյան ընտանիքի, որը մշտապես աստվածահաճո քարերը ձեռնարկներով իր կարեւոր ներդրումն է բերել ազգային-եկեղեցական մեր կյանքի շինությանն ու պայծառությանը:

Այս փոռական օրվա առիթով վերստին շնորհավորելով՝ Մեր օրհնության եւ գնահատանքի խոսքն ենք բերում Նայկական բարեգործական ընդհանուր միության նախագահին ու իր ազնիվ Տիկնոջը, Կենտրոնական վարչության անդամներին, ինչպես եւ Միության՝ աշխարհի չորս կողմերում ազգօգուտ գործունեություն ծավալող բոլոր մասնաճյուղերի ղեկավարներին ու ջանասեր անդամներին, որոնք հայրենասիրության ու ազգասիրության զգացումներն իրենց սրբերում՝ նախանձախնդիր են Միության առաքելության իրականացմանը:

Ի սրբեւ Մեր աղոթքն է, որ Բարձրյալ Աստված պահի ու պահպանի ՆԲԸՄ երախտավորներին, կյանքի քաջառողջ, արեւշող բազում օրեր շնորհի ամենքիդ, բոլոր բարի գործերը եւ ձեռնարկները պսակի հաջողություններով:

«Առաւել յերուք ի գործ Տեառն յամենայն ժամ, գիտասցիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58):

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

(ապրիլի 5, 2015 թ., Սուրբ Էջմիածին)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այսօր հրեշտակք յերկնից իջեալ
տան զաւետիս մարդկան.
յարեաւ խաչեալն եւ յարոյց
զձեզ ընդ ինքնեան»
(Շարական):

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր ի Հայրենիս եւ ի Սփյուռս,

Քրիստոսի հրաշափառ Հարության ուրախությունն է վերստին թելածում մեր հոգիներում: Բերկրում ենք յուղաբեր կանանց նման, ովքեր թափուր տեսան Փրկչի գերեզմանը եւ հրեշտակներից լսեցին Նրա Հարության ավետիսը: Յնծում ենք վերնատանը հավաքված առաքյալների եւ Էմմավուսի ճամփորդների պես, որոնց հարուցյալ Տերը երեւաց եւ փարատեց նրանց տարակույսներն ու արտամոյթւոյնը: Հարության լույսի շողերով այլեւս լուսավորված է խավարյալ երկինքը, թողափված են խաչելության վիշտն ու տխրությունը: Բացված է դրախտը, խորտակված է դժոխքը, պարտված է մահը, եւ հաղթանակած՝ կյանքը:

Քրիստոս՝ Փրկիչ մեր Տերը, խաչի վրա Իր գոհագործությամբ եւ հրաշափառ հարությամբ մարդկության համար դարձավ փրկության պատարագ, որ բաշխվում է ամենուր՝ հավատքով ընդունողներին: Տերունական անգին փրկագործությունը երկնից արքայությունը ժառանգելու շնորհին է արժանացնում հավատացյալ հոգիներին, ինչպես եւ շարականագիրն ասում է. «Յարեաւ խաչեալն եւ յարոյց զձեզ ընդ ինքեան»:

Մեր ժողովրդի ընթացքը պատմության հոլովոյթներում հաճախ եղավ նմանություն Քրիստոսին: Հաճախ չարչարանաց Գողգոթա բարձրացանք, խաչակից եղանք Տիրոջը եւ Նրա հարության հավատքով հարություն առանք: Տիրոջ շնորհով մեր ժողովուրդը հաղթահարեց իր դեմ մոլեգնած դավերն ու ավերները, հալածանքներն ու կոտորածները, վառ պահեց հույսն իր վերածննդի, իր ապահով ու լուսավոր կյանքի:

Քրիստոսի Սուրբ Հարության լուսապայծառ տոնի այս հիասքանչ օրը աղոթում ենք նաեւ Յեղասպանության մեր նահատակների համար: Մեկ դար առաջ էր, երբ մեր ժողովրդի զավակները հայ եւ քրիստոնյա լինելու համար անկուր տառապանքներով Յեղասպանության ենթարկվեցին: Նրանք նահատակության պատկան ընդունեցին՝ առաքյալի խոսքի ճշմարտությունն ունենալով իրենց սրտում. «Եթէ մեր այս հողեղէն տունը, որ մեր մարմինն է, աւերուի, Աստծուց շինուած անձեռակերտ յաւիտենական տուն ունենք երկնքում» (Բ. Կորնթ. Ե. 1): Աշխարհին, ողջ մարդկությանը մեր ժողովուրդն իր նահատակությամբ եւ հարուցյալ կյանքով վկայեց հարության հրաշքի ճշմարտությունը: Եղանք խաչյալ, եղանք վշտահալած, բայց ո՛չ հուսահատ, վիրավոր, բայց ո՛չ տկար, աշխարհասփյուռ, բայց ո՛չ անհայրենիք: Կորուսյալ հայրենիքի սերը սրտում՝ մեր ժողովուրդը պատմական Հայաստանի արեւելյան հատվածում վերակերտած պետականության ներքո եւ Սփյուռքի համայնքներում նոր կյանք վերընձյուղեց՝ հավաստելով, որ իր կենաց ծառը՝ հավատքի անսասան վեմին արմատացյալ, կենսատու գործությամբ պտղաբերում է եւ ազգն ու հայրենիքը շենացնող զավակներ ծնում:

Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման համար մեկ դար պայքարեցինք եւ շարունակում ենք պայքարել՝ արդարության հաղթանակի հավատով: Աշխարհը երբեմն լսեց մեզ, երբեմն անտեսեց, որովհետեւ միշտ չէ, որ ունկնդիր է եւ հավատարիմ Քրիստոսի բերած խաղաղության եւ մարդկանց մեջ հաճության պատգամին, ի հետեւանա որի՝ մարդկության նորագույն պատմությունը կրկին մթազնեց նոր ցեղասպանությունների եւ պատերազմների խավարով: Այսօր եւս մարդկային կյանքն ալեկոծվում է հակամարտություններով ու արյունահեղություններով: Մարդկության օրրան Երկիր մոլորակի վրա տենչալի խաղաղությունը եւ համընդհանուր հաճությունն ու համերաշխությունը տակավին մնում են որպէս չիրականացված երազանք: «Աստուած մահ չի ստեղծել, եւ Նա չի ուրախանում ողջերի կորստեան համար», - ուսուցանում է աստվածաշնչյան իմաստությունը (Իմաստ. Ա. 13): Ավելին՝ խաչյալ եւ հարուցյալ Իր Միածին Որդու միջոցով Աստված պարգեւել է շնորհը մահվանից հաճնելու, որը պարտավորեցնում է ազգերին եւ պետություններին միասնական ու միահամուռ կամք դրսեւորել՝ կանխելու համար մարդկության խաղաղությունն ու բարօրությունը վտանգող սպառնալիքները, առավել նախանձախնդիր լինելու արդարության ու ճշմարտության հաստատման, եղեմնագործությունների համընդհանուր դատապարտման գործում, այլապէս աշխարհի չարաղետ ընթացքները պիտի շարունակեն առաջնորդել դեպի նոր ողբերգություններ: Մարդկությունը պարտք ունի սրբելու աշխարհում ծովացող արցունքը, լուսավոր մանկություն երագող որբ ու կարոտյալ երեխաների անօգնական հայացքների, լաց ու ճիչի առջեւ լռեցնելու որոտները մահաբեր զենքերի, արմատախիլ անելու աղքա-

տության չարիքը: Խաչելությունն աշխարհում պետք է հաղթահարվի եւ փոխարինվի հարությամբ:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, այսօր, երբ ունկնդիր ենք «Յարեալ խաչեալն եւ յարոյց զձեզ ընդ ինքեան» ավետիսին, քաջալերվենք հոգով, ապրենք որպես Քրիստոսի հետ մահից վեր հառնած ժողովուրդ, Քրիստոսին հավատարիմ եւ հարության գործությունն ունեցող ժողովուրդ: Դիմագրավենք մեր կյանքի մարտահրավերները եւ նեղությունների ու դժվարությունների չարչարանաց մեր խաչը ծաղկյալ դարձնենք բոլորանվեր մեր ջանքերով, հայրենամկրտումի, ազգամկրտումի նոր գործերով: Ազգային, պետական, հասարակական մեր կյանքը, հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանը շենացնենք «զի Աստուած ընդ մեզ է» աներկբա հավատով եւ քայլենք դեպի վերելքի նոր հորիզոններ, դեպի հաղթանակը մեր արդար դատի:

Քրիստոսի Սուրբ Հարության տոնի խնդությունը Մեր հոգում՝ Մեր բարեմաղթանքներն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նվիրապետական աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին, Քույր եկեղեցիների շնորհագարդ հոգեւոր Պետերին:

Մեր Տիրոջ հրաշափառ Հարության ավետիսով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության նախագահ Տիար Սերժ Սարգսյանին եւ առաջին Տիկնոջը, ողջույն ենք հղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն՝ մաղթելով արգասալի ծառայություն եւ նոր ձեռքբերումներ՝ հանուն մեր երկրի հզորության, մեր ժողովրդի բարօրության ու առաջընթացի: Մեր բարեմաղթանքները եւ օրհնությունն ենք բերում այստեղ ներկա Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Տիար Պերճ Սեդրակյանին եւ Միության անդամներին, ովքեր հայրենիքում անցկացնում են ՀԲԸՄ տարեկան համագումարը: Սուրբ Հարության ավետիսով Մեր օրհնությունն ենք բերում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով գործոց հաջողություն՝ ի խնդիր մեր երկրների բարեկամության ամրապնդման եւ գործակցության գորացման:

Քրիստոսի Հարության տոնի առիթով շնորհավորում ենք հավատավոր Մեր զավակներին ի սփյուռս աշխարհի եւ մեր Սուրբ Եկեղեցու ուխտյալ սպասավորներին՝ բերելով Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը, հայցելով գորակցությունն ու ամենառատ շնորհները հարուցյալ մեր Փրկչի:

Աղոթում ենք, որ Ամենակալ Աստված Իր անսահման ողորմության ներքո պահպանի աշխարհը համայն, գորացնի մարդկանց սրտերում խաղաղության, արդարության եւ ճշմարտության հոգին, օրհնի ապահով ու երջանիկ կյանք կառուցելու մարդկային ջանքերը: Մեր հայցն ենք բարձրացնում երկինք, որ Տերը խաղաղ պահի մեր հայրենիքը, հավատքով պայծառ եւ ոգով արի՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդին, Իր կենարար շնորհներով առաջնորդի՝ ընթանալու դեպի կյանքի լուսավոր հորիզոններ:

Թող հարուցյալ Տիրոջ սերը եւ խաղաղությունը լինեն մեզ հետ՝ այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԲ Ի ՄԵՌԵԼՈՅ
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՏԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**
(7 ապրիլի, 2015 թ.)

Նամայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Սուրբ Աստվածածնի Ավերման փոնի կապակցությամբ Նայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ու շնորհավորում բոլոր փիկնանց եւ օրիորդներին, մայրերին ու մայրության բերկրանքին ապաստող կանանց:

Սուրբ Աստվածածնի բարի օրինակով՝ հոգևոր ու բարոյական բարձր արժեքներով, սիրասուն մեր մայրերն ու քույրերը կրթում, մեծացնում են աստվածասեր եւ հայրենասեր զավակներ, նվիրական ու ազնիվ ջանքեր բերում հայրենի մեր երկրի, ազգային-եկեղեցական մեր կյանքի առաջընթացին եւ պայծառությանը: Մայրությանը նվիրված այս փոնը գեղեցիկ առիթ է բոլոր զավակների համար՝ երախտալից սրբով վերստին նորոգելու մայրերի հանդեպ իրենց սերն ու նվիրումը, անշեղորեն քայլելու մայրական խրատներով զարդարված եւ լուսավորված ճանապարհներով, քանզի սուրբգրային խոսքի համաձայն՝ մոր խրատն ու պարվիրանը շնորհի պսակ են մարդու գլխին եւ ոսկի մանյակ՝ պարանոցին:

Սիրելի՛ մայրեր եւ քույրեր, ի խորոց սրբի Մեր աղոթքն է, որ Սուրբ Տիրամոր բարեխոսությամբ երկնավոր մեր Նայրն Իր ամենախնամ Աջի հովանու ներքո պահի ու պահպանի ձեզ, ձեր ընտանիքներին ու զավակներին՝ պարգևելով խաղաղ կյանքի բարօր ու երջանիկ երկար օրեր:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՆԵԱՊՈԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՏՐԱՆ
ՎԵՐԱԲԱՅՄԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ
ՏԱՐԵԼԻՑԻՆ ՁՈՆՎԱԾ ԽԱՉՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

(11 ապրիլի, 2015 թ., Նեապոլ)

Մեծարգո՝ Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,
Հոգեւոր Տեր,
Ձերդ Գերազանցություն հարգարժան կարդինալ,
Մեծարգո՝ նախագահ Կամպանիա նահանգի,
Նեապոլի մեծարգո՝ քաղաքապետ,
Հայաստանից եւ Սփյուռքից ժամանած սիրելի՛ հայորդիներ
եւ բարեպա՛շտ ներկաներ.

Ուրախության զգացումով եմ պարտուված մեր հոգիները: Համախմբվել ենք Իտալիա հյուրընկալ երկրում՝ նվիրական այս կամարների ներքո, միասնական մեր աղոթքը երկինք բարձրացնելու եւ փառաբանելու մեր երկնավոր Հորը, որ շնորհն ընծայեց՝ կատարելու մեր հավատքի Հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի մատունքների վերագետեղման եւ Հայոց ցեղասպանության 100-ամյակի առթիվ կանգնեցված խաչքարի օրհնության արարողությունը:

Նշանալի այս նախաձեռնությունը արտահայտությունն է Հայ Եկեղեցու եւ Կաթոլիկ Եկեղեցու եղբայրական կապերի, հայ եւ իտալացի ժողովուրդների բարեկամության: Հինավուրց ավանդության համաձայն՝ միջնադարում Հայաստանից փոխադրվեցին ու Իտալիայի Նեապոլ քաղաքում հանգրվանեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի մատունքներից, որոնք հետագայում զետեղվեցին ի պատիվ Լուսավորչի կառուցված այս եկեղեցում, եւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Հայրապետը ճանաչվեց Նեապոլ քաղաքի հովանավոր սրբերից մեկը: Ահավասիկ, դարեր շարունակ Լուսավորչի մեր Հայրապետի մատունքներն օրհնություն են այս եկեղեցու հավատացելոց եւ ուխտավորների համար՝ մշտապես հիշեցնելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի ու նրա մեծ առաքելության մասին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Եթե մեկը կամենում է հետեւել Ինձ, թող ուրանայ իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ Իմ ետեւից» (Մատթ. ԺԶ. 24): Սուրբ Գրիգոր Լուսավորչի առաքելապատիվ Հայրապետը Քրիստոսի այս պատգամը աստվածային զորակցությամբ կյանքի կոչեց Հայոց աշխարհում

եւ իր չարչարանքներով ու հոգեւոր սխրանքներով պատմության մեջ հարթեց հաղթական ուղին քրիստոնեական լուսեղեն հավատքի, Հայաստանում՝ առաջինը աշխարհում, քրիստոնեությունը որպէս պետական կրոն հռչակելու: Լուսավորչահաստատ հավատքով գորացյալ մեր ժողովուրդը, ունենալով Հայր՝ Սուրբ Ավետարանը եւ Մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Տիրոջ պատվիրանին հավատարիմ՝ անշեղ ընթացալ պատմության մեջ՝ չարի դիմաց գործելով բարիք, դժվարություններին տոկալով համբերությամբ, փորձությունները վերածելով հնարավորության, հայրենի եզերքում եւ օտարության մեջ բարիքներ ստեղծելով իր ու համայն մարդկության համար, կերտելով «գրոյ իշատակի արժանի» հոգեւոր ու մշակութային հարուստ ժառանգություն:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայի եկեղեցում անցկացվող այս արարողությունը եւ Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված խաչքարի տեղադրումը հիշարժան իրադարձություն է մեր եկեղեցիների գործակցության եւ մեր ժողովուրդների բարեկամության պատմության մեջ: Հիշարժան է եւ նրանով, որ սրբազան այս արարողությանը ներկա են ՀՀ նախագահը եւ պետական այրեր, մեր հոգեւոր եղբայրները՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը եւ Հայ Կաթողիկէ Պատրիարքը, Հայաստանից եւ տարբեր երկրներից ժամանած բարեպաշտ հայորդիներ՝ գործարարներ, գիտության եւ մշակույթի գործիչներ: Այս խաչքարը մշտապես խոսուն վկան պիտի լինի Հայոց ցեղասպանության՝ որպէս հորդոր ցեղասպանության համընդհանուր դատապարտման եւ մարդկության դեմ նման ոճիրների կանխարգելման: Մեր ժողովուրդը երախտագետ է բարեկամ երկրներին, Քույր եկեղեցիներին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց, որոնք դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը:

Ձերդ Սրբազնություն, կարդինալ Կրեշենցիո Մեպե, Տիրոջ նախախնամությամբ Դուք առաջնորդության եք կոչված նվիրական մի վայրում, ուր մշտավառ է հիշատակը Հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի: Մեր մաղթանքն է, որ Ամենակալ Տերն Իր գորավոր Աջով հովանի ու գորակից լինի Ձեզ, քաջառողջ կյանքի երկար տարիներ պարգեւի Ձեզ եւ Ձեզ լծակից ուխտապահ հոգեւորականներին ու արդյունավորի Ձեր առաքելությունը նորանոր ձեռքբերումներով՝ ի նպաստ մեր երկկողմ հարաբերությունների զորացման ու մեր ժողովուրդների բարեկամության ամրապնդման:

Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Կամպանիայի նահանգային եւ Նեապոլի քաղաքային իշխանություններին, նաեւ՝ Նեապոլի Սուրբ Գրիգոր հայի եկեղեցու հովանու ներքո բնակվող եւ այստեղ պահվող սրբությունների առջեւ հանապազ խնկարկող քույրերին: Հայցում ենք առաքելաշավիղ Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությունը բոլորիդ համար, նաեւ՝ մեր երկու ժողովուրդների ու եկեղեցիների, նրանց ուխտապահ սպասավորների համար:

Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիար Միքայել Մինասյանին՝ Նեապոլի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատրան նորոգության եւ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված խաչքարի զետեղման աստվածահաճո նախաձեռնության համար՝ մաղթելով արեւշատություն, նորանոր հաջողություններ դիվանագիտական առաքելության մեջ:

Աղոթում ենք, որ Աստված հանապազ օրհնի հավատավոր հայ եւ իտալացի քրիստոսասեր մեր ժողովուրդներին, ամրապնդի հարաբերություններն ու գործակցությունը Իտալիայի եւ Հայաստանի հանրապետությունների, պարգեւի խաղաղ ու լուսավոր առաջընթաց:

Թող մեր Տեր Հիսուս Զրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը լինեն մեզ հետ եւ ամենքի. ամեն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ
ԱՌԹՎ ՀՌՈՍԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

(12 ապրիլ, 2015 թ., Սուրբ Պետրոսի տաճար, Հռոմ)

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Ասածո ողորմած կամքով վերստին այցելել ենք Հռոմ: Եկել ենք Հայաստանի Հանրապետության նախագահ Տիգրան Սերժ Սարգսյանի, Մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասի եւ աշխարհասփյուռ հավատավոր Մեր զավակների ներկայացուցիչների հետ՝ Սուրբ Հարության խնդությունը մեր հոգում, քրիստոսավանդ սիրով եղբայրական Մեր ողջույնն ու բարեմաղթանքները բերելու Ձերդ Սրբությանը, մեր աղոթքներով մասնակից լինելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ Ձեր մատուցած Սրբազան Պատարագին՝ Սուրբ Պետրոսի տաճարում:

Մեր Քույր եկեղեցիների բարեկամությունը վկայող սրբազան այս արարողության ընթացքում, ի գոհունակություն Մեզ եւ մեր ժողովրդի, Հայ Եկեղեցու հայրերից Սուրբ Գրիգոր Նարեկացին Ձերդ Սրբության կողմից հռչակվեց Կաթողիկ Եկեղեցու սահմանումով՝ «Վարդապետ Եկեղեցու»: Աղոթաւոյց եւ տիեզերաւոյս Սուրբ Նարեկացին Ժ. դարում մարդկային բոլոր սերունդների ապաշխարության ու խոստովանության աղերսը՝ որպէս «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծոյ», երկինք բուրվաւեց: Սուրբ վանականը հայոց համար պաշտելի իր «շնչավոր մատյանով» քրիստոսաշնորհ փրկության ուղին ցույց տվեց «մեղավորներին ու արդարներին, վեհերին ու փոքրերին, բարիներին ու եղեռնագործներին» (Բան Գ.)՝ դեպի Աստված առաջնորդելով բոլոր ժամանակների հավատացյալներին:

Նարեկացի ծնած մեր ժողովուրդը քրիստոնեական հավատքի եւ ազգային ինքնության համար իր պատմության ընթացքում բազում արհավիրքներ է տեսել, փորձությունների դիմակայել: Մեկ դար առաջ Օսմանյան Թուրքիայում մեր ժողովրդի հանդեպ իրագործվեց ցեղասպանության ահռելի ոճիրը: Կանխատեսված ծրագրով, աննկարագրելի դաժանությամբ սպանվեցին մեկ եւ կէս միլիոն հայեր: Հինավուրց մեր ժողովուրդը արմատախիլ արվեց իր նվիրական բնօրրանից՝ պատմական հայրենիքից ու տարագիր սփռվեց տարբեր երկրներում: Ավերվեց, ոչնչացվեց, բռնազավթվեց քրիստոնեական մեր դարավոր ժառանգությունը: Ոչինչ, սակայն, ո՛չ տառապանք, ո՛չ հալածանք, ո՛չ

անգամ մահ՝ չսասանեց մեր ժողովրդին ու չհեռացրեց իր սուրբ հավատքից: Ազգովի նահատակության հոգեւոր սխարանքի ողջ մեծությունն է այսօր պատկերվում մեր առջեւ, որը դրսեւորեց մեր ժողովուրդը՝ կրկին հռչակելով դեռեւս Ե. դարում սահմանած իր ինքնության բանաձեւը, որ քրիստոնեությունն ունենք ոչ իբրեւ հանդերձ, այլ՝ իբրեւ մաշկի գույն (Եղիշե պատմիչ):

Աստծո գթառատ ողորմությամբ մեր ժողովուրդն ուղղել է եղեռնահար մեջքը, նոր կյանք վերընծյուղել Սփյուռքի համայնքներում եւ Հայաստանի արեւելյան հատվածում՝ վերականգնված պետականության հովանու ներքո: Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերտել է՝ դիմակայելով բազում գրկանքների ու դժվարությունների: Այսօր եւս մեր ժողովուրդն ապրում է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման մեջ, պայքարում Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ կյանքի համար եւ արդարության հաղթանակի հավատով շարունակում ջանքերը հանուն իր իրավունքների, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման եւ իր արդար պահանջատիրության:

Ժամանակին մարդկությունը չկարողացավ կանխել Հայոց ցեղասպանությունը, վերացնել դրա հետեւանքները եւ ականատեսը եղավ Հոլոքոստի, Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի եւ այլ ցեղասպանությունների: Այսօր էլ հակամարտությունների, պատերազմների, սահաբեկչությունների պատճառով մարդիկ ու ազգեր նեղության, կարոտության մեջ են, հալածվում եւ իրենց կյանքով են վճարում հավատքի համար: Մենք հավատացած ենք, որ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը՝ որպես արդարության իրագործման եւ իրավունքների հաստատման ազդեցիկ օրինակ, կնպաստի ապահով ու արդար աշխարհի կերտմանը: Այս իմաստով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը հրավեր է աշխարհին՝ անտարբեր չգտնվելու մարդկային տառապանքի ու նորօրյա նահատակությունների հանդեպ, գործադրելու առավել ջանքեր՝ դադարեցնելու եւ կանխելու համար մարդկության դեմ գործվող ոճիրները: Սա է այն պտուղը, որ պիտի աճի նահատակության արմատից:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով մատուցված այս Սրբազան Պատարագին՝ մեր նահատակների նվիրական հիշատակի առջեւ, Մենք երախտագետ զգացումով ենք անդրադառնում, որ Ձերդ Սրբության երանաշնորհ նախորդներից Բենեդիկտոս ԺԵ. Պապը բողոքի ձայն բարձրացրեց՝ ընդդեմ հայերի ցեղասպանության, իսկ Սուրբ Հովհաննես Պողոս Բ. Պապը Մեզ հետ, համատեղ հայտարարությամբ 2001 թվականին ճանաչել ու դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Այս առումով կարելի է նշանակություն ունի նաեւ Վատիկանի արխիվներում պահվող փաստաթղթերի հրապարակումը: Մեր ժողովուրդը շնորհակալությամբ է հիշում բոլոր նրանց, ովքեր ոչ միայն բարձրաձայնեցին Հայոց ցեղասպանության մասին եւ դա-

տապարտեցին, այլ նաեւ մարդասիրական առաքելություններ իրականացրին՝ խնամելով որբերին, ապաստան տալով վերապրածներին, օգնելով հաղթահարել բազմատեսակ դժվարությունները:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ապրիլի 23-ին՝ աղոթական մասնակցությամբ Քույր եկեղեցիների, այդ թվում՝ Ձերդ Սրբության ներկայացուցիչների, բարձրաստիճան հյուրերի ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բազմահազար զավակների, սրբադասվելու են «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» մարտիրոսության պսակն ընդունած մեր բյուրավոր նահատակները: Երկնային գորքերին միացած սուրբ նահատակների բարեխոսությունն ենք հայցելու, որ աստվածային խաղաղությունը հեղվի մարդկային կյանքին, եւ աշխարհում տեղ չգտնեն ցեղասպանության ողբերգությունները:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, միանգամայն կիսում ենք Ձեր միտքը, որ նահատակությունը հարանվանական տարբերություններ չի ճանաչում: Արդարեւ, նահատակները միավորում են մեզ որպես զավակներ ու ծառաներ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ համախմբվելու եւ միասնական ջանքեր գործադրելու՝ հանուն աշխարհում սիրո, արդարության, խաղաղության հաստատման, քաղաքակրթությունների ու կրոնների երկխոսության, որին կոչում է մեզ սուրբգրային պատգամը. «Հոգ տարեք միմյանց սիրո եւ բարի գործերի հորդորելով» (Եբր. Ժ. 24):

Թող Սուրբ Պետրոսի սրբազան այս տաճարում մեր սրտերից երկինք բարձրացող աղոթքն ու հայցը լսելի լինի երկնավոր մեր Հորը՝ օրհնելու եւ ճշմարիտ ուղիներով առաջնորդելու բոլոր ջանքերը, որ գործադրվում են հանուն երկրի վրա խաղաղության, մարդկության ապահով ու բարօր կյանքի: Աղոթում ենք Ձերդ Սրբության առողջության, Կաթոլիկ եկեղեցու պայծառության համար եւ Աստծո հովանին ու բարիքները հայցում ամենքիս Սուրբ Գրիգոր Նարեկացի տիեզերալույս վարդապետի սրտաբուխ խոսքով.

Իսկ Դո՛ւ, առ ամենայն հնարս զօրաւոր,

Մատո՛ր ինձ ոգի փրկութեան,

Աջ պաշտպանութեան,

ձեռն այցելութեան,

Հրաման բարութեան,

յոյս ողորմութեան,

Բան նորոգութեան,

պատճառ քաւութեան,

Գաւազան կենաց օգնութեան:

Ձի դու ես յոյս ապաւինութեան, Տէ՛ր Յիսուս Քրիստոս,

Օրհնեա՛լ ընդ Հօր, Հոգւովդ Սրբով
յաւիտեանս յաւիտենից: Ամէն (Բան ԾԹ.):

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՂՋՈՒՅՆԻ ԵՒ ՕՐՆՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻ ԱՌԻԹՈՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԸՆԴԴԵՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԳԼՈՒԲԱԼ ՖՈՐՈՒՄԻՆ**

(22 ապրիլի, 2015 թ., Երևան)

Մեծարգո՝ Նախագահ Նայասրանի Նանրապետության,

Սիրելի՛ հոգևոր եղբայրներ,

Նամաժողովի պատվարժա՛ն մասնակիցներ և հյուրեր.

Ողջունում ենք Ձեզ Նայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում կազմակերպված այս համաժողովի առիթով և բերում օրհնություն համայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Բազմաթիվ փորձություններ տեսած մեր ժողովրդի նորագույն պատմության ամենամռայլ և ողբերգական էջը Ի. դարասկզբին Օսմանյան Թուրքիայում ծրագրված ու իրագործված Նայոց ցեղասպանությունն է, որին զոհ գնացին շուրջ մեկ ու կես միլիոն հայորդիներ: Այսօր՝ 100 տարի անց, այդ ոճրագործությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է: Մի շարք պետությունների կողմից Նայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը՝ իբրև մարդկության դեմ գործված ծանրագույն հանցագործություն, վստահություն է ներշնչում Մեզ, որ այն պիտի սրանա համընդհանուր ճանաչում և արդար գնահատական:

Քիչ են դեպքերը, երբ մի պետություն, որ ցեղասպանություն է կազմակերպել, ճանաչում և ընդունում է իր հանցանքը: Այս առումով Գերմանիան կարող է օրինակ հանդիսանալ Թուրքիայի ներկա իշխանությունների և ցեղասպան այլ պետությունների համար:

Ցեղասպանության ժխտումը ոչ միայն ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավունքների, արժանապատվության ու արդարության ուրանհարում է, այլև խարխում է միջազգային իրավունքի և համընդհանուր բարոյականության հիմքերը, ծանր հարված հասցնում ազգերի ու ժողովուրդների հարաբերություններին և խաղաղ համակեցությանը:

Ժամանակին միջազգային հանրության կողմից ցեղասպանության հանցագործությունների անտեսումը, անդատապարտելի ու անպարիժ թողնելը, ինչպես և ժխտողականությունը պատճառ դարձան, որ շարունակվի եղեռնագործությունների շղթան: Նույն չարահնար մտածողությամբ, որով կազմակերպվե-

ցին հայերի սոսկալի, վայրագ ջարդերը, ծնունդ առան Հոլոքոստը, Ռուսոդայի, Դարժուրի ցեղասպանությունները:

Յեղասպանության ոճրագործության ժխտման եւ այն անպարիժ թողնելու համար մարդկությունը չափազանց մեծ գին է վճարում: Ժխտողականության հանդուրժումը անպարբեր է դարձնում մարդուն իր նմանի քառասպանքի հանդեպ եւ հանրության կյանքում լռեցնում բարոյական պարասխանավորության ձայնը՝ գրկելով նման սարսափի կրկնությունը կանխելու հանձնառությունից:

Մարդկությունը բարոյական պարավորություն ունի պայքարելու ընդդեմ ցեղասպանության հանցագործությունների: Բարոյականությունը, որ պիտի լինի հիմնամուր սյունը հասարակական կյանքի եւ պետությունների քաղաքականության, դժբախտաբար, այսօր հաճախ գոհաբերվում է աշխարհաքաղաքական շահերին: Նման հանցավոր դիրքորոշման ու վերաբերմունքի հեղուկացմանը ողբերգական են բազմաթիվ ժողովուրդների համար: Մեզ՝ հայերիս համար, դա մեր մեկ ու կես միլիոն հայրերի կյանքն էր, կորուսյալ մեր հայրենիքը, մասամբ ոչնչացված եւ մասամբ ոչնչացման վրանգին ենթակա մշակութային ժառանգությունը:

Այսօր մարդկությունն ականաբար է նոր ողբերգությունների աշխարհի քարքեր կողմնորոշ: Հազարավոր մարդիկ գոհ են դառնում ազգային-կրոնական անհանդուրժողականությանն ու ծայրահեղականությանը, մասնավորապես Մերձավոր Արեւելքի երկրներում, ինչպես վերջերս Լիբիայում՝ Ղապի եւ Եթովպիական Եկեղեցիների հավաքագյալներ: Անմեղ կյանքեր խողո եղեռնագործությունները, անկախ դրսևորման ձևերից ու եղանակներից, հանցագործություն են մարդկության դեմ եւ խաղաղության դարապարտելի: Դրանց դեմ պայքարը՝ իբրեւ դարի մարտահրավեր, պարտքն է յուրաքանչյուր ժողովրդի, պետության, միջազգային հանրության եւ կառույցի:

Առաքյալն ուսուցանում է, որ եթե մարմնի մի անդամը քառասպում է, մյուս անդամները եւս քառասպում են նրա հետ (հմմտ. Ա. Կորնթ. ԺԲ. 26): Հիրավի, այս վերջին հարյուր տարիների ընթացքում բազում պետություններ, ազգեր, եկեղեցիներ, կրոնական ու միջազգային կազմակերպություններ եւ անհատներ կիսել են հայ ժողովրդի ցավը, իրենց դիրքորոշմամբ նպաստել, որ արդարությունը հաղթանակի:

Մենք վերստին երախտագիտություն ենք հայրնում բոլոր այն անձանց, ազգերին, եկեղեցիներին եւ պետություններին, ովքեր ապաստան են տվել, ստորաբերել մեր ժողովրդի տարագիր զավակներին՝ վերակերտելու ազգային ու հոգևոր իրենց կյանքը, ինչպես նաեւ նրանց, ովքեր ճանաչել ու դարապարտել են Հայոց ցեղասպանությունը: Մեր երախտագիտությունն ենք հայրնում համաժողովի մասնակիցներիդ՝ Քույր եկեղեցիների հոգևոր Պետերիդ ու ներկայացուցիչներիդ, բարեկամ երկրների պետական այրերիդ, գիտության եւ մշակութի գործիչներիդ, բոլորին, ովքեր այս օրերին մեր ժողովրդի հետ են ու գովարժան

նպաստ են բերում Նայոց ցեղասպանության եւ մարդկության դեմ գործված բոլոր հանցագործությունների դապաւարարմանը:

Աղոթում ենք, որ Ամենակալ Աստված խաղաղության եւ բարօրության մեջ պահպանի համայն աշխարհը, որ ոչ մի ժողովուրդ այլեւս չապրի ցեղասպանության ողբերգությունը: Թող Տերը օրհնի մարդկանց եւ ազգերի միջեւ եղբայրության ու արդարության ճանապարհները. ամեն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ 100-ԸՆԴ ՏԱՐԵԼԻՅԻ
ԱՌԻԹՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԸՆԴԴԵՄ ՅԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԳԼՈՒԿԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻ
ԵՆԹԱԲԱԺՆԻ ՆԻՍՏԻ ԸՆԹԱՅՔԻՆ**

(22 ապրիլի, 2015 թ.)

Սիրելի՛ հոգևոր եղբայրներ ի Քրիստոս,

Փառք ենք մատուցում Բարձրյալ Տիրոջը այս համախմբման համար: Ասարծո կամքով մեկերեղվել ենք այսօր Նայոց ցեղասպանության 100-ամյակի ոգեկոչման առիթով՝ եղբայրական սիրով, աղոթքով ու համալսելու ջանքերով վկայելու և իրագործելու «զի ամենեքեան մի իցեն» (Յովհ. ԺԷ. 21) քրիստոսավանդ պարզամբ:

Ի. դարասկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից ծրագրվեց և գործադրվեց Ցեղասպանության հրեշավոր ոճրագործությունը. միլիոնավոր հայեր տեղահանվեցին իրենց հայրենի բնօրրանից և բնաջնջվեցին, իսկ շարերը բռնի հավաքափոխ եղան: Եղեռնագործությունների ալիքը չըջանցեց նաև Օսմանյան կայսրության ազգային ու կրոնական մյուս փոքրամասնություններին, ինչպես՝ եղբայրական հույն և ասորի ժողովուրդների զավակներին:

Սիրելի՛ հոգևոր եղբայրներ, Ձեր երկրներում՝ Տիրոջից Ձեր խնամքին հանձնված քրիստոսասեր հոյսի հետ կողք կողքի, հաղորդ Ձեր հոգսերին և ուրախություններին, այսօր ապրում, գործում են մեր ազգի բազմաթիվ զավակներ, ովքեր ժառանգներն են փրկված ու աշխարհով մեկ սփռված հայերի: Նրանք կենդանի վկաներն են Ցեղասպանության ահեղի ոճրագործության: Նրանք նաև մեր պարասխանն են ընդդեմ Ցեղասպանության ժխտողականության: Նավարարվոր Մեր ժողովրդի անունից երախարագիություն ենք հայրնում Ձեզ, որ Ձեր մշտական հայրական օրհնության ներքո հոգաբարություն ու սեր եք դրսևորում Մեր զավակների նկատմամբ:

Ձեզանից շարերը ժամանել են Մերձավոր Արևելքի երկրներից: Այսօր Ձեր երկրների սահմաններից ներս են հանգում Օսմանյան կայսրության անապարտներում սպանված հայորդիների աճյունները, որոնք Նայրության գրքի խոսքերով՝ դեռ սպասում են իրենց արդար վրեժի հարուցմանը (հմմտ. Նայր. Զ. 9-10): Մենք հավարում ենք, որ աշխարհում արդարությունը պիտի հասարարվի ամուր հիմքերի վրա՝ հանուն մարդկության բարօրության, խաղաղ ու համերաշխ կենցության:

Ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում ուղեկցվեց նաև մշակութային եղեռնով: Բազմաթիվ սրբավայրեր՝ եկեղեցիներ, վանքեր, մենաստաններ, հոգևոր ու մշակութային նվիրական արժեքներ անդառնալիորեն ոչնչացվեցին: Շարերդ առիթ ունեցել եք լինելու Թուրքիայում եւ այցելելու քրիստոնեական սրբավայրեր, որոնցից շարերդում այլևս աղոթք չի հնչում, որոնք խոնարհված են կամ միտումնավոր անուշադրության մարնված՝ ենթակա փլուզման:

Այսքանը սոսկ ուրվագծային պարկերն է Ի. դարասկզբի հրեշավոր ոճրագործության: Ցեղասպանությանը հաջորդած 100 տարիները ազգային մեր կյանքում եղան վեր հառնելու եւ մեր ժողովրդի նկատմամբ արդարությունն իրականացնելու պայքարի ճանապարհ: Միխրարություն է եղել մեր ազգի համար, երբ այդ դժվարին ճանապարհին մեզ գորակցություն են բերել քրիստոնեական մեծ ընտանիքի մեր եղբայրները, բարեսեր մարդիկ եւ ժողովուրդներ: Մենք միխրարություն ենք ապրել նաև, երբ զգացել ենք աջակցությունը քաղաքակիրթ եւ առաջադեմ մարդկության, երբ տարբեր երկրներ, կազմակերպություններ ու անհատներ ճանաչել եւ դարապարտել են Ի. դարասկզբի ոճրագործությունը:

Քրիստոսի Եկեղեցին փերունապարվեր առաքելություն ունի՝ ասրվածային կենարար խոսքի քարոզությամբ հաստատելու սեր, եղբայրություն եւ համերաշխություն, նպատարելու մարդկության դեմ հանցագործությունների չարիքի կանխարգելմանն ու հերետանքների վերացմանը: Ոճրագործությունները՝ լինեն մարդասպանություն, ահաբեկչություն, թե ցեղասպանություն, ուրնձգություն են ընդդեմ ասրվածային արարչագործության, ընդդեմ մարդկային կյանքի սրբության եւ արժանապարվության: Յանկացած ոճիր, եղեռնագործություն՝ իբրեւ Ասրծո եւ մարդու դեմ գործված մեղք, պերք է քավվի խոստովանությամբ, զղջմամբ ու հարուցմամբ: Եկեղեցին, որ առաջնորդվում է «ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 14) առաքելապարվեր պարզամով եւ հավարարին է Եկեղեցու հայրերի՝ «Միրիի մեղավորին, բայց արիի մեղքը» հորդորին, մեղավորի կամ հանցավորի հանդեպ քրիստոնեական սիրո դրսեւորումը երբեք չի դիրում որպես մեղքի կամ հանցանքի հեր հարմարվողականություն ու համակերպում: Կասկածից վեր է, որ նախորդ ոճիրների դարապարտմով է մեծապես պայմանավորված նոր չարիքների ու նոր հանցագործությունների կանխարգելումը:

Միրելի՛ հոգևոր եղբայրներ, մեր այս համախմբումը եւս մեկ հնարավորություն է դարապարության մեր ձայնը բարձրացնելու ընդդեմ մարդկության դեմ գործված հանցագործությունների, որոնք արդար գնահատական չեն սրացել, ինչպես եւ՝ այսօր իրագործվող ոճրագործությունների, հարկապես՝ Մերձավոր Արեւելքում շարունակվող հակամարտությունների ու ահաբեկչության, նաև՝ մեր կոչն ուղղելու բոլոր ժողովուրդներին, պերությունների, միջազգային կառույցների պարասխանարուններին՝ գործադրելու ամեն ջանք՝ հաղթահարելու համար կյանքեր խող, ավերներ սփռող այդ հանցագործությունները: Մեզ

համար խոր ցավ էր Նայոց ցեղասպանության հիշարարկի միջոցառումների նախօրեին Կեղեկանալ, որ Լիբիայում ծայրահեղականների կողմից, ինչպես ամիսներ առաջ ղպրի քրիստոնյաների պարագային, իրականացվել է հերթական ոճրագործությունը Եթովպիայի Եկեղեցու հավաքացյալների նկատմամբ, որի հետևանքով Մեր սիրեցյալ եղբայր Մաթիաս Պարրիարբբ չկարողացավ մասնակցություն բերել հիշարարկի այս արարողություններին: Մեր գորակցությունն ենք բերում սիրեցյալ Մեր եղբորը եւ իր հավաքավոր հոգին՝ աղոթելով, որ երկնավոր Տերը լուսեղեն օթեաններում բնդունի Եթովպիական Եկեղեցու նահապակ գավակների հոգիները:

Եղբայրական Մեր սերը, բարեմադթանքներն ու շնորհակալությունն ենք բերում Ձեզ ամենքիդ Նայոց ցեղասպանության հիշարարկի միջոցառումներին Ձեր մասնակցության համար:

Աղոթում ենք, որ Ամենագութ Աստված օգնական եւ աջակից լինի մեզ, հաջողություն պարգևի մեր առաքելությանը՝ շարունակելու մեր միասնական ջանքերը հանուն աշխարհում խաղաղության, արդարության ու համերաշխության հաստատման՝ ի փառս Աստծո, ի պայծառություն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրություն համայն մարդկության:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՂՈՐՀՆԵՔԻ ԱՌԻԹՈՎ**

(22 ապրիլ, 2015 թ., Երևան)

Մեծարգո՛ւ պրն Նախագահ,
Պատվարժա՛ն բարերար,
Գերաշնո՛րհ Հայրեր,
Սիրելի՛ ներկաներ.

Գոհությո՛ւն ենք մատուցում Երկնավորին, որ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման նախօրեին պարգևեց Մեզ շնորհը՝ կատարելու հողօրհնեքի արարողությունը Երևանի Պանթեոնում նախատեսված եկեղեցու: Խորհրդանշական է, որ եկեղեցու կառուցումն սկսվում է մեր ժողովրդի համար նվիրական այս տարում, երբ հիշատակում ենք 100-րդ տարելիցը Հայոց ցեղասպանության:

Ցեղասպանության աղետից հետո մեր ժողովուրդը աշխարհի բոլոր կողմերում նախ եւ առաջ իր եկեղեցին կառուցեց, որ լույս ունենա առաջնորդության, իր կյանքն ապրի առ Աստված աղոթքով եւ Նրա օրհնության ներքո, իր որդիները լինեն հարազատ զավակները մեր Եկեղեցու, հարազատ զավակները մեր ժողովրդի՝ հավատարիմ հայրենյաց ավանդներին, հիշատակներին ու սրբություններին:

Անքնին Աստված Իր երկնային ու աստվածային շնորհներն է հեղում մեր քարակերտ եկեղեցիներին, նաեւ՝ մեր հոգու տաճարներին՝ զորացնելով հավատքով, ամրացնելով մեզ տերունապատվեր ընթացքում, ինչպես վկայում է շարականագիրը. «Խնդա՛ եւ զուարճացի՛ր հարսնացեալդ Աստուծոյ եկեղեցի. քանզի ի քեզ Տէրն տէրանց ընտրեաց եւ հաճեցաւ բնակիլ ի քեզ»: Հավատում ենք, որ այստեղ կառուցվող եկեղեցին աստվածային օրհնության ու շնորհների նոր աղբյուր է լինելու մեր ժողովրդի համար, որի ճանապարհը լեցուն է եղել դժվարություններով եւ փորձություններով, բայց նաեւ՝ վերելքներով, որոնք վկայությունն են հավատավոր մեր ժողովրդի ապրելու, արարելու աննկուն կամքի:

Ասած շնորհով այսօր մեծ մխիթարություն է մեր բոլորի սրտերին, որ նորակառույց եկեղեցին վեր է հառնելու նույն տեղում, որտեղ կանգնած է եղել խորհրդային բռնությունների շրջանում հիմնովին քանդված եկեղեցին: Եկեղեցու օրհնյալ կամարների ներքո մեր ժողովրդի զավակներն իրենց հայցն

ու աղերսն են վերառաքելու առ Աստված, եւ նվիրական այս աղոթավայրը նաեւ վկայություն է լինելու մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային միության եւ ամբողջականության: Այստեղ խոնարհվում ենք մեր ժողովրդի մեծանուն զավակների շիրիմներին, հպարտանում նրանց թողած ժառանգությամբ, հայրենիքին ծառայությամբ, մեր մշակույթին բերած ավանդով: Այսուհետ նրանք պիտի հանգչեն Եկեղեցու օրհնության, հավատացյալ Մեր զավակների աղոթքների հովանու ներքո:

Այս հոգեշեն օրը Հայրապետական սիրով Մեր օրհնությունն ենք բերում այստեղ համախմբված Մեր բոլոր զավակներին, ովքեր իրենց աղոթքներով մասնակից եղան եկեղեցու հողօրհնեքի սրբազան այս արարողությանը:

Բարձր գնահատանքով ողջունում ենք այստեղ ներկայությունը ՀՀ նախագահ Տիար Մերժ Սարգսյանի, ով հավատավոր հոգով մշտապես իր գորակցությունն է բերում մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը եւ այսօր իր ներկայությամբ ու մասնակցությամբ պատվեց այս արարողությունը:

Հայրապետական Մեր օրհնությունը եւ բարձր գնահատանքն ենք բերում նորակառույց եկեղեցու մեծագնիվ բարերարին՝ Տիար Սամվել Կարապետյանին, մեր Եկեղեցու եւ ժողովրդի արժանավոր ու նվիրյալ զավակին, ով եկեղեցաշեն, ազգաշեն իր բազում գործերով մեծ աշակցություն եւ ավանդ է բերում մեր Եկեղեցու շենացմանը, մեր ժողովրդի բարօրության կերտմանը:

Աղոթում ենք առ Աստված, որ ամենախնամ Իր Սուրբ Աջով խաղաղության ու բարօրության մեջ պահպանի ազգս հայոց, հաջողություններով պսակի եկեղեցաշեն եւ ազգանպաստ իրագործումները: Մեր աղոթքն է, որ Աստված բոլոր օրհնությունների արժանացնի եկեղեցանվեր բարերարին՝ Տիար Սամվել Կարապետյանին, պարգեւելով ազգաշահ գործոց նորանոր ձեռքբերումներ եւ երկնառաք ամենայն բարիք՝ Կարապետյան ընտանիքին:

Թող հարուցյալ Մեր Տերը օրհնյալ եւ անսասան պահի հայրենի մեր երկիրը, ամբողջ ու անխռով աշխարհասփյուռ մեր ազգի զավակներին՝ բարի եւ ազնիվ ձեռքբերումներով ապրելու իրենց կյանքը՝ իրականացնելով մեր նվիրական իղծերը, լուսավոր գալիքի տեսիլքները:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւսն. ամէն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀՄԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**
(22 ապրիլի, 2015 թ.)

Միրելի՛ եղբայրներ ի Քրիստոս,
Գերաշնորհ, հոգեշնորհ եւ արժանապատիվ Հայրեր,
Միրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր համախմբվել ենք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում՝ պաշտամունք մատուցելու մեր Տիրոջը, հսկման արարողության միջոցով հիշելու Հայոց ցեղասպանության ընթացքում նահատակված հայորդիներին: Մխիթարված ենք, որ այս պահին մեզ աղոթակից են այստեղ ներկա մեր Քույր եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները, Էկումենիկ կազմակերպությունների ղեկավարները եւ պատվիրակները:

Տիրոջ կամքով վաղը՝ ապրիլի 23-ին, այս սուրբ տաճարի հովանու ներքո՝ հայոց առաջին քրիստոնյա արքայի՝ Սուրբ Տրդատի անունը կրող խորանի առջեւ, պիտի կատարենք սրբադասման արարողությունը Ցեղասպանության նահատակների՝ հայցելով սուրբ վկաների բարեխոսությունը ազգային ու հոգեւոր մեր կյանքի գորացման, առաջընթացի համար:

Նահատակության ոգին քրիստոնեական մեր կյանքի սնուցող աղբյուրն է, որ առատորեն ոռոգել է քրիստոսասեր ժողովուրդների հավատքի անդաստանները: Պատմության ընթացքում Եկեղեցուն կենսունակություն է պարգևել մարտիրոսների հեղած արյունը: Քրիստոնյա մեծագույն նահատակներից Սուրբ Իգնատիոս Անտիոքացի Հայրապետի խոսքով՝ «Ո՛հ կիզիչ հուրը, ո՛չ ջուրը չեն կարողացել մարել քրիստոնյաներիս սերն առ Աստված: Խիզախ ու արիասիրտ քրիստոնյաների համար մեծ բարիք է այս աշխարհում Աստծո հետ մայր մտնելը եւ Նրա հետ հաճնելը» (Ս. Իգնատիոսի վարքից):

Հայաստան աշխարհում եւս նորածիլ քրիստոնեական կյանքը սնուցվեց Քրիստոսի Սուրբ Ավետարանի լույսը տարածող մեր առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների, նորադարձ մարտիրոսների ու հավատի հերոսների արյամբ: Մեր ժողովուրդը պատմության ողջ ընթացքում հաճախ պատարագվեց նահատակության խորանի վրա՝ դառնալով աստվածապաշտության սքանչելի օրինակ: Ցեղասպանության տարիներին եւս մեր զավակների կրած նահատակության, չարչարանքի պատմությունները որքան ցավ ու տրտմություն են պատճառում, նույնքան եւ ավելի հավատքի մեջ ամրանալու, խիզախելու նոր խթան դառնում ամենքիս համար, ինչպես

պարագան էր առաջին դարերի քրիստոնյաների, որոնց համար, ըստ Պողոս առաքյալի խոսքի՝ «...կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլիպ. Ա. 21):

Նույն ոգին այսօր տեսնում ենք աշխարհի տարբեր կողմերում, մասնավորաբար Մերձավոր Արեւելքում, որտեղ քրիստոնյա հավատացյալներն իրենց կյանքով շարունակում են վկայել քրիստոսանվեր իրենց հավատքը: Մենք հիանում ենք այն քաջությամբ եւ տոկունությամբ, որ դրսեւորում են մեր քրիստոնյա եղբայրները գրկանքների ու չարչարանքների մեջ: Նահատակության այս պատկերները միաժամանակ ընդգծում են անհրաժեշտությունը Քրիստոսի Սուրբ Եկեղեցու ջանքերի բազմապատկման՝ հանուն առավել ապահով ու անվտանգ աշխարհ կերտելու, քանզի մեր Տերը «խռովության Աստված չէ, այլ խաղաղության» (Ա. Կորնթ. ԺԴ. 33): Մեր ժողովուրդն ու Եկեղեցին ինչպես անցյալում, այնպես եւ այսօր մշտապես արտահայտել են իրենց նվիրվածությունը Քրիստոսի Սուրբ Ընտանիքի՝ Եկեղեցու այս սրբազան առաքելությանը:

Մեր մաղթանքն ու աղոթքն է, որ Հաղթանակած Եկեղեցուն միացած բոլոր նահատակները, նրանց հետ նաեւ Հայոց ցեղասպանության մարտիրոսները բարեխոս լինեն Տիրոջ առաջ աշխարհում խաղաղության եւ համերաշխության հաստատման համար: Մենք հավատում ենք, որ Ցեղասպանության նահատակներն այսօր եւս շարունակում են ապրել: Նրանց սխրանքն ու ոգեշնչող ներկայությունը մշտապես ուղեկից են եղել մեր ժողովրդին Ցեղասպանությանը հաջորդած բոլոր տարիներին:

Թող Աստված օրհնի արդարության եւ ազգերի միջեւ եղբայրության ճանապարհները, որ ոչ մի ժողովուրդ այլեւս չապրի ցեղասպանության ողբերգությունը: Աղոթք եւ օրհնություն Ցեղասպանության բոլոր անմեղ զոհերի հիշատակին:

Տիրոջ սերը եւ խաղաղությունը թող լինեն ամենքիս հետ՝ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՆԱՅՈՅ ՅԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԿԱՏԱԿՆԵՐԻ
ՍՐԲԱԴԱՍԻՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

(23 ապրիլի, 2015 թ., Սուրբ Էջմիածին)

«Իսկ եթէ նախարիցի՛ք ես
վասն անուանն -Քրիստոսի,
երանելի՛ էք, զի... Աստուծոյ Հոգին
ի վերայ ձեր հանգուցեալ է»
(Ա. Պետ. Դ. 14):

Միրելի՛ բարեպաշտ հավաքացյալ եղբայրներ եւ քույրեր,

Աստվածաշնչյան Արարարի հայացքի ներքո՝ քրիստոսականության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս նվիրական սրբավայրում, այսօր միասնական աղոթքով փառք ենք վերառաքում Ամենագոր Աստծուն իր բոլոր պարգևների համար: Փառաբանում ենք Երկնավորին, որ գործություն Կրիստոսի մեր ազգին՝ իր դարավոր պատմության փորձությունները հաղթահարելու, Հայոց ցեղասպանության արհավիրքներից վեր հանելու, իր նոր կյանքի հաղթանակներն ու ձեռքբերումները կերպելու: Օրհնաբանում ենք Տիրոջը, որ «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահապարկված Յեղասպանության վկաներին թագադրում է սրբության պսակով ու նրանց բարեխոսությամբ մեր կյանքին հեղում Իր անսպառ ոգորմությունները:

Հայոց ցեղասպանության դժնդակ պարիսներին մեր ժողովրդի միլիոնավոր զավակներ ծրագրված կերպով փրկահանվեցին ու ջարդի ենթարկվեցին, անցան հրի եւ սրի միջով, ճաշակեցին փանջանքների ու վշտի դառը պտուղները, սակայն սոսկալի նեղությունների մեջ, մահվան հանդիման մնացին Քրիստոսի սիրով գորացյալ՝ բերելով վկայությունը անսասան հավաքքի՝ համաձայն առաքելավանդ խոսքի. «Իսկ եթե նախարուեք էլ Քրիստոսի անուան համար, երանելի էք, քանի որ... Աստուծո Հոգին հանգստւմ է ձեզ վրայ»:

Քրիստոսին նահապարկությանը վկայելն ընդելուզված է մեր ժողովրդի կյանքին: Սրբության, առաքինության, անձնվիրումի հոգևոր սխրանքի բազում վկայություններ են արձանագրված նաև Հայոց ցեղասպանության ողբերգական տարեգրության մեջ: Քրիստոնեական հավաքքի համար հալածվող հայրդին աղոթքով է անցել նահապարկության ճանապարհը, իսկ նրան անդուլ դաժանությամբ հալածողը կարծել է, թե իսպառ արմատախիլ է անում Քրիստո-

սի հանդեպ սերը հայի կյանքից: Տխուս Բրիսպոսի համար նահապարակ հայորդու արյունը անխախտ հավարքի ու ազգասիրության դրոշմն է դրել անապարհ ավազներին, մինչդեռ եղեռնագործը կարծել է, թե հայր անհետ կորչում է պարմության հողմերում: Բրիսպոսանվիրումի եւ հայրենյաց սիրո նույն այդ ոգով մեր ժողովուրդը հոգևոր ու ազգային իր կյանքն է վերակերպել աշխարհի բոլոր կողմերում, վերածնունդ ապրել Արեւելյան Նայասպանում՝ մոխիրներից հառնած իր պետության հովանու ներքո: Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերպել է գոհողություններով, մաքառումով, մարդկային խղճի ու իրավունքի առջև իր արդար դատը բարձրաձայնելու ջանքերով՝ միշտ աղոթքով հիշելով բյուրավոր վկաներին Նայոց ցեղասպանության:

Նահապարկության պարմությունը պարզ փաստերի ու դեպքերի շարադրանք չէ միայն, այն մեր առջև պարզվող հավարքի ճշմարտությունն է, որի հանդիման անգոր են հալածանքն ու ոճրագործությունները, քաղաքական խարդավանքն ու դավադրությունները: Նահապարկությունը մարդկային կյանքը եւ պարմությունը կապում է ավելի գորավոր՝ երկնային մի իրողության հետ, որն անդրանցնում է ժամանակը եւ ծավալվում դեպի հավերժություն՝ ըստ Կրեոնական խոսքի: «Մի՛ երկնչիր այն բանի համար, որ պիտի չարչարուն... եղիր հաւարարին մինչեւ մահ, եւ Ես քեզ կեանքի պսակը պիտի տամ» (Յայր. Բ. 10): Բրիսպոսին վկայած նահապարկները մեր հոգու հայացքը երկրային իրողություններից բարձրացնում են դեպի երկնային կյանք՝ հոգևոր զվարթություն պարգևելով իրենց բարեխոսությունը հայցողներին եւ քաջալերելով Տիրոջ ապավինելու, փորձությունների հանդիման չերկնչելու, Կրեոնաշնորհի կյանքն ապրելու հավարքի, հույսի եւ սիրո գործերով: Ցեղասպանության նահապարկներն այսօր երկնքի արքայության լուսեղեն օթեւաններում մարտիրոսության պսակով զարդարված՝ արդարության, մարդասիրության, խաղաղության հովանավոր սրբեր են, որոնց բարեխոսությունը երկնքից Աստուծո ղոյրմության ու շնորհների աղբյուրն է բացում այնպեղ, ուր Կրեոնաշնորհն է արդարությունը, խախտվում են խաղաղության անդորրն ու ապահովությունը, ուր ուրնահարվում են մարդկանց եւ ժողովուրդների իրավունքները, սպառնալիքներ են հառնում ընդդեմ հասարակությունների բարօր կեցության, մոլեգնում են հալածանքներ հավարքի եւ ինքնության դեմ:

Միրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Մենք ամենքս այսօր ականապես ենք մեր պարմության հոգևոր վերափոխման, որին մասնակից ենք թե՛ հավաքաբար եւ թե՛ անհապապես: Ցեղասպանության նահապարկների սրբադասումը կենարար նոր շունչ, շնորհ եւ օրհնություն է բերում եկեղեցական ու ազգային մեր կյանքում: Մենք հավարում ենք, որ մեր ժողովրդի հոգևոր նոր վերածննդի պսակն ենք հյուսում՝ Նայոց ցեղասպանության նահապարկներին սրբադասելով: Մեր սուրբ նահապարկների հիշարական այլեւ ոչ թե գոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ՝ հաղթանակած ու նահապարկության արյամբ սրբագործված

անմարմին զինվորների հաղթական օրհներգություն: Այսօր մեր սուրբ նահապետների հավաքի եւ հայրենյաց սիրո ջերմեռանդ ոգին փարածվում է Դեր Զորից մինչեւ Սուրբ Էջմիածին եւ Ճիծեռնակաբերդ, նորանկախ Հայաստանից մինչեւ աշխարհասփյուռ հայ կյանքի վերածնված անդաստաններ՝ զորացնելով ապրելու անխախտ հավաքով, մեր կյանքի վերագարթոնքի պայծառ փեսիլքով եւ մեր արդար դարի պաշտպանության աներկբա կամքով:

Այսօր աշխարհի բոլոր կողմերում մեր ժողովրդի աղոթքները միահյուսված են այս սրբազան արարողության աղոթքներին, որին իրենց մասնակցությունն են բերում Հայաստանի Հանրապետության նախագահը՝ առաջին փիկնոջ հետ, Մեր հոգևոր եղբայր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայրները՝ հոգևոր Պետեր ու ներկայացուցիչներ Քույր եկեղեցիների, Հայ Կաթողիկե եւ Ավետարանական եկեղեցիների բարձրապարիվ ներկայացուցիչները, հայոց եւ բարեկամ երկրների պետական այրեր, դիվանագիտական առաքելությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Յեղասպանության մեր սուրբ նահապետների բարեխոսության անդրանիկ հայցով այսօր Մեր աղոթքն ենք վերառաքում առ Ասրված, որ Իր օրհնության ներքո անխռով պահպանի մեր ժողովրդին ու համայն մարդկությանը, որ հագենա արդարության ծարավի հոգին մեր ժողովրդի, որ ասրվածային ողորմությամբ արդարության եւ ճշմարտության շողերը փայլաբակեն աշխարհում ու ցրեն մարդկության կյանքն ալեկոծող ոճիրների, եղեռնագործությունների խավարը, եւ եղբայրության ու համերաշխության մեջ մարդկությունը կերտի իր բարօր, երջանիկ կյանքը:

Թող սուրբ նահապետների բարեխոսությամբ մեր Տեր Տխուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը լինեն ձեզ հետ եւ ամենքի՝ այսօր եւ միշտ. ամեն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻՌՈՎ
(24 ապրիլ, 2015 թ.)**

Մեծարգո՝ Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Բարեկամ պետությունների պարվարժան նախագահներ և պերական այ-
րեր,

Քույր եկեղեցիների հոգևոր Պետեր և բարեջան եկեղեցականներ,
Միջազգային և կրոնական կազմակերպությունների մեծարգո՝ ներկայա-
ցուցիչներ,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ և մեծապարիվ հյուրեր.

Նվիրական և պարմական օր է այսօր. 100-րդ տարելիցն է Հայոց ցեղաս-
պանության: Վերստին համախմբվել ենք Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում՝
ոգեկոչելու մեր սուրբ նահապակների հիշարակը:

Հոգևոր մխիթարություն է հայրենաբնակ և աշխարհասփյուռ մեր ժողովր-
դի ու Մեզ համար, որ բյուրավոր մեր նահապակների հիշարակի արարողությա-
նը Ձեր ազնիվ մասնակցությունն եք բերում, պարվարժան նախագահներ բարե-
կամ պետությունների, հոգևոր Պետեր և սիրեցյալ եղբայրներ Քույր եկեղեցի-
ների, կրոնական, պերական և հասարակական կառույցների բարձրապարիվ
ներկայացուցիչներ: Մեր երախարագիւրությունն ենք հայրնում Ձեզ և Ձեր երկր-
ների ժողովուրդներին ու իշխանություններին՝ մեր ժողովրդի հանդեպ դրսևու-
րած հարգանքի համար:

Օսմանյան Թուրքիայի կողմից Ի. դարասկզբին իրագործված Հայոց ցե-
ղասպանությունը մեր նորագույն պարմության մեծագույն ողբերգությունն է,
որը համարժեք գնահարական և դարապարպում չարանալով՝ նախադեպ
դարձավ նոր ոճրագործությունների: Գոհություն Աստծո, այսօր Հայոց ցեղաս-
պանությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է. գրնում է
ճանաչում և դարապարպություն: Մեր ներկայությունն այսպեղ ընդգծում է մեր
պարասխանարվությունը՝ սերունդներին ավանդելու բռնություններից ու եղեռ-
նագործություններից գերծ խաղաղ և ապահով աշխարհ:

Աստծո օրհնությամբ երեկ կարարեցինք սրբադասումը Յեղասպանության
տարիներին «վասն հաւաքոյ և վասն հայրենեաց» իրենց կյանքը գոհաբերած
գավակների մեր Սուրբ Եկեղեցու: Այսօր արարապահայաց այս բարձունքից, ուր
լուսազգեստ հոգիներն են մեր նահապակների և սրբությունն է մեզ վրա հովանի,

բարեխոսական աղոթք ենք վերառաքում երկինք՝ աղերսելով աշխարհին խաղաղություն, մարդկանց մեջ՝ սեր և համերաշխություն: Մեր սուրբ նահապակներն այսօր պարզամ են բերում մեզ ևս կոչում լինելու առաքյալներ, առաքյալներ արդարության, դարապարտելու մարդկության դեմ եղեռնագործությունները՝ ցեղասպանությունները, ահաբեկչությունները, մարդու և ազգերի իրավունքների ուրահարումները: Մարդասիրության, արդարության ու խաղաղության հովանավոր մեր սուրբ նահապակները կոչում են մեզ լինելու առաքյալներ ճշմարտության՝ ընդդեմ կեղծիքի քարոզչության և փարածման, մերժելու ժխտողականությունը, հաղթահարելու անհանդուրժողականությունն ու անարարբերությունը:

Յեղասպանության դառր հիշողությունները 100 փարինների ընթացքում չարությամբ ու ոխակալությամբ չեն մթագնել մեր ժողովրդի հոգին: Մեր վշտին արելություն չի խառնվել, սակայն եղել ենք անհաշտ խարդավանքների, մեր պարմության խեղաթյուրման հանդեպ, եղել ենք աննահանջ՝ ճշմարտության պայքարի մեր ճանապարհին: Մեր ժողովուրդն այսօր շարունակում է ապրել շրջափակման ու պարերագմի վրանգի պայմաններում, դիմակայում է դժվարությունների, իր իրավունքները պաշտպանում մարդու և ազգերի իրավունքների գերակայության հավարով:

Մեր սուրբ նահապակների հիշարակի առջև վերստին երախարագիություն ենք հայրնում Նայոց ցեղասպանությունը ճանաչած և դարապարտած երկրներին, պերական, կրոնական, հասարակական կառույցներին ու կազմակերպություններին, նաև՝ բոլոր պերություններին, ժողովուրդներին և անհարներին, ովքեր Յեղասպանության դժնդակ փարիններին օգնության ձեռք մեկնեցին, ապաստան փվեցին մեր ժողովրդի գավակներին:

Նայրապերիս աղոթքն է, որ մեր ժողովուրդը գորավոր պահի հավարքն ու հայրենյաց սերը, անկասելի՝ իր իրավունքները վերականգնելու կամքը: Նայցում ենք, որ մեր սուրբ նահապակների բարեխոսությամբ խաղաղությունը, արդարությունը, սերն ու ողորմությունը հավերժ թագավորեն երկրի վրա՝ հանուն մարդկության շեն, ապահով ու բարօր կյանքի:

ԿՐՕՆԱԼԳԻՏԱԿԱՆ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(03 ապրիլի, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

*«Ի սկզբանէ Աստուած արար զերկին եւ երկիր:
...եւ խաւար ի վերայ անդնդոց.
եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրոց»*
(Ծննդոց Ա. 1-2):

Արարչություն... Սկիզբ: Անավարտ սկիզբ եւ անորոշություն... Անձայ-
րածիր եւ անհուն տարածություն: Միայն շարժում եւ անտեսանելի թելե-
րի ծփանք, պայքար դեպի վեր եւ էլ ավելի վեր: Մրցակցող հպարտություն
եւ ոտնձգություն: Անկում պատվո բարձունքից (հմմտ. Եսայի ԺԴ. 12), եւ
լռություն...

Այնժամ չկար ոչինչ՝ ո՛չ հոգի, ո՛չ միաք եւ ո՛չ էլ մարմին: Խավար էր... Խա-
վար՝ անձեւ, խավար՝ մութ: Կար միայն Աստված: Արարչագործ Աստված եւ
երկինք, երկիր ու խավար, որի վրա շրջում էր Աստծո հոգին (Ծննդ. Ա. 1): Խա-
վարի խորխորատներում՝ հպարտության սուգող ծանրության տակ, դավում
էր Արուսյակը: Հանդարտ չէր... Սպասում էր Աստծո անսահման բարության
դրսետորմանը՝ արարչությանն էր սպասում, մարդուն էր սպասում... Ու եթե
Աստված Իր ամենառատ բարությանը չարարեր մարդուն եւ ամենայն ինչ,
անհունը կմնար անհատակ, խավարը՝ լույսից զուրկ, կյանքը՝ գաղափար, իսկ
մենք՝ մտածում... Բայց՝ «...արար Աստուած զմարդն ի պատկեր իւր» (Ծննդ. Ա.
27):

Արարչությամբ սկսվեց ամեն ինչ, եւ ամեն բան բարի էր՝ կյանքը, լինե-
լությունը եւ աշխարհը: Կար հույս, ուրախություն, ցնծություն եւ խիճդ: Տիրոջ
երանական ներկայության վայելքն էր, որ դրախտաբնակ մարդուն երջանիկ
էր դարձնում: Տարին օր էր թվում, դարը՝ տարի: Խաղաղ ու անդորր ժամա-
նակներ: Եւ այդպես կշարունակվեր, եթե չլիներ պատրոզ Արուսյակը, ում

դրդմամբ Մարդը աստվածանալու նախաստեղծ գերաբերուն փառքից զրկվեց: Մեծ հիսաթափություն... Խորը ցավ եւ կորստի զգացում... Եղեմից դուրս, վարագուրված դռների ետեւ: Անցան հազար, բյուր հազար օրեր... Փոխվեցին հազար, բյուր հազար մարդիկ, մինչեւ որ Հայրն գթառատ Իր Միածնին առաքեց աշխարհ, որը, սակայն, «զՆա ոչ ծանեաւ» (Յովհ. Ա. 10):

Եւ պատմությունը հասավ այսօրվան... Տրտմահաղորդ օր... Խավարման գիշեր:

Ոչ ոքի եւ ոչինչ մի՛ փնտրեք այս խավարի մեջ: Այժմ լսելու պահն է: Փակե՛ք ձեր աչքերը, բացե՛ք աչքերը հոգու: Ունկնդիր եղեք, լսե՛ք լռությունը... Սրտի բաբախյուն, հանդարտ շնչառություն: Խավար, մութ լռություն: «Աստծո Հոգին է շրջում» սրբազնաստուրբ այս մութ տաճարում՝ ամենքիս վրա, ամենքիցս վեր:

Համայն աշխարհը սեւազգեստ է այսօր: Արեգակն ամոթխած դեմքը ծածկել է մեզանից: Լուսինը պահմտել է լույսից գուրկ մթության մեջ, իսկ մարդկությունը, մենք՝ մարդիկս, ծնրադիր երերում ենք անհատակ խավարի անծայրածիր տարածության մեջ՝ կորցնելով հոգու հավասարակշռությունը: Տյառնասպանության իրականությունը հանգիստ չի տալիս մեզ: Այնքան դժվար է ու այնքան հոգեցունց, որ փորձում ենք փախչել, նախաձեռողների նման թաքնվել իրականությունից՝ միամտորեն կարծելով, թե կխուսափենք անդամնալի դեպքերի նույնական ընթացքից: Նախանձորդի դրդմամբ կարծես թե պատմությունը կրկնվում է. նորից պարտեզ, կրկին այգի... Գեթսեմանին այդ օր ծաղկանց բուրմունքով արբեցրել էր հոգնաբեկ առաքյալներին. հանգստավետ դրախտում էին կարծում իրենց: Աղոթակից լինելու փոխարեն ննջում էին: Մարդկային իրականության անխուսափելի մի պահն ակնթարթի պես անցնում է, բայց հետեւանքն այդ, իր ցավոտ ազդումը սպիի վերածած, ժամանակների միջով հասցնում է ամենքիս: Մենք, որ ամեն օր մաս ենք կազմում պատմության էջերը լցնող ժամանակի եւ ամեն օր տարվա նույն օրն ապրում ենք նոր իրադարձություններով, վերապրում ենք աշխարհը ցնցած ու նոր ժամանակներ ստեղծած մութ եւ խավար դեպքերը: Չսպասված հարված, դեպքերի անսպասելի շրջադարձ. կարծես թե անակնկալ սկզբի չսպասված ավարտ: Դավաճանություն... Մատնություն... Լքում... Չարչարանք... Մահ...

Շարականագիրը հնչեցնում է. «Այսօր բարեկամք եւ մերձաւորք Քո հեռի եղեն ի Քէն Քրիստոս. օտարացան եւ եղբարք Քո...», ավելին՝ «Այսօր, զոր սերովբեքն ծածկելին գղենս յահէ փառաց աստուածութեանդ, իսկ կորստեան որդին Յուդաս ի համբոյր մերձեալ նենգութեամբ նշանակ եւ առիթ մահու անմահիդ...»:

Ո՛վ երբեւէ չի զգացել մենության թուլությունը, առավել եւս անգործությունը, երբ կողքիդ կան, բայց եւ չկան անտարբերության զոհերը:

Ո՛վ երբեւէ չի կտրատվել դավաճանության դառն պտուղների անցանկալի ճաշակումից:

Ո՛վ երբեւէ մատնության անակնկալին ընդառաջ՝ զարմացած հայացքով հրաժեշտ չի տվել մոտ բարեկամին:

Աստվածային նախախնամության դրսևորումները անդարձելի են:

Մատնվող, խաչվող Տեր Հիսուս Քրիստոս շոշափելիորեն այստեղ չէ... սակայն նրա մատնության ամոթանքը գլխիկոր է դարձնում ամենքիս, Նրա չարչարանաց վերհուշը սահմեկեցնում է յուրաքանչյուրիս, Նրա սրբացնող հարության հանդեպ հավատքը հուսադրում է բոլորիս՝ անտեսանելի ներկայությանը կենդանացնելով մեզ:

Մինչ Փրկիչը Գեթսեմանիի կանաչագարդի մեջ ծնկաչոք, հնազանդությանը մարդու փրկագործությունն էր շարունակում, «արծաթսիրութեամբն մոլեալ» Հուդա առաքյալն իր դավաճանության գինն էր սակարկում: Ու երբ Վարդապետն ընդարմացած առաքյալներին աղոթել էր հորդորում, մատնիչ աշակերտը ջերմ համբույրով սեւ մատնության սկիզբն էր ազդարարում:

«Քո կամքը թող լինի՝ Հայր», - արտաբերում է Հիսուս եւ գալիքը տեսնող ու ապագան կերտող հայացքը, ի նշան կատարյալ հնազանդության, խոնարհում: Հիսուսի սրբագործմամբ է մատնությունը դառնում Սուրբ, իսկ մահը՝ Փրկարար:

Առաջին իսկ օրերից Հիսուս Իր առաքյալներին նախապատրաստում էր փրկագործությանը՝ Մարդու Որդին պիտի մատնվի, տառապի, մահանա եւ երրորդ օրը հարություն առնի (Մատթ. ԺԶ. 21): Հիսուս հայտնել էր Իրեն սպասվող իրադարձություններում եւ մարդկանց դերի, եւ աստվածային նախախնամության մասին: Չէր թաքցրել եւ այն, ինչ պետք է տեղի ունենար մարդկանց դատապարտության արդյունքում ու իր լրումին հասներ դրա պատճառով. Եղեմի պարտեզում մեղանչած մարդու փրկության համար Գեթսեմանիի պարտեզում մատնվելով՝ կատարյալ հնազանդությամբ մահ Գողգոթայի վրա:

Դժվար է... Ծանրը առջեւում է: Դավը դատավճիռ է դարձել: Արարածն Արարչին է դատում՝ արդարություն կարծելով: Դատում են ոչ թե ըստ էության, այլ իրականության թվացյալ ու կարծեցյալ ենթակայական ընկալմամբ: Իրենց հասկացածը որպես ճշմարտություն են հրամցնում: Ի դիմաց ճշմարտության՝ ճշմարտությունն են փնտրում: Կյանքի հանդիման՝ կյանք խլել են տնօրինում: Փորձում են վերջ տալ Անվերջանալիին: Չգիտեին, սակայն, որ միայն Նա կարող է հայտարարել, թե «Ամեն ինչ կատարեալ է» (Յովհ. ԺԹ. 30):

Մեր վաղվա օրը կախված է ոչ միայն անցյալից, այլ նաեւ այսօրվանից: Այս պահին եւս Աստծո Հոգին սավառնում է սանդարամետը խորտակած Միածնաւէ այս տաճարում՝ Իր փրկարար թելերի մեջ առնելու նրանց, ովքեր պիտի ավագակին ձայնակցեն՝ ասելով. «Յիշեա գիս Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով» (Ղուկ. ԻԳ. 42): Ապաշխարության սանդուղք-ճանապարհին ենք ոտք դրել: Անցնելով Մեծ Պահքի բոլոր հանգրվաններով՝ խորապես ապ-

րել, զգացել եւ ինքնաքննության ճանապարհ անցնելով՝ հասել ենք այսօրվա, այս պահի՝ Ավագ շաբաթվա հոգեցունց, կենսանորոգ խորհուրդին:

Երկու հազարամյակ՝ 731.000 օր առաջ, շատ մարդիկ մեզ նման նույն իրադարձությունների մեջ էին: Նրանց մի մասը մասնակից էր, մյուս մասը՝ ակա-նատես, իսկ ոմանք էլ անտարբեր ու լուռ անցորդներ էին:

Այդ անտարբերության արդյունքում թափվեց մեկ Անմեղի արյուն:

Այդ լուռ դատապարտությամբ եղավ մեկ Արդարի Գողգոթա:

Անազնիվ հաշվեհարդարը ծնեց նոր ոճիրներ, անպատիժ արարքը սնեց նոր նախճիրներ:

Մեկ անմեղի արյունն այսօր մեկ ու կես միլիոնի արյուն է դարձել:

Մեկ անձի լուռ Գողգոթան այսօր միլիոնների Գողգոթայի է վերածվել:

Մեր ազգը Տիրոջ նման ելավ Գողգոթա, անտարբերության զոհասեղանին դրեց իր մեկ ու կես միլիոն զավակներին՝ նահատակելով հանուն հավատքի վկայության եւ Խաչյալի սիրոյն:

Հավատաց Նրան եւ չմահացավ: Ունեցավ հավիտենական կյանք, քանի որ «Կյանքը Նրանով էր»:

Ավագ շաբաթվա դեպքերի լույսի ներքո, խորհրդագագացորեն ապրելով Հիսուսի չարչարանքը, մահը, հարությունը, Սուրբ Հոգով զորանալով՝ հասկա-նում ենք այն ամենը, ինչ Հիսուս ասել էր կանխապես:

Գիտենք արդեն՝ ինչո՞ւ խաչը... Խաչեցյալն Ինքն է բանաձեւել պատասխա-նը. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց» (Հովհ. Գ. 16):

Քրիստոսի զոհաբերությունը մարդու հանդեպ Աստծո սիրո կատարումն էր՝ որպես պատմական մի փաստ: Աստծո սերը կա եւ մնում է միակ ու որոշիչ բացատրությունը խաչի վրա քալչարար մահվան: Սա է միակ պատասխանը, թե ինչո՞ւ այդ տեսակ մահը՝ տառապանքով եւ կտտանքներով: Խաչի ճանա-պարհը Սիրո ճանապարհն է:

Մենք եւս, սիրելի՛ հավատացյալներ, կարող ենք լինել անցորդ, մասնակից կամ ակնառատես: Մենք՝ օրեր առաջ օվսաննա գոչողներս, կարող ենք ձայ-նել. «Խաչ հան՞ գոհ»՝ երկարելով այս խավար պահը: Մենք, սակայն, ինչպես եւ մեր նախնիք, խաչի ճանապարհն ընտրեցինք՝ ընդառաջ «Եկայք առ Իս» փրկարար հրավերին: Քանզի գիտենք, որ Քրիստոս լույսն է եւ «լոյսն ի խաւա-րի անդ լուսաւորէ... եւ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ զալոց է յաշխարհ» (Յովհ. Ա. 5):

Արդ, աղոթարար եւ աղոթակից ժողովուրդ, եկե՛ք միասին, դպրաց, սար-կավագաց եւ եկեղեցականաց դասի հետ բարձրաձայնենք. «Լո՛յս, Արարիչ լու-սոյ, Առաջին լոյս... ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս Քո իմանալի»՝ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

**Տ. ՄԻՆԱՍ ԱՔԵՂԱ ՆԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(26 ապրիլի, 2015 թ.)

«Ինչպես Նայրն ինքն Իր մեջ կյանք ունի և կյանք է պալիս,
նույնպես և Որդուն Կվեց ինքն իր մեջ կյանք ունենալ և պալ»
(Նովի. Ե. 26):

Սիրելի՛ հավաքացյալ քույրեր և եղբայրներ,

Քրիստոսի հրաշափառ Նարության Կրոնից հեկո Նինանց ուրախալի շրջանում ենք գտնվում, երբ մեր Եկեղեցու խորաններից խաղաղության հեկո մեկերեղ բաշխվում է նաև Քրիստոսի հարության բարի լուրը՝ կյանքի Կրոնախմբման, մահվան դեմ կյանքի հավիերենական հաղթանակի ավերիսը՝ «Քրիստոս յաբեալ ի մեռելոց»։ Նիրավի, Քրիստոսի հարությունը վեմն է մեր հավաքի, հիմքը՝ քրիստոնեական մեր Էության և ինքնության։ Ինչպես Պողոս առաքյալն է Կորնթացիներին ուղղված իր առաջին նամակում ասում, եթե չենք հավաքում Քրիստոսի հարությանը, ուրեմն իզուր է մեր քարոզչությունը, իմաստից ու բովանդակությունից գուրկ է մեր հավաքը (հմմտ. Ա. Կորնթ. ԺԵ. 14)։ Չհավաքալ Քրիստոսի հարությանը նշանակում է դադարել քրիստոնյա լինելոց։

Սիրելիներ, մեր Եկեղեցին յուրահապուկ է նրանով, որ Զարկին հաջորդող կիրակիներին որոշակի անվանումներ է պալիս՝ «Նոր կիրակի», «Դանաչ կիրակի», «Կարմիր կիրակի»։ Այս կիրակիները կոչում ենք նաև «գունագեղ», որով հեկու գույներն իրենց խորհուրդն ունեն։ Նարության հիսնօրյա Կրոնախմբության այս չորրորդ կիրակին «Կարմիր» է կոչվում։ Կարմիր, որ խորհրդանիշն է Քրիստոսի Սուրբ Եկեղեցու և հավաքի համար մարտիրոսացած նահապարկների արյան, խորհրդանիշը կյանքի, կյանքի համար մղվող պայքարի ու հաղթանակի։

Քրիստոսի հաղթանակը կյանքի հաղթանակն էր և մահվան պարությունը։ Մինչ Քրիստոս մահը մեծագույն պարիթ էր, որ Կարածվում էր կենդանի բոլոր արարածների ու մարդկային Էակների վրա։ Բոլոր մարդիկ՝ անկախ հասարակության մեջ գրադեցրած իրենց դիրքից, աստիճանից ու պարկանելությունից, երկնում էին մահվանից, քանգի նրանք իրենց ողջ կյանքը պարկանելում էին երկրայինի մեջ, և մարմնական կյանքի վախճանն այլեւս իրենց կյանքի լիակապար վախճանն էր րնկալվում։ Սակայն Քրիստոսի հարությամբ փշրվեցին

ոչ միայն մեղքի ու մահվան կապանքները, այլև՝ մարդու վերաբերմունքը: Քրիստոսի հարությանը կյանքն սկսվում է այս աշխարհում և շարունակվում հավիտյանության մեջ:

Նավիարենական կյանքը ժառանգելու համար քրիստոնեության առաջին իսկ դարերից շարերը չերկնչեցին քանջալից մահվանից և ընդունեցին նահապետության պատկեր: Գերադասեցին մեռնել, քան դավաճանել այն հավատը և կյանքը, ինչպես որ նշեցի քարոզի բնաբանում, որ ավանդել է մարդացյալ Աստված՝ Նիսուս Քրիստոս: Նահապետները, հակառակ նեղության ու հալածանքների, իրենց կյանքով բարձրադասակ և առանց երկնչելու ամենուր վկայեցին Քրիստոսի հարության մասին:

Ճիշտ մեկ դար առաջ՝ արդեն սրբադասված մեր նախնիք եւս Նայոց ցեղասպանության ահասարսուռ օրերին հավատարիմ մնացին Տիրոջ ավանդած պարզվորաններին և անցնելով Գողգոթայի ճանապարհը՝ Յուդաբեր կանանց նմանողությամբ քրեական հարուցյալ Փրկչին:

Այսօր ոգեկոչում ենք նրանց հաղթանակը: Ամեն անգամ, երբ ասում ենք «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», լսում ենք այն արձագանքը, որ հարություն առավ նաև հայր՝ ժառանգելով հավիարենական կյանքը:

Նարության հավատով դարեր շարունակ ապրել ու իր կյանքն է կերպել հայ ժողովուրդը. այդ հավատքը պահել է արյան գնով, չի նահանջել դժվարությունների ու մահաբեր սպառնալիքների առջև, հաստատվել և աներեր իր քայլերն է ուղղել դեպի հավերժի գոյություն: Աստվածորդու երկրային կյանքը նույնպես հարաբեր պայքար էր կյանքի ու մահվան միջև:

Սիրելիներ, Աստված մեզ ամենեւին քանջանքի ու քառասանքի համար չի սրտեղծել, Տերն Իր պարկերը և նմանությունն է շնորհել մեզ, որպեսզի լինենք երջանիկ Քրիստոսով, միաժամանակ պարբերականություն ունենանք Փրկչին չարչարակից լինել և հարություն առնել Նրա հետ:

Ուրեմն, եկե՛ք մեր կյանքի փորձությունները հաղթահարելու համար գինվենք Քրիստոսի հավատքը պահելու ճանապարհին նահապետված սրբերի օրինակով, որ բարի պատերազմը մղենք՝ պահելով մեր հավատքը, այնուհետև սպասենք արդարության պատկին, որը Տերը՝ արդար Դավաճորը, իբրև հարուցում կրա մեզ և բոլոր նրանց, որոնք սպասում են Տիրոջ երկրորդ փառահեղ գալուստին:

Նահակաց կամ սրբոց այս կիրակիին աղոթենք ու խնդրենք Նայոց ցեղասպանության մեր նորօրյա վկաների բարեխոսությունն առ Բարի Աստված՝ աշխարհի խաղաղության և մարդկության ապահով ու բարօր կյանքի համար:

Նայցենք նաև, որ մեր հայրերի հավատքով, մարտիրոսների արյամբ նվիրականացած ու սրբագործված այս երկիրն ու Եկեղեցին շարունակեն իրենց առաքելությունը հավատի, հույսի և սիրո ճանապարհով. այժմ և միշտ և հավիտյանս հավիարենից. ամեն:

ՊԱՏՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ

ՀՄԱՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԻՐԱՌ-ՎԱԾ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված միջազգային ամենա-
ծանր հանցագործությունն է: Ցեղասպանագետների այն համոզմունքը, թե
Հայոց մեծ եղեռնը ուսումնասիրվել է լիարժեք եւ ամբողջական եւ, որ այդ
հարցով զբաղվող մասնագետներն սպառնալիք եւ վերջնական պատասխան են
տվել հուզող գրեթե բոլոր հիմնահարցերին, այնքան էլ մոտ չէ իրականությա-
նը: Իրականում դրանցից շատերն առ այսօր կարոտ են հետազոտության:
Զուսումնասիրված բազում հիմնախնդիրների մեջ, թերեւս, ամենացավոտը
հայ մանկահասակ երեխաների նկատմամբ կիրառված տարբեր տեսակի
բռնություններն են, որոնք միջազգային իրավունքի տեսանկյունից դիտարկ-
վում են որպես ցեղասպանություն:

Մեծ եղեռնի տարիներին ինչպես մեծահասակների, այնպես էլ անչափա-
հասների նկատմամբ իրականացվել են տարաբնույթ բռնություններ, որի
արդյունքում նրանք հայ տղամարդկանց հետ միասին ամեն տեղ անխնա կո-
տորվել են:

Երիտթուրքական կառավարությունը կոտորածների իր գաղտնի հրա-
հանգներում նախապես որոշել էր ողջ թողնել մինչեւ 15 տարեկան երեխա-
ներին: Սակայն, երբ երիտթուրքերն իրենց առաջին հարվածն ուղղեցին հայ
զինվորականների դեմ, եւ արդեն 1915 թվականի փետրվարի 27-ին ռազմա-
կան նախարար Էնվերը ծածկագիր-հեռագիր ուղարկեց զորամասերի հրա-
մանատարներին, վերոհիշյալ կարգադրությունը սրբագրվեց: Հեռագրում
մասնավորապես նշվում էր. «Ներկա կացության բերմամբ, կայսերական
հրամանով որոշված է հայ ցեղին ամբողջ փչացումը... Մինչեւ հինգ տարե-
կան մանուկներէն զատ՝ օսմանյան հպատակ եղող եւ երկրին մեջ հայ անունը

կրող բոլոր պաշրպազուքները (ոչ-զինվորականները) քաղքէ դուրս հանվելով պիտի սպանվին»¹:

Ըստ էության պետք է խնայվեին այն մանուկները, որոնք չէին կարող հիշել իրենց ծնողների զարհուրանքը: Սակայն հայ մանուկների վերաբերյալ այս վերապահումը խիստ խաբուսիկ էր, որովհետեւ իրականում չխնայեցին ոչ ոքի. սպանում էին բոլորին՝ թե՛ մեծերին եւ թե՛ փոքրերին:

1915 թ. սեպտեմբերի 3-ի իր ծածկագիր-հրամանով ներքին գործերի նախարար Թալեաթը կարգադրում էր կոտորել նաեւ կանանց ու երեխաներին. «Կը յանձնարարենք, որ ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) այրերուն նկատմամբ նախապէս գործադրուիլը ձեզի հրաման եղած կարգադրութիւններուն ենթարկէք նաեւ կիներն ու պզտիկները...»²:

Մեկ այլ գաղտնի հրահանգում Թալեաթը հիշեցնում էր. «Կառավարութիւնը, ստանձնելով ամբողջ պատասխանատւութիւնը, հրամայում է չխնայել նույնիսկ օրորոցի մանուկներին. «Ոչ ոքի մի թողէք կենդանի, մասնավորապէս մինչեւ հինգ-յոթ տարեկան երեխաներին: Այլապէս նրանք կ'ենթանան եւ կ'ձգտեն վրէժխնդիր լինել»³:

Փոքր-ինչ ուշ, 1916 թ. մարտի 7-ին, Թալեաթը Հալեպի կուսակալին հրահանգում էր. «Պատերազմական նախարարութեան հրամանով, զինուորական կայաններու կողմէ հավաքուելով սնուցուած ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) մանուկները, պատրուակելով, թէ գաղթականներու պաշտօնատանց կողմէ պիտի սնուցուին, համախումբ վիճակի մէջ, առանց կասկածի տեղի տալու, փճացնել ու տեղեկացնել»⁴:

Հայոց ցեղասպանությանը նվիրված գրականության մեջ պահպանվել եւ արձանագրվել են բազմաթիվ սահմնկեցուցիչ փաստեր այն մասին, որ երիտթուրքական կառավարության պարտադրանքով հայ երեխաներին սպանում էին, ողջակիզում, խեղդամահ էին անում գետում, տանջամահ անում ծարավից, կամ նրանց մի մասին հանձնում էին թուրքական որբանոցներին կամ ընտանիքներին:

Ներկայացնենք որոշ դրվագներ եւ փաստեր: Այսպես, Երզնկայի եւ Մամախաթունի շրջակայքում Էրզրումի հայության կոտորածների կազմակերպիչ Մեհաու Բեյը հայ մանուկներին լցնում էր փոսերը եւ ողջ-ողջ թաղում⁵:

1 **Ա. Անտոնեան**, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալեաթ փաշա: Պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ պատկերներով, Պոսթրն, 1921, էջ 232 (այսուհետ՝ **Ա. Անտոնեան**, Մեծ ոճիրը):

2 Տե՛ս անդ. էջ 151:

3 "The Memoires of Naim Bey, Turkish official document relating to the Deportations and massacres of armeniens" London, 1920, էջ 28:

4 **Ա. Անտոնեան**, նշվ. աշխ., էջ 196-197:

5 Տե՛ս **Ս. Ակունի**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 143:

Բիթլիսի կուսակալ Մուսթաֆա Աբդուլհալիզ բեյը, հազարավոր հայ երեխաների հավաքելով, առաջնորդեց Թաշխոտ կոչվող վայրը, եւ թուրքական ամբոխի ներկայությամբ ողջակիզելով նրանց՝ հայտարարեց. «Թուրքիոյ ապագայ գոյութեան համար հայկական գաւառներու մէջ հայ անունը իսպառ բնաջինջ ընել պետք է»⁶:

Դժբախտ երեխաներին հրկիզելուց հետո նրանց նետում էին նախապես փորված հորերի մէջ, որտեղից «օրերով կը լսուէին տակաւին ողջ մնացածներու հոգեվարքի հռնդիւնները»⁷:

Մարաշի ամերիկյան դպրոցներից մեկում հարյուրից ավելի կանայք եւ երեխաներ անդամալույծ էին արվել, առանց ոտքերի եւ դեմքերի էին: Շուկաներում կազմակերպվում էր գեղեցիկ աղջկաների վաճառք⁸:

Ծագումով բեդվլին ականատես Ֆայեզ էլ Ղոսեյնը հայերի 1915 թ. կոտորածների մասին պատմող իր հուշերում ներկայացնում է բավականին հուզիչ մի պատմություն, որը նա իր հերթին լսել էր Շեքեթ բեյից, որն ուղեկցել էր արքայական զորքի մի շարասյուն: «Երբ Դիրաբեքի սահմաններից դուրս էինք եկել եւ սկսեցինք գնդակահարել նրանց, (խոսքը հայերի մասին է - Հմ. Հ.) առջեւս հայտնվեց մի քուրդ: Ձեռքերս պատելով համբույրներով՝ նա սկսեց աղաչել, որ իրեն տամ իր աչքին ընկած մի տասնամյա աղջկա: Ես դադարեցրի հրաձգությունը եւ ժամդարմներից մեկին կարգադրեցի բերել նրան: Ես նրան հրամայեցի նստել ու ասացի. «Մենք քեզ կհանձնենք այս մարդուն, եւ կյանքդ կփրկվի»: Մի ակնթարթ անց տեսա, թե նա ինչպես նետվեց մահվան դատապարտվածների կողմը: Ես նորից կարգադրեցի դադարեցնել կրակը եւ բերել աղջնակին: «Չէ որ ես քեզ մեղք եմ գալիս,- ասացի ես,- եւ ուզում եմ փրկել կյանքդ: Ինչո՞ւ խառնվեցիր նրանց: Գնա այս մարդու հետ, նա քեզ հետ կվարվի ինչպես իր աղջկա»: Նա պատասխանեց. «Ես հայի աղջիկ եմ, ծնողներս ու ազգականներս նրանց մէջ են, որոնց շուտով կսպանեն: Ես չեմ ցանկանում ուրիշ ծնողներ ունենալ եւ չեմ ուզում նրանցից հետո ապրել նույնիսկ մեկ ժամ: Նա սկսեց հեկեկալ: Ես երկար փորձեցի համոզել նրան գնալ քրդի հետ, բայց նա լսել անգամ չէր ուզում այդ մասին, եւ ես բաց թողեցի նրան: Ես տեսա, թե ինչպես նա շատ գոհ վազեց հոր ու մոր մոտ եւ նրանց հետ միասին գնդակահարվեց»: Այդ պատմությունն անելուց հետո նա եզրափակեց. «Եթե այդպես են վարվում նրանց երեխաները, հապա էլ ինչ ասել տղամարդկանց մասին»⁹:

6 Ա. Անտոնեան, նշվ. աշխ., էջ 177:

7 Անդ:

8 Տե՛ս “Геноцид армян в Османской империи”. Сборник документов и материалов под редакцией проф. М.Г. Нерсисяна, Ереван, 1966, էջ 237(այսուհետ՝ “Геноцид армян в Османской империи”):

9 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում». Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 489-490 (այսուհետ՝ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»):

Գերմանացի ականատեսը մի առիթով դիմել է աքսորող հանձնաժողովի նախագահին եւ խնդրել ազատել չորս հայ երեխաների, սակայն նրան պատասխանել են. «Դուք չեք հասկանում, թե ո՞րն է մեր նպատակը: Մենք ուզում ենք ի չիք դարձնել «հայ» անունը»¹⁰:

Աքսորի ճանապարհին թուրքերը ծննդաբերության ժամանակ սվինահար էին անում կանանց ու նորածին երեխաներին, իսկ երբ տարագրվածների ճամբարի մոտով որեւէ մեկն անցնում էր, մայրերը դիմում էին նրանց եւ խնդրում վերցնել իրենց երեխաներին՝ տանջանքներից փրկելու համար:

Հայերի աքսորման Հալեպի կոմիտեի քարտուղար Նայիմ բեյն իր հուշերում նշում էր, որ հազարավոր հայ կանայք՝ երեխաների հետ միասին, Կ.Պոլսից, Ռոդոսթոյից, Նիկոմեդիայից, Պարտիզակից, Ադաբազարից, Զիզրեից, Կոնիայից եւ Կեսարիայից աքսորվեցին Ռասուլ-Այն եւ Դեյր Զոր, որտեղ նրանք մնալով անապատում, բաց երկնքի տակ, ամեն օր հարյուրներով մահանում էին սովից ու համաճարակից¹¹:

Մեկ այլ վկայության համաձայն՝ թուրք ժանդարմները 70 հայ մանուկների լաստանավ նստեցրին եւ առանց դեկը վարողի բաց թողեցին Եփրատի ջրերը՝ ջրվեժի մոտ: Լաստանավը շուռ եկավ եւ բոլոր երեխաները խեղդվեցին¹²:

Անգլիացի իրավաբան, պատմաբան եւ պետական գործիչ, դերկոմս Զեյմս Բրայսի վկայությամբ՝ աքսորի ճանապարհին երեխաներին խլում էին մայրերից եւ շարդուփշուր անում նրանց՝ քարերին խփելով կամ կենդանի գլորում անդունդը եւ գետը¹³:

Նայիմ բեյը, իր հուշերում բացահայտելով հայկական կոտորածների անողորք քաղաքականությունը, գրում է. «Ամեն անգամ ես ցնցվում էի, երբ գրանցում էի վերձանված գաղտնի հրամանները: Մի ամբողջ ազգ, այդ թվում՝ կանայք եւ մանկահասակ երեխաներ, մահվան էր դատապարտված»¹⁴:

Սովորական երեւոյթ էր, երբ քաղաքների փողոցներում հանդիպում էին կիսամերկ աղջիկների եւ տղաների, որոնք օգնություն էին աղերսում, սակայն օգնող չկար: Երզնկայի գերմանական Կարմիր խաչի գործակալության գթության երկու քույրեր պատմում են, որ 1915 թ. հունիսի 18-ին հանդիպել են աքսորի քվիդ հայերի մի խմբի, որի մեջ տղամարդիկ չկային՝ բոլորը կանայք եւ երեխաներ էին, որոնք, հեծյալ ոստիկաններով շրջապատված, մտրակի հարվածների տակ առաջ էին քշվում: Կանայք եւ երեխաները հեծկտում եւ աղիողորմ օգնություն էին խնդրում. «Խնայեցեք մեզ, մենք կդառնանք

10 “Теноцид армян в Османской империи”, էջ 419:

11 Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 572:

12 Տե՛ս «1915. Աղետ եւ վերածնունդ. Աղետն վերապրողներ», Փարիզ, 1952, էջ 54-60:

13 Տե՛ս **Լորս Պրայս**, Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա. մաս, կազմեց Վահան Միրազեան, Կ. Պոլիս, 1920, էջ 58:

14 “Теноцид армян в Османской империи”, էջ 419:

մահմեդական, գերմանացի կամ թե այն, ինչ դուք եք ցանկանում, միայն թե խնայեցեք մեզ»¹⁵:

«Թուրքերը կես կենդանի, կես մեռած հայ մանուկներ սայլերով կը տանէին ու այգիներուն մէջ կը թաղէին»¹⁶: Պատահական չէ, որ, երբ ռուսական զորքերը 1916 թ. փետրվարի 2-ին մտան Մուշ, շատ տներում եւ մասնավորապես Ալի Զոնան գյուղում, գտան հայ երեխաների հարյուրավոր դիակներ:

Լինում էին նույնիսկ աներեւակայելի սարսափելի դեպքեր, երբ հայ մանուկների եւ նրանց ազգականների նկատմամբ ոճրագործությունները բիրտ իշխանութայնների կամայականությամբ իրականացվում էին հենց նույն՝ հայ ան-գիտակից երեխաների ձեռքով: Այդպիսի մի օրինակ է պահպանվել հուշագրական բնույթի աշխատություններից մեկում, որտեղ մասնավորապես նշվում է. «Ես ժամանակին կեպավոր էի, ինձմէ փոքրիկ եղբայր մըն ալ ունէի, իսկան մայրիկիս հետ գիւղին վերի ժայռերը բարձրացանք, մայրիկս ինձի դանակ մը տուաւ եւ ըսաւ. - Այս դանակով եղբօրդ գլուխը կտրէ, որ լաւ իսկան եղած ըլլաս եւ անոր աղուոր ուտելիքները միայն դուն վայելես: Կտրեցի եղբօրս գլուխը: Ժայռէն վար նետեցինք զայն ու տուն վերադարձանք»¹⁷:

«Ինչպես ոգեկոչել այն զարհուրելի տեսարանները,- գրում է Հանրի Բարբին,-որոնք ինձ նկարագրեցան: Զարդված մանուկներ, իրենց մայրերուն աչքին տակ խողխողուած, վախէն ու զարհուրանքէն այս վերջինները խելակորույս, չորս դահիճները կը ստիպեն բաժակներ՝ խմել ծխացող արյունը...»¹⁸:

Որքա՞ն երեխաներ մահացան հիվանդություններից, սննդի եւ բուժօգնության բացակայությունից: Շվեյցարացի միսիոներ Յակոբ Բյունցլերը, որն ականատես է եղել հայերի կոտորածներին, հիշում է, որ Ուրֆայում ծծկեր երեխաները խմբերով ընկած էին բակում եւ տնքալով սպասում էին իրենց վերջին: Ոչ բոլոր մայրերն ունեին քաջություն՝ նրանց մեծ ջրավազանը նետելու: Չնայած դրան, ամեն առավոտ այդ ավազանից հանվում էին մեծ թվով կանանց ու երեխաների դիակներ¹⁹: Որտե՞ղ էին այդ ժամանակ թուրք բժիշկները՝ Կարմիր մահիկի, բարեգործական միությունների, թուրք բժիշկների միության, առողջապահության նախարարության ներկայացուցիչները եւ ընդհանրապես մարդկային տառապանքներն ամոքողները²⁰:

Անգլիացի պատմաբան Արնոլդ Թոյնբին իրազեկում է, որ հայ երեխաներից շատերն ընկնում էին մոլեռանդ դերվիշների ձեռքը, որոնք երեխանե-

15 Անդ. էջ 271:

16 **Լ. Ազատեան**, Հայ որբերը մեծ եղեռնի, Լոս Անճելոս, 1995, էջ 21:

17 **Տեղակա Մ. Անտեան**, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) Յուշամատեն եւ գօր. Անդրանիկ. վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, 1954, էջ 148:

18 **Հ. Պառչի**, Մարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, Կ.Պոլիս, 1919, էջ 16:

19 Տե՛ն **Յ. Բյունցլեր**, Երեսուն տարի ծառայություն Արեւելքում, Երեսուն, 2008, էջ 47:

20 Տե՛ն **Վ. Գույումճյան**, Թուրք բժիշկների ոճրագործությունները Մեծ Եղեռնի ժամանակ, Երեսուն, 2001, էջ 12:

րին վաճառում էին Կոստանդնուպոլսի սովորական շուկաներում¹: Թուրքերն ընտրում էին նրանցից լավերին և տանում իրենց հետ, որ ստորուկ դարձնեն: Շատ հաճախ շուկաներում կազմակերպվում էր գեղեցիկ աղջիկ-երեխաների վաճառք: Շատերն իրենց հետ բժիշկ էին բերում, որպեսզի սառուգեն աղջիկներին և նոր միայն ընտրություն կատարեին:

Ժամանակի ընթացքում որոշ շրջաններում հայ երեխաներին թուրքացնելու նպատակով նրանց որդեգրում էին կամ էլ թուրք դաստիարակչուհիների հսկողության տակ հավաքագրում որբանոցներում: Այդ հավաքագրումը հաճախ պայմանավորված էր ոչ թե մարդասիրական նկատառումներով, այլ տարափոխիկ հիվանդությունների, համաճարակների կանխարգելմամբ:

Ազգային բյուրոյին ուղղված 1916 թ. գեկույցներից մեկում, որը հիմնված էր Տրապիզոնի իտալական հյուպատոսի տեղեկությունների վրա, նշվում էր, որ Տրապիզոնի կոտորածների ժամանակ տեղի ամերիկյան միսիոներները հավաքել էին բազմաթիվ երկսեռ երեխաների՝ նախատեսելով տեղացի թուրքերից և օտարներից կազմել հանձնաժողով և բացել որբանոց: Մակայն իթթիհատի կենտրոնական կոմիտեն, իմանալով այդ մասին, ռազմական սպառնալիքով ցրում է որբանոցը և չափահաս աղջիկներին «կլեցնե մասնավոր տուն մը բռնի ծառայեցնելու համար զինվորականներու անարգ կրքին»²:

Շատ հաճախ որբանոցներ կոչվող հավաքատեղիները դառնում էին երեխաների սպանության կենտրոններ: Դեռ ավելին, մանուկներն արժանանում են տարագրության այն նույն ճակատագրին, ինչ իրենց ծնողները: Թալեաթը Հալեպի կուսակալությանն ուղղված իր՝ 1915 թ. սեպտեմբերի 21-ի հրամաններից մեկում որոշակի ցուցում էր տալիս. «Այդ տեսակ որբանոցի մը պէտք չկայ: Զգացումներու անսպով զանոնք (որբերը) կերակրելու և անոնց կեանքը երկարելու համար ժամանակ վատնելու ատեն չէ: Արկեցէք անսպասներ և իմացուցեք»³:

Կառավարությունը վախենալով, որ այդ ձեռով հայ մանուկները կփրկվեն և մի օր նորից հայ կղառնան, արգելեց այդ ամենի իրագործումը: Իր մեկ ուրիշ՝ Հալեպի կուսակալությանն ուղղված 1915 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 830 ծածկագիր- հրամանում Թալեաթն առաջարկում էր. «Հավաքեցէք և սնուցէք այն որբերը միայն, որոնք չեն կրնար յիշել զուլումը, որոնց ենթարկուեցան իր ծնողները: Մնացածները կարաւաններուն ընկերացնելով դրկեցէք»⁴:

Համանման բովանդակություն ունեւ Թալեաթի՝ 1916 թ. հունվարի 23-ի թիվ 853 հրամանը՝ ուղղված Հալեպի կուսակալ Մուստաֆա Աբդուլ-

1 Տե՛ս A. Toynbee, Armenian Atrocities. the murder of a nation, London, 1915, էջ 32-33:

2 Մ. Ներսիսյան, Նյութեր հայկական կոտորածների մասին, ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 97:

3 Ա. Անտոնեան, նշվ. աշխ., էջ 183:

4 Անդ, էջ 187:

հալիզին. «Անանկ ատեն մը ուր պաշտպանութեան եւ սնունդի կարօտ հազարաւոր իսլամ գաղթականներ եւ նահատակներու այրիներ կը գտնուին, ապագային դարձեալ վնասակար դառնալէ զատ ուրիշ բանի չծառայելիք կարգ մը ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) ձգած պզտիկներուն սընուցման համար աւելորդ ծախքեր ընելը յարմար չէ: Ատոնք տարագրութեան կարաւաններուն ընկերացնելով, վիլայէթէն դուրս հանել եւ մինչեւ հիմայ սնուցողներն ալ՝ մեր վերջին գեկուցման համեմատ՝ Սվազ դրկելու»⁵: Հրամանն ի կատար ածելու համար շուտով Հալեպում սկսեցին որբեր ժողովել՝ Սվազ ուղարկելու համար:

Նայիմ բէյն իր հիշողություններում խոստովանում էր որբերին Սվազ ուղարկելու մտադրության գաղտնիքը. «Որբերը Սվազ դրկելու նպատակը զանոնք սպաննել էր: Ասոնց առաքման մասին ինծի ալ հրահանգ տրուած էր: Յատուկ պաշտօնեայի մը հսկողութեամբ մանուկները մինչեւ Էրէյլի պիտի տարուէին եւ անկէ՝ կառքերով՝ Սվազ պիտի դրկուէին: Ես Էրէյլի պիտի մնայի: Այդ միջոցին՝ գաղթականներու գործերուն յատկացուած գումարը լմնցած էր: Նոր վարկի մը կը սպասուէր: Յապաղեցաւ: Գործը ւարուեցաւ: Եօթ-ութ ամիս վերջ ուրիշ կարգադրութիւն մը եղաւ: Որբերը Պոլիս դրկուեցան»⁶:

Թալեաթի հրամանը գործադրելու առումով իր գազանություններով եւ անգթությամբ հայտնի էր Հալեպի թուրքական որբանոցի արյունկալ տեսուչ Նազըմ բէյը: Երբ անգլիացիները գրավեցին Հալեպը, հայոց առաջնորդարանի բողոքների համաձայն՝ նա ձերբակալվեց, քանի որ հնարավորություն չէր ունեցել փախչելու: Արդյունքում պարզվեց, որ իր տեսչության օրոք հավաքագրվել էին ավելի քան 3000 հայ տղաներ, որոնցից 50 էին միայն ողջ մնացել⁷:

Հավաքագրումից զերծ մնաց միայն Հալեպի հայկական՝ Ալթունյան երկսեռ որբանոցը, որը գտնվում էր Զեմալ փաշայի «հովանու» ներքո⁸:

Որոշ ժամանակ անց Էնվեր փաշան, Պաղեստինի ճակատ գնալու ժամանակ Հալեպի ճանապարհին տեսնելով մերկ, անօթի եւ առանց ապավենի մնացած որբերի խմբերը, զինվորական կայանների հրամանատարներին հրամայում է հավաքել նրանց: Ս. Անտոնյանը նշում է, որ այդ որբերը «շուներուն հետ կը կռուէին, անոնցմէ խլելու համար ոսկորները զորս քարերու միջոցաւ փռչիացնելով կ'ուտեին»⁹:

Դեր Զորի ջարդերի նախապատրաստական փուլում 6-7 տարեկան այդ որբերը դարձան իսկական նամակատարներ՝ օգնելով բազում հայ տարագիրների՝ փախչելու Հալեպ: Բայց կենտրոնական կառավարությունը

5 Անդ, էջ 189:

6 Ա. Անտոնեան, նշվ. աշխ., էջ 190:

7 Տեն անդ, էջ 185:

8 Տեն Տ. Երեցեան, Որբերու բոյնը 1915-1921, Հալեպ, 1934, էջ 7-8:

9 Ա. Անտոնեան, նշվ. աշխ., էջ 192:

շուտով իմացավ այդ մասին, եւ հետեւեց Հալեպի կուսակալությանն ուղղված՝ Թալեաթի 1916 թ. մարտի 7-ի հերթական հրամանը. «Պատերազմական նախարարության հրամանով զինուորական կայաններու կողմէ հաւաքուելով սնուցուած ծանօթ անձնատրութեանց (Հայոց) մանուկները, պատրուակելով թէ գաղթականներու պաշտօնատանց կողմէ պիտի սնուցուին, համախումբ վիճակի մէջ, առանց կասկածի տեղի տալու, փճացնել ու տեղեկացնել»¹⁰:

Արդյունքում՝ Հալեպում ապաստանած 1500 որբերից 100-ը սպանվեց տեղում, իսկ մնացածին Զեքի բէյը հանձնեց Հալեպի գաղթականների առաքման արար պաշտոնյա Աբդուլլահ փաշային, որը նրանց տեղափոխեց Դեր Զորի մոտ գտնվող Մարաթի անապատը, որտեղ էլ բոլորին բնաջնջեց: Փրկվեցին միայն երկուսը՝ ռոդոսթոցի Օնիկը, որը վերադարձավ Դեր Զոր, եւ շապինգարահիսարցի Աննան, որը տեղափոխվեց Ուրֆա¹¹:

Յեղասպանությունն իր հոգեբանական խոր ակունք է թողել մանուկների ներաշխարհի վրա: Հանրի Բարբիի հավաստմամբ՝ սպրած սարսափներից նրանց մեծամասնությունը դեռեւս անգգայացած վիճակի մէջ էր եւ վախենում էր նույնիսկ խոսել. «Իրենց տեսածի ու կրածի մասին հենց միայն հիշեցնելիս նրանց համակում է դողն ու սարսափը»¹²:

Իհարկէ, կային նաեւ թուրքեր, որոնք ձեռնպահ են մնացել մանկահասակ երեխաների կոտորածներից: Վատիկանի գաղտնի արխիվում պահվող՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերի մէջ պահպանվել են թուրք զինվորների նամակներ, որոնցից մեկի հեղինակը՝ Մուստաֆա Սուլեյմանը, որը մասնակցել էր Գելիգուզան գյուղում կազմակերպված 800 հայերի սպանողին, խոստովանում է. «Ես ոչ մի երեխայի չեմ սպանել: Նույնիսկ երկուսին փրկել եմ ու երեք օր թաքցրել իմ վրանում: Բայց մի անգամ մտա վրանս եւ նրանց գտա անդամահատված»¹³:

Հիմք ընդունելով նմանատիպ փաստերը՝ սփյուռքահայ որոշ հեղինակներ հարկ են համարում մատնանշել, որ ճիշտ է, մեզ կոտորել են, սակայն բազմաթիվ թուրքեր, վտանգելով իրենց կյանքը, փրկել են հայ երեխաների: Նրանց այս խոսքերին արձագանքում են նաեւ թուրքական շրջանակները՝ հավելելով, որ նույնիսկ հատուկ որբանոցներ են ստեղծել հայ երեխաների համար¹⁴: Տվյալ դեպքում խոսքը 1915 թ. զանգվածային կոտորածներից հետո Հալեպում հայ ազգի դահիճներից Զեմալ փաշայի¹⁵, իսկ Էրզրումում՝ չարանենգ մարդասպան Բյազիմ Կարաբեքիրի ստեղծած խառը որբանոցների մասին

10 Անդ, էջ 196-197:

11 Անդ, էջ 199-200:

12 Հ. Պառլի, Մարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, էջ 92-93:

13 <http://mame.am/am/news/49058/%AD5%BE%AA5%A1%...2014A>. մարտի 18:

14 Տե՛ս Հ. Զաքրյան, 1915-ին ոչ մի թուրք որբվէ հայ երեխայի չի փրկել, «Չայն համշենական», Երևան, 2011, թ. 9-10 (86-87) սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 7:

15 Տ. Երեցեան, նշվ. աշխ., էջ 7-16:

է, որոնցում ծնողագուրկ թուրք երեխաների հետ միասին հավաքագրվել են նաեւ հայ որբերը:

Սակայն խիստ վիճարկելի են գրականության մեջ հանդիպող՝ հայ երեխաների կյանքը «փրկելու» թուրքական դրսեւորումները եւ դրանց դրդապատճառներն իբրեւ «մարդասիրություն» դիտարկելու փորձերը:

Մյուսների նման հայ մանուկները նախ դավանափոխ են եղել, ուրացել իրենց հավատքը, մոռացել մայրենի լեզուն, խզել իրենց կապը հայկական ինքնության հետ, ապա ստացել են թուրքական դաստիարակություն եւ կատարելապես թուրքացվել, իսկ նրանց ժառանգները, «թուրքական» ինքնությունն ապացուցելու հարկադրանքի տակ, հաճախ հայտնվել են թուրք ազգայնամուլների շարքերում:

Ռ. Մելքոնյանը, համադրելով սկբնաղբյուրային փաստերը, եզրակացնում է, որ Մեծ եղեռնի տարիներին հայ երեխաների բռնի մահմեդականացումն ու ձուլումը կատարվել են երկու մակարդակով՝ պետության եւ հասարակության լայն խավերի կողմից¹⁶:

Ընդհանուր առմամբ որբերի ընդհանուր թվի մասին որեւէ պատկերացում գոյություն չունի: Հայտնի չէ նաեւ Կարաբեքիրի «որբանոցում» հայտնված հայ աղջիկների ճակատագիրը: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ոչ ստույգ տվյալներով՝ 1916 թ. «փրկվել» են 7-ից 16 տարեկան մոտ 300 հազար հայ երեխաներ, գլխավորապես՝ աղջիկներ: Ավելի փոքրերին մարդասպան հրոսակներն անխնա սպանել են ծնողների աչքի առջեւ, այն նկատառումով, որ փոքրերը, լինելով խնամքի կարոտ, պահանջարկ չունեին եւ վերցնելու դեպքում չէին կարող ծառայել մահմեդական ընտանիքներին, առավել եւս՝ հարճի կամ աղախնի դեր կատարել:

Մինչեւ հինգ տարեկան երեխաներին խնայելն ունեցել է ոչ միայն նրանց թուրքացնելու եւ որբանոցներում ու մահմեդական ընտանիքներում իբրեւ թուրք մեծացնելու քաղաքական նպատակ, այլեւ Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքերի կրած մարդկային կորուստները վերարտադրելու եւ թուրքական գենետիկ համակարգը թարմացնելու ցանկություն՝ «Թուրք ցեղին բերելու այնքան բարձր յատկություններով օժտուած ցեղի մը, հայ ցեղին պատուաստը: Ծիշող երբեմնի էնիչերիներուն պէս»¹⁷: Ինչպես Վ. Մինախորյանն է նկատում, «Հայու երեխայ ունենալը մի մարմաջ էր դարձել, ամէն մարդ ուզում է մեկը ունենալ»¹⁸:

Այս կարգի որբանոցներ հաստատվեցին Էնկյուրիում, Կեսարիայում, Դամասկոսում, Ալթուրայում (Լիբանան), Բեյրութում եւ այլ քաղաքներում:

16 Ռ. Մելքոնյան, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը եւ հետեւանքները, Երևան, 2010, էջ 28:

17 Ա. Անտոնեան, նշվ. աշխ., էջ 178-179:

18 Վ. Մինախորյան, 1915 թականը. արհաւիրքի օրեր, Թեհրան, 2006, էջ 328:

Թուրքացման այս ծրագիրն այն աստիճան ընդունված էր թուրք մտավորականության կողմից, որ նշանավոր թուրք դաստիարակներ Խալիտե Էտիպե հանըմը եւ Նիկեար հանըմը հոժարակամ նվիրվեցին այդ գործին, եւ Կ. Պոլսից մեկնելով Սիրիա՝ անձամբ ձեռնամուխ եղան թրքացած որբերին «ազգափոխ» անելու գործին:

Թուրքագետ Հակոբ Չաքրյանի հավաստմամբ՝ թուրք մարդասպաններից ոչ մեկը որեւէ հայ երեխա չի փրկել, որ դեռ իր կյանքն էլ վտանգեր: Առավել եւս, 1915 թ. մարդասպան հրոսակների՝ երեխա «փրկելու» նպատակամղվածությունը երբեք չի հանգեցրել հայի տեսակի փրկությանը: Պարզապես թուրքերը, նրանց հետ նաեւ քուրդ եւ չերքեզ մարդասպանները, իրենց անասնական կարիքները բավարարելու, ինչպես նաեւ հարեմում՝ հարճի, տանը՝ աղախինի կամ ծառայի պահանջ ունեցող ունեւոր ընտանիքներին երեխաներ վաճառելու նկատառումներով կենդանի են թողել հայ մանուկներին: Իսկ բազմաթիվ երիտասարդ աղջիկներ մահմեդականություն ընդունելուց հետո նաեւ ամուսնացել են: Այսինքն՝ երեխան դարձել է ռազմավար, իսկ մարդասպանը նրան պատվերով ունեւոր ընտանիքներին հանձնելու դիմաց վարձատրվել է: Ընդ որում՝ երբ խնդրո առարկա է եղել հայկական ընտանիքի ապարանքի կամ առանձնատան յուրացումը, մարդասպան հրոսակները չեն խնայել ոչ մեկի՝ այդ թվում երեխաների կյանքը¹⁹:

Հայ երեխաների «փրկության» պարագայում խնդիրը, սակայն, սոսկ ստրկացումը չէր, այլ նրանց ներկայությամբ ծնողների, քույրերի, եղբայրների եւ ողջ գերդաստանի դաժան սպանությունը:

Այդպիսի ցնցումներից եւ դաժան փորձությունից հետո «փրկված» եւ մահմեդականի ընտանիքում որպես հարճ, աղախին կամ ծառա հայտնված հայ երեխան, երանի պիտի տար սպանվածներին, հանդուրժե՞ր իր ծնողներին տանջամահ արած դահիճների ներկայությունը, իսկ ցմահ նրան պիտի հետապնդե՞ր զազազած թուրք, քուրդ կամ չերքեզ հրեշի զարհուրելի ուրվականը:

Հայտնի թուրք սոցիոլոգ Իսմայիլ Բեշիքչիի հավաստմամբ՝ հայ երեխաների ներաշխարհը ճնշելու միջոցով ֆիզիկական գոյության պահպանումը չի կարելի «փրկություն» անվանել: Ըստ նրա՝ ոչ թուրքերի, ոչ քրդերի մեջ չի եղել մի երեխա, որին պահպանած լինեին նրա զուտ հայ լինելու համար կամ ընտանիքի հարկի տակ ընդունեին՝ հարգելով հայերի լեզվական, հոգեւոր եւ մշակութային արժեքները: Հետեւաբար, այն «փրկություն» համարելը ճիշտ չէ: Միայն Դերսիմի շրջանի ալավի մահմեդականների մոտ է, որ հայերը, այն էլ որոշակի ժամանակով, կարողացել են պահպանել իրենց ազգային-կրոնական եւ լեզվական ինքնությունը: Սակայն սուրնի

¹⁹ Հ. Չաքրյան, նշվ. աշխ., էջ 7:

մահմեդականները հայերին այդ բանը թույլ չեն տվել, քանի որ նրանք հայերի մահմեդականացումը համարել են իրենց հիմնական առաջադրանքը²⁰:

Այսպիսով՝ անգափահասների նկատմամբ կիրառված բռնություններն իրականացվել են նախապես մշակված եւ նպատակաուղղված գործողության համաձայն, թուրքական եւ քրդական խաժամուժին հանցագործությունների դրդելու գործողությամբ, տղամարդկանց սպանությամբ, ընտանիքների քայքայմամբ, երեխաներին ծնողներից առանձնացնելու, զանգվածային տեղահանությամբ:

Անգափահասների նկատմամբ կիրառված բռնություններն ամբողջությամբ համապատասխանում են ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի բանաձեռի 2-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերին, այն է՝ 4) խմբի ներսում ծննդաբերության կամ մանկածնության եւ սերնդի շարունակության կանխման միջոցառումները, եւ 5) բռնի կերպով երեխաների հանձնումը մարդկային մի խմբից մյուսին, որոնք միջազգային իրավունքի տեսանկյունից դատապարտվում են օրենքի ողջ խստությամբ եւ որակվում են միայն ու միայն ցեղասպանություն:

РЕЗЮМЕ

Пожалуй, одним из самых болезненных вопросов геноцида являются разные уголовные насилия над армянскими маленькими детьми, которые с точки зрения международного права рассматриваются как форма проявления геноцида и соответствуют 4 и 5 пунктам 2-й статьи резолюции ООН от 9-ого декабря 1948 г.

Эти насилия осуществлялись согласно предварительно разработанным действиям.

В зашифрованном письме Энвер паши от 27 февраля 1915 г. отмечалось во время резни оставить в живых детей до пяти лет. Однако, в другой секретной инструкции Талеат приказывал не щадить даже новорожденных.

В реальности, сохранение жизни детей до пяти лет и их содержание в приютах имело цель сделать их турками.

SUMMARY

However, in the science that studies Genocide the most painful core problems are the different types of criminal violences applied to Armenian young children, those violences are observed as a way of genocide demonstration from the point of

²⁰ Տե՛ս անդ:

view of international Law and correspond to the United Nations Convention on 9 December 1948 Article 2 points 4 and 5.

Those violences have been implemented according to previously processed action.

In Enver pasha's cipher-wire on February 27 1915 it was mentioned that during carnages let alive children up to 5 years old. But in other secret directive Taleat ordered not to save even cradle babies.

Actually, saving children up to 5 years old and their recruitment at orphanages has had the aim of Turkification.

ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ

պատմական գիտ. թեկնածու

ԵՂԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴԻՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արեւմտյան Հայաստանում Օսմանյան Թուրքիայի տիրապետության հաստատման ժամանակներից ի վեր կիրառվում էր հայերի թալանի, ազգային, մարդկային եւ կրոնական իրավունքների ոտնահարման եւ մասնակի կոտորածների քաղաքականություն: 1914 թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմը հիմնալի առիթ էր Թուրքիայի համար՝ իրագործելու իր արյունառուշտ ծրագիրը:

Պատերազմի առաջին տարիներին արեւմտահայությունը հանդիպում է ոչ միայն պատերազմական գործողություններից բխող դժվարությունների, այլեւ քուրդ ու մահմեդական այլ ցեղերի կողմից ենթարկվում է սպանությունների, գերեվարությունների եւ թալանի: Տարատեսակ բռնություններից փրկվելու համար արեւմտահայերը, թողնելով ամեն ինչ, փախչում էին ռուսական սահման, ապաստան գտնում Երեւանի նահանգում եւ այլ վայրերում: 1914 թ. վերջին եւ 1915 թ. սկզբին Արեւմտյան Հայաստանից, Պարսկաստանից եւ Թուրքիայի սահմանակից շրջաններից Երեւանի եւ Թիֆլիսի նահանգների 10 գավառներ էին գաղթել շուրջ 49,8 հազ. հայ¹:

Իրենց հայրենիքից հարկադրաբար հեռացած արեւմտահայ փախստականների կարիքները բավարարելու համար ստեղծվեցին մեծ թվով բարեգործական կառույցներ՝ Հայկական կենտրոնական կոմիտեն, Հայ նպաստամատույց եւ «Մեղու» ընկերությունները, հայրենակցական միությունները, Երեւանի, Վաղարշապատի, Թիֆլիսի եւ այլ վայրերի եղբայրական օգնության կոմիտեները եւ ուրիշներ: Կովկասյան ռազմաճակատի փախստական գործերի գլխավոր լիազոր գեներալ Թամամյանի հանձնարարությամբ Երեւանում կազմակերպվում է Փոխատու կոմիտե՝ Երեւանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսի նախագահությամբ, որի անդամները Եղբայրական օգնության հանձնաժողովի, Նպաստամատույց եւ Բարեգործական ընկերությունների

1 «Հայկական հարց» հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 95:

ներկայացուցիչներ էին լինելու: Այդ կոմիտեի տրամադրության տակ է դրվում պետական գանձարանից տրված 275 000 ռուբլի, որը տրվելու էր որպես փոխառություն պատերազմից տուժած թուրքահայ հողատերերին, առետրականներին եւ արհեստավորներին²:

Թամանշյանի կարգադրությամբ՝ փախստականների ուտելիքի ծախսերը հոգալու համար շուտափույթ գումար է փոխադրվում Երեւանի նահանգապետին՝ 505 200 ռուբլի, Գանձակի նահանգապետին՝ 40 665 ռուբլի, Թիֆլիսի նահանգապետին՝ 37 383 ռուբլի, Բայազետի՝ 35 628 ռուբլի, Նախիջեւան, Բասեն եւ այլ վայրեր³:

Արդեն 1914 թ. նոյեմբերի 22-ին Գեորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոսի՝ թեմական առաջնորդներին ուղղված կոնդակով մի շարք վայրերում բացվում են եղբայրական օգնության հանձնաժողովներ, որոնց գործունեության շրջանակներն ավելի են ընդլայնվում Հայոց մեծ եղեռնից հետո: 1914 թ. դեկտեմբերի 28-ին հիմնվում է Վաղարշապատի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովը:

1915 թ. մարտի 21-ի կոնդակով Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովը, իբրեւ հայ փախստականների խնամատար, ազգային կազմակերպությունների եւ հանձնաժողովների ղեկավար, հայ գաղթական գործի կենտրոնական տեղեկատու մարմնի վերակազմավորվեց, եւ նրա մեջ մտան համագումարին մասնակցող հայկական կոմիտեներից, ընկերություններից եւ հանձնաժողովներից ընտրված ու Վեհափառ Հայրապետի կողմից հաստատված ներկայացուցիչներ: Նրանք էին՝ Տ. Բագրատ եւ Տ. Մաթեոս Եպիսկոպոսները, Տ. Գարեգին եւ Տ. Բաբգեն վարդապետները՝ Ս. Էջմիածնի հանձնաժողովից, Տ. Խորեն Եպիսկոպոսը, Վ. Եղիազարյանը, Գ. Տեր-Խաչատրյանը եւ Ա. Չիլինգարյանը՝ Երեւանի հանձնաժողովից, Հ. Սաղաթելյանը եւ Պ. Կանդուրայանը՝ Թիֆլիսի Հայոց բարեգործական կոմիտեից, Պ. Գաբրիել Պապյանը՝ Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությունից, բժիշկ Ա. Սաթրիկյանը՝ Նոր Նախիջեւանի Հայկական կոմիտեից, Գ. Ամիրյանը՝ Պետրոգրադի եւ Յ. Խաչատրյանը՝ Մոսկվայի հայկական կոմիտեից⁴:

Կոնդակով արտոնություն էր շնորհված նաեւ գաղթական գործին նվիրված ազգային հանձնաժողովների եւ կազմակերպությունների բոլոր անդամներին, եւ լիազորվածներին հանձնարարվել էր Ս. Էջմիածնում եղած ժամանակ մասնակցել գլխավոր հանձնաժողովի նիստերին եւ խորհրդակցություններին:

Հայրապետական կոնդակը հրահանգում էր Հայաստանի բոլոր կողմերում կազմակերպել եղբայրական օգնության գործը, նպաստել թշվառներին, սննդատու կայաններ հիմնել, քաղաքներում եւ կենտրոնական գյուղերում հի-

2 Տե՛ս «Համբավեր», 1917, դեկտեմբերի 4, թ. 49:

3 «Գալաթի ձայն», 1916. մայիսի 1, թ. 30:

4 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 239, ց. 1, գ. 21, թ. 75, նաեւ ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 4, նաեւ ֆ. 55, ց. 1, գ. 115, թ. 2:

վանդանոցներ եւ բժշկական ընդունարաններ հաստատել, երաշխավորված ապահովության դեպքում ուղեւորել գաղթականներին իրենց ազատագրված հայրենիքը եւ օգնության ձեռք մեկնել նրանց՝ հայրենի մոխրակույտի ու ավերակների վրա կենդանացնելու իրենց քայքայված գյուղական տնտեսությունն ու օջախը⁵։ Նորին Սրբությունը հույս էր տաժում, որ իր հոգեւոր որդիները, ամեն կողմից տեսնելով Վասպուրականի, Մանազկերտի, Բաղեշի, Տարոնի, Ալաշկերտի, Բասենի եւ Հայաստանի այլ կողմերի անմխիթար վիճակը, առատաձեռն օգնություններով կնպաստեն իրենց բազմաչարչար որդիներին ապրելու եւ կստիպեն մի պահ մոռանալու դժոխսային պայմաններում իրենց անցկացրած օրերը։ Կոնդակը գլխավոր հանձնաժողովին՝ իբրեւ հայնապաստ ազգային կազմակերպությունների ղեկավար մարմնի, արտոնում էր բոլոր ինքնուրույն եւ ստորադիր հանձնաժողովների գործունեությունների մասին պարբերաբար տեղեկություններ հավաքել, ստանալ նրանց դրամական մուտքի եւ ծախսերի հաշիվները՝ վավերացրած տեղական վերստուգող մարմինների կողմից, եւ կարեւոր քաղվածքները հետզհետե հրապարակելով՝ տեղեկացնել այդ մասին հայ ազգաբնակչությանը։

Հանձնաժողովի նախագահությունը վարել են Եփրեմ Եպիսկոպոսը՝ 1914 թ. դեկտեմբերի 28-ից մինչեւ 1915 թ. ապրիլի 26-ը, Տ. Բագրատ Եպիսկոպոսը՝ 1915 թ. ապրիլից մինչեւ սեպտեմբերի 17-ը, Տ. Գարեգին վարդապետը՝ 1915 թ. սեպտեմբերի 17-ից մինչեւ 1916 թ. օգոստոսի 1-ը, ապա կոնդակով նախագահությունը անցել է Տ. Գեորգ վարդապետին։ Տարբեր ժամանակ Նորին սրբությունը հանձնաժողովի անդամության է կոչել Մ. Աթոռի միաբաններից՝ Տ. Տիրայր, Տ. Զավեն Եպիսկոպոսներին, Տ. Իսահակ, Տ. Վրթանես եւ Տ. Գյուտ վարդապետներին։

Հանձնաժողովի դրամական միջոցները կուտակվում էին տարբեր տեսակի նվիրատվություններից եւ հանգանակություններից։ 1915 թ. հունվարի 1-ից մինչեւ օգոստոսի 31-ը Կաթողիկոսի անունով ստացվել եւ գաղթականների համար ծախսվել էր 2658869 ռուբլի դրամ⁶։

Կազմակերպվող օգնությունը արեւմտահայ գաղթականներին հայրենիք վերադառնալու հնարավորություն էր տալիս։ Նրանցից առավել խիզախ ու ձեռներեց տղամարդիկ ձմեռվա ամիսներին ռուսական բանակի հետ անցել էին հայրենիք՝ Բայազետի, Ղարաքիլիսայի եւ Ատրպատականի կողմերը՝ զարնան բացվելուն պես իրենց ցանքսին, խոտատեղին, դաշտին ու հանդին, ավերված տանն ու դռանը տեղ դառնալու, ցորենի ու գարու հորերին, տնային կարասիքի թաքստոցներին պահապան կանգնելու նպատակով։

Եղբայրական օգնության հանձնաժողովների առջեւ փախստականները բարձրացնում էին անցագրի եւ նպաստի տրամադրման հարցեր։

5 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 239, ց. 2, գ. 1260, թ. 13, նաեւ ց. 3, գ. 75, թ. 1։

6 Տե՛ս «Աշխատանք», 1916, հոկտեմբերի 8, թ. 4-6։

Կարգադիր հանձնաժողովը շատ խոհեմ էլ զգուշավոր դիրք բռնեց փախստականների մեջ ինքնաբերաբար առաջացած շարժման հանդեպ: Ճակատում ռազմական դրությունը երերուն էր, եւ ռուսական բանակը մեծամեծ դժվարությունների դեմ տակավին գերմարդկային ջանքեր պիտի թափեր՝ լեռնանցքներին տիրանալու եւ հաղթական ճանապարհ հարթելու համար դեպի Մուշ, Վան եւ Բաղեշ: Բաղեշի, Մուշի, Վանի, Արճեշի, Ախլաթի, Աղջավազի, Լիզի, Կոփի եւ Մանազկերտի շրջաններում, որոնք դեռ թուրքական զորքերի ձեռքում էին, հայ ժողովուրդը ենթարկվում էր ընդհանուր կոտորածի, աքսորի եւ այլեւայլ բռնությունների: Դա է պատճառը, որ հայոց գաղթի նոր հոսանք էր սկսվել դեպի՝ ռուսական զորքերի կողմից գրավված հայկական գավառները:

Հանձնաժողովը փախստականների վերադարձը դեպի հայրենիք կազմակերպելուց առաջ Վեհափառ Հայրապետի հավանությամբ երկու պատվիրակություն ուղարկեց Բայազետի, Ալաշկերտի եւ Ղարաքիլիսայի շրջանները: Տեղի հայերը, թալանված, գաղթի եւ ավերումների ենթարկված լինելով, թշվառ դրության մեջ էին. այս ցավալի իրողությունը հաշվի առնելով՝ այստեղ ստեղծվել էր «Ալաշկերտի հայրենակցական միությունը», որին աջակցում էին մի շարք բարեգործական հաստատություններ եւ միություններ⁷:

Պատվիրակություններին հանձնարարվում էր տեղում ծանոթանալ հայ փախստականների վիճակին, տեղեկանալ հայոց հողային սեփականության նկատմամբ ռուսական պետության որդեգրած քաղաքականության ընթացքին, բանակցել զինվորական իշխանության եւ զորաբանակի սպարապետի հետ՝ ճշտելու համար, թե ո՞ր շրջաններում կյուլաստրի Կովկասից վերադարձող հայ գաղթականներին տեղավորել եւ վերաշինել իրենց գյուղերն ու նախկին բնակավայրերը: Մյուս կողմից՝ հանձնաժողովն իր բաժանմունքների եւ համագործակից կազմակերպությունների աջակցությամբ շտապ ցուցակագրեց գաղթավայրի այն փախստականներին, որոնք, իրոք, հայրենիք վերադառնալու եւ շինարարական գործին ձեռնամուխ լինելու ցանկություն ունեին, ոչ միայն մանրամասն տեղեկություն հավաքեց նրանց ունեցած լծկանների, երկրագործական պարագաների ու երկրում հորած սերմացուի քանակի մասին, այլեւ պակասորդը հայթայթելու ծախքի մոտավոր նախահաշիվը կազմեց⁸:

Միաժամանակ Հայոց գյուղատնտեսական եւ նպաստամատույց ընկերությունները մարտի կեսից Ալաշկերտի եւ Ղարաքիլիսայի կողմերն էին ուղարկել երկրի ավերված տնտեսության վերականգնմանը նպաստող երկու հանձնախումբ՝ Ա. Թադեոսյանի առաջնորդությամբ, Մուշեղ Թումանյանի եւ Միքայել Տեր-Գեորգյանի անդամակցությամբ: Կենտրոնից հրահանգ էր տրված տեղեկություններ հավաքել փախստականների գյուղատնտեսական

7 Տե՛ս «Գաղափար», 1916, դեկտեմբերի 23, թ. 111:

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թ. 1:

կարիքների վերաբերյալ, զեկուցագիր ներկայացնել Ս. Էջմիածնի եղբայրական օգնության գլխավոր հանձնաժողովին եւ ապա նրա հետ փոխադարձ համաձայնությամբ ու նրա աջակցությամբ կազմակերպել գաղթականների վերադարձը: Հանձնարարված էր մեծ չափով նպաստել տնտեսության զարգացմանը, երկրագործական գործիքներ, լծկաններ, կթաններ եւ սերմացու մատակարարել, օժանդակել շինարարական աշխատանքներին⁹:

Ստացված տեղեկությունները համոզեցին հանձնաժողովին, որ առայժմ վաղ է բոլոր գաղթականներին անխտիր ուղարկել հայրենիք, քանի որ ռազմական տեսակետից իրավիճակը դեռ պարզ չէր: Կարսի նահանգապետի կարգադրությամբ թուրքական վտանգի պատճառով Արդահանի, Սարիղամիշի եւ Կարսի փախստականների առջեւ դեռ փակված էին հայրենիքի դռները: Ամբողջ Մալմաստը սարսափի օրեր էր ապրում թուրքերի եւ քրդերի՝ Ուրմիայի եւ Մովուջբուլաղի ուղղությամբ գործած անընդհատ հարձակումների պատճառով: Բերկրիկալեի եւ Արճեշի ճանապարհները կտրված էին, իսկ Մանազկերտի շրջանում գետերալ Աբացեի եւ նրա գործակիցների չարամիտ բանսարությամբ բացարձակ հալածանք էր սկսված գաղթական հայերի դեմ¹⁰:

Կար մթերքի պակաս. սովը, տարածված համաճարակը մահվամբ էին սպառնում հայության մնացորդներին: Միակ փոքրիշատե հուսալի վայրը գյուղատնտեսական եւ շինարարական գործի հաջողության համար Բայազետի, Ալաշկերտի եւ Ղարաքիլիսայի շրջաններն էին: Ուստի հանձնաժողովի կարգադրությամբ՝ միայն այդ տեղերի փախստականներից մոտ 1800 հոգի՝ աշխատանքի ընդունակ անձինք՝ իբրեւ 1500 ընտանիքի ներկայացուցիչ, սկսած մարտի 15-ից մինչեւ մայիսի 15-ը, վերադարձան հայրենիք՝ շինարարական գործին եւ տնտեսությանը նվիրվելու՝ թողնելով իրենց կանանց, երեխաներին եւ ծերունիներին Կովկասի սահմաններում: Վերադարձողների համար սննդատու կայաններ էին հաստատվել Էջմիածնում, Իգդիրում, Հովհաննու վանքում եւ Ղարաքիլիսայում: Իգդիրի Եղբայրական օգնության հանձնաժողովը ցուցակագրում էր անցորդներին եւ մատակարարում նրանց անհրաժեշտ իրեր, իսկ երկրում Միրական Տիգրանյանի կազմակերպությունը մինչեւ Վանի շրջան անցնելը ապահովում էր նրանց կյանքը ճանապարհի անակնկալներից՝ գործով ու խորհրդով պիտանի ծառայություն մատուցով նրանց¹¹:

Վերադարձող բնակիչները ժամանակավորապես տեղավորվում էին բնակիչներից թափուր եւ համեմատաբար քիչ տուժած քրդական գյուղերում, իսկ մնացած ավանների ավերածությունները համեմատաբար քիչ էին, եւ բնակիչները շտապ վերանորոգում էին իրենց խրճիթները: Վերադարձած փախստականներին ծանր հոգս էր պատճառում լծկան անասունների, գյուղատնտեսա-

9 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թ. 2:

10 Տե՛ս անդ:

11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թթ. 3-4:

կան գործիքների, մանավանդ՝ գութանի, գերանդու, բահի ու չութի, սերնացուի, առօրյա սննդի եւ բժշկական օգնության զգալի պակասը: Առանձնապես զգալի էր զարու պակասը: Շատ անմխիթար էր երկրի վիճակը բժշկական, առողջապահական տեսակետից: Հիվանդների թիվը մեծ էր:

Հանձնաժողովը, նկատի ունենալով այս բոլոր կարիքները շուտափույթ ցուցանելու անհրաժեշտությունը, միաժամանակ հաշվի առնելով նաեւ Նորին Սրբության տնօրինության ներքո գանձված շինարարական նպաստի քանակը եւ Հայոց գյուղատնտեսական, նպաստամատույց ընկերությունների եւ Մոսկվայի Հայկական կոմիտեի լիազորների միջոցով ընձեռած երաշխիքը հայրենիքի վերաշինության հատկացրած լայն դրամական օժանդակության նկատմամբ, որոշեց Բայազետի, Ալաշկերտի եւ Ղարաքիլիսայի շրջաններում մի շարք շինարարական ձեռնարկությունների նախահաշիվ կազմել՝ սահմանելով հինգ ամսվա ծախքը, եւ ներկայացնել Նորին վեհափառության հաստատությանը (նախահաշիվը կազմում էր 121000 ռուբլի)¹²:

Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադրիչ հանձնաժողովի՝ ապրիլի 26-ի նիստում փախստական հայերի տնտեսությունը վերանորոգող Թիֆլիսի կոմիտեի լիազոր Արշակ Թադեոսյանը, հանդես գալով զեկույցով, նշում է, որ անձամբ այցելել է Ալաշկերտ՝ տեղի գաղթականների վիճակին ծանոթանալու: Նա մարտի 29-ին ուղեւորվել էր Թիֆլիսից Իգդիր, իսկ այնտեղից՝ Ղարաքիլիսա եւ Ալաշկերտի շրջան՝ տեղում ծանոթանալու գաղթականների դրության եւ նրանց հասանելիք օգնության եղանակների հետ: Լինելով այնտեղ 20 օրից ավելի՝ նա նշում էր, որ այդ երկու շրջաններում մոտ 23 հայաբնակ գյուղ՝ Ղարաքիլիսան, Զեյդկանը, Ամարը, Մօլլա-Մուլեյմանը եւ այլն, ավերված են: Հայտնում էր նաեւ, որ սկսվել է փախստականների վերադարձը դեպի իրենց գյուղեր: Վերադարձող հայերի մի մասը ժամանակավոր տեղավորվում է քրդական ազատ եւ համեմատաբար քիչ վնասված գյուղերում, ումանք էլ վերանորոգում են իրենց խրճիթները: Հայրենիք վերադարձողների թիվը հասնում էր 1500-ի, 1000 ընտանիք իրենց հետ տարել են մոտ 1300 գլուխ լծկան տավար եւ ունեն 8000 սոմարի չափ հերկեր¹³:

Տեղի գաղթականներին նպաստ էին տվել՝ Թիֆլիսի գյուղատնտեսական ընկերությունից կազմված միացյալ կոմիտեից՝ 25000 ռուբլի, Հայոց նպաստամատույց ընկերությունից՝ 23500 ռուբլի: Գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը Կաթողիկոսի անմիջական հսկողության ներքո 121000 ռուբլի տնտեսաբար պետք է օգտագործեր Ալաշկերտի փախստական գաղթականների վերադարձի եւ նրանց տնտեսությունը նորոգելու համար¹⁴:

¹² Տե՛ս անդ:

¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ.472, ց.1, գ.31, թ.4 բնագիր ձեռագիր:

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ.472, ց.1, գ.15, թ. 11:

Ռազմաճակատը Արեւմտահայաստանի խորքերը փոխադրվելուց հետո Ալաշկերտ վերադարձող գաղթականները Կովկասից բերեցին իրենց ընտանիքներին, որոնց աջակցությամբ հիմք դրվեց շինարարական աշխատանքին: Եղբայրական օգնության գործադիր վարչության լիազոր Ա. Թադեոսյանի եւ Ա. Աթանասյանի ջանքերը բեղմնավոր եղան: Մոսկվայում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում եւ Երեւանում գնված գյուղատնտեսական գործիքները ժամանակին բաշխվեցին գյուղացիներին. լծկան չունեցող ընտանիքներին բաժանվեցին 270 գլուխ եզ ու գոմեշ՝ գնված Մակուի եւ Ավադադի շրջաններում, ընդամենը 1000 ռուբլու արժողությամբ սերմացու, քանի որ գյուղացիները գտել էին իրենց սեփական պաշարը հորերում¹⁵:

Վեհափառ Հայրապետը, 1915 թ. մայիսի 28-ին հաստատելով Ալաշկերտի Եղբայրական օգնության գործադիր վարչությունը եւ ալաշկերտցի փախստականների դարձի ու նրանց ապագա տնտեսության 121000 ռուբլու ծախքի նախահաշիվը, հանձնարարեց սինոդին՝ այդ գումարը տալ հանձնաժողովին: Միաժամանակ, Նորին սրբությունը դիմեց Կովկասի պետական բարձրագույն կառավարությանը՝ առաջարկելով, որ զինվորական իշխանության կողմից թույլ տրվի հայրենիք վերադարձող գաղթականներին՝ տեղ կանգնել իրենց նախկին բնակավայրերին: Մյուս կողմից՝ Տ. Սահակ արքեպիսկոպոս Ավետյանին եւ Տ. Արսեն վարդապետին արտոնություն տրվեց իրենց օգնական խմբով շրջագայել նվաճված հայկական գավառներով՝ Վասպուրականի, Ալաշկերտի, Ղարաքիլիսայի եւ Մանազկերտի շրջանների հայության եկեղեցական-վարչական գործերը տնօրինելու եւ նրանց կենսական կարիքները հոգալու համար: Արդյունքում թույլատրվեց Տ. Սահակ արքեպիսկոպոսին անցնել Վան, վերացնել գաղթականների՝ Աբաղա, Արճեշ եւ Վան անցնելու արգելքը, թույլ տալ Բիթլիսի վիլայեթից եկող փախստականներին՝ տեղավորվել Մանազկերտի շրջանում՝ իրավունք չտալով նրանց Ալաշկերտի եւ Կովկասի սահմանն անցնելու¹⁶:

Հունիսի սկզբին, կառավարության կարգադրության համաձայն, Կովկասի սահմաններում ապաստանած արեւմտահայ փախստականներին թույլատրվում էր ազատ վերադառնալ հայրենիք: Երեւանի նահանգապետը եւս նույն բովանդակությամբ բացատրական հրահանգ ուղարկեց Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովին: Նրանում նշվում էր, որ ոստիկանությունը ոչ մի կտրուկ միջոց չի գործադրելու փախստականների դեմ, քանզի վստահում է ազգային կազմակերպություններին, որոնք ջանք ու եռանդ չեն խնայել՝ հորդորելու գաղթականներին վերադառնալու հայրենիք¹⁷: Վերադառնալ չցանկացողները կարող էին բնակություն հաստատել միայն

15 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թ. 5:

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 26, թթ. 3-4:

17 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թ. 5:

Երեւանի, Թիֆլիսի եւ Գանձակի նահանգներում: Գաղթականների շարժը դանդաղ թափ ստացավ Էջմիածնի եւ Երեւանի շրջակայքից դեպի Բայազետ, Ալաշկերտ եւ Վան, Շարուր Դարալագյազից ու Նախիջեւանից՝ դեպի Ատրպատական, Շիրակից ու Ախալքալաքից՝ դեպի Արդահան ու Արդվին: Այս անգամ վերադարձողները գնում էին իրենց գերդաստաններով՝ ստանալով Եղբայրական օգնության հաստատություններից հաջորդ ամսվա ամբողջ նպաստը, ինչպես նաեւ պարենամթերք ու հանդերձանք: Մեծամասնության շարժը Էջմիածնով էր կատարվում, որտեղ բացվեց սննդատու կայան¹⁸:

Պարսկահայ փախստականների վերադարձի հոգան ամբողջապես իր վրա էր վերցրել թեմակալ առաջնորդ Տ. Ներսես եպիսկոպոսը: Նա 1915 թ. մայիսի 18-ից մինչեւ հունիսի 4-ը սանիտարական խմբի ուղեկցությամբ շրջագայել էր Խոյի հայաբնակ վայրերով, Սալմաստի 18 հայաբնակ եւ թրքախառն, եւ Ուրմիայի ու Բարանդուզի 50-ի չափ խառն հայաբնակ, ասորաբնակ եւ թրքաբնակ գյուղերով՝ հայրենիք վերադարձողների վիճակին ծանոթանալու եւ նրանց տնտեսական շինարարությանն օժանդակելու համար¹⁹:

Այդ շրջագայության ընթացքում պարզվել էր, որ Խոյի, Մեյդավարի, Շորայի եւ շրջակայքի 900 տուն փախստական հայերից շատերը գաղթի խառնաշփոթի մեջ իրենց անասունների մեծ մասը վաճառել եւ երկրագործական գործիքներն ու տնային կահկարասիքը պահ էին տվել հարեւան թուրքերին, իսկ ռուսական սահմանն անցնելիս համեմատաբար ավելի քիչ գրկանք կրելու կորուստ ունեցել: Գարնանը վերադառնալով հայրենիք՝ նրանք տեղի ռուսական հյուպատոսի եւ դատավորի շնորհիվ հարեւան թուրքերից հետ էին ստացել ոչ միայն իրենց ավանդ դրած ապրանքը, այլեւ վաճառած անասունները: Այս պայմաններում Խոյի շրջանը վերադարձող գաղթականները առանձին նպաստի եւ օգնության սուր կարիք չէին գգում: Միայն եկեղեցիները զգեստների, սրբազան անոթների եւ գրքերի մեծ կարիք ունեին²⁰:

Հայրենիք վերադարձող փախստականները օգնության եւ նպաստի կարիք ունեին, քանի որ իրենց ունեցվածքի մեծագույն մասը ավարառության էր ենթարկվել, իսկ որոշ մասը միայն պահ տրվել հարեւան թուրքերին: Եւ օգնության գործը նպատակին հասցնելու համար Տ. Ներսես եպիսկոպոսի նախագահությամբ 1915 թ. մայիսի 24-ին Դիվանում գումարված հայ ժողովրդական խորհրդակցությունը որոշեց կազմել Սալմաստի հայ բնակչության բերքը հնձելու, կուտակելու եւ հաջորդ աշնան վարն ու ցանքսի ծախքի նախահաշիվը (ընդամենը 58830 ռուբլի) եւ հանձնել սրբազան թեմակալ առաջնորդի տնօրինությանը²¹:

18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թ. 5:

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 2, գ. 4, թթ. 23-51:

20 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թ. 5:

21 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թթ. 5-6:

Ուրմիայի շրջանում 1914 թ. դեկտեմբերին՝ տաճկական արշավանքի ժամանակ, 1100 տուն հայ ազգաբնակչության ամբողջ շարժական ունեցվածքը թալանվել էր: Անվնաս էին մնացել միայն ցանքսերն ու այգիները, որոնք 1915 թ. առատ հունձ էին խոստանում: Ամառվա երեք ամիսներին ապրելու նպատակով 1000 չունեւոր ընտանիքի տրվում է դրամական օգնություն՝ մեկական լծկանի, շենքերի նորոգության եւ երեք ամսվա հացի համար:

Սալմաստի եւ Ուրմիայի շրջաններում ապաստանել էին նաեւ մոտ 3000 փախստականներ Հասպտանից, Վանից, Ադրակից, Աբաղայից եւ Գավաշից: Նրանց վերադարձը դեպի Բաշկալա եւ Հասպտան-Աբաղա մեծամեծ վտանգների հետ էր կապված քրդական հրոսակների ասպատակությունների պատճառով: Ուստի անհրաժեշտ էր նրանց եւս ամառվա երեք ամիսը կերակրել՝ ամսական յուրաքանչյուր շնչին հաշվելով առնվազն 2 ռուբլի:

Ատրպատականի թեմակալ Տ. Ներսես եպիսկոպոսը, նկատի ունենալով վերոհիշյալ կարիքներն ու պահանջները, Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովից խնդրեց միանվագ 200000 ռուբլի նպաստ²²:

Սալմաստում, Խոյում եւ Ուրմիայում սրբազան թեմակալի, գեներալ Չերնագուրովի եւ հյուպատոս Կիրսանովի ու Նիկիտինի հովանավորությամբ եւ անմիջական տնօրինությամբ կազմվեցին ասորիների, թուրքերի եւ հայերի ներկայացուցիչներից խառն հանձնաժողովներ: Հանուն ավերված երկրի վերաշինության, ինչպես նաեւ տարբեր ցեղերի միջեւ փոխադարձ հաշտության եւ խաղաղության՝ նրանք համոզելու էին քրդերին հայերից եւ ասորիներից գաղթի ընթացքում կողոպտած ապրանքն ու անասունները վերադարձնել: Գեներալ Չերնագուրովի կարգադրությամբ գործում էին կազակների վաշտերը, որոնք առանձնապես քրդաբնակ վայրերից մեծ քանակությամբ ավար առգրավեցին եւ հանձնեցին վերադարձող փախստականներին²³:

Եղբայրական օգնության կենտրոնական հանձնաժողովը լայն գործունեություն է ծավալում նաեւ Նոր Բայազետում, Վանում, Ալաշկերտում, Օշականում եւ այլ վայրերում: Նոր Բայազետի գավառում փախստականների հոսքը սկսվել էր 1915 թ.-ի հունվարի 2-ից եւ դադարել մայիսի վերջին: Նրանց թիվը հասնում էր 1272-ի, որոնցից 412-ն ապրում էին քաղաքում, 560-ը՝ Ն. Ախտայի շրջանում, իսկ 300-ը՝ Ելենովկայի շրջանում: Շուրջ երկու ամիս գավառի եւ քաղաքի բնակչությունը ապաստան է տվել, խնամել ու կերակրել փախստականներին իր սեփական միջոցներով: Միայն մարտի 15-ից սկսած փախստականները ստանում են նպաստ Ս. Էջմիածնից, Երեւանից, Թիֆլիսից, նաեւ ռուսական կառավարությունից: Շրջանի լիազոր Պ. Լ. Պետրոսյանի զեկուցումից տեղեկանում ենք, որ Երեւանից ստացվել էր 6 արկղ հագուստ, սակայն այն բավարար չէր, քանզի ապաստան գտած բոլոր

²² Տե՛ս անդ:

²³ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 472, ց. 1, գ. 263, թ. 6:

փախստականները մերկ էին ու բոքիկ, իրենց մերկությունը ծածկելու համար շապիկ անգամ չունեին: Էլ ավելի սակավ էր սնունդը²⁴:

Վանում հավաքված ժողովուրդը եւ Վասպուրականի գանազան շրջանների փախստական-գաղթականները նույնպես գտնվում էին ծանր կացության մեջ²⁵: Ճիշտ է, այստեղ ստեղծվել էր հայկական նահանգապետություն, սակայն նրա միջոցները շատ սուղ էին: Տնտեսապես քայքայված ժողովրդին օգնելու, սովը եւ համաճարակները կանխելու համար խիստ անհրաժեշտ էր դրսի օգնությունը: Հատուկ գրությամբ Վանի նահանգապետը հայցեց նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.-ի աջակցությունը²⁶: Դեռեւս մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը Աղթամարի կաթողիկոսական տեղապահ նշանակված Տ. Սահակ արքեպիսկոպոսը Կաթողիկոսի հրամանով կրկին ուղևորվեց Վան:

Կաթողիկոսի թույլտվությամբ որոշվեց 25000 ռուբլի ուղարկել Վան: Բացի դրամական օգնությունից՝ Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովը ուղարկում է դեղորայք եւ բժշկական խումբ (բժիշկ, ֆելդշեր, գթության քույր), հագուստ, շաքար, թեյ: Հանձնաժողովը Տ. Սահակ արքեպիսկոպոսին խնդրում է Վանի նահանգապետ Արամի, Ս. Տիգրանյանի, Տ. Սահակի հետ Վանում կազմել եղբայրական օգնության հանձնաժողով: Բժշկական խորհուրդը, որը Տ. Սահակի հետ ժամանելու էր Վան, գտնվելու էր տեղի հանձնաժողովի տրամադրության ներքո²⁷:

Արխիվային փաստաթղթերը փաստում են, որ Վանի ժողովուրդը 1915 թ. մայիսի 31-ի դրությամբ մինչեւ Տ. Սահակի ժամանելը անմխիթար վիճակում էր, տների մեծ մասն ավերված էր, այգիները ոչնչացված, ժողովուրդը չունեւ պարուստի միջոց, եղած միջոցները ծախել էին մեկ ամիս տեսած ինքնապաշտպանության ժամանակ: Տարածված էր տիֆը (որովայնի եւ բժավոր), դիպեմտերիան, չկար բժիշկ եւ դեղորայք: Անձամբ նահանգապետ Արամ Մանուկյանը գրություն է ուղարկում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցին, որում նկարագրում է ժողովրդի ծանր կացությունը եւ խնդրում արագացնել Սահակ սրբազանի՝ Վան գալը²⁸:

1915 թ. հունիսի 8-ի Վասպուրականի Եղբայրական օգնության հանձնաժողովի գեկուցագրից՝ ուղղված Ս. Էջմիածնի Եղբայրական հանձնաժողովի գլխավոր կարգադիր հանձնաժողովի նախագահ Բագրատ Եպիսկոպոսին, տեղեկանում ենք, թե որչափ ոգետորիչ եւ մխիթարական էին Վանի երեսնօրյա

24 Տե՛ս ՀԱԱ, ֆ.472, ց.1, գ. 31, թ. 297:

25 Տե՛ս Ա Ասրյան, Արամ Մանուկյան. Կյանքը եւ գործը (Ազատագրական շարժման եւ անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երեւան, 2005, էջ 130:

26 Տե՛ս Մ. Ավետիսյան, Փաստաթղթեր Արամ Մանուկյանի պետական գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների» 1990, թ. 2, էջ 137-138:

27 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց.1, գ. 45, թ. 2, ձեռագիր:

28 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 1, գ. 15, թթ. 23-25:

կռիվները եւ հերոսական դիմադրության պատմությունը, նույնչափ աղեխարշ էր տաճկական բռնակալության գործած ավերը²⁹:

Կոտորածից Վանում ապաստանած 25000-ից ավելի գաղթականներ քաշվել էին հեռավոր գյուղերը, եւ աննշան մասը հագիվ մնացած լիներ քաղաքի մեջ: Կոտորվածների թիվը հասնում էր 20000-ի: Սոսկալի ջարդեր էին տեղի ունեցել նաեւ Արճեշ, Արծկե, Բերկրի, Նորադուզ, Աղբակ եւ Կարճկան գավառներում: Այգեստանի խանութներն ու հրապարակները ամբողջովին կողոպտված էին եւ ավերված: Գյուղացիները զուրկ էին լծկաններից եւ երկրագործական գործիքներից: Քաղաքամեջի եւ Այգեստանի մի քանի եկեղեցիներից եւ դպրոցներից գատ, բոլոր վանքերը եւ դպրոցներն այրվում էին: Աղթամարի, Արճեշի եւ Աղջավազի գաղթականության մեջ սկսվել էր համաճարակ³⁰:

Ավելի քան 50000 հայ փախստականներ՝ մերկ, բոկոտն, անոթի, հիվանդ, հյուծված, ապաստան գտան Արարատյան դաշտում: Նրանց մեծագույն մասը կանայք, երեխաներ, որբեր, ծերունիներ էին: Վասպուրականի հայությունը (120000 հոգի) նույնպես շարժվում է դեպի Արարատյան դաշտ:

Փախստականների կարիքները հոգալու համար Գեորգ Սուրենյանց Կաթողիկոսը հայրապետական կոնդակով հանձնարարեց Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովին հիմնել սննդատու կայաններ՝ ճաշարաններ, բացել հիվանդանոցներ, բուժարաններ: 1915 թ. հուլիսի 18-ին կայացած իր արտակարգ նիստում հանձնաժողովը որոշեց լայն կերպով կազմակերպել օգնության գործը, պատասպարել նորեկ եւ այնուհետեւ գալիք փախստականներին Շիրակի, Նոր Բայազետի, Ապարանի եւ այլ գոյ շրջաններում եւ խնամել նրանց, ամոքել դառն վիշտը եւ բարոյական ու ֆիզիկական սոսկալի վերքերը³¹:

1914 թ. դեկտեմբերի 27-ից 1915 թ. հունվարի 25-ը Եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովը Ս. Էջմիածնի վանքի բակում եւ Վաղարշապատի հասարակական շինություններում ապաստան է տվել եւ կերակրել (ամեն օր բաժանել 200-300 փութ հաց, տաք կերակուր, թեյ, սուրճ, հագուստեղեն եւ վերմակներ) շուրջ 15000 փախստականների, Վաղարշապատին բաշխել է 20 մահճակալով հիվանդանոց եւ ամբուլատորիա³²: Գաղթականները ամիսը մեկ անգամ ստանում էին ալյուր, վանքի փռերում հաց էր թխվում եւ բաժանվում գաղթականներին: Համաձայն հանձնաժողովի որոշման՝ ալյուրը վաճառվում էր հնարավորինս էժան գնով (փութը 2-3 ռուբլի): Հանձնաժողովի անդամ Տ. Վրթանես վարդապետի առաջարկով՝ հացը բաժանելն ավելորդ էր. պետք

29 Տե՛ս ՀԱԱ, ֆ.472, ց.1, գ.45, թթ. 5, բնագիր, ձեռագիր:

30 Տե՛ս ՀԱԱ, ֆ.472, ց.1, գ.45, թթ. 6, բնագիր ձեռագիր:

31 Տե՛ս ՀԱԱ, ֆ.472, ց.1, գ.15, թ. 19, տպագիր:

32 Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 118:

էր այլուրը տալ Վաղարշապատի փռերին՝ պայմանով, որ հացը վաճառվեր միայն գաղթականներին. սելը՝ 7, սպիտակը՝ 7 ու կես կոպեկով³³:

Հագուստ եւ անկողին գաղթականները ստանում էին հանձնաժողովի պահեստից: Եղբայրական օգնության հանձնաժողովին այս գործում օգնում է Երեւանի նահանգային կոմիտեն՝ տրամադրելով 50 000 ռուբլի շորեղենի համար: 14000 ռուբլի ապրանք է բերվում նաեւ Տփլիսից, 15000 ռուբլով՝ Երեւանից: Բաքվի նավթարդյունաբերական “Свечь” ընկերությունը Էջմիածնի փախստականների պարենավորման պահեստին ուղարկել է 30 տակառ նավթ, իսկ Երեւանի եւ Մեծ Ղարաքիլիսայի պահեստներին՝ 25-ական տակառ³⁴:

Հայ գաղթականության օգնության գործում մեծ էր Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի դերը, որը նյութական մեծ օժանդակություն ցուցաբերեց՝ արեւմտահայ մերկ եւ անօթեւան, սոված եւ հիվանդ գաղթականներին բուժելու, հագցնելու, կերակրելու, ապաստանով ապահովելու եւ այլ հարցերում:

РЕЗЮМЕ

В годы первой мировой войны, когда Османская Турция организовала в Западной Армении Геноцид армян, жертвами которого стали полтора миллиона человек, значимую деятельность развернул главной командной комиссии братской помощи. Комитет развернул свою деятельность не только в Западной Армении, но и в других областях, предоставляя армянин убежище, одежду, пищу, лекарства и т.п.

SUMMARY

The year 1915 reminds us the massacre days of Armenian nation, when there was brutal removal of western Armenians, immigration and genocide. The role of chief ruling committee of St. Echjmiadzin's brothers assistance is great during the last years in different questions: caring the immigrant-refugees, feeding them, showing medical aid, in returning to motherland and so on. One period which had been forgotten at the beginning of the century, studying the bitter lessons was able to prevent the repetition of the terrible past, lived and survived up today.

33 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 472, ց. 2, գ. 4, թթ. 23-51:

34 «Գաղափար», 1916, դեկտեմբերի 30, թ. 113:

ՄԱՐԻՆԵ ԲԵԺԱՆՅԱՆ

ՄԱՐԱՇԻ 1920 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԼԵԳԵՈՆԱԿԱՆՆԵՐԸ

1915 թ. Հայոց ցեղասպանության հետեւանքով տասնյակ հազարավոր կիլիկիահայեր քշվեցին իրենց բնակավայրերից, նրանցից շատերը գոհվեցին Սիրիայի եւ Միջագետքի անապատներում: Լեռնային Կիլիկիայում գտնվող Մարաշ քաղաքը, որն ընդգրկված էր Հալեպի վիլայեթի համանուն գավառի մեջ, նույնպես ենթարկվեց տարագրության: Նախապատերազմյան շրջանում Մարաշի գավառի բնակչության թիվը հասնում էր 86800-ի¹: Բուն Մարաշ քաղաքի հայ ազգաբնակչության թիվը 40000 էր²: Աշխարհամարտի ավարտից հետո, երբ հայ վերապրողները վերադարձան հայրենի օջախներ, Մարաշն ուներ 60000 ազգաբնակչություն, որից 40 000-ը մահմեդականներ՝ գերազանցապես թուրքեր, իսկ 20-22000-ը հայեր էին³: Ըստ Հովսեփի Տեր-Վարդանյանի՝ մինչեւ Մարաշի ջարդերը քաղաքի հայ բնակչությունը կազմում էր 24400, որից 1400-ը շրջակա գյուղերից այստեղ ապաստանած հայերն էին⁴:

Պատերազմում պարտվելուց հետո Թուրքիային ոչինչ չէր մնում, քան Անտանտի երկրների հետ համաձայնության գալը: 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուրդուսի հաշտության համաձայնագրով՝ դաշնակիցների վերահսկողության տակ պետք է անցներ Կիլիկիան՝ Տավրոսի լեռնանցքներով: Թուրքիան պարտավորվում էր Կիլիկիայից հեռացնել զորքերը, բացառությամբ նրանց, որոնք պետք է հսկեին երկրամասի ներքին կարգի պահպանությունը: Անտանտի երկրները պարտավորվեցին կազմակերպել արեւմտահայ տարագիրների հայրենադարձությունը: Շուրջ 150000 հայեր վերադարձան Կիլիկիայի՝ իրենց քանդված օջախները՝ նոր կյանք սկսելու ակնկալիքով: Հայրենադարձությունը կատարվեց ծովով եւ ցամաքով. նրանք նավերով գալիս էին մինչեւ Ալեքսանդրետ ու Մերսին նավահանգիստները եւ այնտեղից մեկնում իրենց հայրենի բնակավայրերը: Տարագիրների վերադարձը հիմնականում կատարվեց Հայկական լեգեոնի պաշտպանության ներքո: Այդ զորամասը Ֆրանսիայի կողմից կազմա-

1 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 57, թ. 11-12:

2 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 14:

3 Տե՛ս **Ռ. Մահակյան**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները եւ Կիլիկիան 1919-1921 թթ., Երեւան, 1970, էջ 112: **Գ. Գալուստեան**, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 827:

4 Տե՛ս **Յ. Տեր-Վարդանեան**, Մարաշի ջարդը 1920 թ. եւ պատմական համառոտ ակնարկ մը իր անցեալի վրայ, Հալեպ, 2010, էջ 95:

վորվել էր 1916 թ. վերջին Կիպրոսում: Ֆրանսիական դրոշի ներքո կռվելու դիմաց խոստացել էին հայկական ինքնավարություն ստեղծել Կիլիկիայում:

Հայերի վերադառնալուց հետո Կիլիկիայում իրավիճակը խիստ սրվեց: Ֆրանսիական իշխանությունները հայերին Կիլիկիա «հրավիրելուց» հետո միջոցներ չէին ձեռնարկել նրանց անվտանգությունն ապահովելու համար: Անգլիական եւ ֆրանսիական կառավարությունների միջեւ 1919 թ. սեպտեմբերի 15-ին կնքված համաձայնագրով Կիլիկիայի վարչական վերահսկողությունը հանձնվեց ֆրանսիացիներին: 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ֆրանսիական փոքրաքանակ զորքերը Կիլիկիայում փոխարինեցին հեռացող անգլիական զորքերին: Մինչ այդ Կիլիկիայում ֆրանսիական դրոշի ներքո գտնվող միակ զորահամալիրը Հայկական լեգեոնն էր⁵:

1919 թ. հոկտեմբերի 30-ին ֆրանսիական առաջին շուկատը մտավ Մարաշ: Այդ ընթացքում հայերի նկատմամբ թուրքերի ոտնձգությունները ավելի ակնառու էին դարձել: Ֆրանսիական զորքերի՝ Մարաշ մտնելու հենց երկրորդ օրը Հայկական լեգեոնի զինվորներից մեկը շուկայում սպանվեց թուրքերի կողմից, իսկ հանցավորը մնաց անպատիժ⁶: Դրան հետեւեցին 24 հայերի սպանությունները, որոնցից մի քանիսը տեղի ունեցան քաղաքում⁷: Անհասկանալի ֆրանսիական կառավարության անտարբերությունն ու անվճարակամությունն էր: Գործած ռժիրները շարունակեցին մնալ անպատիժ, ինչի հետեւանքով թուրքերի հանդգնությունն օր օրի ավելի մեծ չափեր ընդունեց:

Մարաշում դրությունն առավել թեժացել էր նոյեմբերի 19-ից հետո: Ֆրանսիացիների դեմ ապստամբություն բարձրացնելու նպատակով Մուստաֆա Քեմալը Մարաշի շրջան ուղարկեց մի խումբ սպաների՝ Քըլըջ Ալիի գլխավորությամբ: Մարաշում ստեղծվեց «Մարաշի իրավունքների պաշտպանության ընկերություն», որը ֆրանսիացիների դեմ պայքարի ծրագիր էր մշակել: Ըստ այդ ծրագրի՝ քաղաքը բաժանվել էր 10 շրջանների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ղեկավար մարմինը, որոնք ենթարկվում էին չերքեզ Արսլան բեյին: Նրանք սկսեցին հակահայկական եւ հակաֆրանսիական բուռն գործունեություն ծավալել: Իրավիճակից անհանգստացած մարաշցիները փորձեցին ֆրանսիական ղեկավարների ուշադրությունը հրավիրել վերահաս վտանգի վրա՝ խնդրելով ուժեղացնել քաղաքի ֆրանսիական կայազորը⁸:

Նոյեմբերի 24-ին Մարաշ ժամանեց գավառի կառավարիչ նշանակված ֆրանսիացի կապիտան Անդրեն: Նա թուրքերին արգելեց իրենց դրոշը բարձրացնել, փոխարենը ստիպեց բերդի վրա ծածանել ֆրանսիական դրոշը: 2000-ից ավելի թուրք մագլցեց բերդի վրա, անարգեց ֆրանսիական դրոշը եւ կրկին կանգնեցրեց թուրքականը: Ճիշտ է, անկարգությունները ճնշվեցին, կազմակեր-

5 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 22:

6 Անդ, թ. 23:

7 Անդ:

8 Տե՛ս Ռ.Սահակյան, նշվ. աշխ., էջ. 137:

պիչներից մի քանի ղեկավար ձերբակալվեցին, բայց շուտով սպառնալիքի տակ ազատ արձակվեցին⁹:

Դեկտեմբերի 6-ին Մարաշի Հայ ազգային միության ատենապետ Արամ Պաղտիկյանը ֆրանսիական մի գաղտնի գործակալից տեղեկացավ, որ թուրքերը մինչև գարուն պատրաստվում են հարձակվել Մարաշի, Հաճընի, Զեյթունի վրա, ուստի մեկնեց Ադանա՝ Կիլիկիայի գլխավոր կառավարիչ գնդապետ Էդուարդ Բրենոնից օգնություն խնդրելու: Գնդապետը խոստացավ օժանդակ ուժեր ուղարկել Մարաշ¹⁰:

Դեկտեմբերի 27-ին Մարաշում բռնկվեց հերթական հակաֆրանսիական ապստամբությունը: Որպես ազդակ ծառայեց Ալբիստանի եւ Գյոքսունի կողմներից եկած 100 հեծյալներից բաղկացած չեթերական խմբի մուտքը Մարաշ: Առանց դիմադրության հանդիպելու՝ նրանք ուժգնորեն սլացան դեպի քաղաքի միջնաբերդը եւ պարզեցին իրենց դրոշը, որից հետո կրակ բացեցին քաղաքի հայկական թաղամասերի վրա, ավերեցին եւ թալանեցին հայերի տները: Մարաշը հայտնվեց սաստիկ ծանր կացության մեջ: Բնակչության շրջանում սկսվեց խուճապ եւ իրարանցում¹¹:

Ֆրանսիական օկուպացիոն իշխանությունները փորձեցին սերտ կապեր հաստատել մահմեդական բարձրաստիճան հոգեւորականության, հարուստ վերնախավի, քրդական առանձին շեյխերի հետ¹², որով ավելի բարդացրին Մարաշի դրությունը, քանի որ այս դեպքերից հետո ֆրանսիական կառավարությունն ավելի հաստատակամ պետք է գտնվեր: Նրանք հորդորեցին մարաշահայությանը, ովքեր դեպքերի նման զարգացումից փակվել էին տներում, վերադառնալ իրենց բնականոն կյանքին¹³: Իրավիճակից անհանգստացած Արամ Պաղտիկյանը, ով արդեն դեկտեմբերի 22-ին վերադարձել էր Մարաշ, օգնության խնդրանքով դիմեց Զեյթունի Հայ ազգային միությանը, վերջինս խոստացավ հնարավորության դեպքում օգնել¹⁴:

Չնայած դեկտեմբերի 27-ի շարժումն ուներ հակաֆրանսիական ուղղվածություն՝ ֆրանսիական կառավարությունը դրան լուրջ չվերաբերվեց: Մարաշի ֆրանսիական կառավարիչ նշանակված կապիտան Անդրեն դեկտեմբերի 30-ին եկավ Այնթապ, հանդիպեց Հայկական լեգեոնի հրամանատար գնդապետ Ֆլի Սենտ Մարիի հետ եւ Մարաշում տիրող իրավիճակը կարգավորելու համար խնդրեց մոտ 300 հոգուց բաղկացած ջոկատ ուղարկել: Բայց այս հարցը մնաց չլուծված, եւ Անդրեն մեկնեց Ադանա¹⁵: Այս ընթացքում Մարաշում նոր կառավա-

9 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 23-24:

10 Տե՛ս **Գ. Գալուստեան**, նշվ. աշխ., էջ 793:

11 Տե՛ս **Շ. Թորոսյան**, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երեւան, 1987, էջ 149:

12 Տե՛ս **Ռ. Մահակյան**, նշվ. աշխ., էջ 140:

13 Տե՛ս **Շ. Թորոսյան**, նշվ. աշխ., էջ 149-150:

14 Տե՛ս **Լ. Նորաշխարհյան**, Զեյթունը 1914-1921 թթ., Երեւան, 1984, էջ 135:

15 Տե՛ս **Ռ. Մահակյան**, նշվ. աշխ., էջ 143:

րիչ նշանակվեց մայրը Մորբիոն, իսկ Մարաշի ֆրանսիական ուժերի հրամանատար Ռուդոլֆ Օրդոնը, որի գործառնալը կազմված էր 2000 հոգուց¹⁶: Մակայն այս նոր փոփոխությունները եւս չհանգցրին արդեն ծխացող ապստամբությունը:

1920 թ. հունվարի կեսերին Մարաշի ֆրանսիական կայազորը հաշվվում էր մոտ 3000 զինվոր՝ 456-րդ դիվիզիայի կեսը: Զորավար Քերեթը, ով այդ ժամանակ գտնվում էր քաղաքում, ստանձնեց ֆրանսիական զորքերի ընդհանուր ղեկավարությունը: Բացի ֆրանսիական այդ ուժերից՝ Մարաշում էին գտնվում Հայկական լեգեոնի 1-ին գումարտակի մի մասը, մեկ վաշտ 2-րդ գումարտակից եւ 3-րդ գումարտակի 7-րդ, 8-րդ, 9-րդ վաշտերը¹⁷: Նրանց ներկայությունը զսպում էր հայերի ջարդը եւ ֆրանսիացիների արտաքսումը ծրագրած թուրք ազգայնականներին: Վերջիններս կեղծ լուրեր տարածեցին, որ հայ լեգեոնականները վտանգ են ներկայացնում քաղաքի մահմեդական բնակչության համար:

1920 թ. հունվարի 18-ին թուրքերի կողմից Մորբիոյին վերջնագիր ներկայացվեց, որի համաձայն՝

ա. Պետք է դադարեցվեր ֆրանսիական միջամտությունը բոլոր հանրային գործերին:

բ. Հայ կամավորներին դուրս պետք է բերեին Մարաշից¹⁸:

Զանալով մասնակի բավարարություն տալ թուրքերի պահանջներին՝ ֆրանսիական կառավարիչը հունվարի 19-ին հայ լեգեոնականների 7-րդ եւ 8-րդ վաշտերը՝ շուրջ 500 հոգու, դուրս հանեց քաղաքից՝ նրանց ուղարկելով Իսլահիե՝ պարեն եւ ռազմամթերք բերելու պատրվակով: Հունվարի 21-ի թուրքական հարձակման նախօրյակին Մարաշում մնացել էր մոտ 600 հայ լեգեոնական¹⁹: Իսլահիե մեկնած լեգեոնականները ճանապարհին ընկան թուրքերի կողմից պատրաստված ծուղակը եւ 8-9 օր շարունակ դաժան մարտեր մղեցին թուրքական 2000 հոգուց բաղկացած զորախմբի դեմ: Հունվարի 29-ին լեգեոնականները վերադարձան Մարաշ՝ ճանապարհին թողնելով 100-ից ավելի զոհ: Նույն օրը հարձակման ենթարկվեցին հայկական թաղամասերը եւ ֆրանսիական պաշտպանության 7 դիրքերը: Եղեռնի արհավիրքից հոգեպես եւ ֆիզիկապես դեռեւս չառողջացած հայերը փրկություն որոնեցին եկեղեցիներում: Ընդամենը 20 լեգեոնականների պաշտպանությամբ ավելի քան 2 000 հայեր ապաստանեցին Սուրբ Աստվածածին եկեղեցում²⁰: Այդտեղից 2 կմ երկարությամբ խրամատ էր փորվել դեպի ֆրանսիական դիրքերը, որոնք ֆրանսիացիների հետ պաշտպանում էին նաեւ 30 հայ մարտիկ²¹: Ավելի ուշ՝ ֆրանսիացիների նահանջից հետո,

16 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 38:

17 Տե՛ս **Գ. Գալուստեան**, նշվ. աշխ., էջ 821:

18 Տե՛ս **Ռ. Մահալյան**, նշվ. աշխ., էջ 145:

19 ՀԱԱ, ֆ. 200, գ. 546, թ. 38:

20 Տե՛ս **Ռ. Գասպարյան**, Հայկական կոտորածները Կիլիկիայում 19-րդ դարի 90-ական թթ., Երեւան, 2005, էջ 172:

21 Անդ:

նույնիսկ միայնակ մնալով՝ նրանք 2 օր շարունակ քաջաբար մաքառեցին թշնամու գերակշիռ ուժերի դեմ:

Այս ընթացքում ֆրանսիական ուժերը բաժանվեցին հետևյալ կերպ՝ Ամերիկյան որբանոց՝ 80 զինվոր, Սուրբ Սարգիս եկեղեցի՝ 110 հայ կամավոր, Բողոքական Ա. եկեղեցի՝ 280 զինվոր, հայ կաթոլիկ եկեղեցի՝ 40 զինվոր, Սուրբ Աստվածածին եկեղեցի՝ 100 հայ կամավոր, Սուրբ Գեորգ եկեղեցի՝ 50 զինվոր, Լատինաց վանք՝ 150 զինվոր, Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցի՝ 1500 զինվոր եւ լեգեոնականներ, Բողոքական Բ. եկեղեցի՝ 150 զինվոր²²:

1920 թ. հունվարի 22-ին ֆրանսիական հրամանատարությունը թուրք ապստամբներից վերջնագիր ստացավ, որով պահանջում էին հանձնել ամբողջ ռազմամթերքը, զենքերն ու փոխադրամիջոցները, փոխարենը խոստանում էին թույլ տալ սպայական կազմին ազատ հեռանալ քաղաքից²³: Վերջնագիրը, բնականաբար, մերժվեց, եւ մարտերը շարունակվեցին մինչեւ փետրվարի 11-ը:

Թուրքական հարձակումը նոր թափ ստացավ հունվարի 23-ին, երբ Մարաշի շրջակա գյուղերի զինված չեթեները եւ քեմալական կանոնավոր զորաջոկատները, Քըլըչ Ալիի հրամանատարությամբ, ներխուժեցին քաղաք: Հաջորդ օրը թուրքերը չորս կողմից կրակի մատնեցին հայկական թաղամասերը: Մարաշի հայ ազգաբնակչությունը, սկզբնապես ֆրանսիական զենքին ու հավաստիացումներին ապավինելով, միջոցներ չէր նախապատրաստել ինքնապաշտպանության համար, սակայն կանգնելով ոչնչացման վտանգի առջեւ, համախմբվելով հայ կամավորների շուրջ՝ առանձին շրջաններում դիմեց կազմակերպված ինքնապաշտպանության: Նրանք, Մեղրակ Խըրլագյանի, Սարգիս Չավուշ Մարգարյանի, Արամ Սամուելյանի, Բաղդասար Օտապաշյանի գլխավորությամբ, ստեղծեցին 8 դիրքեր՝ Սուրբ Աստվածածին, Սուրբ Սարգիս, Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցիների մատույցներում, Սանթա Թերրա վանքի մոտ, Ղույունազ, Շեքերտերե, Գյումպեթ եւ Բեյթ-Շալում թաղամասերում: 30 հայ մարտիկներ, Մեղրակ Խըրլագյանի հրամանատարությամբ, հաջողությամբ հետ մղեցին հայ կաթոլիկ եկեղեցու ուղղությամբ գրոհող թուրք հրոսակներին, անկոտրում կամքով պաշտպանեցին եկեղեցին՝ փրկելով այստեղ ապաստանած 3700 հայրենակիցների կյանքը²⁴:

Մինչեւ փետրվարի 7-ը Մարաշի հայությունը հայ լեգեոնականների գլխավորությամբ կարողացավ հաջողությամբ դիմադրություն կազմակերպել եւ հուժկու հարվածներ հասցնել թուրք մարդասպաններին, չնայած այն հանգամանքին, որ ֆրանսիական հրամանատարությունը նրանց չէր ապահովել զենքով եւ համապատասխան միջոցներով: Դրա վառ օրինակը Սուրբ Աստվածածին եկեղեցու պաշտպանությունն է: 20 լեգեոնականների պաշտպանությամբ այստեղ էին ապաստանել ավելի քան 2000 հայեր: Նրանք դիմել էին ֆրանսիական հրամա-

22 Տե՛ս Գ.Գալուստեան, նշվ. աշխ., էջ 815:

23 Տե՛ս Ռ.Սահակյան, նշվ. աշխ., էջ 150-151:

24 Տե՛ս Ռ.Գասպարյան, նշվ. աշխ., էջ 172:

նատարությանը զինամթերք էլ օգնական ուժեր ստանալու համար: Մերժումից հետո որոշվեց նահանջել: Շուրջ 1500 հայեր լեգեոնականների ուղեկցությամբ փորձեցին աննկատ անցնել թուրքական թաղամասերով եւ հասնել Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցի, որտեղ գտնվում էր ֆրանսիական ռազմամթերքի պահեստը: Սակայն ֆրանսիացի զինվորները, մտածելով, որ դիրքերին մոտեցողները թուրքերն են, կրակ են բացում եւ սպանում շուրջ 400 հայի: Իմանալով եղելությունը՝ թուրքերը նեղացնում են պաշարման օղակը եւ հրդեհում Ս. Աստվածածին եկեղեցին: Կամավորներից յոթը զոհվեց: Եկեղեցում ապաստանած 800 հայ սպանվեց: 13 լեգեոնական մի կերպ հասան զինվորական մթերանոց եւ կռիվները շարունակելու համար ֆրանսիացիներից ստացան յուրաքանչյուրն ընդամենը 50 փամփուշտ ու մեկական ռումբ²⁵:

Առանձնապես համառ դիմադրություն կազմակերպեցին Սուրբ Սարգիս եկեղեցու ուղղությամբ դիրքեր գրաված 110 լեգեոնականները: Իրենց համարձակությամբ ու քաջությամբ աչքի ընկան սերժանտ Ավետիս Ագրապյանը, Միհրան Մուրադյանը, Դավիթ Փափագյանը, Ղազարոս Աղամյանը, սերժանտ Պաղտասար Օտապաշյանը, Կարապետ Սիմոնյանը, Ղեւոնդ Տեր-Մարկոսյանը, Հակոբ Սիմոնյանը²⁶: Ինչպես նկատեցինք, Մարաշի քաջարի հայերը, ինչպես նաեւ հայ լեգեոնականները ջանք չէին խնայում Մարաշի պաշտպանության համար եւ ամեն գնով փորձում էին փրկել իրենց հայրենակիցների կյանքը:

Սակայն հայկական դիրքերի մեջ չկար փոխհամաձայնեցված գործողություն, բացակայում էր ընդհանուր հրամանատարությունը: Արժե այստեղ բերել ֆրանսիացի հեղինակ Կ. Գրանկուրի կարծիքը լեգեոնականների մասին. «Նրանք շատ քաջ են... Իրենց օջախը պաշտպանելիս հայերը ցուցաբերում են գովելի եռանդ, համառություն եւ հնարամտություն... նրանք մեծ հայրենասեր են»²⁷:

Հայ բնակչությունը հայտնվել էր ծանր կացության մեջ:

Թուրքերի կողմից նոր հարձակումներ սկսվեցին Զեյթունի, Ֆռնուզի, Ֆրնջակի, Կարաբեզի, Յենիչեքալերի եւ Դերեի վրա, որի արդյունքում ջարդարարները մեծ կորուստներ պատճառեցին հայերին: Թուրքական հարձակումները վերսկսվեցին Մարաշի, Կարս-Բազարի, Կիզիլ-Աղաչիի եւ Հասան-Դերեի ուղղություններով: Պաշտպանության դիմելու համար անհրաժեշտ էր զինել ողջ հայ բնակչությանը²⁸:

50000 թուրք եւ քուրդ քենալականներ, օգտվելով Լեռնային Կիլիկիայի անպաշտպան դրությունից, կոտորեցին Զեյթունի, Ֆռնուզի եւ շրջակա տարածքների հայերին: Ընդհանուր կորուստը 7000 էր: Մարաշի կռիվները այդ ընթացքում շարունակվում էին: Թշնամին առաջացավ մինչեւ Բաղչե եւ մեծ սպառնալիք էր

25 Տե՛ս Գ. Գալուստեան, նշվ. աշխ, էջ 815-816:

26 Անդ, էջ 821:

27 Տե՛ս Կ. Գրանկուր, Тактика на Ближнем Востоке, Москва, 1928, էջ 54:

28 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 7:

տարածքի հայ բնակչության համար: Այստեղ հայերը եւս դիմադրեցին, բայց անհրաժեշտ միջոցներ չունեին²⁹:

Մարաշում ծավալվող դեպքերը մտահոգություն պատճառեցին նաեւ ամերիկյան շրջանակներին: Ըստ Ամերիկյան օգնության կոմիտեի անդամ Վիլսոնի հաղորդած տեղեկության՝ հայ-ֆրանսիական զորքերը պաշարված էին Ամերիկյան առաքելության շենքում, իսկ քաղաքում 100-ավոր քրիստոնյաներ կոտորվում էին³⁰:

Փետրվարի 7-ին գնդապետ Նորմանի հրամանատարությամբ Իսլահիեից Մարաշ շարժվեց ֆրանսիական 4000-անոց մի խոշոր զորայուն՝ բաղկացած հետեւակային երկու գումարտակից, հեծելազորային երկու վաշտից եւ հրետանայի չորս մարտկոցից: Ֆրանսիական կայսզորին օգնության հասավ եւս 2 ջոկատ: Մինչեւ նրանց քաղաք հասնելը՝ թուրքերը հասցրել էին մոխրի վերածել Կումբեր եւ Կուտուշավ թաղամասերը³¹: Հաջորդ օրերի ընթացքում բացահայտ գերակշռությունը ֆրանսիացիների կողմն էր: Թուրքական կողմը, զգալով, որ այլեւս ի վիճակի չէ կռվել ֆրանսիական համալրված ուժերի դեմ, որոշեց հանձնվել: Փետրվարի 10-ին իթթիհատականների նախկին պարագլուխ դոկտոր Մուստաֆան ուղարկվեց ֆրանսիական հրամանատարության մոտ՝ անձնատվության առաջարկով: Գեներալ Քերեթը թելադրեց իրենց պահանջները: Ըստ դրանց՝

ա. Պետք է անհապաղ դադարեցվեր կրակը:

բ. Պարտավորվում էին հանձնել զենքը, ռազմամթերքը:

գ. Ֆրանսիական կողմին էին հանձնելու Մարաշի կռիվներում աչքի ընկած 200 թուրք զինվորների³²:

Սակայն այս պահանջները այդպես էլ չհասան թուրքական հրամանատարությանը, հետդարձի ճանապարհին դոկտոր Մուստաֆան սպանվեց: Թվում էր՝ հաղթանակը մոտ է, եւ թուրքերը պատասխան են տալու գործած բոլոր ոճրագործությունների համար, սակայն անսպասելի կերպով փետրվարի 11-ի գիշերը գեներալ Քերեթը բռնեց նահանջի ուղին՝ իր զորախմբին թույլատրելով միանալ ընդամենը 5000 հայի: Նահանջի ճանապարհին, ըստ տարբեր տվյալների, զոհվեցին 3000-ից ավելի հայեր, 800-1200 ֆրանսիացիներ: Ընդհանուր առմամբ Մարաշի կռիվներում սրի քաշվեց 12000 հայ³³ (ըստ Ռ. Սահակյանի՝ 13000)³⁴, մոտ 8000 հայ աքսորվեց քննալական իշխանության կողմից: Մարաշի ինքնապաշտպանական մարտերում զոհվեց շուրջ 150 հայ լեգեոնական³⁵:

29 Անդ, թ. 6:

30 Անդ, թ. 7-8:

31 Անդ, թ. 34-42:

32 Տե՛ս Ռ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 153:

33 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 42:

34 Տե՛ս Ռ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 162:

35 Տե՛ս Գ. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 821:

Այսպիսով՝ ֆրանսիացիների նահանջով ավարտվեցին Մարաշի կռիվները: Ինքնապաշտպանական մարտերին մասնակցեց նաեւ Հայկական լեգեոնը, որի անձնագոյության շնորհիվ եկեղեցիներում ապաստանած մարաշցի հայերից շատերին հաջողվեց փրկվել: Սակայն Մարաշի դեպքերն իսկական ողբերգություն էին հայերի համար, որի հետեւանքով Կիլիկիայում քննալական շարժումն էլ ավելի ուժգին ծավալվեց եւ թողեց իր բացասական անդրադարձը հայ ժողովրդի պատմության էջերում:

РЕЗЮМЕ

Из древних городов Киликии, в Мараше, после первой мировой войны насчитывалось 20-23 тысячи жителей населения. В 1915 г. они пережили геноцид. Жителей насильственно депортировали и уничтожили в Сирийской пустыне.

После окончания войны, жители Мараша поверив словам французского правительства, в течении 1919 г. вернулись в свой родной город, иза короткое время подняли его из руин. Однако, после вывода английских войск из Киликии, кемалистские вооружённые силы совершили наступление на мирных жителей Мараша. В целях самозащиты устраивались добровольные отряды. В этих сражениях себя хорошо проявил Армянский легион, который рядом с французскими войсками сражались за жизнь соотечественников. Противоборство продолжалось до 11 февраля 1920 года и закончилось отступлением французских войск. В сражении за Мараш погибло более чем 12.000 армян, и около 8.000 армян было выселено из города.

SUMMARY

After World War I approximately 20-23.000 Armenians were living in Marash, one of the ancient cities of Cilicia. In 1915 they were subjected to a genocide, during which the population of Marash was exiled and massacred in the Syrian Desert.

After the war, the population of Marash, believing the promises of French government, during 1919 returned to their home and within a short period recovered it from the ruins. However, after the withdrawal of the British troops from Cilicia, the kemalist forces attacked on Armenian civilians in Marash. Volunteer groups were organized for self-defence. In the battles the Armenian legion displayed himself brilliantly, who next to the French troops was fighting for his compatriots' life. The self-defence continued until 11 February 1920 and ended with the French troops' retreat.

In the self-defence battles of Marash more than 12.000 Armenians were killed and over 8.000 Armenians were exiled.

ՄԱԳԴԱ ԶԱՆՓՈԼԱԴՅԱՆ**բանասիրական գիտ. դոկտոր****ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ
Ի. ԴԱՐԻ ՌՈՒՄ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ**

Դեռ ԺԹ. դարավերջից, երբ թուրքերն սկսեցին Արեւմտյան Հայաստանում իրագործել հայերի զանգվածային ջարդերը, ռուս գրականությունն արձագանքեց հայ ժողովրդի ողբերգությանը: Հայության դաժան ճակատագրի թեման շարունակվեց նաեւ անցած դարի ամբողջ ընթացքում եւ արտացոլվեց ռուս գրողների ու բանաստեղծների տարբեր ժանրերի գործերում: Անդրադառնալով սույն թեմայի զարգացմանը Ի. դարի երկրորդ կեսի ռուս պոեզիայում՝ կարելի է նկատել թե՛ այն ընդհանուր մոտիվները, որոնք տեղ են գտել նաեւ նախորդ տասնամյակների քնարական երկերում, թե՛ տարբերակիչ որոշ գծեր՝ պայմանավորված յուրաքանչյուր երկի ստեղծման ժամանակով, ինչպես եւ ամեն մի բանաստեղծի անկրկնելի գեղարվեստական աշխարհով:

Ի. դարի առաջին տասնամյակների ռուս պոեզիայում Հայոց եղեռնի թեման արտացոլել էին այս սարսափելի ոճրագործության ժամանակակիցները, իսկ երբեմն էլ՝ ականատեսները: Այսպես, Սերգեյ Գորոդեցկու «Հայաստանի հրեշտակը» ժողովածուում (Թիֆլիս, 1918) տեղ են գտել բանաստեղծի անմիջական տպավորություններն ու զգացմունքները. 1916 թ. զարնանը Ս. Գորոդեցկին, որպես «Русское слово» թերթի թղթակից, գործուղվել էր Վան: Ժողովածուում տեսանելիորեն, մերկացնող ճշմարտությամբ պատկերված են թուրքերի չարագործությունները: Ահա մի հատված «Այգի» բանաստեղծությունից.

*Ինչպե՞ս հանեմ հին ջրհորից
Մորն ու աղջկան,
Որ իրենց տանն օտար սրի
Մեւ քերտան ընկան:
Չորի խորքից չեն գալու տուն
Հայրն ու տղան:
Էլ ի՞նչ զարնան ուրախություն,
Խնջույք է մահվան¹
(թարգմ.՝ Հ. Սահյանի):*

¹ Ս. Գորոդեցկի, Հայաստանի եւ հայ կուլտուրայի մասին, Երեւան, 1980, էջ 22:

Ս. Գորոդեցկին երբեք չմոռացավ հայ ժողովրդի ողբերգությունը, իր աչքով տեսած սարսափելի պատկերները: 1941 թ. «Հայ եղբայրներիս» բանաստեղծության մեջ նա գրում էր.

*Գրանիտներն են հիշում արտասովոր,
Ոսկրաշեղջերը ձյունի մեջ թաղված
Եւ յաթաղանից բնկած աղջկա
Մազերից շինած բներն ագռավի:
Եւ մանուկներին՝ մահն աչքերի մեջ,
Վտիտ, որբացած ու վայրիացած
Եւ թափառական դարձած լեռներում²
(թարգմ.՝ Հ. Սահյանի)...*

Իսկ Օսիպ Մանդելշտամի «Ֆայտոնչին» (1931) բանաստեղծության մեջ պատկերված է նրա տեսած Շուշի քաղաքը, որտեղ 1920-ին թուրքերը բնաջնջել էին ողջ հայ բնակչությանը: «Այս քաղաքում, - գրում էր իր հիշողություններում բանաստեղծի այրին՝ Նադեժդա Մանդելշտամը, - ջարդի եւ ավերածության տեսարանները սարսափելի ակնառու էին: Մենք անցնում էինք փողոցով, եւ ամեն տեղ նույնն էր՝ երկշարք տներ՝ առանց տանիքների, պատուհանների ու դռների: Զարդված լուսամուտներից երեւում էին դատարկ սենյակները, երբեմն՝ պաստառների կտորներ, կիսաքանդված վառարաններ: Բոլոր միջնապատերը քանդված էին, եւ այդ դատարկություններից ամենուր երեւում էր կապույտ երկինքը: Ասում էին, որ ջարդերից հետո բոլոր ջրհորները լի էին դիակներով: Եթե որեւէ մեկը փրկվել էր, ապա փախել էր այդ մահվան քաղաքից»³: Այդ մղձավանջային զարհուրանքի պատկերը, որը Մանդելշտամի մեջ արթնացնում է սեփական ժողովրդի ցավը («Ես ճաշակել եմ սարսափներ մահի/Հոգուս խռովքին համանվագ»), արտացոլվել է բանաստեղծական տողերում.

*Քառասուն հազար մեռյալ լուսամուտ -
Ակնախոռոչներ անթիվ-անվերջ,
Դարը տքնանքի քոժոժը հմուտ
Թաղված է այնտեղ՝ լեռների մեջ:
Անամոթարար շառագունում են
Մերկ տներն ու վեր նայում անթարթ,
Երկինքը վերից մեզն իր մանում է,
Որպես մուգ-կապույտ ոմն ժանտախտ⁴
(թարգմ.՝ Հ. Բեյլերյանի):*

² Անդ, էջ 34:

³ “Жизнь и творчество О. Э. Мандельштама”, Воронеж, 1990, с. 211.

⁴ Օ. Մանդելշտամ, Բանաստեղծություն. Արձակ, Երևան, 2009, էջ 153:

Ի. դարի երկրորդ կեսի ռուսական պոեզիայում արդեն չեն հանդիպում նման մոտիվներ, ինչը լիովին հասկանալի է: Հայոց եղեռնի թեման արտացոլված է այստեղ որպես ժողովրդի ողբերգական անցյալ, սակայն անանց, անջնջելի: Ռուս բանաստեղծները խորապես ապրել են հայ ժողովրդի այդ ողբերգությունը, որին նվիրված են առանձին գործեր: Եղեռնի թեման զանազան մոտիվներով արծարծվում է նաև Հայաստանի մասին նրանց բանաստեղծություններում: Կարելի է նկատել, որ ռուս բանաստեղծները հաճախակի հենց այդ ողբերգության լույսի ներքո էլ ընկալում են մեր երկիրը եւ ժողովրդին, ժողովրդի ճակատագիրը, կերպարը, կեցությունը... Եւ հայերի պատմության այդ էջը մշտապես ապրում է նրանց հիշողության մեջ: Այսպես, նշանավոր ռուս բանաստեղծուհի, հայ պոեզիայի թարգմանիչ Մարիա Պետրովիխի 1957 թ. գրած բանաստեղծության մեջ հայերի ողբերգության թեման ծնվում է կարծես անսպասելիորեն, խաղաղ կյանքի իրական դեպքերից: Նույն տարվա աշնանը Երեւանում մի քանի անգամ լուսաբողարկում անցկացվեց: Այդ մասին լսելով՝ Մ. Պետրովիխը համակվում է խոր տազնապով.

*Մոսկովյան տներում ամեն մի պատուհան
Երեկոները փայլում է լույսով խաղաղ:
Ու կարծես այդ մասին չկա ասելու քան,
Բայց տեսնում ու լսում եմ՝ միապաղաղ
Թուրքական քամին է ծով ու օվկիանոսից
Ապրկում խիում... Ու սիրտդ է խավար
Երեւանի քողարկված պատուհաններից⁵
(թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի):*

Անցյալ դարի 30-ական թվականների կեսերից ընդհուպ մինչեւ մահը (1972) Հայաստանի հետ սերտ կապերով էր կապված անվանի բանաստեղծուհի Վերա Զվյագինցեւան: Ինքը՝ Զվյագինցեւան, խոստովանում էր, որ իր սերը Հայաստանի հանդեպ առաջին հերթին պայմանավորված էր մեր երկրի պատմական ճակատագրի խոր ընկալմամբ: Հոգվածներից մեկում նա գրում է. «Ինչո՞ւ ես, այնուամենայնիվ, սիրեցի Հայաստանը: Նախ՝ սիրեցի իր ողբերգական անցյալի, հետո էլ՝ այդ անցյալը հերոսաբար հաղթահարել կարողանալու համար»⁶: Վ. Զվյագինցեւան երբեք չէր մոռանում հայերի ողբերգությունը: Նա միշտ արտահայտում էր իր անողորմ, անհաշտ վերաբերմունքը եղեռնի ոճրագործների նկատմամբ: Նրա «Հայ ժողովրդին» բանաստեղծությունը (1960) սկսվում է այսպիսի տողերով.

*Ո՛չ անյուր, անթիվ գերեզմաններիդ,
Ո՛չ անօթեւան տիրությանդ համար*

5 Մեջբերումը՝ Լ. Մկրտչյանի «След в сердцах» հոդվածից. Газета «Коммунист», 1988, 3 апреля:
6 **В. Звягинцева**, Кланяюсь Еревану и Арапату. Стихи, статьи, письма, Ереван, 1998, с. 114.

*Չեմ ների մարդկանց չարությունը սեւ:
 Չեմ ների մինչեւ օրերիս վախճանը,
 Եթե մինչեւ իսկ դու ինքդ ներես⁷
 (թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի):*

1960 թ. նոյեմբերի 14-ին Վ. Զվյագինցեւան գրեց «Ստամբուլ» բանաստեղծությունը: Այդ առումով հատկանշական է Լեւոն Մկրտչյանին ուղղված նրա նամակը. «Ես եղել եմ արտասահմանում, - գրում էր նա: - Շոգենավը երկար ժամանակ կանգնած էր Ստամբուլում՝ գեղեցիկ, սակայն ինձ համար ողբերգական ու չար (հայերի պատճառով)»⁸: Նույն հակասական զգացմունքներով է համակված նաեւ բանաստեղծությունը. մի կողմից՝ գեղեցիկ մի քաղաք, իր հայտնի տեսարժան վայրերով, ճարտարապետական հոյակապ նմուշներով, մյուս կողմից՝ քաղաք, ողողված հայերի արյունով... Եւ Վ. Զվյագինցեւան Ստամբուլն ընկալում է միայն ու միայն հայերի ողբերգության տեսանկյունից: Իրական պատկերների մեջ ներխուժում են անցյալի ձայներն ու տեսիլները, շոգենավերի տազնապալի սուլոցների միջից քամին նրան է հասցնում հայ մոր՝ երբեք չփարատվող վշտալի ողբը... Եւ բանաստեղծուհին անկարող է լիարժեք հիանալ Ստամբուլի գեղեցկությամբ.

*Միշտս մի գլուխ խիում է տազնապալ
 Իմ առջեւ ստվերն է ծառանում
 Իմ տխրաթախիժ Հալաստանի,
 Միամանթոյի ու Վարուժանի,
 Եւ քազմաչարչար Կոմիտասի,
 Եւ ցավն ու արյունը հայոց վերքերի⁹
 (թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի)...*

Կոմիտասի՝ հայ հանճարեղ երաժշտի ու երգահանի ճակատագիրը դարձավ Արսենի Տարկովսկու առանձին բանաստեղծության (1959) թեման: Այստեղ հեղինակն ու իր հերոսը անբաժանելիորեն միաձուլվում են: Բանաստեղծն իր ողջ էությամբ այրվում է Կոմիտասի ցավով, կարծես թե ֆիզիկապես զգում նրա տառապանքը.

*Ա՛խ, իմ հոգին խելագարված
 Կոմիտասի նման
 Վեր է նայում՝ աչքը փակած,
 Պետք չէ ոչինչ նրան:
 ...Արյունոտ է շապիկս, քանզի
 Դիպչում է իմ մարմնին*

7 Անդ, էջ 87:

8 Անդ, էջ 154:

9 Անդ, էջ 90:

*Վաղնջական կոտորածի
Սարսափների քամին:
Նորից Այա-Սոֆիայի
Քարն է իմ դեմ քայլում,
Եւ իմ բորիկ ոտքը հողի
Տաք մոխիրն է այրում:*

Այս ցնցող պատկերները բացահայտում են ողբերգության ամբողջ խորությունը: Իսկ բանաստեղծության վերջին տողերում ներհյուսվում է թուրքերի հրեշավոր չարագործության անպատժելիության մոտիվը.

*...Աստղերի մեջ սուտն է ծաղկում
Ահեղ Դատաստանի¹⁰
(թարգմ.՝ Հ. Սահյանի):*

Եղեռնի թեման նկատելի տեղ է գրավում Ալեքսանդր Գիտովիչի «Խրախճանքներ Հայաստանում» բանաստեղծական շարքում, որը վերջնականապես ձևավորվեց 1964-1966 թվականներին: Բանաստեղծի մտորումները հայերի պատմական բախտի մասին արտացոլվել են մի շարք երկերում: 1965 թ. Ալ. Գիտովիչը «Արմենիա» հյուրանոցի պատուհանից դիտում էր նոյեմբերյան շքերթը, եւ այսպես ծնվեց նրա «Զորահանդեսը Երեւանում» բանաստեղծությունը: Հեղինակը խոստովանել է. «Այստեղ կարծես էությունն է այն ամենի, ինչ ես ուզում էի ասել Հայաստանի մասին»¹¹:

*Ծննդատեղիս ուղին երկար ու բարդ է:
Տրիրունան է ձախից,
Աջից՝ Արարատը:
Դրոշները լույսի մեջ լողում են:
Եւ հրանոթների փողերը հեռավոր՝
Արևի տակ շողում են:
Շողում են հինավուրց Արարատի դիմաց,
Շողում են հեռավոր փողերը...
Եւ վաղ առավոտից
Տազնապներով, հույսով ու ցնծությամբ
Հետևում է նրանց
Հայոց հանձարեղ Լեռը¹²
(թարգմ.՝ Հ. Սահյանի):*

10 **А. Тарковский**, Звезды над Арагацом, Ереван, 1988, с. 162.

11 Մեջբերումը՝ Լ. Մկրտչյանի **А. Гитович**, «Пир в Армении» գրքի «Поэзия и дружба» առաջաբանից. Ереван, 1968, էջ 13:

12 **А. Гитович**, Пир в Армении, Ереван, 1968, с. 47.

Նկատենք, որ Արարատի կերպարը Գիտովիչի այս տողերում կարծես թե քաղաքական ավելի սուր երանգ է ստանում: Վ. Զվյագինցեայի, Մ. Պետրովիսի, Ի. Սնեգովայի եւ այլոց պոեզիայում Արարատն ընկալվում է իբրեւ Հայաստանի խորհրդանիշ, երկրի բնապատկերի տեսանելի մաս՝ ներդաշնակորեն միաձուլված ու անբաժանելի, աստվածաշնչյան եւ հայոց բիբլիականության խորհրդանիշ... Իսկ Գիտովիչն ընդգծում է, որ «Հայոց հանճարեղ Լեռը» կտրված է Հայաստանից: Եւ այդ մոտիվը՝ պատմական անարդարության փաստի հաստատումը եւ հույսը, որ այն կվերանա, հանդիպում ենք հաջորդ տասնամյակների ռուս բանաստեղծների երկերում:

Շարքի մյուս գործերում հեղինակն ավելի որոշակի է շոշափում Եղեռնի թեման. նա խոսում է դարերից եկող հայկական կոտորածների ու ջարդերի քաղաքականության մասին, որը հետագայում դարձավ ավելի դաժան ու հրեշալոր.

*Դարեր են անցել, եւ ժամանակն է
Մոռանալու կրոնը Զարդ ու Կոտորածի,
Երբ որ արարի կանաչ չալման էր
Այտեղ մթագնում երեսն արեւի:
Եւ, Արդ՞ո՛ւ Համիդ, դու էլ չուշացար
Զփարճանալուց քարե գյուղերում:
Զուռնան նվագում, թմբուկն է թնդում
Ու ճոճվում են դիերը ծառից կախ¹³
(թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի):*

Եւ այդ բարբարոսական ոչնչացման քաղաքականությունն իրագործվում էր արարող, աշխատող, ստեղծագործող մի ժողովրդի նկատմամբ... Այդ մասին կարդում ենք հետեւյալ տողերում.

*Չենք մոռացել, թե ինչպես հայրենական գյուղերում
Մոլեգնում էր հրդեհը կատաղի եւ ամենի:
Ճարտարապետ, շինարար ժողովրդի երկրում
Յաթադանն էր փայլփլում ենիչերների:
Երբ հողմը մեզ ճկեց ցած,
Մշուշի մեջ անթափանց
Մտանքուլի հոյակերտ սրալատները տեսանք,
Հայ հանճարով կերտված¹⁴
(թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի):*

13 Անդ, էջ 87:

14 Անդ, էջ 83:

Հայերի պատմական ողբերգության արձագանքներն ակնհայտորեն հնչում են Սեմյոն Լիպկինի «Երեւանյան վարդը»¹⁵ (1965) բանաստեղծության մեջ: Իսկ Եղեռնի գոհերի հիշատակին նվիրված՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հոգեհանգստյան արարողության մասին է «Հայոց վշտի տարելիցը»¹⁶ (1972): Բանաստեղծության հնչերանգային կառույցը կարծես համահունչ է եկեղեցական ողբալի-հանդիսավոր զանգերին: Ս. Լիպկինը գրում է «ժողովրդի զարհուրելի մահվան ահեղ տարելիցի», «անմեղ սպանվածների հոգիների» ոգեկոչման մասին:

1974 թ. Դավիթ Սամոյլովը գրել է «Հայաստան» բանաստեղծությունը: Այն բաղկացած է ընդամենը երեք տնից, բայց բանաստեղծի համար դրանք բավական էին, որ խտացած, խորը իմաստ եւ ենթատեքստ պարունակող պատկերների միջոցով «արդարացվեր» վերնագիրը՝ «Հայաստան»: Դ. Սամոյլովի Հայաստանը երկիր է, որտեղ «Արարատն է հնուց իշխում», վաղ քրիստոնեության, աշխատող, ստեղծագործող ժողովրդի երկիր է: Եւ այդ ժողովուրդը ենթարկվեց հրեշավոր ոչնչացման.

*Ավերված վիլայեթների տառապանքները՝
Այլ վայրերում արդեն մոռացված,
Առ այսօր ծնում են բանաստեղծների մոտ
Փոթորիկ աչքերում եւ երգ շուրթերին*¹⁷
(տողացի թարգմանություն)...

Ուշադրություն դարձնենք եզրափակիչ տան երկրորդ տողին. «Այլ վայրերում արդեն մոռացված»... Եւ իրոք, Հայոց եղեռնը լուրջության էր մատնվել ոչ միայն տարբեր պետությունների կողմից, այլեւ ամենեւին չէր բարձրաձայնվում նաեւ խորհրդային երկրում: Այդ պատճառով այն ամենը, ինչը որ կապվում էր ցեղասպանության հետ, հնչեցվում էր բավականին զգուշորեն: Սակայն գրողների համար գոյություն չունեին գաղափարախոսական պատնեշներ. չէ՞ որ նրանք միշտ անկեղծ են իրենց զգացմունքների արտահայտման մեջ...

Հայոց ողբերգությունն զգալու նման անկեղծ պոռթկումով եւ պատմական արդարությունը վերականգնելու հույսով է համակված Եւգենի Եւտուշենկոյի «Գեւորգ Էմինին» բանաստեղծությունը: Այստեղ էլ (հիշենք Գիտովիչի «Զորահանդեսը Երեւանում») հնչում է Հայաստանից անջատված Արարատի մոտիվը.

...Նա է ձեր ոռու եղբայրը, ով կարողացավ հասկանալ

15 Տե՛ս «Это - Армения. Стихи русских поэтов», Ереван, 1967, էջ 163-164:

16 Տե՛ս «Литературная Армения», 1989, թ. 5:

17 Դ. Самойлов, Весть, Москва, 1978, с. 34.

*Ձեր ողջ սոսկալի ճանապարհը, բոլոր կոտորածներն ու եղեռնը,
Ով կարողացավ ձեր ցավն իր մեջ առնել,
Ասես այն լիներ ռուսի ցավը:
Եւ դրա համար ինչպես անջատված իմ եղբայրը՝
...Աղերսանքով ու կշտանքանքով Արարատը
Կանչում է ինձ որպես հայի
(տողացի թարգմանություն):*

Իսկ արդարության վերականգման հույսը եւ բանաստեղծի ինքնագոհ մղումը՝ ամեն ինչ անել հանուն ճշմարտության, արտահայտված է բանաստեղծության վերջում.

*Եւ հավատում եմ ես՝ կգա մի օր,
Երբ սահմաններ չեն լինի՝ միայն ծիածանների կամարներ...
Աշխարհում կանհետանան չարությունն ու թշնամանքը,
Եւ ես կփարվեմ Արարատին:
Իսկ եթե ոչ՝ միայն թե ուժս պատի,
Թող ուժասպառ լինեմ, թող ողնաշարս ջարդվի,
Ես Արարատը շալակս կառնեի
Եւ կրեռեի սահմանից այս կողմ¹⁸
(տողացի թարգմանություն):*

Եւգենի Եստուշենկոն անդրադառնում է հայ ժողովրդի մեծ ողբերգությանը՝ «Չարենցավանում» բանաստեղծության մեջ ընդգծելով հայության արարող, ստեղծագործող ոգին...

*Այրո՛ւն ու եղե՛ռն, եղեռն ու արյուն -
Ահա՛ պատմությունն այս հողն ու քարի.
Բայց չի՛ թառանում ծաղկունքն ա՛յն վայրում,
Որտեղ թաղվել են պոետնե՛րն արի՛¹⁹
(թարգմ.՝ Գ. Էմինի):*

Հայոց եղեռնի թեման հստակ հնչեց նաեւ Միխայիլ Մատուսովսկու «Տոդեր թեժ թոնրից» բանաստեղծական շարքում՝ գրված 80-ականների կեսերին, հեղինակի՝ Հայաստան կատարած երկրորդ ուղեւորության տպավորության տակ: Համաձայն վերագրով ժողովածուն ռուսերենով եւ հայերենով (Սիվա Կապուտիկյանի թարգմանությամբ) լույս է տեսել 1988 թվականին: Ս. Կապուտիկյանի խոսքերով՝ այս գիրքը «հիրավի տոգորված ու պարուրված է մեր ցավի ածխամոխրով»²⁰: Մի քանի գործում («Գոշի ծերուկները», «Հարիսա էին եփում», «Չարենցի կամարը», «Խաչքարերը», «Իմ ծննդյան թիվը»)

18 Газета «Коммунист», 1990, 1 апреля, № 74.

19 Ե. Եստուշենկո, Ես սիրիրցի եմ, Երևան, 1981, էջ 106:

20 Ս. Капутикян, Добрый свет. Газета «Коммунист», Ереван, 1990, 27 июля.

հիշատակվում են այն վայրերը, որտեղ հայերը հերոսաբար դիմադրում էին թուրքական զորքերին՝ Սասուն, Վան, Մուսա լեռ, Սարդարապատ... Իսկ «Իմ ծննդյան թիվը» բանաստեղծությունն ավարտվում է այս տողերով.

*Ներեցն՝ք դուք ինձ, ներե՛ք ինձ, հայեր,
Որ ծնվել եմ ես տասնհինգ թվին²¹
(թարգմ.՝ Ս. Կապուտիկյանի):*

Տպավորիչ է Մատուսովսկու՝ Եղեռնի հուշարձանին այցելության նկարագրությունը. «Այդ հուշակոթողն անհնար է անվրդով դիտել: 12 հսկայական քարեր, որպես հայերից անգթորեն դատարկված 12 նահանգներ, օղակ են կազմում: Իսկ գուցե դրանք 12 սգավոր խաչքարեր են, կամ էլ՝ իրենց վշտի մեջ քարացած 12 այրիացած կանայք, իսկ գուցե 12 ռազմիկներ են, որ երդվում են վրեժխնդիր լինել թշնամուց»²²: Այս այցելության տպավորություններն արտահայտված են «Եղեռնի հուշարձանը Ճիծեռնակաբերդում» բանաստեղծության մեջ: Կոմիտասի մշակած ժողովրդական երգի տողը՝ «Գարուն ա, ձյուն ա արել», դարձել է բանաստեղծության կրկներգը, որն ուժեղացնում է դրա ողբերգական հնչեղությունը.

*Ես այս քարի դեմ քար եմ դառել,
Ինձ պատել է ցավ մի անապատում,
Գարուն է, բայց ա՛խ, «ձյուն ա արել»
Այստեղ ու Դեր Զոր անապատում:
Ու այնքան վիշտ կա այս մի տողում,
Վիրավոր հոգի, կարոտն այնքա՛ն,
Ու գետնի տակից երգն է մահում՝
Խառնված բոցին հավերժական:
Ու գետնի տակից ելնում են վեր
Մտվերներ մեռած ու բյուրավոր,
Ու նրանց մեջ եմ ե՛ս էլ, ե՛ս էլ,
Ես՝ Մեծ եղեռնի զոհը մի նոր:
...Գարուն է, բայց ա՛խ, «ձյուն ա արել»,
Ու խառնվել են գիշեր ու տիվ:
Քանի՛ ապրիլ է սառսրեցրել
Այս մեկ մի քառք՝ «տասնհինգ թիվ»:
Գաղթի երթե՛րն են տարածվում դեռ
Ինչպես երկնքում հավերժի չուն:
Գարուն է, բայց ա՛խ, «ձյուն ա արել»,
Փռվել է գետնին ու չի հալչում²³*

21 Մ. Մատուսովսկի, Տոկեր թեմ թոնրից, Երևան, 1988, էջ 113:

22 Մեջբերումը նշված գրքի՝ Վահագն Դավթյանի «Հուզիչ երկխոսություն» առաջաբանից է (էջ 74):

23 Անդ, էջ 85-86:

(թարգմ.՝ Ս. Կապուտիկյանի)...

Իսկ Միխայիլ Մատուսովսկու «Գրիգոր Խանջյանի գորելենը» բանաստեղծության հետևյալ տողերը՝

*Գրքերում գրված պատմությունն անգամ
Հիշողության մեջ արատներ ունի.
Այստեղ էջերն են երբեմն պակասում,
Այնտեղ՝ բառերն են անընթեռնելի,
Այստեղ խունացել, գունաթափվել է կարևոր մի տող,
Այնտեղ խեղվել է ճշմարտությունը
Մրբագրվել են թվերը, դեպքը²⁴*

(թարգմ.՝ Ս. Կապուտիկյանի)...

կարող էին Վլադիմիր Կորնիլովի՝ Սիլվա Կապուտիկյանին նվիրված «Ռադիոհաղորդում» (1987) բանաստեղծության բնաբանը դառնալ. վերջինս մերկացնում է Թուրքիայի այսօրվա քաղաքականությանը շատ բնորոշ մի երևույթ՝ ցեղասպանության փաստի բացարձակ հերքումը: Նկատենք, որ գիտական շրջանակում, պարբերական մամուլում, հրապարակախոսության մեջ բազմիցս քննարկվող այս թեման Վ. Կորնիլովն առաջին անգամ դարձնում է գեղարվեստական արտացոլման նյութ.

*Չլինի՞ թե ռադիոպտուտակը
Ավելի արագ է շրջվում,
Եւ ահա գիշերում Ստամբուլը
Բանդագուշանք է բարբաջում:
Ու խախտելով քունս գիշերվա՛մ
Խափարում լուր է տալիս,
Իբր կոտորածը սեւ տարվա
Բարբաջանքն է հայերի:*

Սակայն ճշմարտությունը չի կարելի թաքցնել, որքան էլ թուրք հաղորդավարը հմտանա բառային վարժանքների մեջ: Բանաստեղծի խոսքն ուղղված է նախճիրը իրագործողների հետևորդներին.

*Մի՛ շտապիր ճերմակով ներկել
Չարք քո բաժին ժառանգության,
Հասկացիր՝ սոփց չազատվելը
Մարդուն դարձնում է գազան:*

Այն վերաբերում է նաեւ բոլոր նրանց, ովքեր փորձում են խեղաթյուրել պատմությունը.

²⁴ Անդ, էջ 136:

*Չձեւանանք, որ ոչինչ չգիտենք,
 Չստենք ու չասենք այլ բան,
 Ինչ որ եղել է, չես թաքցնի,
 Եղածը փոխելու չկա պայման:
 Ու չարժեք փաստերի հետ խաղալ
 Ո՛րք պահանջողի, ո՛րք էլ աչքակապուկ,
 Այլապես ռադիոթուրքերի նման
 Կարելի է լինել ամոթագուրկ²⁵
 (թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի):*

Հայոց ցեղասպանության թեման հատուկ տեղ է զբաղեցնում Բորիս Չիչիբաբինի ստեղծագործության մեջ: Բ. Չիչիբաբինը շատ ազնիվ, ճշմարտախոս պոետ էր: Որոշ բանաստեղծությունների համար 1973 թ. նրան հեռացրել էին ԽՍՀՄ գրողների միությունից: Բ. Չիչիբաբինի առաջին ժողովածուները լույս էին տեսել 60-ականների կեսերին, սակայն 20 տարուց ավելի նա կտրված էր իր ընթերցողից, եւ միայն 1989 եւ 1990 թվականներին տպագրվեցին նրա նոր գրքերը: Բանաստեղծի կնոջ վկայությամբ՝ նրանց Հայաստան գալու պատճառը եղավ 1981 թվականին Չիչիբաբինի մտերիմ ընկերոջ՝ իրավապաշտպան Հենրիխ Ալտունյանի բանտարկությունը: Ամուսինները որոշեցին այցելել ընկերոջ հայրենիքը, եւ 80-ականների առաջին կեսին երկու անգամ եղան Հայաստանում²⁶: Բ. Չիչիբաբինի մասին իր ակնարկում Ե. Օլշանսկայան բերում է մի հատված պոետի նամակից. «Մեր կյանքի վերջին տարիների ամենամեծ, դեռ լրիվ չմարսված հայտնագործությունը եւ հոգեկան ցնցումը Հայաստանն է... Ամեն մի բանաստեղծ, ամեն մարդ պետք է, վերջիվերջո, կյանքում գոնե մեկ անգամ տեսնի այդ միակ, սուրբ, գեղեցիկ, ողբերգական հողը»²⁷: Իսկ Չիչիբաբինի «Իմ սրտում ցավում է Հայաստանը»²⁸ ակնարկը՝ գրված 1991 թվականին, երբ արդեն ստեղծվել էր նրա «Սաղմոսները Հայաստանին» շարքը, օգնում է ավելի խորը հասկանալ ռուս հեղինակի՝ մեր երկրի ընկալման էությունը:

Իր՝ Հայաստանին նվիրված բանաստեղծությունները Բ. Չիչիբաբինն անվանել է «սաղմոսներ», ինչն արդեն իսկ վկայում է այն վեհ զգացմունքների մասին, որ նա տածում էր մեր երկրի եւ ժողովրդի հանդեպ: Հայաստանը նրա համար հոգեւոր, աստվածաշնչյան երկիր է՝ անխզելիորեն կապված Արարատի հետ, եւ պատահական չէ, որ «Սաղմոսներում» երկու անգամ արժարժվում է իր հայրենիքից անջատված Արարատի մոտիվը.

25 **В. Корнилов**, Избранное. Стихотворения и поэмы, М., 1991, с. 201-202.

26 Այդ մասին տե՛ս **М. Алекаян**, Армения - редкая и своеобразная страна. Беседа с Л. Карась-Чичибабиной. «Элитарная газета», 2006, 31 октября:

27 **Е. Ольшевская**, Портрет без ретуши. Журнал «Ренессанс», Киев, 1995, № 11, с. 103.

28 Տե՛ս **Б. Чичибабин**, В сердце моем болит Армения. «Республика Армения», 1991, 18 июня, р. 109:

*Այնտեղ արծաթափայլ Արարատն է լողում
Երևանի տենչացող աչքերի առաջ²⁹
(տողացի թարգմանություն):*

Սա «Առաջին սաղմոսն» է: Իսկ այս տողերը «Երրորդ սաղմոսից» են.

*Բայց չէ՞ որ սիրտը գիտի, թե որքա՛ն դառն է երկնքին
Հայաստանի եւ Արարատի երկրային անջատումը³⁰
(տողացի թարգմանություն):*

Եղեռնի թեման անցնում է Բ. Չիչբաբինի չորս «Սաղմոսների» միջով, ընդ որում այստեղ կարելի է հանդիպել այդ թեմայի տարբեր մոտիվների, որոնք նկատելի են ռուս գրողների երկերում: Դրանք վառ են, հուզիչ եւ շատ անհաստական: Չիչբաբինի տողերում երևում է բանաստեղծը, որն իբրեւ անձնական ողբերգություն է ապրել հայ ժողովրդի ցավը: «Իմ ուղեղը ճեղքում է / Տասնհինգ թվականի կոտորածը»³¹, - «Չորրորդ սաղմոսի» այս սուր, տպավորիչ պատկերը խորապես արտահայտում է բանաստեղծի զգացմունքները: Նրա կարծիքով ողջ աշխարհը պետք է ողբա Հայոց եղեռնը.

*Բայց թող ես լաց լինեմ ու աշխարհը հեկեկա
Թուրքական կոտորածի խավարի համար³²
(թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի):*

1984 թ. գրված «Երրորդ սաղմոսը Հայաստանին» Եղեռնի հուշարձանի մասին է. այն լի է անհուն վշտով, կսկիծով ու անողորք պարսավանքով, եւ որպես վեհաշուք մի մահերգ՝ նվիրված է հայ բոլոր նահատակներին: Սգո եւ խորը կարեկցանքի տպավորություն է ստեղծում հատկապես բանաստեղծության երկար տողերի դանդաղ, համաչափ, ողբալի-հանդիսավոր հնչերանգը.

*Ո՛չ տոնական փայլով եւ ո՛չ էլ հրապարակային իրարանցման մեջ
Հառնում է կռիվ ու կոտորած մոռացած հայացքների առջեւ
Այդ հուշարձանը մարդկանց, ովքեր սպանվել էին լոկ այն պատճառով,
Որ հայ էին, եւ դա արդեն բավական էր:
Օ՛ դար իմ հանցավոր, դեմքս ցողիւր արյամբ...
...Եւ արտասվում է այդ չմոռացվող կոտորածի զոհերի վրա
Երգող, ցավից օրորվող հավերժական կրակը³³
(տողացի թարգմանություն):*

29 **Б. Чичибабин**, Колокол, Москва, 1989, с. 235.

30 Անդ, էջ 239:

31 Անդ, էջ 240:

32 Անդ, էջ 238:

33 Անդ, էջ 239:

Այս տողերում արտացոլված է ոչ միայն բանաստեղծի խորը սպրած հայոց ողբերգությունը, այլ նաև նրա շփոթվածությունը. չէ՞ որ այդ հրեշավոր չարիքն այդպես էլ մնաց անպատիժ... Այս պատճառով նա իր դարն անվանում է «հանցավոր»... Չիչիբաքինը կարծես իրեն մեղավոր էր զգում այն չարի, անարդարի, անմարդկայինի համար, որը բացահայտել էր:

Իր բանաստեղծությունները հրապարակելով «Литературная Армения» ամսագրում (1991, թ. 10), Բորիս Չիչիբաքինը գրում էր. «Աշխարհի ժողովուրդների մեջ, բացի հրեաներից, ես չգիտեմ ժողովուրդ՝ ավելի մեծ եւ ողբերգական ճակատագրով, քան հայ ժողովուրդը: Այդ ողբերգությունը տեսանելիորեն արտահայտված է Հայաստանի ռելիեֆում՝ քարքարոտ եւ սակավահող, հայ մշակույթի հուշարձաններում, նշանավոր խաչքարերում, հայ տղամարդկանց եւ կանանց դեմքերում եւ աչքերում... Բացի արյունակից ազգակցությունից, կա եւ հոգեւոր ազգակցություն, եւ ես Հայաստանը համարում եմ իմ հոգեւոր, միստիկական, ճակատագրական հայրենիքը: Բոլոր այն երկրներից, որոնք ես տեսել եմ իմ աչքերով կամ որոնց մասին կարդացել եմ գրքերում, ես չունեմ ավելի հարազատ, մոտ եւ բաղձալի երկիր, քան Հայաստանն է»: Այս խորապես անկեղծ, բանաստեղծի սրտից բխող խոսքերը մեզ համար շատ թանկ են:

1987 թ. առաջին անգամ Հայաստան այցելեց Ալեքսանդր Կուշները: Մինչ այդ նա ծանոթ էր Հայաստանին գրականության միջոցով. նա թարգմանել էր հայ բանաստեղծների գործերը, այդ թվում՝ Դանիել Վարուժանի, Միսաք Մեծարենցի: Այդ նույն՝ 1987 թվականին, ստեղծվում է Ալ. Կուշների բանաստեղծական շարքը՝ «Հայկական տետրը»: Այստեղ վառ, տարողունակ պատկերներում խտացված են Հայաստանի հին ու նոր ժամանակները, նրբորեն նկատված են Հայոց երկրին բնորոշ գծերը՝ բնապատկերը, կենցաղը, պատմությունը, մշակույթը... Շարքում Եղեռնին նվիրված հատուկ բանաստեղծություններ չկան, սակայն «Հայկական տետրի» առանձին տողերից ընթերցողն զգում է, թե ի՞նչ խորությամբ է բանաստեղծն ընկալել մեր ժողովրդի ողբերգությունը.

*Հայաստանում մի պահ զգացի, որ հրեա եմ,
Փորփրելով գիտակցությանս խավարը³⁴
(տողացի թարգմանություն), -*

խոստովանում է բանաստեղծը, եւ այդ տողերի շարակարգում շատ բան է բացվում ընթերցողի համար... Իսկ մյուս բանաստեղծության մեջ, նույնպես չշեշտելով Եղեռնի թեման, Կուշները կարծես թե աննկատելիորեն ներառում է այն իր տողերում՝ խոսելով այն մասին, թե որքա՛ն մոտ է նրան Հայաստանը, եւ որ նա կիսում է այդ երկրի պատմական ցավը.

34 А. Кушнер, Ночная музыка, Ленинград, 1991, с. 59.

*Այո՛, այո՛, հոգ տանել փոքր երկրի մասին,
Նրա մշուշոտ սպազայի եւ գառամյալ հնության,
...Ներկա լինել նրա բոլոր վշտերին եւ ծնունդներին³⁵
(տողացի թարգմանություն)...*

Այս հատվածի վերջին տողն իր զարգացումն է ստանում շարքի մյուս բանաստեղծության մեջ, որտեղ ընդգծվում են հայ ժողովրդի կենսունակությունն ու կենսասիրությունը, պատմության ծանրագույն փորձությունները հաղթահարելու ունակությունը.

*Մեծ երկրում այս փոքր երկիրը
Կորած չի ուզում եւ չի կարող լինել:
Հազարամյակներով պարուրված, նա գիտի՝
Իր ապրած կյանքն այնքան էլ լավը չէր:
Սակայն անցնելով կոտորածների, ջարդերի միջով՝
Իրեն քարի պես գետը չի նկատում,
Այլ տուն է կառուցում, երաժշտություն ստեղծում
Եւ ծնում է բարձրանական տղաների³⁶
(տողացի թարգմանություն):*

Երկար տարիներ Հայաստանի հետ էր կապված բանաստեղծ Միխայիլ Դուդինը: Նա խորապես ապրեց հայ ժողովրդի պատմական ցավը: Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի ռուսերեն առաջին հրատարակության (1982) առաջաբանում Մ. Դուդինը գրել էր. «Երեւանում՝ Հրազդանի գահավեժ ափին կա մի վշտալից հուշարձան Յեղասպանության զոհերի հիշատակին՝ Թուրքիայի պատմության ամոթանքի հուշարձանը... Սանձագերծ ազգայնամոլության գործած ոճրի հուշարձանը, կարելի է ասել՝ հուշարձանը քսաներորդ դարում ֆաշիզմի գործած առաջին արարքի, որ 1915-ին ոչնչացրեց հայության կեսը... Աշխարհի բոլոր ժողովուրդներին ահազանգող հուշարձան, դաժանության հուշարձան... Եւ երբ ես լինում եմ այնտեղ, լսում եմ Կոմիտասի ողբը, շփոթմունքի եւ տագնապի խորաթափանց ողբը, մարդկային ոգու եւ տիեզերքի ողբը՝ իր անլռելի հնչողությամբ ուղղված գալիք ժամանակների մարդկային բոլոր հոգիներին...»³⁷: Թե ինչ խորությամբ էր Մ. Դուդինն ընկալում հայոց պատմական բախտը, երեւում է նաեւ նրա «Տողեր՝ նվիրված Լեւոն Մկրտչյանին» բանաստեղծությունից: Այստեղ նոր ուժով են հնչում հայ ժողովրդի անբուժելի վերքերի, պատմական դաժան անարդարության, Արարատը հայրենիքից անջատելու մոտիվները: Վերստեղծելով

35 Անդ, էջ 61:

36 Անդ, էջ 60:

37 Մ. Դուդինի «С вершины мужества» վերնագրով առաջաբանը հետագայում գետեղվել է նաեւ վեպի հայերեն հրատարակություններում. տե՛ս **Ֆ. Վերֆել**, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1990, էջ 7:

Արարատի սպիտակ գագաթը բարձրացող Խաչատուր Աբովյանի կերպարը՝ Մ. Դուդինը գրում է.

*Նրա հետքից ժողովրդյան
Հոսանքը չի մարում,
Հայաստանի ողբերգական
Զավակներն են քայլում:
Ավարտեցին իրենց ճամփան՝
Հետք թողնելով կյանքում,
Սակայն առանց Արարատի
Չունեն հանգիստ ու քուն:
Բքի միջով, միջով ցրտի,
Եւ շուրթերին երգը,
Տե՛ս, տանում են արդար դատի
Հայաստանի վերքը³⁸:*

Դիտարկելով Եղեռնի թեման Ի. դարի երկրորդ կեսի ռուսական պոեզիայում՝ նշենք, որ մինչև **80-ականների վերջը** այդ թեման լուսաբանվում էր **որպես անմոռանալի անցյալ, սակայն միայն անցյալ, որն այլևս երբեք չի կրկնվելու**: Բայց երբ ավելոծվեց Լեռնային Ղարաբաղը եւ հետեւեցին Մում-գայիթի ու դրան հաջորդած դեպքերը, ռուս բանաստեղծներն անմիջապես արձագանքեցին՝ անկեղծորեն արտահայտելով պետականից՝ գորբաչեյա-նից տարբերվող իրենց կարծիքն ու տեսակետը: Եւ արդեն տեղի ունեցող իրադարձությունները նրանց հիշողության մեջ արթնացրին 1915 թվականը... Այդ բանաստեղծների շարքում նշենք Մ. Դուդինին, Ս. Լիպկինին, Մ. Մատուսովսկուն, Բ. Զիչիբաբինին... Միխայիլ Դուդինը գրում էր.

*Մե՛կ գեղոցիդ, մե՛կ Սումգայիթ,
Երկրաշարժի ահեղ որոտ:
Եւ ընթացքը քո, Հայաստա՛ն,
Շարունակ ցավ է արյունոտ:
Բայց թե մեկ է, դու միշտ ունես
Եռանդուն երգ ու նաև հաց,
Կյանքի հանդեպ հավատիդ համար
Վաղուց եմ սիրում քեզ, Հայաստա՛ն³⁹
(թարգմ.՝ Վ. Ալեքսանյանի):*

Անդրադառնալով արդեն մի ամբողջ դար մեզանից անջատված 1915 թվականի ողբերգության անմիջական արձագանքներին ռուս պոեզիայում՝ հիշենք նաև դարավերջին՝ 1998-ին «Литературная Армения» ամսագրում

38 «Եւ Լեռնի երազի մեջ Արարատն եմ տեսնում...», Երևան, 1999, էջ 5-6:

39 М. Дудин, Земля обетованная, Ереван, 1989.

Մարկ Ռիժկովի տպագրած «Ապրիլ» բանաստեղծությունը: Մասնագիտությամբ բժիշկ Մ. Ռիժկովը նաեւ բանաստեղծ էր: Լինելով Հայաստանում՝ նա ջերմորեն սիրեց մեր երկիրը, թարգմանեց հայ բանաստեղծների՝ Գեորգ Էմինի, Պարույր Սեւակի, Ռազմիկ Դավոյանի գործերը... «Ապրիլ» բանաստեղծության մեջ հնչում են Յեղասպանության թեմայի տարբեր մոտիվներ, սակայն գերակշռողը հայ ժողովրդի կենսասիրության եւ կենսունակության մոտիվն է, եւ այդ առումով այն համահունչ է Ա. Կուշների, Մ. Դուդինի եւ մյուս բանաստեղծների վերոբերյալ տողերին.

*Հայ ժողովրդի հոգեւոր հիշողություն մեջ
Ընդմիշտ մնաց այդ վերքը:
Ողբերգությունը տասնհինգ թվականի
Չեն ստվերի տարիներն ու իրադարձությունները:
...Անե՛ծք անյուններին նրանց, ովքեր բռնություն էին տարածել,
Խայտառակությո՛ւն եւ մոռացություն դահիճներին խելագար:
Ո՛ղջ է Հայաստանը. եւ դրանում է նրանց անգորությունը,
Ո՛ղջ է՝ հակառակ նրանց հրդեհներին եւ սրերին⁴⁰
(տողացի թարգմանություն):*

* * *

Այսպիսով՝ 1915 թ. Մեծ Եղեռնի թեման արտացոլող՝ Ի. դարի երկրորդ կեսի ռուս պոեզիայի նմուշները համակված են հայ ժողովրդի ապրած ողբերգության խորը եւ անկեղծ կարեկցանքով: Այս բանաստեղծություններում հնչում են նաեւ թուրքերի ոճրագործության անպատժելիության, պատմական արդարության վերականգման հույսի մոտիվները... Եւ, իհարկե, հավատն այդ անհավոր ողբերգության միջով անցած հայ ժողովրդի կենսական եւ ստեղծագործ, արարող ուժի հանդեպ:

РЕЗЮМЕ

Тема трагической судьбы армянского народа, подвергшегося массовому истреблению турецкими властями, вошла в русскую поэзию еще с конца XIX века и волновала русских поэтов на протяжении всего XX столетия. В статье показано, что в поэзии первых десятилетий XX века тема Геноцида армян отобразена современниками, а порой и очевидцами страшной трагедии или же её зримых последствий (например, цикл стихов Сергея Городецкого «Ангел Армении», стихотворение Осипа Мандельштама «Фэтонщик»).

⁴⁰ «Литературная Армения», 1998, № 4, с.104-105.

В поэзии последующих десятилетий эта тема находит отражение уже как отдаленная от авторов временем, но всегда живущая в их памяти трагическая, нетленная страница армянской истории. Рассматриваются отдельные стихотворения Веры Звягинцевой, Арсения Тарковского, Семена Липкина, Евгения Евтушенко, Давида Самойлова, Владимира Корнилова, Александра Кушнера, Михаила Дудина, Марка Рыжкова, а также поэтические циклы Александра Гитовича, Михаила Матусовского, Бориса Чичибабина. Раскрываются характерные мотивы стихотворений: искреннее, глубокое сострадание трагедии, пережитой армянским народом; безнаказанность чудовищного преступления турок, до сих пор не признавших Геноцид армян и фальсифицирующих историю; надежда на восстановление исторической справедливости; жизнестойкость армянского народа, перенесшего это нечеловеческое испытание судьбы; вера в жизненные и творческие силы народа.

SUMMARY

The topic of the tragic fate of the Armenian people massacred by Turkish authorities was contained in the Russian poetry back in late 19th century and was a matter of concern for Russian poets during the entire 20th century. The article shows that in the poetry of the first decades of the 20th century the topic of the Armenian Genocide is depicted by the contemporaries and at times by the witnesses of this horrible tragedy or its visible reminders (for instance, “Angel of Armenia” cycle of poems by Sergey Gorodetsky or “The Phaeton Driver” poem by Osip Mandelstam). The poetry of the next decades reflects this topic as a time distant from the authors but always living in their memory as a tragic and imperishable page of the history of Armenian people. Separate poems by Vera Zvyagintseva, Arseny Tarkovsky, Semyon Lipkin, Yevgeny Yevtushenko, David Samoylov, Vladimir Kornilov, Alexander Kushner, Mikhail Dudin, Mark Ryzhkov as well as the poetic cycles of Alexander Gitovich, Mikhail Matusovsky and Boris Chichibabin are examined. Distinctive motifs of the poems are disclosed – sincere and deep compassion for the tragedy suffered by the Armenian people; impunity for the heinous crime committed by the Turks who have yet not acknowledged the Armenian Genocide and are falsifying the history; hope for the restoration of historical justice; the resilience of the Armenian people that went through this inhuman ordeal of fate; faith in the viability and creativity of the people.

ԹԱԳԵԻՈՍ ՏՈՆՈՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ԵՐԳՐ՝ ԽՈՍՔԻ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՆ ԵՒ
ԽՈՐՀՐԴԱՆՇԱՅՆԱՑՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆ

Խոսքի կերպավորման և խորհրդանշայնացման բարձրագույն աս-
տիճանը երգն է:

Քառյակներից մեկում Թումանյանը խոսքի խորհուրդը բացարձակացնելու
միտումով օգտագործում է *«առանց խոսքի երգ»* արտահայտությունը.

Դու մի անհայտ *Բանասպեղծ* ես, չըսեսնված մինչ էսօր,
Առանց խոսքի երգ ես թափում հայացքներով լուսավոր:
Ես էլ, ասենք, զարմանալի *Ընթերցող* եմ բախրավոր,
Որ *կարդում եմ Լի երգերը* էսքան հեշտ ու էսքան խոր:

Նախ պետք է վստահորեն պնդել, որ այստեղ գրողը ոչ թե երգն է «խոս-
քազրկում», այլ խորհրդանշում է խոսքի ամենաբարձր՝ **երգ** մակարդակը: Իսկ որ
Բանասպեղծի երգը խոսքին (յերբասին) է խարսխվում, ապացուցում է մեջբեր-
ման վերջին փողը, որտեղ շեշտվում է, որ այդ երգը ընթերցվում-կարդացվում է
(*«կարդում եմ Լի երգերը»*):

Թումանյանական այս րեքսպր փառացիորեն ընթերցելու դեպքում, հարկավ,
ի հայտ է գալիս փրամաբանական հակասություն. ինչպե՞ս է, որ երգն *«առանց
խոսքի»* է, բայց նաև կարդացվում է: Սակայն րեքսպային ամբողջության փի-
րություն նման հակասություն քնարել չի կարելի նախ այն պարճառով, որ խոսքը
Բան - ա - սպեղծի մասին է, ում կոչումը, բնականաբար, խոսք (րեքսպ) սրեղ-
ծելն է: Իսկ նրա սրեղծած խոսքն այս պարագայում *«հայացքներով»* ու *«լու-
սավոր»* ասվողն է և այդ պարճառով է, որ առանց խոսքի, այսինքն՝ առանց բա-
ռերի է հայացքով, անօրինակ է, ասվածային է: Եւ *«Ընթերցողն»* էլ *«բախ-
րավոր»* է, քանի որ կարողանում է կարդալ երգը:

Ի՞նչ է երգը:

Իհարկե, խոսքն ինքնին ձայնային երևույթ է: Երբ ձայնը ձեռք է բերում
իմաստ և նշանակություն, դառնում է խոսք: Խոսքը ձայների ներդաշնակումն է,
և այդ ներդաշնակման ճանապարհով է խոսքը դառնում ըմբռնելի և իմաստա-

յին, ե՛ր զգայական առումներով միաժամանակ: Ձայնի ընդհանուր զգայական կերպավորումը ավելի հին երևույթ է, քան կոնկրետ իմաստային կերպավորումը:

Ձայնի զգայական կերպավորման (ներդաշնակման) արդյունքը մեղեդայնություն - երաժշտականությունն է եւ այդ ճանապարհով նաեւ մեղեդի-երաժշտությունն է, որն ըմբռնելի է ընդհանուր զգայական-զգացմունքային մակարդակում:

Ձայնի **իմաստային կերպավորումը** (ներդաշնակումը) խոսքն է, որն ըմբռնելի է կոնկրետ իմաստի մակարդակում:

Երգը խոսք-ասելիքի բարձրագույն կերպը, ձևն է, որ ներառում է ձայնի ե՛ր իմաստային փիրույթը՝ որպես կոնկրետ խոսք, ե՛ր զգայական փիրույթը՝ որպես երաժշտություն, մեղեդի, զգացմունք:

Երաժշտությունը ենթադրում է չափ, եւ եթե խոսքը կառուցված է չափի կիրառմամբ, այսինքն՝ չափավոր, չափածո, այն ինքնին նաեւ մեղեդի է (խոսքի հնչերանգային արտահայտվածություն): Ընդ որում՝ չափն այս դեպքում չպետք է ընկալել որպես միայն չափածո բանաստեղծության մենաշնորհ, քանի որ ազար բանաստեղծությունը նույնպես չափային հետաքրքիր, բազմազան դրսևորումներ ունի: Ավելին, չափային դրսևորումներ ունի նաեւ արձակը, եւ երաժշտականությունը հապուկ է նաեւ վերջինիս:

Բանաստեղծությունն ինքնին խոսք է, բայց նաեւ երգ է կոչվում այս տրամաբանությամբ: Բանաստեղծելը՝ երգել, իսկ բանաստեղծին երգիչ անվանելը բխում է այս իրողությունից: Ինչ-որ բան երգելով ասելը, ինչ-որ բան երգելը, երգի ոլորտ բարձրացնելը նախ նշանակում է այն ներգրավել ձայնի փիրույթ, իսկ եթե մեր առաջադրած համակարգում ձայնն ընդհանրապես կենդանի գոյության նշանն ու գրավականն է, իսկ ձայնի **խոսք** աստիճանը՝ քաղաքակրթական գոյության ու լինելության, ապա ինչ-որ բան երգելով ասելը առնվազն նշանակում է ապրեցնել ու կարևորել այդ բանը: Միամանրոյի «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» փողի մեջ նույնպես հակասություն չկա. խոսքը հավիտյան ապրելու եւ ոչ թե մեռնելու մասին է, քանի որ երգելով չեն մեռնում, ապրում են եւ, որ առավել կարևոր է, երգելով ներգործում, ապրեցնում են: Մորը երգելու, հայրենիքը երգելու, մարդուն երգելու, բլբուլի՝ յարին երգելու հոգեբանական արագձի գլխավոր շերտն ապրեցնելն է: Բառանունը մղելով խորհրդանիշի ոլորտ՝ գործադրվում է անվանակրին ապրեցնելու, բարձրացնելու, օրինակ, խորհրդանիշ դարձնելու ջանք, ինչն այլ բան չէ, քան խոսքով (բանով) աշխարհի վրա ներգործելով՝ արեղծել եւ վերստեղծել այն: Տեքստի եւ իրականության (սկզբնական) «հորիզոնական» փոխհարաբերությունը, ինչպես նշել էինք, բնականաբար եւ ինքնաբերաբար հանգում է նաեւ տեքստի եւ ժամանակի «ուղղահայաց» փոխհարաբերության խնդրին: Այդ «հորիզոնական» փոխհարաբերությունը օգտագործվում է «ուղղահայաց» փոխհարաբերության պահպանման նպատակով, այսինքն՝ ժամանակի մեջ գոյատևելու համար: Բառը, անունը, դրանց պարունակած բովանդակությունը (որը նյութա-

կանանում է անվանակրի մեջ), բարձրացնելով խորհրդանշայնացման ոլորտ, հե-
տապնդվում է փվյալ բառը, անունը, դրանց բովանդակությունն ու անվանակրին
տեքստի եւ ժամանակի «ուղղահայաց» փոխհարաբերության մեջ պահպանելու
նպատակ, քանի որ այդ «ուղղահայացում» է պահպանվում լեզվամրաժողա-
կան արժեհամակարգը: Ճիշտ է, մշտապես տեքստի եւ իրականության (փվյալ
պահի) «հորիզոնական» փոխհարաբերության մեջ է տեղի ունենում խորհրդան-
շայնացման գործընթացը, սակայն լեզվամրաժողական արժեհամակարգը նույն
այդ փոխհարաբերության տիրույթում է սրանում ամենաձանք, երբեմն նաեւ խե-
ղող ու կործանարար հարվածներ: Արժեքը այս հարվածներից փրկելու ուղին է
դրա բառային, բառանվանական բովանդակության խորհրդանշայնացումը: Այս
ճանապարհով է բառը դառնում խորհրդանշի: Երբ ողջ աշխարհի քաղաքակր-
թական արժեքներն այս՝ բան, խոսք, տեքստ դառնալու ճանապարհով ի վերջո
դառնան խորհրդանշ, այսինքն՝ երբ իրականությունը լինի մշակութային, կգա
ապրվածային իրականության՝ բացարձակի ժամանակը (երբ ի սկզբանե դարձ-
յալ կլինի **բանը**), որպեսզի բանից դարձյալ սկիզբ առնի նոր տիպի աշխարհային
իրականություն:

Այդ պարագայով է հայերենի համատեքստը **նախ** ընդգծում **հենց երգի (երգ**
բառի, բովանդակության, անվանակրի) կարևորությունը՝ ի վերջո այն **դարձ-**
նելով խորհրդանշի:

Նախքան խորհրդանշայնացնելը կամ դրան զուգահեռ տեղի է ունենում
երկրպագության գործընթացը. Միսաք Մեծարենցի բանաստեղծություններում
եւս երգ երեսույթը, բառը-անունը «գործող անձ» են.

Սա իրիկունն ըլլայի ես,
լի երգովը թռչուններուն, մարդերուն...¹:

Նայերենի համատեքստային այս երեսույթը բանաստեղծի ստեղծագոր-
ծության մեջ ամենուրեք է.

Ու **լսէի** ես ցայգուն,
թովը կրակին ճարճապուն,
երգն իրիկուան եկտրին²:

Մեծարենցի ստեղծագործության մեջ, ընդհանրապես, ձայնային «հրավա-
ռություն» է.

Նոգույս դափ ու թմբուկի
Կ'իջնէ ծիծաղն այս գիշեր.
Ծնծղաներու պէս ցնծուն՝

1 Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, 1981, էջ 112:

2 Անդ, էջ 115:

Ծափ կը գարնեն իմ յուշեր:
Բամբիռներու երգին հետ
Քու շահէնի աչքերուդ
Ծիրանեծին բոցն հըրուս
Կայրի հոգույս մէջ նորէն...³:

Սակայն Մեծարենցի սրելծագործության մեջ կա մի բանասարելծություն, որի մեջ **երգ** երևույթը, **բառը-անունը** ոչ միայն որպես «գործող անձ» են հանդես գալիս, այլ, ինչպես վերևում հիշարակեցինք, երկրպագության առարկա: Դա «Հովին անցքը» բանասարելծությունն է, որի մեջ մենք ականապես ենք դառնում երգի ասարվածացման իրողությանը, ինչը, կարծում ենք, խոսքի (երգի) խորհրդանշայնացման գեղարվեստական վերաձեռնումն է. բանասարելծը ծնկում է երգի առջև.

Մինչ լույս շավիղ մը կ'երկարի մարքես...:
Լեռներեն կ'իջնեն հեքն իր մոլեկան,
Իրար բերելով ձեռքերս՝ անձկագին
Մինչ ես **ծնրադիր**՝ կ'ունկնդրեն **երգի'ն**...⁴:

Երգը խորհրդանիշ է դառնում խոսքի եւ երաժշտության (չափի) հետ: Ինչ-որ բան ինչ-որ մեկին երգել նշանակում է բարձրացնել, խորհրդանշայնացնել, այսինքն՝ մղել վերժամանակայինի, հավերժականի ոլորտ: Այս փրամաբանությամբ է երգելը նաեւ ապրեցնել նշանակում:

Դանիել Վարուժանը «Յեղիս սիրտը» գրքում հաճախ հենց **երգում է** («Ձոն»)

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր...
...Եղեգնյա գրչով **երգեցի** քուրմեր...
...Եղեգնյա գրչով **երգեցի** կարուր...
...Եղեգնյա գրչով **երգեցի** հարսեր...
...Եղեգնյա գրչով **երգեցի** արյուն...
...Եղեգնյա գրչով **երգեցի** վերքեր...
...Եղեգնյա գրչով որք փունս **երգեցի**...
...Եղեգնյա գրչով օջախս **երգեցի**...
...Ու պայթա՛ր, պայթա՛ր, պայթա՛ր **երգեցի**...
...Եղեգնյա գրչով վրեժ **երգեցի**...⁵:

Ընդ որում, «Ձոն» բանասարելծության նախնական փարբերակում Վարուժանը գրել է «Շամբելեն գրչով **գրեցի** փառքեր», «Եղեգնյա գրչով **գրեցի** վերքեր»: Ինչո՞ւ է Վարուժանը **գրեցի**-ն **երգեցի** դարձրել: Այս բանասարելծության լեզվաոճական խնդիրներին անդրադառնալիս Յու.Ավերիսյանը միանգամայն

3 Անդ, էջ 32:

4 Անդ, էջ 56:

5 Դանիել Վարուժան, Երկեր, Երևան, 1969, էջ 21:

ճշգրտորեն արձանագրում է, որ «**գրեկ փառքեր**» (կամ **գրեկ վերքեր**) փոխաբերությունը խիստ անհաջող է, նախ՝ որովհետև **գրեկ** (ընդգծումները Յու. Ավերիսյանին են. - Թ. Տ.) բառը այս կիրառության մեջ չունի անհրաժեշտ վերացարկում, եւ ապա՝ բառի «իներս» բովանդակությունն ինքնին ի գործու չէ կրելու իր հոմանիշային համարժեքի ուժեղ փոխաբերականությունը, որ իր այդ նշանակության մեջ (գովել, գովաբանել, գեղարվեստորեն վեհացնել) ավանդույթ ունի»⁶։ Զուր լեզվաոճական խնդիրներին առնչվող այս նրբագույն դիտարկումները հիմնավորվում են նաև հայերենի լեզվամրաժողական համակարգի մեր առաջադրած կառույցում. իհարկե, Ռ. Վարուժանի գեղագիտական բարձր ճաշակը նրան ստիպում է բանաստեղծության նախնական փարբերակի «**շամբելեն**» բառը փոխարինել «**եղեգնյա**» բառով, բայց խորապես համոզված ենք, որ մեջբերված երկու տողերում էլ, Վարուժանի ճաշակին միացած, հենց հայերենի համարեքսրն է ստարել ու օգնել, որ **գրեկ**-ը բանաստեղծը փոխարինի **երգեկ**-ով։ Նայերենի համարեքսրը Վարուժանի տեքստին «միջամրել է», քանի որ, ինչպես քիչ առաջ բացատրեցինք, երգն է խոսքի բարձրագույն կերպը, երգը խորհրդանշանացված է, ունի ավելի ծանր կշիռ, քան գրելը, եւ **տունը, օջախը, արյունը, պայքարը, կարոտը, վրեժը** եւ այլն հավերժացնելու համար ոչ թե գրել է պետք դրանց մասին, այլ դրանք **երգել**։ Ներաբրքական է, որ «Ձոն»-ի հենց նախնական փարբերակում համարեքսրային **երգ-երգեկ**-ն արդեն առկա է, «խուժել» է Վարուժանի տեքստի մեջ՝ «Շամբելեն գրեցով **երգեցի** կարոտ», «Պրբուտ գրեցով եւ **երգեցի** արյուն», «Իմ գրեցով կրեի՛վ, կրեի՛վ **երգեցի**»։ Վարուժանի հանճարեղությունը նաև այն է, որ նա զգում է հայերենի համարեքսրը եւ այս դեպքում գրել-երգել երկընդրանքում, բնականաբար, հակվում հայերենի լեզվամրաժողական համակարգի կարևոր բաղադրիչներից մեկի՝ երգ երեսույթի, բառի եւ խորհրդանշի կողմը։ Նամարեքսրային այս «խուժումն» ու հեղինակի՝ ճշգրիտ կողմնորոշվելու բնատուր օժիվածությունն ի վերջո անխուսափելիորեն իրենց բարերար ազդեցությունն են թողնում «Ձոն» բանաստեղծության մշակված փարբերակի վրա. մշակվելուց հետո բանաստեղծությունը «հիշեցնում է ճարտարապետական մի կոթող, որի բոլոր մասերը՝ սովորական քարերն ու խոյակները, նախապես հաշվարկված են, պահում են մեկը մյուսին, եւ ամեն մի քար իր տեղում է»⁷։

Վարուժանը **երգում է** նաև «Նեթանու **երգեր**»-ում՝ Նայկյան հանճարին հորդորելով իր քնարը վերցնել, այսինքն՝ **երգել**.

Հանճարդ Նայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արեւափառ
Ա՛յ վերածնն վղաբակներեն եւ փառագոչ

6 Յուրի Ավերիսյան, Արեւմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ, Երևան, 2012, էջ 110:

7 Վ.Գաբրիելյան, Դանիել Վարուժան, Երևան, 1978, էջ 164-165:

Քնարդ ան⁸:

Դ. Վարուժանը եւ «Յեղին սիրտը» գրքում *է երգում*, եւ «Ներսէս *երգեր*»-ում *է երգում*:

Վարուժանը *երգում է* նաեւ «Նացին *երգը*» ժողովածուում.

Ու ես նստած հովանիին փակ էշիս,
Երգեմ քաջերը հողին,

Երգեմ հոտաղն, որ կհարթն կախարել...
Երգեմ հարսերն, որ...
Կմաղեն ժիր-ժիր գարի...

Երգեմ մշակներն, որ սայլերուն կախարին
Աստվածներու պէս կանգուն՝
Երկժանիով կախարողներն կքանդեն
Ճակարն հսկա դեզերուն
Կամը *կերգեմ*, որ կնավե շուրջն հունձքին⁹:

Վարուժանի «Նացին երգը» ժողովածուին ուզում ենք հափուկ անդրադառնալ, քանի որ խոսքը երկու հացերի՝ ֆիզիկական գոյություն պահպանող ուրելու հացի եւ հոգեւոր գոյություն պահպանող հացի՝ երգի համադրմանն է վերաբերում: Նայերենի լեզվամրածողական համակարգում ինչպե՞ս են համադրվում քաղաքակրթական գոյության այս երկու կողմերը՝ հոգեւոր եւ ֆիզիկական հացերը, դրանք երկու փարբեր, հակադիր կողմերի միասնությունն են կազմում, թե՛ օրգանապէս միմյանց մեջ փարբայրված՝ արդեն մեկ միասնական իրողություն: Նայերենի լեզվամրածողական համակարգում խոսքի (հոգեւոր հացի) ընկալումը քննելուց հետո անհրաժեշտություն է առաջանում նաեւ գոյության ու լինելության մյուս՝ մարմնավոր կողմի (հացի) քննության՝ պարզելու համար, թե հիշյալ համակարգում ինչպիսի փոխհարաբերության մեջ են գտնվում այդ երկու սկիզբները, լեզվամրածողական հոմանիշային⁸, թե՛ հականիշային հարաբերության մեջ են հարստանում խոսք (երգ) եւ հաց իրողությունները՝ բառ, անուն, խորհրդանիշ «մարմիններով»:

Խոսքի **նվագագույն միավորը**⁹՝ բառ-անունը, եւ նրա դրսևորման **բարձրագույն կերպը**՝ երգը (եւ՝ սովորական երգը՝ բառերով եւ երաժշտությամբ, եւ՝ բանաստեղծական երգը՝ իր փոքստով եւ ռիթմական երաժշտականությամբ) կամ երգելու գործողությունը ձեւավորում են խոսքի նպատակը եւ խորհուրդը: Իսկ խոսքի (երգի) մինչեւիսկ ինքնավերարտադրման նպատակը, թերեւս, նախ քան լինելով քաղաքակրթական մակարդակի պահպանումն է, այսինքն՝ գոյության հոգեւոր կողմի ապահովումը:

8 Դանիել Վարուժան, նշվ. աշխ., էջ 147:

9 Անդ, էջ 314-315:

РЕЗЮМЕ

Высшая категория символизации и конфигурации речи - это песня.

Чтобы понять **песню** как ступень развития голоса - речи, как **высшую форму сказа** и как символ, снова обратимся к предлагаемой (с нашей стороны) системе армянского языкового мышления: к иерархии голоса (звук) - слова (имя) - текста (стих: и в широком и в узком смысле).

Что такое песня? Естественно, **речь** - голосовое явление. Когда голос приобретает смысл и значение, он становится речью. Речь - синхронизация голосов и при помощи этой гармонизации, она становится понятным и в смысловом, и в эмоциональном аспектах одновременно. Общая сенсорная конфигурация голоса более древнее явление, чем его смысловая конфигурация. Исход сенсорной конфигурации (синхронизации) голоса - мелодично - музыкальная ткань. Смысловая конфигурация (гармонизация) голоса является речью, смысл которой понятен на конкретном смысловом уровне.

Песня, как высшая инстанция речи-сказа, это форма, которая включает в себя широкий спектр голоса и смысла как специфическая речь, и как чувствительная сфера - музыка, мелодия, эмоция.

Контекст армянского языка, в первую очередь, выделяет специфичность песни (песня-слово, содержания, предьявителья имени), и в конце концов превращает его в символа. Минимальная единица речи это слово - имя, и его высшее проявление - песня (и обычная песня со словами и музыкой, и поэтическая песня с текстом и ритмикой) или песнопение, которые проектируют цель и эксплуатацию речи. И даже цель самовоспроизведения речи (песни), вероятно, в первую очередь, сохранение уровня культуры данного сообщества, то есть, предоставление духовного существования.

SUMMARY

The highest degree of portraying and symbolising the speech is the song. In order to imagine the song as a sound-speech development harbor, as the highest manner of a speech and as a symbol it is rational to address to the suggested sound-word and (name)-text (a poem-both wide and narrow) rank of the Armenian language awareness (linguistic mentality) system. What is a song? Certainly, the speech itself is a vocal phenomenon. When a sound takes a meaning, it becomes a speech. The speech is a harmony of sounds and thanks to it the speech becomes apprehensible in both a con-natative and emotional way at the same time. The general emotional portraying of the

speech is an older phenomenon than the exact connatative portraying. The emotional portraying of a sound results in tunefulness-musicalness. The connotative portraying of a sound is the speech, which is apprehensible in the exact meaning. The song is the highest manner of a speech, which involves both the connotative realm of a sound as an exact speech and the emotional realm as music, melody, feeling. The context of the Armenian language underlines the importance of a song (song: content, bearer name), eventually making it a symbole. The smallest unit of a speech is a word-name and the highest manner of its manifestation is a song (an ordinary song with lyrics and music and poetic song with its text and rhythemical musicality) or singing which build up the goal and the scheme of the speech. And the goal of a speech (song) selfreproduction is the conservation of the civilized level, that is providing the spiritual side of the existance.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍՄԱՐՏԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

1915 թվականի գարնանամուտին Թուրքիայում իշխող երիտթուրքերի ոճրագործ պարագլուխները, օգտվելով Առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից, որոշում ընդունեցին հայերի զանգվածային տեղահանության պատրվակով բնաջնջել հայ բնակչությանը, իրականացրին արեւմտահայերի զանգվածային կոտորածներն ու տարագրումը, որպեսզի ընդմիջտվերջ տրվի Հայկական հարցին: Հայ ժողովուրդը ոչ միայն բնաջնջվեց սեփական հայրենիքում, այլեւ հայրենագրկվեց, Արեւմտյան Հայաստանը մնաց թուրքին: Իրականացվեց մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությունը, որին զոհ գնաց 1.5 մլն հայ: Հայաջինջ քաղաքականությունն իրագործվեց ոչ միայն Արեւմտյան Հայաստանում, այլեւ կայսրության ողջ տարածքում: Հայերը ոչնչացվեցին թե՛ իրենց բնակավայրերում, թե՛ տարագրության ճանապարհին: Բռնի մահմեդականացվեցին գրեթե 200-250 հազար հայ կանայք ու երեխաներ, որոնց մի փոքր մասին միայն հնարավոր եղավ փրկել Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Որքան էլ ողբերգական եղան հետեւանքները երիտթուրքերի ծրագրի իրագործման, որն առաջադեմ մարդկությունն իրավամբ բնորոշեց որպես եղեռնագործություն՝ Ի. դարի առաջին ցեղասպանություն, սակայն ինքնապաշտպանական կռիվները հաստատեցին, որ ամենադժվարին պայմաններում անգամ հայ ժողովուրդը կարող է ըմբոստանալ բռնության դեմ, արյան գնով պաշտպանել իր ազատությունն ու շարունակել սպրել, արարել:

Թուրքական պետության կողմից ցեղասպանության ծրագրված ու կանխամտածված քաղաքականությանը հայ ժողովուրդը մի շարք վայրերում հակադրեց իր դիմադրական ոգին, գիտակցված մահ ընտրելով՝ անարգ թշնամու դեմ ինքնապաշտպանական մարտեր մղեց՝ Տարոն աշխարհից, Մուշից ու Սա-

սունից մինչև Վան, Մուսա լեռից մինչև Ուրֆա, Տրապիզոն ու Շապին-Գարահիսար:

Հաճախ հարց է ծագում՝ ինչպե՞ս պատահեց, որ 1915-ին հայկական առանձին շրջաններ ինքնապաշտպանության դրոշ պարզեցին եւ գիտակցված մահվան գնացին, իսկ այլ շրջաններ անձնատուր եղան թուրքական յաթաղանին: Կամ՝ ինչո՞ւ հնարավոր չեղավ համակարգել եւ փոխօգնության կապ հաստատել ինքնապաշտպանության դիմած տարբեր շրջանների միջև: Փաստորեն, 1915 թ. արեւմտահայությունը չուներ ինքնապաշտպանության կամ ապստամբության ինքնուրույն ծրագիր: Այդ հարցում խաբուսիկ դեր խաղաց 1908 թ. սահմանադրությունը, որը ջլատեց արեւմտահայության մարտական ու քաղաքական ուժերը, բացի դրանից, կարեւոր դերակատարում ունեցան նաեւ հայ հասարակական-քաղաքական որոշ ղեկավար շրջանների դրսեւորած անհեռատեսությունը, հասարակության տարբեր շերտերի միջեւ գոյություն ունեցող հակասություններն ու անմիաբանությունը:

Ինքնապաշտպանական առաջին մարտերը տեղի ունեցան Վանի նահանգում:

Տագնապալի այդ օրերին, երբ օսմանյան զորքերը Կովկասյան ռազմաճակատում պարտություն պարտության ետեւից էին կրում, Վանի կուսակալ Զեդեթ փաշային հրահանգված էր արագ հաշվեհարդար տեսնել Վասպուրականի հայության հետ: Գավառներում հրահրվում էին հայ-քրդական ընդհարումներ, որոնց հետեւում էին հայ ազգային-հասարակական գործիչների ձերբակալություններն ու սպանությունները: Ամենուրեք զգացվում էր, որ պատրաստվում է հայ բնակչության զանգվածային կոտորած ու ոչնչացում: Գավառներից փախած եւ Վան-Այգեստանում ապաստանած գաղթականությունը պատմում էր Հայոց ձորում, Գավաշում, Մոկսում, Կարկառում, Բերկիրում եւ այլ շրջաններում սկսված զանգվածային ջարդերի մասին¹: Սակայն այդ ճակատագրական օրերին, ինչպես մեր պատմության բոլոր նման պարագաներում, գտնվեցին ժողովրդի միասնական ուժն ու հերոսական հատկանիշներն ըմբռնող անձինք, որոնք կարողացան կազմակերպել զինավառ զանգվածների հերոսական գոյամարտ՝ հաղթական ավարտին հասցնելով այն: 1914 թ. նոյեմբերի վերջին Ոստանի գայմագամ Շուքրի բեյը հարձակվեց Գավաշ եւ Կարճկան գավառների սահմանագծում գտնվող հայաբնակ Բելու գյուղի վրա: Հայերը մի քանի օր դիմադրելուց հետո միայն թողեցին գյուղը:

1915 թ. փետրվարի սկզբին արյունալի ընդհարումներ տեղի ունեցան Կարկառ գավառակում, որտեղ կար հայաբնակ 18 գյուղ: Նրանց դիմադրությունը գլխավորում էր Կարկառի ինքնապաշտպանության հերոս ծկորցի Գալուստ Պողոսյանը (Վուշիկ Գալոն): Մի քանի օր կատաղի մարտեր տեղի

1 Տե՛ս «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». Վերապրածների վկայություններ, փաթեթաթղթերի ժողովածու, Վանի նահանգ, Երևան, 2012, էջ 147-384:

ունեցան հատկապես Հարկենց գյուղի մոտ: Զոհեր տալով՝ հայ բնակչությունը քաշվեց դեպի Մոկս ու Գավաշ: Թուրքերը ցից հանեցին գոհված Վուշիկ Գալոյի գլուխը²:

1915 թ. փետրվարին քրդերը Ամարե Չաթոյի գլխավորությամբ հարձակվեցին Ալշավազ գավառի վրա, որն ուներ 21 հայկական գյուղ՝ 6000 բնակչությամբ: Հայերն ինքնապաշտպանության դիմեցին Արճրա գյուղից Օհան Դարբինյանի եւ կարա-քեշիշցի Մկոյի գլխավորությամբ: Հայերը պարտության մատնեցին քրդերին Առեն գյուղում, որտեղ սպանվեց Ամարե Չաթոն: Սակայն թուրքական զորքերը եկան թնդանոթներով եւ արյունահեղ դատաստան տեսան հայերի հետ³:

Ի պատասխան թուրքերի հարձակումների՝ հայերը տեղ-տեղ դիմեցին ինքնապաշտպանության: Վանից հյուսիս-արեւելք գտնվող Արճակ ու Խառակոնիս գյուղերի բնակիչները Շիրին Հակոբյանի գլխավորությամբ զենք վերցրին, պարտության մատնելով թուրքերին՝ քաշվեցին Կզլա լեռը, ուր բարձրացան նաեւ շրջակա այլ գյուղերի բնակիչները: Այստեղից շուրջ 8000 հայ, հետ մղելով թուրքերի գրոհը, իջավ Ավերակ գյուղը: Շուտով թուրքական զորքերը պաշարեցին գյուղը: Հայերը, տալով 100 զոհ, ճեղքեցին պաշարումն ու շարժվեցին դեպի Վան⁴: Թուրքերը լուրջ դիմադրության հանդիպեցին Լիմ, Զարանց, Մեւոն, Պախեւիկ, Ոսկեբակ եւ այլ գյուղերում. 3000 հայ քաշվեց Վարազա լեռը⁵:

Համառ դիմադրություն կազմակերպվեց Հայոց ձոր գավառում, որն ընկած էր Վանից հարավ: Գավառի միջով հոսող Խոշաբ գետի ափին սփռված էր հայկական 35 գյուղ: Երբ ապրիլի 6-ին թուրքերը ոստիկանապետ Էդիեմ բեյի գլխավորությամբ հարձակվեցին հայկական գյուղերի վրա, հայերը քաշվեցին Քերծ գյուղի լեռը եւ դիմեցին ինքնապաշտպանության: Նրանց օրինակով ինքնապաշտպանության դիմեցին նաեւ հարեւան գյուղերի բնակիչները⁶:

Ապրիլի 7-ին զենքի դիմեցին ու ինքնապաշտպանության անցան Կեմ եւ Անգղ գյուղերի բնակիչները, որոնք տվեցին շուրջ 700 զոհ, սակայն նրանց մի մասը փրկվեց՝ ապաստան գտնելով Վանում: Իշխանի գոմ գյուղում 1000 թուրքի ու քրդերի դեմ ելան 100 հայեր, որոնք արյունալի մարտերով շարժվեցին դեպի Վարազա լեռ, որտեղ ամրացել էին նաեւ Քերծ լեռան վրա գտնվող հայերը: Այդպես էլ ավարտվեց Հայոց ձորի ինքնապաշտպանությունը⁷:

2 Տե՛ս «Վան-Վասպուրականի հերոսամարտը», Երեւան, 1990, էջ 92, 93:

3 Տե՛ս անդ, էջ 61, 62. նաեւ՝ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». Վերապրածների վկայություններ, էջ 260-306:

4 Տե՛ս «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում», Վանի նահանգ, էջ 85, 86, 101, 102:

5 Տե՛ս անդ, էջ 60, 61:

6 Անդ, էջ 147-163:

7 Տե՛ս անդ, էջ 64, 66, 70:

Ինքնապաշտպանություն կազմակերպվեց նաեւ Թիմար գավառում, որի 50 գյուղերից 30-ը հայկական էին: Ապրիլի 8-ին քուրդ ցեղապետ Արիֆի ելուզակները պաշարեցին Տիրամեր գյուղը, միաժամանակ հարձակվեցին հարեւան Զանիկ գյուղի վրա: Այդ ու շրջակա գյուղերի բնակիչները, կռիվներ մղելով, շարժվեցին դեպի Լիւ կղզի, որտեղ մնացին մինչեւ կամավորական բանակի հասնելը: Ահեղ մարտեր տեղի ունեցան հատկապես լճափին, որոնցից հետո 12.000 հայ փոխադրվեց Լիւ կղզի⁸:

Ապրիլի 12-ին թուրքական զորքերն ու քրդական խուժանը հարձակվեցին Այուր գյուղի վրա: Այստեղ ինքնապաշտպանությունը ղեկավարում էին Աբիսողոմը եւ Սարգիս Մարդոյանը: Նրանք կարողացան ետ մղել թշնամու մեծաքանակ ուժերի հարձակումները: Սակայն թշնամին, նոր համալրում ստանալով՝ խաբէությամբ մտավ գյուղ եւ կոտորեց բնակչությանը⁹:

1915 թ. փետրվարի 17-ին պարսկական սահմանում ռուսներից կրած պարտությունից հետո Զեդեթը 600 չերքեզ զինվորներով վերադարձավ Վան: Նա չերքեզներին տեղավորեց Համուդ աղայի՝ հայկական թաղում գտնվող զորանոցում եւ կարգադրեց, որ հայ տղամարդիկ երեք օրվա ընթացքում ներկայանան զինվորագրման:

1915 թ. ապրիլի 25-ին Զեդեթը զորքով շարժվեց Վարագի վրա, որը Վասպուրականի Արծվի բույնն էր: Կատաղի մարտեր մղվեցին Շուշանց գյուղի մոտ, սակայն ուժերն անհավասար էին: Գյուղի պաշտպանները, դիմադրելով թշնամուն, գիշերով անցան Վան: Շատախի հայերը քառասուններկու օր ինքնապաշտպանական հերոսական ու հաղթական կռիվներ մղեցին:

Շատախ գավառը, որը հայտնի է նաեւ Զերմաձոր անունով, գտնվում է Վանա լճի հարավում եւ բարձրաբերձ լեռների, անդնդախոր ձորերի ու հորձանուտ գետերի մի ուրույն լեռնաշխարհ է: Շատախի 110 գյուղերից 50-ը հայաբնակ էր, մնացածը՝ քրդաբնակ, իսկ թուրք բնակչություն առհասարակ չկար: Գավառի կենտրոնը Թաղ գյուղն էր, որը դարձավ ապրիլյան կռիվների հենակետը: Երկու հարյուր տնից բաղկացած գյուղը զուտ հայաբնակ էր եւ գտնվում էր երեք ամեհի ձորերի միացման տեղում: Շատախցի հայերից զենքն անբաժան էր, որից սարսափում էին ոչ միայն քրդերը, այլեւ թուրքական տեղական իշխանությունները: Այդ պատճառով Զեդեթը որոշեց առաջինը քանդել այդ «վտանգավոր բույնը», ապա հեշտությամբ բնաջնջել նահանգի ողջ հայությանը: Դեռեւս 1904 թվականից Շատախում գործում էին դաշնակցական հայտնի գործիչներ Իշխանը (Նիկողայոս Պողոսյան), Արամը, Սարգիսը, Նիկոլը, Վ. Փափագյանը (Կոմս) եւ ուրիշներ: 1904-1914 թթ. Շատախի 10.000 գյուղացիությունը օսմանյան 7000 ոսկի էր տրամադրել ինքնապաշտպանության կազ-

8 Տե՛ս անդ, էջ 60, 62. նաեւ՝ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում», էջ 103-146:

9 Անդ, էջ 63:

մակերպման գործին¹⁰: 1912 թ. դաշնակցության Վասպուրականի շրջանային ժողովը, հաշվի առնելով երիտթուրքերի թշնամական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ, որոշել էր պատրաստ լինել ամեն տեսակ անակնկալի, կազմակերպել ինքնապաշտպանություն:

Այդ որոշման հիման վրա գավառներում ստեղծվեցին ինքնապաշտպանական զինվորական հատուկ մարմիններ: Նույն թվականի հոկտեմբերին Արամի մասնակցությամբ Շատախի շրջանային ժողովն ընտրեց «Անտառի» զինվորական մարմին, որի մեջ մտան Հովսեփ Չոլոյանը, Միհրան Տեր-Մարգարյանն ու Սամվել Մեսրոպյանը: Զինվորական մարմինը կազմեց ամբողջ գավառի ինքնապաշտպանության հատակագիծը, տնտեսական կարողության վիճակագրությունը: Զենքն ու զինամթերքը պահեստավորվեցին գյուղերից դուրս՝ ապահով վայրերում¹¹:

Մշակվեց ինքնապաշտպանական մարտի մի նախագիծ, ըստ որի՝ հնարավոր էր կռվի ընթացքում ամբողջ շրջանը իրար միացնել: 1915 թ. հունվարի 7-ին զինվորական մարմինը Թաղում հրավիրեց խորհրդակցություն. որոշվեցին ռազմական կարեւոր նշանակություն ունեցող վայրերը եւ պատասխանատու ղեկավարները: Ինքնապաշտպանության ճակատը ներկայացնում էր մոտ 50 կմ երկարությամբ մի գիծ: 1915 թ. փետրվարի կեսերին խմբապետ խումարցի Պետրոսի սպանությամբ Շատախում դեպքերը գահավեժ ընթացք ստացան: Մարտի 25-ին ձերբակալվեց զինվորական մարմնի անդամ Հովսեփ Չոլոյանը: Նրան ազատելու փորձերը հաջողություն չունեցան¹²: Կազմվեց նոր զինվորական մարմին, որի մեջ մտան Սամվել Մեսրոպյանը, Ազատ Սիմոնյանը եւ Տիգրան Բաղդասարյանը: Զինվորական ջոկի հրամանատարները ստանձնեցին պաշտպանությունն իրենց վստահված դիրքերի, որոնք յոթն էին¹³:

Կռիվների սկզբում հայ մարտիկներին հաջողվեց հնարամտորեն հարկադրել Սիվակին գյուղի 20 հոգուց բաղկացած թուրքական ջոկատին անձնատուր լինել, ինչպես նաեւ վերացնել Շարուրի բերդի շրջակայքում գտնվող Խանի եւ Գոմերի պահակախմբերը: Հայ մարտիկները հաշվեհարդար են տեսնում նաեւ Սակ գյուղում իջեւանած թուրք 14 ոստիկանի հետ՝ տալով երեք զոհ: Ապրիլի 4-ին Թաղի թուրքական վարչության եւ հայերի միջեւ բանակցություններ սկսվեցին, որոնք, սակայն, անցան ապարդյուն: Ինքնապաշտպանության աշխատանքներին լծվեցին նաեւ կանայք, որոնք պարեն էին նախապատրաստում, հեռու վայրերից քար էին կրում՝ դիրքերն ամրացնելու նպատակով: Նույն օրը պայթեց առաջին գնդակը, եւ հաջորդեցին հազարավոր համազարկեր: Այսպիսով՝ 1915 թ. հպատակության շղթաները փշրելու առաջին քայլը

10 Տե՛ս «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 74:

11 Տե՛ս անդ, էջ 75:

12 Անդ, էջ 77:

13 Տե՛ս անդ, էջ 80, 81. նաեւ՝ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում», էջ 384-388:

կատարվեց Վասպուրական աշխարհի Շատախ գավառի կենտրոնում՝ Թաղ ավանում: Ապրիլի 4-22-ը Թաղում եւ ամբողջ գավառում ընթացան թեժ մարտեր: Առաջին օրը հայերն այրեցին Ներքին թաղի ոստիկանատունը, ձերբակալեցին մի ոստիկանի, բռնագրավեցին 240 փամփուշտ եւ զինվորական այլ իրեր¹⁴: Ապրիլի 7-ին հայերն այրեցին ջրաղացի կամուրջը եւ կտրեցին թուրքերի հաղորդակցության ճանապարհները: Ապրիլի 17-ին հայկական եկեղեցին վերածվեց մի զինական դարբնոցի: Այստեղ կենտրոնացրին ուռնականների վրայից հանված կապարը, կշռաքարեր եւ մետաղյա այլ իրեր, սկսեցին վառող պատրաստել, նորոգել շարքից ելած զենքերն ու փամփուշտներ լցնել: Ապրիլի 18-ին թուրք ոստիկանները փորձեցին անցնել Հաշկանից կամուրջը, սակայն հինգ զոհ տալով՝ նահանջեցին: Ապրիլի 20-ին սկսեց գործել հայերի պատրաստած թնդանոթը, որը հրաշալի քանդում էր թշնամու դիրքերը¹⁵: Շատախի կայմականը դիմում էր կուսակալին եւ գումարտակի հրամանատարին՝ պահանջելով ռազմամթերք, թնդանոթներ եւ լրացուցիչ զորամասեր. շատախցիներն ամուր փակել էին հաղորդակցության ուղիները, եւ թուրքերը դրսի հետ հաղորդակցվում էին միայն Մուսկավա գյուղի լեռնային անանցանելի կաճաններով:

Ապրիլի 28-ի առավոտյան Թաղի պաշտպանները հեռվում նկատեցին ոչ թե սպիտակ, ինչպես սպասում էին, այլ բարձրացող կարմիր դրոշ. նշանակում էր, թե թշնամին մոտենում է, դրությունը անհուսալի էր: Անհրաժեշտ էր սուրհանդակ ուղարկել. առաջ եկավ 12-ամյա Սրբուհին (Սրբոն)¹⁶: Փոքրիկ հերոսուհին վերցրեց նամակը եւ պատվով կատարեց հանձնարարությունը: Թաղն ընկավ պաշարման մեջ. անհրաժեշտ էր կապ հաստատել դրսի ուժերի հետ: Այս անգամ սուրհանդակի պարտականությունը հանձն առավ չորս զավակների մայր Ասմարը, որն անցնելով թշնամու շղթայի միջով (10 կմ)՝ զինվորական մարմնի նամակը հասցրեց Ազատին ու վերադարձավ: Մինչեւ մայիսի 4-ը պաշարված թաղեցիները վարեցին դիրքային վճռական կռիվներ, երբ Բագիկը 10 մարտիկով ճեղքեց օղակը եւ մտավ Թաղ: Թաղի եկեղեցու 38 օր լռած զանգերը կրկին սկսեցին դողանջել: Հաղթանակը կատարյալ էր. Սողվանը վերագրավվեց, եւ նրա վրա կրկին սկսեց ծածանվել հայկական դրոշը: Հայտնի դարձավ, որ հայ կամավորական զոհերը մտել են Վան, իսկ Արամը թաղեցիներին էր ուղարկել երկու արկղ փամփուշտ եւ երկու հրացան: Մայիսի 11-ին քրդերը լքեցին Թաղի շրջակայքի իրենց դիրքերը եւ դիմեցին փախուստի: Այսպես, Շատախի 42-օրյա հերոսամարտն ավարտվեց փայլուն հաղթանակով: Մայիսի 12-ին Թաղը շուքով ու մեծարանքով ընդունեց Դրոյին, իսկ վերջինս հիացմունքի ու դրվատանքի խոսքերով ողջունեց ռազմիկ շատախցիներին:

14 Տե՛ս «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 82:

15 Անդ, էջ 83:

16 Տե՛ս անդ, էջ 87:

1915 թ. ապրիլի սկզբին ինքնապաշտպանական կռիվներ տեղի ունեցան նաեւ Ռշտունիքում կամ Գավաշ գավառում՝ Լեւոն Շաղոյանի ղեկավարությամբ: Երբ Ոստանի կայնականը զենք պահանջեց Գավաշի ժողովրդից եւ ապա հարձակում ձեռնարկեց հայկական Փայխներ, Մոխրաբերդ եւ այլ գյուղերի վրա, գավաշցիները մարտեր մղելով հեռացան ու ապաստանեցին սահմանակից Փեսանդաշտում: Այստեղ պատսպարվեց մոտ 6000 մարդ¹⁷:

Ապրիլի 14-16-ը թուրքերն ուժգին հարձակումներ կատարեցին հատկապես Բարադոտիկի ուղղությամբ, որի ինքնապաշտպանությունն անձամբ ղեկավարում էր Լեւոն Շաղոյանը՝ իր տրամադրության տակ ունենալով 80 հրացանավոր եւ 40 ատրճանակավոր: Թշնամու գրոհներն ուղեկցվում էին լեռնային թնդանոթի ուժգին կրակով: Սակայն այդ բոլոր գրոհներն ավարտվում էին անհաջողությամբ ու թշնամու մարդկային կորուստներով:

Ապրիլի 17-ին թուրքերը ձեռնարկեցին վերջին հարձակումը՝ փորձելով Արտոս լեռան գագաթով անցնել փեսանդաշտցիների թիկունքը: Սակայն Լեւոն Շաղոյանի հմուտ գործողությունների շնորհիվ՝ թուրք ոստիկանները ծուղակի մեջ ընկան եւ հինգ սպանված ու բազմաթիվ վիրավորներ թողնելով՝ դիմեցին փախուստի: Մայիսի 10-ին Փեսանդաշտ մտան հայ կամավորական զնդերը:

Թուրք շարդարարներին դիմադրելու փորձեր են եղել նաեւ մյուս գավառներում:

Հայերի՝ 1915 թվականի ինքնապաշտպանության փառապատկեր դարձավ Վանի հերոսամարտը: Վանը կազմված էր երկու մասից, արեւմտյան մասը Քաղաքն էր կամ Քաղաքամեջը՝ հինավուրց բերդով, պետական հիմնարկներով, զինապահեստով, շուկայով, իսկ արեւելյանը՝ Այգեստանն էր: Այդ երկու հատվածները միացնում էր 7 կմ երկարությամբ մի փողոց՝ Մղգայի ջաղդան, որի կենտրոնում գտնվում էր Խաչփողանի հրապարակը: Վանն ուներ 41.000 բնակիչ, որից 23.000-ը՝ հայ, 18.000-ը՝ մահմեդական: Քաղաքամեջում ապրում էր 4000 մարդ, որից 3000-ը՝ հայ¹⁸: Մնացյալ բնակչությունն ապրում էր Այգեստանում, որի հայաբնակ թաղերն էին Արարքը, Նորաշենը, Հանկույսները: Քաղաքի ու Այգեստանի միջեւ ընկած էր մի ամայի տարածություն, որտեղ մի ժամանակ գտնվում էր դատարկված Հայկավանք թաղը: Քաղաքից հարավ-արեւելք ընկած էր Շամիրամի թրքաբնակ թաղը, իսկ հարավային Կորդ-դար թաղն ուներ խառը բնակչություն: Թուրքերը հայկական թաղերի թիկունքում ստեղծել էին զորանոցներ՝ Հաջի-Բեքիրի, Թոփրակ-կալեի, Համուդ-աղայի: Եթե Քաղաքամեջը պարսպապատ էր ու հենված Շամիրամի ժայռերին, ապա Այգեստանը գրեթե զուրկ էր բնական ամրություններից ու շրջապատված այգիներով:

17 Անդ, էջ 91:

18 Տե՛ս Մ. Կարապետյան, Հայաստանը 1912-1920 թթ., Երեւան, 2003, էջ 105:

Պատերազմն սկսվելուց հետո դեպի Վան դիմեց շուրջ 70.000 գաղթական, որը մի կողմից բարդացնում էր պարենավորումը, իսկ մյուս կողմից՝ ծառայում էր որպես ռազմական ուժի աղբյուր:

Հայերին բնաջնջելու մտադրությամբ՝ մեծաքանակ կանոնավոր ուժերով դեպի Վան շտապեց կուսակալ Զեդեթը: Նախ նա հանդիպեց դաշնակցական գործիչների՝ օսմանյան պառլամենտի Վանի երեսփոխան Վռամյանի (Օնիկ Դերձակյան) եւ Արամ Մանուկյանի հետ, աշխատեց կեղծ հավաստիացումներով բթացնել նրանց զգոնությունը, ապա պահանջեց, որ Վանի երիտասարդությունը գորակոչվի: 1915 թ. ապրիլի 1-ին Այգեստանի Նորաշեն եկեղեցում գումարված խորհրդակցությունը Վռամյանի ու Արամ Մանուկյանի հորդորներով հավանություն տվեց Զեդեթի պահանջին:

Ապրիլի 2-ին արդեն քաղաքացիական պարտականությունը կատարելու մասին կոչ հրապարակվեց՝ Վանի առաջնորդական փոխանորդ Եզնիկ վարդապետ Ներկարարյանի անունով: Սակայն այդ ամենն առաջացրեց զայրույթը Վանի հայ ազգաբնակչության, որը կանխագգում էր նախապատրաստվող ահավոր սպանողը: Մթնոլորտն ավելի շիկացավ, երբ Զեդեթը Շատախի դեպքերը քննելու համար այնտեղ ուղարկեց 4 հոգուց բաղկացած հաշտարար հանձնաժողով՝ դաշնակցական ղեկավար գործիչ Իշխանի գլխավորությամբ, սակայն ճանապարհին՝ ապրիլի 4-ին, Հիրճ գյուղում կազմակերպվեց նրանց տմարդի սպանությունը¹⁹: Նույնպիսի խարդախ ճանապարհով սպանվեց նաեւ Վռամյանը, իսկ Արամ Մանուկյանը վերջին պահին կարողացավ խուսափել թակարդից: Զեդեթն արագ համարեց իր գորքերը, բերեց թնդանոթներ եւ նախապատրաստվեց հարձակման: Ընդհատվեց կապը Քաղաքամեջի ու Այգեստանի միջեւ: Վանի հայությունը փրկությունը տեսավ միայն ինքնապաշտպանության մեջ, երբ դանակն արդեն ոսկորին էր հասել: Խաղաղ ժամանակ վանեցիները պառակտված էին Դաշնակցություն, Հնչակյան եւ Ռամկավարական կուսակցությունների միջեւ: Սակայն ազգային դժբախտության պահին վանեցիները գիտակցեցին այդ գործելակերպի կորստաբեր լինելը եւ մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները՝ միասնաբար մարտի ելան թուրք ջարդարարների դեմ: Վանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվեց զինվորական մարմին՝ ռամկավար Արմենակ Եկարյանի նախագահությամբ: Զինվորական մարմնի մեջ մտան դաշնակցականներ Կայծակ Առաքելը եւ Բուլղարացի Գրիգորը, ինչպես նաեւ խորհրդականներ՝ դաշնակցական Արամ Մանուկյանը, ռամկավար Գաբրիել Մեմերճյանը, հնչակյան Հրանտ Գալիկյանը, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը (նախկին արմենական,

19 Տե՛ս «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում», Վանի նահանգ, էջ 29-31:

սպա անկուսակցական): Ստեղծվեցին նաեւ պարենավորման, զինաբաշխ, հայթայթիչ, կարմիր խաչի, տեղեկատու եւ այլ մարմիններ²⁰:

Հայերն ունեին շուրջ 1500 կռվող եւ նույնքան էլ հրացան, մատուցեր, սահմանափակ թվով փամփուշտ: Այս փոքրաթիվ ուժերի դեմ կանգնած էր թուրքական կանոնավոր՝ 10-12 հազարանոց բանակը՝ 12 թնդանոթով: Թուրքական զորքերը ղեկավարում էին գերմանացի փորձված սպաներ: Սակայն հայերը ցուցաբերեցին նկատելի կազմակերպվածություն եւ մեծ խիզախություն: Այգեստանը բաժանվեց պաշտպանական հինգ շրջանի՝ 73 դիրքով, ուր ամրացավ 1053 զինվոր (505 հրացան, 75 հազար փամփուշտ, 549 մատուցեր ու 40 հազար փամփուշտ)²¹: Զինվորական մարմինը կռվողների համար մշակեց անհրաժեշտ հրահանգներ, դրանցում հաջողության գրավական էր համարվում կարգապահությունն ու կազմակերպվածությունը, հրամանների ճշգրիտ կատարումը, գնդակների խնայողաբար ու նպատակային ծախսումը, աջալրջությունը եւ այլն²²:

1915 թ. ապրիլի 7-ի առավոտյան թուրքերն սկսեցին հարձակումը: Հարձակվում էին թուրքական թաղերից, հատկապես՝ զորանոցներից, իսկ թնդանոթային համազարկերը ավերածություն էին առաջացնում շուրջբոլորը: Հայերը կռվում էին համառությամբ ու կազմակերպվածությամբ՝ ամուր պահպանելով իրենց դիրքերը: Ավելին՝ կռվի հենց առաջին օրը հայերը կարողացան գրավել Խաչփողանում գտնվող թուրքական դիրքը՝ հեռագրատունը, եւ պաշարել Համուդ-աղայի զորանոցը: Այդ զորանոցի գրավումն ուներ կարեւոր նշանակություն, քանզի այն գտնվում էր հայկական թաղերի կենտրոնում, որտեղից թուրքերն ուժեղ կրակ էին տեղում շրջակայքի վրա: Ճիշտ է, ապրիլի 8-ին հայ մարտիկներն ստիպված էին թողնել Հանկույսների եկեղեցու դիմաց գտնվող Շահբենդերյանի դիրքը, սակայն դրա փոխարեն հաջողվեց հրդեհել անգլիական հյուպատոսարանի շենքը, ուր դիրքավորվել էր մի քանի տասնյակ թուրք ոստիկան²³:

Հերոսամարտի երրորդ օրը՝ ապրիլի 9-ին, վանեցիները ոչնչացրին Համուդ-աղայի զորանոցը, որը մեծ վտանգ էր ներկայացնում: Բուլղարացի Գրիգորի առաջարկով որոշվեց պայթեցնել զորանոցը: Զորանոցի ոչնչացման հաջորդ օրը՝ ապրիլի 10-ին, այգեստանցիներին հաջողվեց ետ գրավել Շահբենդերյանի դիրքը: Այդ գործում կարեւոր դեր ունեցավ Սեւոն՝ 19-ամյա Իսկուհի Համբարձումյանը, որը կյանքը վտանգելով՝ հետախուզեց դիրքը եւ մարտիկ-

20 Տե՛ս «Եղեռնի հերոսապատում. 1915 թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը», Թեհրան, 1982, էջ 274:

21 Անդ:

22 Տե՛ս անդ. նաեւ՝ **Ե. Բուրանյան**, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, Երեւան, 2013, էջ 63:

23 Տե՛ս «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 38:

ներին առաջնորդեց այնտեղ: Քաջարի աղջիկը պարգեւատրվեց զինվորական մարմնի սահմանած «Պատվո խաչ» շքանշանով²⁴:

Ապրիլի 10-ին զինվորական մարմինը հրապարակեց կոչ, որում նշվում էր Զեւոդեթի՝ Վանը 24 ժամվա ընթացքում ծնկի բերելու ծրագրի ձախողման մասին եւ ընդգծվում, որ այս կռիվը գոյության կռիվ չէ միայն, այլ կռիվ է ճշմարտության եւ արդարության համար՝ ցույց տալու, որ հայը գիտի մեռնել գենքը ձեռքին:

Մարտերը հետզհետե թեժանում էին, եւ Այգեստանի հայերը նորանոր քաջագործություններ էին կատարում: Ապրիլի 15-ին Տիգրան վարժապետ Այիճյանը, վտանգելով սեփական կյանքը, հրկիզում է Արարուց հրապարակի վրա գտնվող թուրքական ոստիկանությունը:

Ինքնապաշտպանություն կազմակերպվեց նաեւ Քաղաքամեջում, որը կտրված էր Այգեստանից: Հյուսիսից այն պաշտպանված էր Շամիրամի բերդով ու գահավեժ լեռներով, իսկ մյուս երեք կողմերից շրջապատված էր սեպածեւ պարիսպներով: Այստեղ էին գտնվում պետական հիմնարկները եւ հայոց առաջնորդարանը: Քաղաքամեջում կար 3000 հայ բնակչություն: Այստեղ եւս կազմվեց զինվորական մարմին՝ Հիսուսյան վարժարանի տեսուչ Հայկակ Կոստյանի ղեկավարությամբ: Անդամներն էին Լեւոն Գալչյանը, Միհրան Թորանյանը, Դավիթ Սարգսյանը, Միհրդատ Միրզախանյանը, Հարություն Ներկարարյանը, Սարգիս Շահինյանը: Ստեղծվեցին նաեւ մատակարարման, կարմիր խաչի եւ այլ մարմիններ²⁵:

Ինքնապաշտպանության՝ երկու վերստ երկարությամբ ձգվող շրջագիծը բաժանված էր 4 շրջանի եւ բազմաթիվ դիրքերի: Սակայն գենքը քիչ էր՝ 100 հրացան, 210 ատրճանակ, 60 հազար փամփուշտ, ողջ շրջագիծը բոլոր կողմերից գտնվում էր թուրքերի օղակի մեջ²⁶:

1915 թ. ապրիլի 7-ին՝ առավոտյան ժամը 9-ին, թուրքերն այստեղ էլ անցան հարձակման: Հայերը ոչ միայն քաջաբար պաշտպանվեցին, այլեւ հենց առաջին օրը հրդեհեցին փոստ-հեռագրատունը, ոստիկանատունը եւ դատարանը, որոնք թուրքերի համար ամուր դիրքեր էին: Այդ գործողությունների ժամանակ աչքի ընկան 16-ամյա Արամ Կապարուկյանը եւ Աղավնի Վարպետյանը: Երկրորդ օրը՝ ապրիլի 8-ին, հայերը կարողացան ոչնչացնել կառավարական նոր փոստատունը եւ զինարանը: Նրանք նոր դիրքեր խորտակեցին նաեւ հաջորդ չորս օրերին²⁷:

24 Անդ, էջ 39, 40:

25 Տե՛ս Մ. Կարապետյան, Հայաստանը 1912-1920 թթ., էջ 109:

26 Անդ:

27 Տե՛ս «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 52:

Վանի հերոսական ինքնապաշտպանության առաջին տասնօրյակն անցավ հաջող: Այդ մասին նշվում էր զինվորական մարմնի՝ ապրիլի 16-ին հրապարակած կոչում:

Վանի ինքնապաշտպանության երկրորդ տասնօրյակում եւս ծավալվեցին ծանր մարտեր: Ապրիլի 19-ին թուրքերի ձեռնարկած կատաղի հարձակումը ոչ մի արդյունք չտվեց, նրանք տվեցին մեծ կորուստներ ու նահանջեցին ելման դիրքերը:

Զենք հայթայթելու համար վանեցիներն ստեղծեցին զինարան, փամփուշտարան ու վառողարան, որտեղ աշխատում էին համապատասխան մասնագետներ՝ Վանի վարժապետանոցի տնօրեն, քիմիկոս պրոֆեսոր Միքայել Մինասյանի ղեկավարությամբ: Նրա օգնականներն էին Վարդան Պապիկյանը եւ Հարություն Կաքավյանը: Այստեղ արագ վերանորոգվում էին վնասված զենքերը, պատրաստվում էր վառող, նույնիսկ ձուլվեց երկու թնդանոթ²⁸:

Կենսական դեր կատարեց 500 արհեստավորից կազմված «Ամրաշենների խումբը», որը անհապաղ հասնում էր ամենավտանգավոր դիրքերը եւ անմիջապես վերականգնում թնդանոթների պատճառած ավերածությունները: Այդ նրանք էին, որ թշնամու դիրքերի տակ բացում էին ստորերկրյա անցքեր, որտեղ դրված ռումբերով քարուքանդ էին արվում թշնամու դիրքերը: «Ամրաշենների խմբի» զինվորներից էին Շավարշ Հովիվյանը, Ազատ Խորենյանը եւ Գրիգոր Պաշիրյանը²⁹:

Անգնահատելի դերակատարում ունեցավ Հովհաննես Բուճիկանյանի ղեկավարած նվազախումբը՝ «Փանֆառը»՝ կազմված վարժապետանոցի մի խումբ աշակերտներից: Նվազախումբը հասնում էր վտանգավոր դիրքերը եւ իր աշխույժ նվազով ոգեւորում էր մարտիկներին. նրա հայտնվելը որքան ոգեւորում էր հայերին, նույնքան եւ նյարդայնացնում ու խուճապի էր մատնում թուրքերին: Նվազախմբի ուղեցույց առաջնորդն էր Մարգար Փախչոյանը: Վանեցիների դիմադրական ուժը ոչ միայն չէր թուլանում, այլեւ աճում էր, քանզի նրանք արդեն ձեռք էին բերել մարտնչելու փորձ. նրանց հույս էր ներշնչում նաեւ ռուսական զորքերի մոտենալը: Իսկ ռուսական զորքը եւ Անդրանիկի գլխավորած հայ կամավորների 1-ին գունդը 1915 թ. ապրիլի 20-ին Դիլմանի ճակատամարտում ջախջախել էին Խալիլ բեյի գլխավորած թուրքական բանակը եւ առաջ էին շարժվում դեպի Վան. ռուսական մեկ այլ զորաբանակ, որի առաջապահն էր Դրոյի գլխավորած հայ կամավորների 2-րդ գունդը, Վանին էր մոտենում Իգդիր-Բերկրի գծով: Ռուսական զորքերի եւ հայ կամավորների մոտենալուց ահաբեկված Զեդեթը ապրիլի 21-ին ձեռնարկեց նոր հարձակում: Ուժեղ ռմբակոծությունից Վանը կորավ հրի ու ծխի մեջ, սակայն վանեցիները՝ մեծ ու փոքր, անձնուրաց կռվի ելան ատելի ոտխի դեմ: Չտեսն-

²⁸ Անդ, էջ 33:

²⁹ Տեն անդ, էջ 34:

ված համարձակությամբ էին աչքի ընկնում պատանի վանեցիները: Նրանք ոչ միայն կապավորի դեր էին կատարում՝ փամփուշտ ու պարեն հասցնելով դիրքերը, այլև մահն արհամարհելով՝ թաց լաթերով հանգցնում էին թուրքական պատրույգավոր ռումբերը, վնասագերծում դրանք եւ վառողը հասցնում փամփուշտ լցնողներին: Այդ խիստ վտանգավոր գործում աչքի ընկան 12-14-ամյա պատանիներ Ասլանը, Բաբկենը, Արտաշեսը, Ոստանիկը, Մարտիրոսը եւ շատ ուրիշներ, որոնց մի մասը գոհվեց՝ չհասցնելով կտրել ռումբի վառվող պատրույգը: Այդ խիզախ պատանիների մեջ էր նաեւ Արամ Թովմասյանը՝ ապագայի շնորհաշատ երգիծաբան Լեռ Կամսարը: Իսկ հայ կաթոլիկների դպրոցի սան Կիրակոս Կիրակոսյանն անցավ թշնամու դիրքերը, սպանեց թուրք երկու զինվորների եւ նրանց գենքերով ետ վերադարձավ՝ արժանանալով «Պատվո խաչի»³⁰:

Մարտերը վերսկսվեցին ապրիլի 24-ին: Ապրիլի 28-ին Զեդեթը ձեռնարկեց, կարելի է ասել, վերջին խոշոր հարձակումը, եւ այդ օրը տեղի ունեցան ամենակատաղի մարտերը, սակայն վանեցիները ոչ մի թիզ հող չգիշեցին: Ապրիլի 30-ին հայերը գրավեցին Խաչփողանի կարենոր կետերը: Թուրքերը շարունակեցին կռիվը մինչեւ մայիսի 3-ը՝ գլխավորապես ռմբակոծելով քաղաքը: Սակայն մոտեցող ռուսական բանակի, հայ կամավորների ու Վանի հայության հուժկու հարվածների ներքո թշնամին խուճապահար փախուստի դիմեց:

Մայիսի 3-ին հայ մարտիկները լիովին ազատագրեցին քաղաքը, հրդեհեցին թուրքական բռնապետության ամրոց Հաջի-Բեքիրի գորանոցը, ապա Վանի բերդի վրա բարձրացրին հայոց դրոշը: Այգեստանցիները եւ Քաղաքամեջի պաշտպանները, բոլոր ցավերն ու տառապանքները մոռացած, ցնծությամբ դիմավորեցին միմյանց:

Մայիսի 5-ին Վան մտան հայ կամավորների երկու խմբերը՝ Ներքին Թիմարից Դրոն եւ Համազասպը, Վերին Թիմարից (Արճակի վրայով)՝ Բեռին ու Վարդանը (ըստ Հ. Կոստյանի՝ հայ կամավորներն ու ռուսական բանակը Վան են մտել մայիսի 7-ին³¹, իսկ ավելի շուտ, ըստ Հ. Գորգյանի, Վան էր մտել Դրոյի գորախմբի առաջապահ ջոկատը՝ դաշնակցական Խեչոյի եւ Դավի Ղազարի գլխավորությամբ): Ապա մայիսի 6-ին Վան մտավ բուն ռուսական բանակը՝ գեներալ Նիկոլաեի հրամանատարությամբ:

Այդպես վերջացավ Վանի 30-օրյա հերոսամարտը, որի ընթացքում հայերը տվեցին 200 զոհ եւ վիրավոր: Այն հայոց ազատամարտի փայլուն դրվագներից է: Վանի արհեստավորությունը երեւան բերեց միջնադարյան համբարական քաղաքապաշտպանության կազմակերպչական հատկանիշներ, գերազանց ռազմունակություն ու կարգապահություն: Նրա շարքերից դուրս եկան

30 Անդ, էջ 40, 41:

31 Տե՛ս Հ. Կոստյան, Վան-Քաղաքամեջի ապրիլյան կռիվները, Երեւան, 1992, էջ 130:

ռազմավարական բնատուր ընդունակությունների տեր այնպիսի ռազմիկներ, ինչպիսիք էին Այգեստանի պաշտպանական շրջաններից՝ Դարդանելի, Շանթաղի, Հայնկոյսների, Խաչվողանի եւ Արարքի շրջանապետներ Նշան Նալբանդյանը, Ռաֆայել Տեր-Խաչատրյանը, Հովհաննես Մանուկյանը, Փանոս Ժամհարյանը, Ալես Պարսամյանը եւ ուրիշներ: Նրանց հրամանատարության ներքո ընդամենը 1054 հրացանով ու մաուզերով զինված նույնքան մարտիկներ անվեհերաբար հետ էին մղում 10.000-ից ավելի՝ տասնյակ թնդանոթներով եւ անսպառ ռազմամթերքով սպառազեն թուրքական կանոնավոր զորքերի ու նրանց միացած մոլեռանդ ամբոխի կատաղի գրոհները:

Իսկ թե որքան խելամտորեն եւ ռազմագիտական հմտությամբ էր կազմակերպված ինքնապաշտպանությունը, երեսում է այն փաստից, որ ցարական բանակի շտաբի զինվորականությունը, մանրամասնորեն ուսումնասիրելով պաշտպանական համակարգը, կազմեց ընդարձակ մի քարտեզ՝ ներկայացնելով այն գլխավոր հրամանատարությանը՝ որպես ռազմագիտական ճանաչված սկզբունքներով չնախատեսված մի երեսույթ: Գեներալ Նազարբեկովը, լսելով վանեցիների գոյամարտի մանրամասները, խոնավացած աչքերով ասել է. «Տեսնելով ձեզ, ձեր երկիրը եւ մեր ժողովրդին՝ ես հպարտ եմ, որ հայ եմ»³²: Մայիսի 6 (19)-ին՝ հայ կամավորական գնդերի ու ռուսական բանակի մուտքից հետո, Վանի եւ ազատագրված շրջանների ժամանակավոր նահանգապետ է նշանակվում Արամ Մանուկյանը: Նրա գլխավորությամբ Վանում ստեղծված հայկական իշխանությունը մեր մղած ազատագրական պայքարի առաջին քաղաքական ձեռքբերումն էր, որը, ցավոք, կարճ կյանք ունեցավ՝ մինչեւ հուլիսի 2-ը, երբ ռուսական զորքի նահանջի պատճառով Վանի հայկական իշխանությունը դադարում է գործելուց:

РЕЗЮМЕ

В статье представлена героическая борьба, которую вели армяне Ван-Васпуракана против турецких погромщиков в апреле-мае 1915 г. - ровно 100 лет тому назад. Используя мемуары непосредственных участников и руководителей боёв самообороны, а также сборники документов, содержащие свидетельства очевидцев, многие архивные материалы и другие достоверные исторические документы, удалось показать крупнейшее злодеяние, совершенное турецкими злодеями в отношении армянского народа, героические бои самообороны, которые вели армяне Васпуракана в дни первого геноцида 20-го века и которые подтвердили, что даже в самых трудных условиях наш народ может

³² Տե՛ս «Վան-Վասպուրականի հերոսամարտը», էջ 5:

противостоять насилию, ценой крови защищать свою свободу, с трудом продолжая жить и творить. Обосновывается тот факт, что своими масштабами и решающими последствиями героическая борьба Васпуракана имела ключевое значение в исторической судьбе армянского народа. Путем анализа многих фактов, в статье показано, как в эти роковые дни были люди, которые поняли силу единства и героические качества народа, смогли организовать героическую борьбу вооруженных масс, доведя её до победного конца. Выявляются организаторские качества, отличная боеспособность и дисциплина прославленных ремесленников Вана.

В различных частях Васпуракана, в том числе и Шатахе, Песандаште, Ване, история героического сопротивления армян богата героическими эпизодами неравной борьбы, которые описаны как яркие проявления вечной славы и бессмертия. Флаг свободы, развевающийся над древней крепостью Вана, символизировал рождение нового армянского княжества - как первое политическое достижение освободительной борьбы армянского народа.

Эта ситуация была прервана приказом царского командования о бессмысленном заговорническом отступлении и принудительном переселении, в результате которого более 200 тысяч васпураканцев были вынуждены покинуть родные очаги и с огромными потерями укрыться в Восточной Армении. Почти той же участи удостоились восстановленное правительство и население Васпуракана, освобожденного русским войском в 1917 году. Новая власть Васпуракана просуществовала до весны 1918г. - до отступления русских войск с кавказского фронта и интервенции турецких войск в Закавказье после Брестского мира. Многочисленные факты свидетельствуют о том, как получившая боевое крещение в окопах самообороны Вана-Васпуракана вооруженная молодежь Васпуракана сказала свое решающее слово в дни майских героических битв 1918 года. Потеряв родину, армяне Васпуракана продолжили свою борьбу, которая увенчалась свободой и восстановлением государственности в лице первой армянской республики, которая берет свое начало в Ване и после великой борьбы утвердилась в Ереване. Многочисленные массы армян Васпуракана с большой преданностью занялись восстановлением армянского государства, переустройством Советской Армении, дав видных партийных и государственных деятелей, которые стали активными участниками общественного, культурного и экономического развития. Потомки армян Васпуракана, продолжая их героические дела, также внесли свой вклад в дело освобождения Арцаха, восстановления независимости и становления государственности третьей республики Армении и Арцаха.

SUMMARY

The article presents the heroic struggles that had waged the Armenians of Van-Vaspurakan against the Turkish vandals in 1915 April-May exactly 100 years ago. Using memories of participants and leaders of these self-defense struggles, several archive materials and other true historical documents had been showed the heroic self-defence struggles of the Armenian of Vaspurakan in the days of Armenian massacres came to reassert that even in each impossible condition our nation can survive against violence to defend his freedom and continue to live abs create. It's obvious that the heroic struggles of Vaspurakan had great role in the historical life of the Armenians. The flag flying in the old castle of Van symbolized the born of Armenian statehood which is the first political achievement of Armenian liberation war. The situation was interapted as a result of Russian soldiers. The new government of Vaspurakan continued his activity since Spring of 1918. Losing his homeland the people of Vaspurakan continued the struggle in which result they established the Armenian statehood. The people of Vaspurakan had great role in Soviet Armenia also they took part in Artsakh war and for the fulfillment of The Third Republic of Armenia and Artsakh Republic statehood.

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

պատմական գիտ. թեկնածու

**ԴՐՎԱԳՆԵՐ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ
ՀՈԳԵՒՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ
(1908-1918 թթ.)**

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից եւ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո հաստատված հարաբերական «ազատությունը» նոր իրավիճակ ստեղծեց Վանի նահանգի հոգեւոր-կրոնական հարաբերությունների ոլորտում:

Վանի նահանգում ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդական ազգաբնակչության շրջանում մեծ ակնածանք եւ հարգանք էր վայելում սուրբ Գեղարդը: Այդ մասին Հ. Երամյանը հիշում է. «Ամէն անգամ, երբ մարախ կամ ո՛րէն համաճարակ կուգար, Հոգեաց վանքէն Գեղարդը քաղաք փոխադրելով՝ կրօնական հանդիսաւորութեամբ եկեղեցիները կը պտըտցնէին: Հաւատաւոր ժողովուրդը անխտիր կը դիմէր ի համբոյր Գեղարդին եւ համաճարակը կը մեղմանար ու կ'անհետանար: Արդ, երբ Նորաշէնու եկեղեցիէն Գեղարդը հանդիսաւոր թափորով Յայնկոյսներու եկեղեցին կը փոխադրուէր, Պողպտէ դարի կամ Համուտաղէնց զօրանոցի հրամանատարն ընդ առաջ ելնելով թափորին, խնդրեց որ Գեղարդը զօրանոցին մէջ ալ հանուի կամ բացուի: Հայ զինուորներու օրինակով նաեւ շատ մը իսլամներ երկիւղածութեամբ եւ հաւատքով կը համբուրեն մասունքը եւ՝ իրենց իսկ թուրքերու վկայությամբ՝ այդ օրէն հիւանդութիւնը կը կորսնցնէ իր թափը եւ քանի մը օրէն կ'անհետի զօրանոցէն: Այսպէս նաեւ շատ անգամ հաւատաւոր թուրքերը կը դիմէին հայ քահանային եւ աւետարան կարդալ կուտային իրենց հիւանդներուն վրայ: Շատերը եւս մերազնեից հաւատքով կը դիմէին հայոց նշանաւոր ուխտատեղիները եւ բուժուած ետ կը դառնային՝ իրենց իսկ խոստովանութեամբ: Այդ հաւատքն ու խոստովանութիւնը չպիտի արգիլէին, սակայն առհասարակ բոլոր իսլամները՝ վերջին պատերազմի ատեն մեր բոլոր սրբութիւնները պղծելէ եւ ուխտատեղիները քար ու քանդ ընելէ՝ առանց խղճահարութեան»¹:

¹ Հ. Երամյան, Հուշարձան, հ. Բ., էջ 154:

1910 թ. դեկտեմբերի 11-ին մահացավ Ամենայն Հայոց Հայրապետ Մաթեոս Բ.² «Երկաթե Պատրիարքը»²:

Նրա անակնկալ մահվան գույժը Վան հասավ 1910 թ. դեկտեմբերի 17-ին եւ սաստիկ հուզում ու մեծ ցավ առաջացրեց նահանգում: Ընդհատվեցին Վարազի դպրոցի դասերը:

1910 թ. դեկտեմբերի 19-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքի պատվերով Վանի բոլոր եկեղեցիներում կատարվեցին հոգեհանգստյան աղոթքներ, իսկ Արարք թաղի եկեղեցում տեղի ունեցավ պաշտոնական սգո հանդես, որին ներկա էր խումբ բազմություն, կուսակալի փոխանորդը՝ ռուսականապետը, ռուսական հյուպատոսի թարգմանը, ամերիկյան եւ գերմանական միսիոներները: Մատուցված հանդիսավոր պատարագից հետո կատարվեց հոգեհանգիստ, որից հետո ելույթ ունեցողներից ուսուցիչ Արտաշես Սուխայանը դրվատանքի խոսքեր ասաց հանգուցյալ վեհափառի հասցեին: Առաջնորդական փոխանորդ Մեսրոպ ավագ քահ. Ճանիկյանը հատկանշեց նրա գործը անհատականությունը, տոկուն կամքը եւ հայրենասիրությունը³:

1911 թ. ամռանը Ատորիքում գերմանական արշավախմբի կողմից կատարված պեղումներն ավարտելուց հետո Վասպուրական է այցելում գերմանացի արժանահիշատակ ճանապարհորդ Վալտեր Բախմանը, որը Մոսուլ-Տրապիզոն-Մոսուլ երթուղով ձգվող եւ 1911 թ. հուլիսից մինչեւ սեպտեմբեր իրականացված նրա պատմաաշխարհագրական ճանապարհորդության մի մասն էր⁴: Իսկ ուսումնասիրման նյութը հիմնականում որակյալ չափագրություններով համադրված պատմական Վասպուրական աշխարհի՝ Դատվանի, Վանա լճի հարավային ծովեզերքի, Ախավանքի, Ոստանի, Վանի, Վարագավանքի, Հայկաբերդի, Խոշաբի, Ս. Բարդուղեմեոս վանքի, Բաշկալեի, Վարգահանի, Սալնապատի, Զուլամերիկի հայկական, նեստորական, բյուզանդական եւ սելջուկյան միջնադարյան ճարտարապետական ծավալային կոթողների արժեքավոր հետազոտություններն էին, որոնք առաջ են բերում նաեւ մշակութաբանական ընդհանրության զգացողություն:

Ճիշտ է, Վասպուրականի հուշարձանների տեղագրությունների գործում մինչ այդ անգնահատելի աշխատանք են կատարել պոլսահայ հեղինակ-

2 Յ. Կոստանյան, Царское правительство и выборы католиков всех армян, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թ. 3, էջ 158:

3 «Մշակ», Թիֆլիս, 1911, հունվարի 9, թ. 3, հունվարի 11, թ. 4:

4 Դժբախտաբար, առաջուր պատշաճ ուշադրության չի արժանացել հեղինակի ինքնությունը, գործունեությունը եւ ժառանգությունը:

ներ Ն. Սարգիսյանը⁵ եւ Մ. Միրախորյանը⁶, սակայն Վ. Բախմանի հետազոտությունները նորությո էին ու եղելություն եւ, որ նրանում նշված մի շարք հայկական հուշարձաններ առաջին անգամ էին մտնում գիտական շրջանառության մեջ:

Վ. Բախմանի կողմից Վասպուրականի եկեղեցական հուշարձանների հետազոտումը կարեւորվում է նաեւ այն առումով, որ այն ունի վավերագրական արժեք, քանի որ հուշարձանների մեծ մասը հետագայում արժանացան իսպառ վերացման անողոք ճակատագրին: Բացի այդ, աշխատանքում տեղ են գտել պատմագիտական կարեւորություն ներկայացնող 132 լուսանկարներ եւ 50 գծագրեր, որոնք էլ ավելի են արժեւորում կատարված աշխատանքը: Իր կատարած ողջ հետազոտությունների արդյունքը նա ամփոփել է «Եկեղեցիներ եւ մզկիթներ Հայաստանում եւ Քուրդիստանում»⁷ կոթողային աշխատության մեջ, որն իր շարադրանքով ինքնատիպ է եւ ունի տիպաբանական յուրահատուկ կառուցվածք:

Եկեղեցական կյանքը

Վան-Վասպուրականի տարածքը հայտնի էր իր եկեղեցիներով եւ վանքերով, որոնք տեղաբաշխված էին հետեւյալ կերպ.

Վանի սանջակ՝ 130 եկեղեցի եւ 25 վանք,

Լիւ-Կաուց՝ 32 եկեղեցի,

Աղբակ (Բաշկալե)՝ 23 եկեղեցի եւ 7 վանք,

Աղթամարի կաթողիկոսություն՝ 263 եկեղեցի եւ 6 վանք,

Խիզան՝ 69 եկեղեցի եւ 16 վանք,

Ընդամենը՝ 457 եկեղեցի⁸:

Հ. Ոսկյանի հաշվարկներով՝ Վան-Վասպուրականի վանքերն ու եկեղեցիներն ունեին հետեւյալ պատկերը.

Ռշտունիք՝ 32 վանք եւ եկեղեցի,

Վան-Տոսպ՝ 14⁹,

Գնունեաց եւ Առբերանի՝ 14,

Վանա լճի կղզիներ՝ 5,

5 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 164, էջ 237-239, 250-280:

6 Մ. Միրախորեան, Նկարագրական ուղեւորութիւն ի Հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի. տեղագրութիւնք սարէն եւ ձորէն, հնէն եւ նորէն, պիտանի գիտնոյ, մասն Ա., Կ. Պօլիս, 1884, մասն Բ., Կ. Պօլիս, 1885, մասն Գ., Կ. Պօլիս, 1885:

7 Վ. Բախման, Եկեղեցիներ եւ մզկիթներ Հայաստանում եւ Քուրդիստանում. գերմաներէն բնագրից թարգմանեց Ռուզան Մալխանեանը, մասնագիտական խմբագիր՝ դոկտ. փրոֆեսոր Դավիթ Քերթմենջեան, Վենետիկ, Ս. Ղազար, 2006:

8 Հ. Ղազարյան, Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 215-216:

9 Ի. դ. սկզբին միայն Վան քաղաքն ուներ 12 եկեղեցի, որոնցից 5-ը՝ Այգեստանում, 7-ը՝ Քաղաքամիջում: Տե՛ս Ծերով, Վանի նահանգը ներկայումս, XXIV, Վան քաղաքը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թ. 12, էջ 40:

Արճիշահովիտ, Քաջբերունի եւ Արծկե՝ 17,
 Արտագ՝ 1,
 Նախճավան՝ 4,
 Գողթն՝ 14,
 Անձեւացյաց, Բողունիք եւ Երվանդունիք՝ 20,
 Աղբակ՝ 6,
 Մոկք, Խիզան եւ Շատախ՝ 42,
 Սալնաձոր՝ 3,
 Ընդամենը՝ 172¹⁰:

Ներկայացնենք որոշ վանքերի վիճակը:

Աղթամարը Էջմիածնի Մայր Աթոռի բարոյական իրավասությանը ենթակա կաթողիկոսական աթոռներից մեկն էր, որը հաստատվել էր 1114 թ. եւ ունեցել է 57 կաթողիկոսներ:

Ըստ Մ. Օրմանյանի՝ Աղթամարի կաթողիկոսությունը բաղկացած էր երկու առաջնորդարաններից՝ Աղթամարի եւ Խիզանի եպիսկոպոսություններից: Աղթամարի կաթողիկոսական աթոռին էին ենթարկվում Գավաշի, Շատախի եւ Կարճկանի կազաները: Այն ուներ 130 թաղ, 203 եկեղեցի, 70000 հայ եւ 500 բողոքական բնակչություն¹¹: Ըստ Չիթունու՝ Աղթամարին էին ենթարկվում 193 եկեղեցի եւ 40 վանք: Աղթամարի աթոռի մաս կազմող Խիզանի եպիսկոպոսությունն ընդգրկում էր Խիզանի կազան եւ ուներ 64 թաղ, 69 եկեղեցի եւ 2500 հայ բնակչություն: Ըստ Չիթունու՝ այն ուներ 109 եկեղեցի եւ 16 վանք¹²:

Ա. Սաֆրաստյանը, նկատի ունենալով, որ Վանի վիլայեթն ուներ հոծ հայ ազգաբնակչություն, ենթադրում է, որ այնտեղ եկեղեցիների թիվը պակաս չէր կարող լինել Էրզրումի վիլայեթում եղած մոտ 250 վանքերից եւ եկեղեցիներից¹³: Իսկ Չիթունու հավաստմամբ՝ Աղթամարի կաթողիկոսության իշխանության տակ էր գտնվում 358 եկեղեցի եւ վանք¹⁴:

Աղթամարի Ս. Խաչ վանքը Վասպուրականի հարուստ վանքերից էր: «Իբրեւ կաթողիկոսական աթոռ Աղթամարի Ս. Խաչ վանքը հարուստ էր

10 Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Ա. մաս, Վիեննա, 1940, էջ 139-379, Բ. մաս, Վիեննա, 1942, էջ 385-571, 673-738, Գ. մաս, Վիեննա, 1947, էջ 745-918:

11 Տե՛ս Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Հայոց եկեղեցին եւ իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկայ կացությունը, Կ.Պոլիս, 1912, էջ 208:

12 Չիթունի, Յուշիկք Հայաստանի (vade-mecum d' Armenie), Կ. Պոլիս, 1919, էջ 64-65:

13 Տե՛ս «Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության եւ դավանանքների մինիստրությանը ներկայացված Հայկական եկեղեցիների եւ վանքերի ցուցակներն ու թարրիրները (1912-1913 թթ.)», Ա. Սաֆրաստյան, «Էջմիածին», 1965, թիվ Ա., էջ 42:

14 Տե՛ս Տ. Չիթունի, նշվ. աշխ., էջ 64-65:

գոհարեղեններով եւ ոսկեղեններով. կաթողիկոսական ականակոռ թագեր, արծաթեայգաւազաններ, ոսկեայեւ արծաթեայսկիհներ, ոսկեհիւսշուրջառներ, ոսկե-քանդակ գօտիներ, կաշեկազմ ձեռագիր եւ տպագրուած մաշտոցներ, նարեկներ, աւետարաններ, ժամագիրքներ, որոնց կողքերը զարդարուած էին թանկագին եւ գոյնգոյն գոհարեղեններով եւ արծաթաքանդակ նկարներով, եւ ուրիշ բազմաթիւ եւ բազմատեսակ եկեղեցական թանկարժէք սպասներ եւ անօթներ»:

Նրա կաթողիկոսների իրավասությունը տարածվում էր բազում գավառների, քաղաքների, գյուղերի եւ վանքերի վրա: Այն ուներ մշակելի դաշտեր, անդաստաններ, մեծ քանակությամբ շարժական եւ անշարժ գույք¹⁵: Վանքն ուներ 5-6 աղորի (ջրաղաց), 3-4 անմշակ մնացած այգի, 11 արտ, մի քանի մարգագետին, 200 գլուխ ոչխար: Աղթամարն ուներ նաեւ իրեն ենթակա բազմաթիվ վանքեր, որոնցից ստանում էր տարեկան որոշ տուրքեր՝ մութաթա: Այդ վանքերից էին՝ Նարեկա վանքը, Ոստան գավառի Ս. Նշան եւ Սպիտակ (Մեակու) գմբեթավոր վանքը եւ այլն: Վանքերից գատ Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա էին նաեւ Հայոց ձորի եւ Ռշտունյաց գավառի մոտ 40 գյուղ¹⁶: Տարբեր առիթներով վանքն ստացել էր թանկարժէք սպասք, անօթներ, ձեռագրեր եւ եկամուտներ: Վանքի ուխտագնացության օրը Խաչվերացի տոնն էր, երբ բազմաթիվ ուխտավորներ այնտեղ էին հավաքվում՝ իրենց ուխտն անելու եւ նվերներ ընծայելու¹⁷:

1895 թ., երբ Վանի բոլոր վանքերը կողոպտվեցին, բացառություն կազմեց միայն Աղթամարը: Զրդերը չհամարձակվեցին կողոպտել այս վանքը, քանի որ «ուխտի կու գային այնտեղ եւ նուէրներ կը բերէին»¹⁸:

1895 թ. հասարակական կարծիքների եւ Էջմիածնի ճնշման տակ Աղթամարի կաթողիկոսությունը կորցրեց իր նշանակությունը, եւ այնտեղ կաթողիկոսական գահի տեղապահ նշանակվեցին եպիսկոպոսական, իսկ ավելի ուշ, նույնիսկ, վարդապետական աստիճանով: Վերջին տեղապահը Արսեն վարդապետ **Մարգարյանն** էր՝ կաթողիկոսական փոխանորդի տիտղոսով, որը վերաշինեց եկեղեցին եւ վերաբացեց դպրոցը¹⁹:

15 Տե՛ն «Փորձ», Թիֆլիս, 1879, թիվ IV, ապրիլ, էջ 62, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1909, նոյեմբերի 13/26, թ. 132:

16 Տե՛ն Ե. Չարենցի անվ. Գրականության եւ արվեստի թանգարանի արխիվ, ֆ. 508, ց. 1, գ. 268, թ. 12:

17 Տե՛ն **Գ. Շերենց**, Սրբավայրեր, Տեղագրություն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխատր եկեղեցեաց Վանօրէից եւ ուսումնարանաց, Թիֆլիս, 1902, էջ 121, **Գ. Մրտանձոտեանց**, Մանանայ, Կ.Պոլիս, 1876, էջ 398:

18 Տե՛ն **Ա. Դաբբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերէն. հուշեր 1890 էն 1940, Փարիզ, էջ 164-165:

19 Տե՛ն ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 18, թ.9, նաեւ **Հ. Ներսէս վ. Ալիմեան**, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, պատմական ուսումնասիրություն, Վիեննա, 1920, էջ 192:

ՀԲԸՄ կենտրոնը 1914 թ. աշնանը ցանկանում էր վերանորոգել Աղթամարի տաճարի փլատակ զանգակատունը եւ Նարեկացու գերեզմանը, սակայն սկիզբ առած պատերազմական գործողություններն ի չիք են դարձնում այդ նպատակների իրականացումը²⁰:

Ի դեպ, Ե. Լալայանը Մ. Մաքսուդյանին գրած իր նամակներից մեկում հայտնում էր, որ ինքը ժամանակին՝ 1915 թ., Վանում գտնված ժամանակ մի ձեռագրից ընդօրինակել էր Աղթամարի կաթողիկոսության պատմությունը²¹:

Վարազա վանքում Մ. Խրիմյանը կենդանի շարժում սկսեց իր հիմնած տպարանով, հրատարակած «Արծուի Վասպուրականի»-ով, իր բացած Ժառանգավորաց (հետագայում՝ «Երկրագործական») վարժարանով: Այդ վանքում էր, որ Մ. Խրիմյանը դաստիարակեց ժողովրդին նվիրված մի ընտիր սերունդ, որոնք, իբրեւ քարոզիչ, մատենագիր, վարդապետ, քահանա եւ ուսուցիչ, մտան ժողովրդի մեջ: Դրանց թվում էին՝ Գ. Սրվանձտյանը, Ա. Թոխմախյանը, Տեկանցը, Փիրղալեմյանը, Դանիել վարդապետը, Ա. Միրախորյանը, Անանյանը, Ա. Աղվանյանը եւ ուրիշներ:

Սակայն 1885 թ. Մ. Խրիմյանն աքսորվեց, որից հետո կառավարությունը փակեց տպարանը, վարժարանը, բռնագրավեց մամուլը եւ թուրքերենով սկսեց հրատարակել «Վան» պաշտոնաթերթը: Վարդապետներից շատերը բանտարկվեցին, իսկ մյուսները հեռացան Վանից:

1896 թ. այրեցին Վարագի Ս. Խաչ եւ Ս. Գրիգոր վանքերը եւ դրանց կից գործող դպրոցները, կոտրեցին բոլոր խաչքարերը եւ պատկերները, իսկ շարժական սրբությունները՝ սկիհը, խաչը, եկեղեցական զգեստները, թալանեցին²²:

Վանի դեպքերից հետո՝ սկսած 1896 թ.-ից մինչեւ 1915 թ., պատրիարքարանի ցուցումով վանքը կառավարվում էր 5 հոգաբարձուների միջոցով²³: Սակայն 1909 թ. մայիսին Վանի գավառի Ազգային վարչությունը, հակառակ օսմանյան սահմանադրության, կազմալուծելով հոգեբարձուների հին կազմը, ընտրում է նորը, որի երկու անդամները նշանակվում են Քաղաքային ժողովի անդամներից²⁴:

Վարագա վանքը զբաղվում էր երկրագործությամբ, տավարաբուծությամբ, շերամապահությամբ, մեղվաբուծությամբ, թռչնապահությամբ, ոչխա-

20 Տե՛ս Ոսկեմատեան. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Արծաթեա Յոբելեան 1906-1931, Ա. հատոր, Բարիզ, 1935, էջ 116:

21 Ա. Աղամյան, Երվանդ Լալայանի անտիպ նամակներից, «ՀՄՄՈ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտություններ», 1965, թ. 8, էջ 71, 77:

22 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 184, թ. 56-57:

23 Տարբեր տարիներին հոգաբարձուներ են եղել Պետրոս Գափամաճյանը, Ա. Աղվանյանը, Ռ. Շատովորյանը, Ա. Թերզիբաշյանը, Ի. Հյուսյանը, Մ. Ճիտեչյանը, Մ. Երամյանը եւ Հ. Ժամագործյանը (տե՛ս Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն հուշեր, էջ 220):

24 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 18, թ. 1-2:

րաբուծությամբ եւ ծառաստանների մշակությամբ: Միայն 1909 թ. տնկվել էր 6000 թօննի²⁵:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Վարազա վանք են այցելում Վանի նորանշանակ վալի (նահանգապետ) Թակսիմ բեյը, իսկ հետո՝ Բեքիր Սամին, որը, հաշվի առնելով վանքի առաջադիմությունը, նույնիսկ նվիրում է ինկուբատոր²⁶:

Վանքի հետագա բարգավաճումն ապահովելու համար ծագումով նախիջեւանցի հայազգի ազնվական Կարասուլովը վանքին է նվիրաբերում մեծ գումար²⁷:

Բարեբախտաբար, 1915 թ. հուլիսյան մեծ գաղթի ժամանակ հաջողվեց փրկել Վարազա վանքի հարստությունների հիմնական մասը: Այդ մասին Ա. Եկարյանը հիշում է. «Պատրաստուեցայ մեկնելու, ինձմէ առաջ Էջմիածին ճամբայ հանելով Վարազայ վանուց մատենադարանը, եկեղեցական անօթները ու վանքին վերաբերող բոլորն արժեքաւոր առարկաները՝ կանոնաւորապէս ցուցակագրուած եւ սնտուկներու մէջ տեղաւորուած, ութը ֆուրկօններով, Վանի առժամանակեայ հոգեւոր հովիւ Օհաննէս վրդ.-ի պատասխանատուութեամբ եւ վստահելի զինուորներու պաշտպանութեամբ: Այս առարկաներուն մէկ հատը հաւաքած էր Արամը, իր կարճատեւ մուտքին ի Վան, բայց ռուսական յանկարծական նահանջին պատճառաւ չկրնալով հետը տանիլ, ձգել տուած էր ջրհորի մը մէջ, եւ մենք պատահաբար գտած ու դուրս հանած էինք»²⁸:

Անկայուն վիճակ էր տիրում նաեւ Ս. *Բարդուղէմէոս* վանքում, որը հեռու էր գտնվում Վանի ազգային վարչության ուշադրությունից²⁹:

Լիւնը ենթակա էր Էջմիածնի կաթողիկոսությանը եւ ուներ բազմանդամ միաբանություն: Այն իր տրամադրության տակ ուներ 16 գյուղ³⁰, այդ թվում՝ Զանիկը, Տառապեքը, Նորշենը, Հատըռը, Նորավանքը, Գոմսը, Շահկելտին, Խժիկը, Համուկը, Բերգարիպը³¹: Նրա գերիշխանության տակ էին գտնվում Տիրամոր, Աստվածածնի եւ Էջմիածնի Ս. Սահակի վանքերը³²: Լիւն ուներ ընդարձակ հողեր, դաշտեր, անտառներ, այգիներ, 4 ջրանցք եւ խանութներ: Այն օգտվում էր այլ եւ այլ (կաթի, պսակի, կողոպուտի) տուրքերից³³: Իր

25 Տեն «Մշակ», Թիֆլիս, 1909, սեպտեմբերի 11, թ. 199:

26 Տեն *Свяиц Р. Бекгуляиц*, По Турецкой Армения, Впечатления отъ поездки летомъ въ 1914 году, Ростовъ на Дону, 1914, էջ 18-19:

27 Տեն անդ, էջ 20:

28 «Յուշեր Արմենակ Եկարեանի», Գահիրէ, 1947, էջ 270:

29 Տեն ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 11, թ. 8:

30 Տեն «Արարատ», Էջմիածին, 1898, թ. 9, էջ 400:

31 Տեն «Արձագանք», Թիֆլիս, 1882, հուլիսի 4, թ. 20, էջ 312-313:

32 Տեն Մ. *Միրախորեան*, նշվ. աշխ., մասն Ա, էջ 280, «Արեւելք», Կ. Պոլիս, 1901, նոյեմբերի 6/19, թ. 4785:

33 Տեն «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1912, XXII գիրք, թ. 1, էջ 91-92, *Շերեւնց*, նշվ. աշխ.

հերթին, Լիմը ենթարկվում էր պետական ծանր տուրքերի, որը կազմում էր տարեկան 1000, իսկ առանձին դեպքերում՝ մինչեւ 2000 դուրուշ: Եւ քանի որ այդ գումարն այնքան էլ հեշտ չէր վճարել, շատ վանահայրեր կամ տան-ջանքների էին ենթարկվում կամ իրենց պաշտոններից զրկվում էին իբրեւ հետադուներ³⁴:

Լիմը բոլոր ժամանակներում համարվում էր անապատ, որի պատճառով կղզու միաբանները ազգային կյանքով եւ գրականությամբ այնքան էլ չեն հետաքրքրվել³⁵: Հ. Սարգիսյանը, խոսելով Լիմի միաբանների մասին, գրում է. «Եկեղեցիք կղզեացո նորաշէն են, որ աւելի քան գերկերիւր ամաց, եւ տաճարաւորք երկրքեան եւ նմանաձեւք իրերաց...: Խաչվառք խորանացն ոսկեգօծք եւ փառահեղք եւ ամենայն սպասքն մաքուրք եւ վայելուչք եւ կարգ աստուածային պաշտամանցն անթերի եւ անխափան, նա եւ առաւելութեամբ իսկ, գորոյ գնմանն չէ ուրեք տեսանել ի Հայաստան աշխարհի: Կարգ սաղմոսերգութեանցն որպէս կարգեալ սահմանեցաւ ի նախնեաց ի սոսա անթերի կատարի, եօթնիցս յաւուրն պաշտել անխափան գժամերգութիւն եւ գոյթ կանոնս սաղմոսացն բաժանեալ ի նոսա, իսկ յուրբայթո ինն կանոն եւ զգիշերային հսկմունսն տէրունական տօնից ըստ ցուցակին անխափան կատարեալ առանց իրիք նուագութեան եւ անձանձրոյթ: Եւ ըստ յաւելեալ սակաւ ժամուց առ երկարաձիգ ժամերգութեանն՝ առանձնաձանս ի սենեակս իւրաքանչիւր յընթերցումն հոգեւոր մատենից...»³⁶: «Անոնց մէջ քիչ չէին անհատներ, - ավելացնում է Հ. Ոսկյանը, - որոնք անգամ մը ինքզինքնին կղզիին կամաւոր կալանաւորեալներ հռչակած, այն տեղ ապրած ու հոն մեռած էին առանց դիմացի երկրին հողին վրայ ոտք կոխելու»³⁷:

Նրանք հրաժարվել էին մսեղեն կերակուրներից եւ ըմպելիքներից՝ բավարարվելով միայն կանաչեղենով եւ ջրով: Նրանք չունեին մահճակալ եւ փափուկ անկողին: Նրանց զգեստը խոշոր, անպաճույճ եւ ցփսեա էր:

Կանանց մուտքը Լիմ անապատի մէջ խստիվ արգելված էր: Նույնիսկ անմորուս պատանիները չէին կարող այնտեղ մտնել: Ինչպես Հ. Ոսկյանն է մատնանշում, «Անոնք պէտք էին կղզիին դիմաց գտնուող «Դրսի տան» մէջ մնալ մինչեւ որ անոնց կզակը մագով պատուէր: Ապա կը մտնէին կղզին, ուր երիցագոյններու առաջնորդութեան տակ կրօնաւորական կեանքի

էջ 13, 78, «Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1911, թ. 4366-4368, «Փորձ», Թիֆլիս, 1879, թ. IV, ապրիլ, էջ 62-63, «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1910, թ. 24, էջ 369:

34 Տե՛ս **Ղ. Ինճիճեան**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամերիկոյ, մասն առաջին. Ասիա, հ. Ա. (Նոր Հայաստան), Վենետիկ, 1806, էջ 155-156:

35 Տե՛ս **Հ. Վ. Ակինեան**, Մովսէս Տաթևացի, Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 189:

36 **Հ. Ն Սարգիսեան**., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 278-279:

37 **Հ. Ոսկեան**, Վասպուրական - Վանի վանքերը, Ա. մաս, էջ 51:

սկզբունքները կը սորվէին եւ ժամասացութեան, գիտութեան ու գրչագրութեան արուեստին մէջ կը հրահանգուէին»³⁸:

1916 թ. ռուսական մամուլի մէջ հաղորդումներ են հրապարակվում, որոնց համաձայն թուրքերի կողմից կողոպտվում են Լիւմ անապատի 300 մագաղաթ ձեռագիր եւ 800 կտոր պղնձե հին առարկա:

Կտուց անապատը ժամանակին ենթարկվում էր Աղթամարի, իսկ հետո՝ Էջմիածնի կաթողիկոսությանը: Այն Լիւմի չափ բազմամտյամ միաբանություն չի ունեցել, սակայն սակավաթիվ էլ չի եղել (40-50 ճգնավոր)³⁹: Չնայած միաբանները գրական ցայտուն գործունեություն չեն ծավալել, սակայն իրենց անբասիր վարքով եւ կենցաղով արժանացել են ժողովրդի համակրանքին:

Կտուցի թեմի մէջ էին մտնում Մարմետ, Խալկենց, Ամենաշատ, Եկմալ, Զիրաշեն, Ալիւր, Դռլաշեն եւ Ամնավանք գյուղերը⁴⁰:

Այն ուներ 1500-2000 օրավար մշակելի հող, 200 կալվածներ, Ավանցի մէջ 40 ճաշկ ջուր, անտառ, այգի, արոտատեղի, ձիթհանք, ջրաղաց, Վանի, Էդիրնեի, Ռոտոսթոյի եւ Թիֆլիսի մէջ տներ, պանդոկներ, խանութներ, անասնապահական տնտեսություն, 300 գլուխ ոչխար, 108 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, ձիեր եւ էշեր: Վանքի ընդհանուր եկամուտը կազմում էր 300 օսմանյան լիւրա (2600 ռուբ.)⁴¹:

Վանքը դրամական եւ նյութական այլեւայլ տեսակի նպաստներ էր ստանում տոնական օրերին եւ հավատացյալներից օգնություն խնդրելու միջոցով: Հավաքված գումարներով եւ նպաստներով հոգում էին միաբանների կարիքները, վերանորոգում էին շենքերը, վճարում էին տուրքերը եւ հետ բերում թալանված իրերը⁴²: Կանանց մուտքը կղզի բացարձակ արգելված էր:

ԺԹ. դարի ընթացքում (1848, 1896 թթ.) Կտուցը ենթարկվել է քրդերի հափշտակություններին եւ կողոպուտին⁴³:

Ի տարբերություն Ալյուր վանքի՝ Կտուց անապատն ուներ հաստատուն միաբանություն եւ աշխույժ հոգեւոր-մշակութային կյանք: Այնտեղ գործում էր դպրոց՝ 14 աշակերտով⁴⁴: 1915 թ. ջարդերի ժամանակ եկեղեցու ունեցվածքի

38 Անդ:

39 Տեն «Փորձ», Տիֆլիս, 1879, ապրիլ, թ. IV, էջ 62, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1911, XXI գիրք, էջ 93:

40 Տեն «Արձագանք», Թիֆլիս, 1882, հուլիսի 4, թ. 20, էջ 313:

41 Տեն «Աշխատանք», Վան, 1911, թ. 50, էջ 734-735:

42 Տեն Հ. Ոսկեան, Վասպուրական - Վանի վանքերը, Ա. մաս, էջ 83:

43 Տեն Գ. Շերենց, նշվ. աշխ., էջ 73, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1912, XXII գիրք, թ. 1, էջ 87, Ե. Մարգիսեան, Տեղագրությունը ի Փորը եւ ի Մեծ Հայս, էջ 278, Դ. Ինճիճեան, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Աֆրիկոյ եւ Ամերիկոյ, մասն առաջին. Ասիա հտ. Ա., (Նոր Հայաստան), էջ 155, նույնի՝ Ստորագրություն, Հին Հայաստանեայց... ըստ հին եւ ըստ միջին դարուանուանեալ ժամանակաց, հանեալ ի գրոց մերոց նախնեաց եւ այլոց ազգաց... Մեծ Հայք (Հին Հայաստան), Վենետիկ, 1822, էջ 227, «Գեղունի», Վենետիկ ս.Ղազար, 1905, թիվ 1-10, էջ 69:

44 Տեն ՀԱԱ, ֆ. 421, ց. 4, գ. 14, թ. 10-14:

ամենաընտիր մասը՝ եկեղեցական բոլոր հնություններով եւ սրբություններով բաժին հասավ թուրքերին, ինչպես Հ.Վ. Հյուսյանն է նկատում. «շնորհիւ նոյն անապատի միաբան, անհեռատես եւ կամակոր Ստեփան արեղային...»⁴⁵:

Հայոց առաջնորդարանի տվյալներով Վանի 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի նախօրյակին Վանի նահանգում գործում էր ընդամենը 35 վանք ու եկեղեցի, որից 16-ը՝ Վան քաղաքում, 5-ը՝ Թիմարի, 1-ը՝ Արճակի, 1-ը՝ Բերկրիի, 4-ը՝ Արճեշի, 2-ը՝ Ալշավազի, 5-ը՝ Կարճկանի եւ 1-ը՝ Աղբակի գավառում⁴⁶: Թեմի հոգեւոր-եկեղեցական հաստատություններից երկուսը՝ Կոուց անապատը եւ Այուրի վանքը, վանական համալիրներ էին:

Վանի Ապրիլյան հերոսամարտի օրերին այրվեցին, թալանվեցին նահանգի գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները, սպանվեց վարդապետների եւ քահանաների առավել քան կեսը⁴⁷: Պղծված բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների թվում էին Վարազա լեռան Ս. Գրիգոր, Ս. Կարմրավոր, Վանի՝ Ս. Խաչ (Ղուրուբաշ), Մեծոփի՝ Ս. Սքանչելագործ եւ Քաջբերունյաց գավառի Արծվաբերի վանքերը⁴⁸: Ինչպես Մ. Օրմանյանն էր նշում ժամանակին. «Վանք չէ եղած, որ անձեռնմխելի մնացած ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կան քանդուած, կան պղծուած եւ կան մզկիթի փոխարկուած չըլլայ... Մահմետական խուժանը իր կատաղությւնը ամենէն աւելի թափեց հայ վանորէից, եկեղեցեաց, դպրոցաց եւ մատենադարանաց վրայ»⁴⁹: Մեծապես տուժեց հատկապես Վարազա վանքը, որն աչքի էր ընկնում իր հարստություններով⁵⁰: Միայն Ապրիլյան կռիվների ժամանակ կողոպտվեց մոտ 80000 ռ. արժողությամբ շարժական գույք⁵¹:

Հիշատակության արժանի են նաեւ 1915-ի գաղթի ժամանակ Երեսնում եւ Էջմիածնում մահացած Վանի քահանաները՝ Վանի երբեմնի առաջնորդական փոխանորդ, Մ. Խրիմյանի աշակերտ, հայտնի հայաբան, գավառային գրող, Խրիմյան Հայրիկին ձօնված ժողովրդական «Հայրիկ Հայրիկ» երգի հեղինակ՝ Մեսրոպ ավագ քահանա Զանիկյանը, Հուսիկ քահանա Փեհրիզյանը, Ղեւոնդ քահանա Սաֆրաստյանը, Նորաշենի Խորեն քահանան:

45 Գ. Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրություն, «Արեւագալ», Բ., Երեւան, 2004, էջ 114:

46 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 242, ց. 1, գ. 25, թ. 31, նաեւ ֆ. 421, ց. 4, գ. 23, թ. 1-6:

47 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 21:

48 Տե՛ս Գ. Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրություն, «Արեւագալ», Բ., Երեւան, 2004, էջ 116:

49 Մ. Օրմանյան, Ազատապատում, հ. Գ., Երուսաղեմ, 1927, էջ 5029-5030:

50 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 1-3:

51 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 57, ց. 2, գ. 1063, թ. 1:

Վասպուրականի կուսակրոն հոգեւորականներից կոտորածների ժամանակ փրկվում են Աղթամարի կաթողիկոսական նախորդ փոխանորդ Վանի առաջնորդական տեղապահ Եզնիկ Ծ. վրդ. Ներկարարյանը, Աղթամարի միաբան, արմաշական վանահայր Դանիել Ծ. վրդ. Զադոյանը, Լիմ անապատի միաբան Սահակ վրդ. Ատոմյանը, Լիմ անապատի միաբան Մատթեոս վրդ. Աճեմյանը, Կառուց անապատի միաբան՝ Պետրոս վարդապետը, Կառուց անապատի միաբան Ստեփան վարդապետը եւ Վանի Ս.Կարմրավոր վանքի վանահայր Եղիշե վրդ. Խերանյանը:

Վանը 1915 թ. մայիսի 6-ին ազատագրելուց հետո հոգեւոր բարձրագույն իշխանության կարգադրությամբ «եկեղեցիներում մաղթանքներ կատարեցան եւ բեմբասություններ ու ճառախօսություններ տեղի ունեցան»⁵²:

Առանձնահատուկ ուշադրություն էր պահանջում նահանգի հոգեւոր-եկեղեցական կյանքը, որը գտնվում էր անմխիթար վիճակում: Անկերպարան եւ արգահատելի վիճակում էր գտնվում հատկապես Աղթամարի վանքը: «Կոհակ» պարբերականի բնորոշմամբ «Ազգ. վարչություններ երեւի կամովին կուզեն միջոցներ տալ կողոպտիչներու, որպեսզի անոնք կարողանան հիմնայատակ կործանել վանքը: Թեմականները՝ որքան կը լսենք, կը պատրաստուին ազդու բողոք մըն ալ տալ յառաջ քան ծայրահեղութեանց դիմելը»⁵³:

Նահանգի հոգեւոր-եկեղեցական կյանքը վերականգնելու համար հարկավոր էր իրականացնել որոշ խնդիրներ: Ավերված եւ կողոպտված վանքերի եւ եկեղեցիների վերականգնումն արագացնելու համար 1915 թ. ընթացքում նահանգի բոլոր հոգեւոր հաստատություններն ազատվեցին պետական տուրքերից: Թեեւ Վարագա վանքը վերականգնելու նպատակով ազգային հոգեւոր եւ քաղաքական իշխանությունների կողմից նախնական ջանքեր եղան, Վայոցձորցի տ. Գրիգոր ավագ քահանա Ավագյանն էլ փոխվանահայրության պաշտոնով Վարագա վանք հրավիրվեց, սակայն վանքը վերստին ենթարկվեց լքման եւ ամայացման: Վանքի կողոպուտին մասնակցում էին նույնիսկ ռուսական զորքերը, որոնք շարունակ բարձրանում էին վանք⁵⁴: Այդուհանդերձ, 1916 թ. դեկտեմբերին Էջմիածնի սինոդը 699 ռուբ. 63 կոպ. գումար է ուղարկում Վարագա վանք՝ անհրաժեշտ պահանջները բավարարելու համար⁵⁵: Միաժամանակ, արձագանքելով Վանի Նորաշեն թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցուն օգնություն ցույց տալու՝ 1915 թ. մայիսի 20-ի խնդրանքին՝ նահանգապետությունը եկեղեցուն հատկացրեց նոր գերեզմանատեղի եւ 200 ծառ⁵⁶:

52 Ե. Գեղամյանց ա. քառ., Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ հայկական հարցի եօթներորդ շրջանը (մասն երկրորդ), Բաքու, 1917, էջ 636:

53 «Կոհակ», Կ.Պոլիս, 1909, օգոստոսի 29, թ. 14, էջ 164:

54 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14^{1բ}, թ. 92-94:

55 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1063, թ. 52:

56 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 4:

Վանի Ապրիլյան հերոսամարտից հետո ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, երբ զգացվում էր ոչ միայն կրոնական-եկեղեցական գործի բարեկարգման անհրաժեշտություն, այլև ազդեցիկ հոգեւորականների պակաս: Չնայած Վանում, Կոտուց եւ Լիւն անապատներում մեծ թվով ժողովուրդ էր հավաքվել, սակայն «հոգեւորական պակաս լինելու համար գուրկ կը մնան կրօնական միսիթարությունէն»⁵⁷: Արամ Մանուկյանը Գեւորգ Ե. Կաթողիկոսին ուղղված՝ 1915 թ. մայիսի 26-ի թիվ 350 գրության մեջ նշում էր, որ «պիտի խնդրէի նոյնպէս, Վեհափառ Տէր, որ անմիջապէս թելադրէք Այվատեան սրբազանին, որ փութար Աղթամարի կողոպտուած վանքը հասնելու դրամական օժանդակութիւններով, եւ վարէր Աղթամարի կաթողիկոսական տեղապահի պաշտօնը, որը թափուր կը մնայ այժմ»⁵⁸:

Այդ նպատակով 1915 թ. հունիսի 20-ին Վան ժամանեց Սահակ արքեպիսկոպոս Այվատյանը, որն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե.-ի կողմից նշանակվել էր Աղթամարի կաթողիկոսական տեղապահ եւ Էջմիածնի «Եղբայրական օգնության կենտրոնական հանձնաժողովի» ներկայացուցիչ: Սրբազանի նախագահությամբ կազմակերպվում է «Վասպուրականի Եղբայրական օգնության հանձնաժողով», որը դիմում է Կաթողիկոսին՝ խնդրելով օժանդակել 55 հիվանդների համար հիվանդանոց հիմնելուն⁵⁹:

Շատ տեղերում նշանակվեցին հոգեւոր նոր առաջնորդներ, իսկ որոշ տեղերում վերականգնվեցին հները: Այսպես, Առաջնորդարանը Ալշավազի թեմակալ առաջնորդ է նշանակում Կոտուց անապայի նախկին միաբան Սահակ վրդ. Ատոմյանին⁶⁰:

Օգտվելով Առաջին աշխարհամարտի եւ Մեծ եղեռնի ընձեռած հնարավորությունից՝ 1916 թ. օգոստոսի 1-ին (2 հունիս 1334/19 հուլիս 1332) Բարձր դուռը հրապարակեց հայկական կաթողիկոսության եւ պատրիարքության մասին օրենքը, որը հրատարակվեց թուրքական կայսերական՝ «Թաքվիմի վեքայի» թերթի 1916 թ. օգոստոսի 10 թիվ 2611 համարում⁶¹:

Ըստ այդ օրենքի՝ Սսի եւ Աղթամարի կաթողիկոսությունները միավորվում էին համապատասխանաբար Երուսաղեմի եւ Կ. Պոլսի պատրիարքությունների հետ, ու դառնում էր մի աստիճան՝ «կաթողիկոս-պատրիարք» տիտղոսով՝ որպես օսմանյան հայերի հոգեւոր առաջնորդ, իսկ հայրապետի նստավայրն էլ տեղափոխվում էր Երուսաղեմ՝ Ս. Հակոբի վանք: Վերացվում էին աստիճանակարգային (հիերարխիական) եւ այլ կապերն ու

57 «Արարատ», 1915, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 864:

58 «Արարատ», 1915, հունիս, էջ 640, նաեւ **Եղ. Գեղամյան**, նշվ. աշխ., էջ 640:

59 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1915, հուլիսի 3, թ. 142:

60 Տե՛ս «Աշխատանք», Վան, 1915, հունիսի 17, թ. 25-224, էջ 180:

61 Տե՛ս «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918», դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, հրատարակությունը եւ ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2008, էջ 86-87:

հարաբերությունները Էջմիածնի Կաթողիկոսի հետ: Հայոց Կաթողիկոսի տիտղոսն ու աստիճանը համապատասխանեցվում էին Հունական Ուղղափառ Եկեղեցու պատրիարքի տիտղոսին ու աստիճանին: Աղթամարի եւ Սսի կաթողիկոսությունների միաձուլումով երկու պատրիարքությունների հետ Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարքն իրավունք էր ստանում եպիսկոպոսներ ձեռնադրել Թուրքիայում եւ դառնում էր անկախ: Էջմիածնի հետ բոլոր տեսակի կապերի խզումը հետագայում այն հետեւանքն ունեցավ, որ արեւմտահայերը զրկվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու իրավունքից:

Անվիճելի էր Բարձր դռան քաղաքական շահը, վերացնել այն երկակի հարաբերությունները, ըստ որի, Կ.Պոլսի պատրիարքը ենթարկվում էր թուրքական կառավարությանը եւ Ռուսաստանից կախյալ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Օսմանյան այս օրենքը հակասում էր Բեռլինի պայմանագրի դրույթներին (հոդված 62, կետ 4)⁶², ըստ որի, ոչ մի արգելք չէր կարող խանգարել տարբեր համայնքների աստիճանակարգային կազմակերպությունների եւ նրանց հոգեւոր առաջնորդների հարաբերություններին:

РЕЗЮМЕ

Относительная “свобода”, установленная после переворота младотурков в 1908 году и принятия османской конституции, создала новую ситуацию в церковных отношениях Ванской области.

В статье говорится об ограблении Ахтамарского католикосата Армянской Апостольской Церкви, об участии духовных и светских представителей Вана в избрании католикоса 30 октября 1908 года и о движении нового поколения в борьбе против армянской церкви. Рассматривается установление отношений с англиканской церковью и показывается поклонение Св. Копью, которое почиталось среди христиан и мусульман. В исследуемый нами период интересным может быть отношение народа к смерти католикоса Матеоса II Измирляна и анализ осуществленных в Ванской области церковных памятников. Представлена церковная жизнь Ванской области и анализируются потери армянской церкви во время Геноцида армян 1915 года.

62 «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբգ., Երևան, 1972, էջ 128:

SUMMARY

After eritturkish revolution and proclamation of Ottoman constitution, relative freedom was established, which created new situation in the sphere of spiritual relations of Van province.

In the article the following problems are presented: the problem of pillage of Aghtamar patriarchal cathedra; problems connected with the participation of spiritual and secular representatives in patriarchal elections of Van on 1908 October 30; problems concerning to the establishment of relations with English Church; problems connected with Saint Geghard's religious worship which was highly respected among Christians and Moslems in Van; also responses to Mathew 2 Izmirlyan Catholicos's death; problems connected with the examinations of church monuments performed in the province in 1911. There are also discussed church life of the province and damages of Armenian Church during Genocide years.

ՇԱՐԱԿԱՆՔ ՆԱՀԱՏԱԿԱՅՆ ՄԵԾԻ ԵՂԵՌՆԻ

Հայ հոգեւոր երգերը եւ առանձնապէս շարականները յօրինուել են յատկաբար եկեղեցական պաշտամունքային կեանքը կազմակերպելու նպատակով: Ուստի, բնական է, որ այս ստեղծագործութիւնները նիւթի սահմանափակում ունեն, եւ շարականագիր-բանաստեղծի հիմնական առաջադրանքն է օրուայ խորհուրդը ներկայացնել իր կարճ տողերում: Այս է պատճառը, որ շարականները չի կարելի գուգադրել, ասենք, տաղերի կամ գանձերի հետ, որ համեմատաբար աւելի ազատ են: Զուգադրել կարելի է միայն այլ աւանդութեան եկեղեցական պաշտամունքի համարժէք տարրի հետ: Եւ որպէսզի կողմնակալ չլինենք, յիշենք, օրինակ, Լատուիայի մեծագոյն բանաստեղծ Եան Ռայնիսի խօսքերը. «...այդ հոգեւոր հայ պօէզիան մեզ այնքան վառ, գունագեղ ու ֆանտաստիկ է թւում, որ այլ կերպ չենք էլ կարող երեւակայել: Ոչ մի կերպ չի կարելի համեմատել դա մեր հոգեւոր գրականութեան հետ. մերն այնքան է կորցնում, որ խղճում եւ...»¹: Իսկ ինչպէս գրում է եկեղեցական երաժշտութեան Ի. դարի մեծագոյն հետազոտողներից մէկը, հայ հոգեւոր երաժշտութիւնը, դատելով դրա ներկայ վիճակից, միջին դարերում պէտք է օժտուած լինէր բացառիկ գեղեցկութեամբ՝ «որակապէս համեմատելի լինելով միայն րիւզանդականին, եթէ նրանից գերադաս չէր»²:

Մեր հոգեւոր երգի մասին խօսելիս տեղին է յիշել նաեւ բանաստեղծական-երաժշտական արուեստի երեւելիներից մէկի՝ մեծն Զիւանու խօսքերը.

*Մի հատ Եկեղեցի ունինք՝ մերն է գում,
Պարզ է, չունի այնքան քաներ նորամուտ,
Երգերը հմայիչ, մեղմ, հոգէօգում,
Մեր շարականի պէս շարական չկայ:*

Արդէն ԺԳ. դարից սկսեալ՝ շարականագրութիւնն ընթանում է դէպի մայրամուտ: Պատմական այս ժամանակահատուածում այլեւս նոր երգերի ստեղծման կարիք չկար, քանզի եկեղեցական բոլոր տօների համար գրուել էին համապատասխան կանոններ. բնաւ պատահական չէ, որ Հայ Եկեղեցու

¹ Ե. Ռայնիս, Ընտիր երկեր, Երեւան, 1957, էջ 647:

² E. Wellesz, Die armenische Messe und ihre Musik, Jahrbuch der Musik-bibliothek Peters, XXVII, 1920, I.

եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին *իր ժամանակի համար* պիտի գրեր. «Այսքան շարականն ընդունելի է յեկեղեցի եւ աւելին քան զայն՝ խոտելի է եւ անպիտան»³: Ինչ նկատի ունէր գիտնական վարդապետը: Արդեօք շարականների համար կանոն սահմանելով՝ նա բացառում էր նոր շարականների ստեղծումը, այդպիսով նաեւ՝ որեւէ նոր սրբի յիշատակի կամ տօնի ներմուծումը, ինչպես սխալմամբ կարծել են որոշ հետազօտողներ. բնականաբար՝ ոչ:

Ի. դարի հայ բանասիրության մէջ հաճախ է շեշտւում այն միտքը, թէ ԺԵ. դարից սկսած «նոր եկեղեցական երգերի պէտքը չի զգացւում այլեւս հայոց ժամերգության կարգում, որից եւ նորաստեղծ շարականները զրկւում են գործնական կիրառութիւնից»⁴: Պատմական տեսանկիւնից թերեւս ճիշտ է, որ շարականագրութիւնը ԺԵ. դարից այն կողմ նոր զարգացում չի ապրում, սակայն, ասումը սխալ հնչեղութիւն է ստանում, երբ համապատասխանաբար չի պատճառաբանւում, թէ ինչո՞ւ էր պայմանաւորուած դա: Հարցն այն է, որ շարականագրության մէջ նկատուող անկումը չի կարող բացատրուել այն պարզունակ հանգամանքով, որ *պարզապէս* «նոր եկեղեցական երգերի պէտքը չի զգացւում»: Ի՞նչ կարող է նշանակել այս արտայայտութիւնը, այն, որ շարականների հանդէպ հետաքրքրութիւնը նուազե՞ց, թէ՞ Եկեղեցին մասնաւոր խոչընդոտ էր յարուցում ստեղծագործողների համար: Ըստ էության՝ խնդիրն աւելի պարզ է, քան պատկերացրել են մեր բանասերները, որոնց առաջարկած լուծումը ոչ միայն ամբողջականօրէն չի անդրադառնում պատմական հանգամանքներին, այլեւ չի բխում Հայոց Եկեղեցու ստեղծագործ ոգու նկարագրից, նրա որդեգրած մօտեցումներից: Հարցն ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ էր ուշադրութիւն դարձնել նրա ծիսական եւ աստուածաբանական կողմերին, որով հենց պայմանաւորուած էր Շարակնոց ժողովածուի կանոնականացման առաջադրանքը:

Այստեղ պէտք է համապատասխանաբար լուսաբանուեն երկու կարեւոր տեսանկիւններ, որոնք առաջին հայեացքից կարող են իրար հակասական թուալ, սակայն, ըստ էության, ամբողջացնում են միմեանց: Առաջինը վերաբերում է Շարականի կանոնի հաստատմանը, իսկ երկրորդը՝ Եկեղեցում նոր սրբերին նուիրում յիշատակի կամ տօնի սահմանմանը: Բանն այն է, որ յիշեալ բանասերների մտածողության մէջ Շարականի կանոնի հաստատումն ինքնըստինքեան բացառում է նոր շարականների մուտքը համանուն ժողովածու: Ստորեւ ցոյց կտանք, թէ Շարակնոցի կանոնականացումն ինչ ծիսական նպատակ էր հետապնդում, ինչպէս նաեւ, որ այն բնաւ չէր խոչընդոտում նոր շարականների ստեղծմանը: Այլ հարց է, որ պատմական հանգամանքների բե-

3 Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 638:

4 Տե՛ս Մ. Հայրապետեան, Հայ հին եւ միջնադարեան գրականության պատմութիւն, Երեւան, 1994, էջ 250. հմմտ. Մ. Աբեղեան, Երկեր, հտ. Գ., Երեւան, 1968, էջ 541-543:

րումով Հայ Եկեղեցին շուրջ չորս հարիւր տարի գրկուած մնաց այդ հնարաւորութիւնից:

Շարականի կանոնի հաստատում. Յիշեալ բանասէրներն իրենց եզրակացութեան մէջ անտեսում են ԺԵ. դարում Հայոց Եկեղեցու առջեւ ծառացած այն հրամայականը, որ անհրաժեշտութիւն էր առաջացել ծիսական կեանքում՝ եկեղեցական երգեցողութեան մէջ միօրինակութիւն հաստատելու, որին կարելի էր հասնել միայն Շարակնոց ժողովածուի համար կանոն սահմանելով: Գրականագէտ Գր. Յակոբեանն իր «Շարականների ժանրը հայ միջնադարեան գրականութեան մէջ V-XV դարերում» ուսումնասիրութեան մէջ տեղին է նկատում, որ մինչեւ Շարակնոցի կանոնականացումը «մեր պարականոն հին շարականները գրեթէ բոլորն էլ ընդունուած են եղել ժամակարգութեան մէջ եւ գործածուել են մինչեւ ԺԵ. դարը»⁵: Դեռեւս Ի. դարասկզբին Սահակ վարդապետ Ամատունու հետեւեալ դիտարկումն ամբողջացնում է պարականոն շարականների կարգավիճակը ծիսական կեանքում: Ահա թէ ինչ է գրում նա այս իմաստով. «Պարականոն շարականների գործածութիւնը թէ մինչեւ ո՞ր դարն է տեւել մեր Եկեղեցում եւ ապա դադար առել, կամ առանձին ժողովներով է խափանուել, թէ՛ ազգիս հայրապետների մասնաւոր հրամաններով կամ թղթերով, կամ ի՞նչ պատճառով է խափանուել, այս մասին հաստատ ապացոյցներ չունենք եւ ոչինչ ասել չենք կարող. սակայն այս միայն պարզ եւ որոշ յայտնի է, որ գրքիս մէջ զետեղած պարականոն հին շարականները մեր Եկեղեցին ընդունած է եղել եւ գործ է ածել մինչեւ ԺԳ. դարը եւ գուցէ աւելի. իսկ նոր պարականոնների կիրառութիւնն սկսուել է առաւելապէս ԺԳ. դարից»⁶: Ս. Գրիգոր Տաթեւացու հիմնական առաջադրանքն էր բարեկարգել Շարակնոցը, որ ապահովուի միօրինակութիւնը շարականների երգեցողութեան մէջ: Ըստ ամենայնի, մեծ վարդապետը, կանոն սահմանելով, որեւէ նորամուծութիւն վերապահում էր յատուկ եկեղեցական մարմնի կամ ժողովի որոշմանը: Այլ խօսքով՝ Ս. Գրիգոր Տաթեւացու բարեկարգումը (Շարակնոցի) ժամանակի ծիսական պահանջներից էր բխում:

Նոր շարականի ստեղծում. Յիշեալ բանասէրների դիտարկման մէջ բնաւ կարեւորութիւն չի ընծայում այն եկեղեցաբանական դրոյթին, որ Եկեղեցու կենսունակութիւնը սրբերի ծնունդով է պայմանաւորուած: Ս. Գրիգոր Տաթեւացու նման մեծ աստուածաբանը, բնականաբար, անհնար է, որ անտեղեակ լինէր այս վարդապետութեանը, ուստի եւ չէր կարող խնդրին այլ կերպ նայել: Սուրբ Վարդապետը քաջ գիտակցում էր, որ Եկեղեցին մի կառոյց է, որի կենսականութիւնը ենթադրում է յարատեւ հոգեւոր աճ: Այդ ճանապար-

5 Գրիգոր Յակոբեան, «Շարականների ժանրը հայ միջնադարեան գրականութեան մէջ V-XV դարերում», Երեւան, 1980, էջ 15:

6 Սահակ վրդ. Ամատունի, Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ Գ.:

հին մշտապես կարող են հանդես գալ հոգեկիր արք եւ կանայք, որոնց հաւատքի սխրանքն էական դերակատարութիւն է ունենում եկեղեցական կեանքում, դառնում օրինակ եւ ներշնչման աղբիւր հաւատացեալների համար: Նրանց հաւատքի գործն արժանանում է ոգեկոչման, հաստատում է մասնաւոր յիշատակի օր կամ տօն: Ուստի քանի դեռ Եկեղեցին գործում է, այն նոր սրբեր պիտի տայ՝ ի վկայութիւն իր կենդանութեան, իր առաքելութեան:

Այս երկու կարեւոր տեսանկիւնների անտեսումը ոչ միայն արժանին չի մատուցում հարցի ամբողջական ընկալմանն ու մեկնաբանմանը, այլեւ կասկածի տակ է դնում Շարակնոցի բարեկարգման՝ Ս. Գրիգոր Տաթեւացու նախաձեռնութիւնը՝ անտեսելով այն: Ասուածից ելնելով՝ կարող ենք հետեւեալ եզրակացութիւններն անել.

ա. Շարակնոցի կանոնի հաստատումը Եկեղեցու ծիսական կեանքի բարեկարգութիւնից բխող անհրաժեշտութիւն էր:

բ. Կանոնի հաստատումը չէր բացառում հետագայ նոր շարականների ներմուծումը համաձայն ժողովածուի մէջ այն պարզ պատճառով, որ Եկեղեցին միշտ կարող է նոր սրբերի յիշատակ կամ տօն հաստատել:

գ. Եկեղեցում օրացոյցային մակարդակով նոր սրբի յիշատակի կամ տօնի հաստատումը Ամենայն Հայոց Հայրապետի յատուկ տնօրինութեան կամ մասնաւոր եկեղեցական մարմնին՝ եպիսկոպոսաց ժողովին պիտի վերապահուէր:

Վերոյիշեալ դիտարկումներն այն համոզումն են ամրապնդում, որ քանի դեռ Եկեղեցին գործում է այս աշխարհում, մշտապես նոր եկեղեցական երգերի կարիք զգացուելու է, քանի որ յընթացս ժամանակի նոր սրբեր է հռչակելու՝ ի վկայութիւն աշխարհի: Հայ Եկեղեցու կեանքում նմանատիպ մի իրադարձութիւն է Յեղասպանութեան ժամանակ յանուն հաւատքի եւ հայրենեաց նահատակուածների վկայութիւնը:

Այս է պատճառը, որ 1990 թուականին Անթիլիասում լոյս է տեսնում Զարեհ եպիսկոպոս Ազնաւորեանի «*Շարական արքիպեան նահատակաց*»-ը, որի միաւորներն են՝ *ԴԿ. Օրհնութիւն, ԱԿ. դրձ. Հարցն, Գործք, ԱԿ. դրձ. Մեծացուցէ, ԱԿ. դրձ. Ողորմեա, ԱԿ. դրձ. Տէր յերկնից եւ ԴԶ. դրձ. Մանկունք* շարականները: Սա կարեւոր քայլ էր Մեծ Եղեռնի նահատակների սրբադասման ճանապարհին, նաեւ դժուար, որովհետեւ ամենեւին դիւրին չէ Ի. դարում ստեղծագործել նախնեաց լեզուով, առաւել եւս՝ բանաստեղծութիւն գրել:

2014 թ. դեկտեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով ստեղծուեց խմբագրական մի յանձնախումբ, որ պիտի քննէր, իսկ անհրաժեշտութեան դէպքում նաեւ խմբագրական միջամտութեամբ վերջնական տեսքի բերէր Զարեհ Սրբազանի ստեղծագործութիւնը՝ համապատասխանեցնելով «մեր նախնի շարականաց վսեմական ոճին»:

Չէինք կամենայ մանրամասնել յանձնախմբի քրտնաջան աշխատանքները՝ բաւարար համարելով յիշել միայն, որ մեր տեղեկութեամբ անգամ վերնագրում բովանդակային իմաստով փոփոխութիւն կատարելու կարիք է զգացուել, որովհետեւ ջարդերը չեն սահմանափակուել միայն ապրիլ ամսով եւ 1915 թուականով: Կարելոր է նաեւ, որ յանձնախմբի անդամների հետ հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը յստակ ցուցում էր տուել՝ շարականները պետք է հնչեն մարտական ոգով՝ յաղթանակի յոյս եւ հաւատ ներշնչելով հաւատացեալներին: Մինչդեռ մարտական ոգով երգուելու համար միայն երաժշտական կողմն ապահովելը բաւարար չէ. բանաստեղծութիւնը եւս պետք է գրուած լինի մարտական ոգով: Այս եւ նմանատիպ բազում հանգամանքներ ի նկատ առնելով՝ յանձնախմբի անդամներից մէկը՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ Գէորգ Մաղոյեանը, խմբագրական աշխատանքներին զուգահեռ՝ փորձեց ամբողջովին վերափոխել երգերը: Առաջինն ուշադրութիւն դարձուեց երգերի հանգաւորմանը: Արուեցին նաեւ կարելոր յաւելումներ, եւ կարելի է ասել, որ ստեղծուեց մի գործ, որ բաւականին արժէքաւոր է աստուածաբանական, բանասիրական, գրական-գեղարուեստական տեսանկիւնից, որ թերեւս գերակայ է այս պարագային⁷: Որպէս համադրութիւն՝ բերենք Հարցն շարականի տները՝

Մաղոյեան	Ազնաւորեան
<i>Որ հաստեցեր ի յաշխարհի գերկիր Հայկեան</i>	<i>Որ հաստաւեցեր ըզՀայաստան</i>
<i>Լինել օրբան, նաւահանգիստ լաստին Նոյեան</i>	<i>Լինել օրբան հանուր մարդկութեան</i>
<i>Այսօր պահեա՛ գերկիրն մեր՝ ի շար հողմոց</i>	<i>Այսօր անդէն Քեզ սրբեցեր, Հայր Երկնաւոր,</i>
<i>Նոր ժողովուրդ՝ փառաբանիչ Քումդ գործոց</i>	<i>Նոր ժողովուրդ՝ փառաբանիչ Քումբդ անուան</i>
<i>Որհնէ զՀայրդ զՔառաստ հարցն մերոց:</i>	<i>Որհնեմք զՔեզ, Աստուած հարցըն մերոց:</i>

Ներկայացուած տողերից կարելի է նկատել, որ այստեղ գործ ունենք ոչ թէ մակերեսային միջամտութեան, այլ բոլորովին նոր շարադրանքի հետ: Սակայն ամենաբնախնդիր խմբագրական աշխատանքով անգամ անհնար էր ապահովել բանաստեղծութեան մարտական ոգին, որ, իրապէս, խիստ կարելոր է անհրաժեշտ էր, ուստի Գէորգ Մաղոյեանը ձեռնամուխ եղաւ բոլորովին նոր երգեր յօրինելու գործին: Այսպէս ստեղծուեցին Մեծացուսցէ, Ողորմեա, Համբարձի եւ Ճաշու շարականները: Եւ հիմա, կարծես, մեր առջեւ կեանք են առնում շարականի պատկերները.

7 Նկատենք, որ սա գրաբար բանաստեղծութիւն գրելու Գէորգ Մաղոյեանի առաջին փորձը չէ. տե՛ն «Չօն դպրանոցին Վազգէնեան». «Էջմիածին», 2010, ԺԱ., էջ 123 (հեղինակակից՝ Գէորգ արդլ. Մաղոյեան):

*Այսօր մանկունք դառնան զինուոր, յառնեն մարտի,
Նոր պատերազմ էւ նոր հանդէս Աւարայրի,
Սարդարապատ կոփեաց զանսարտ զինուորս իւր,
Եւ յԱսարան ոչ ապրեաց զանկոչքն հիւր,
Ամուր երկիրըն Առձախոյ մերժեաց անուր.
Բիւր պատերազմ էւ յաղթանակ հաւատոց քիւր.
Օգնեա՛ մեզ, Տէ՛ր, զի մի՛ եղէց ըզգործ Բո գուր:*

Հաշուի է առնուել նաեւ օտար ընթերցողի հանգամանքը: Այս է պատճառը, որ պարտադիր հնչեցում է Նոյեան տապանի պատմությունը կամ Աբգար թագաւորի դէպքը, որ մեր Եկեղեցին աւանդաբար հայ արքայի հետ է կապում.

*Առաքեցեր պատկերդ սուրբ առ մեր արքայն,
Զոյգ աշակերտս յդեցեր ի տուն Հայկեան...*

Եւ անկախ նրանից, թէ Ճեմարանի փոխտեսուչ Գեորգ Մադոյեանի բանաստեղծություններից որեւէ հատուած ժամանակի ընթացքում նպատակաշարմար կնկատուի կիրառութեան համար, տեղին ենք համարում, որ դրանք հրատարակուեն եւ հասու լինեն զալիք սերունդներին՝ նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ Զարեհ արք. Ազնաւորեանի տարբերակը երեք տարուայ ժամանակաւոր կիրառութեան համար է որդեգրուել: Սոյն եւ նմանատիպ այլ հրատարակություններ ոչ միայն օգտակար կլինեն ապրիլեան նահատակների համապատասխան շարականի վերջնական տարբերակի ստեղծման համար, այլեւ էական նպաստ կբերեն Հայոց Եկեղեցում շարականագրութեան հրաշագան աւանդոյթների վերականգման համար:

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԵԱՆ

Վերատեսուչ Մայր Աթոռի հոգևոր-կրթական բարձրագոյն հաստատութեանց
Տեսուչ Գեորգեան հոգևոր ճեմարանի

ԳԷՈՐԳ ՄԱՐՈՅԵԱՆ

ՇԱՐԱԿԱՆՔ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ ՄԵԾԻ ԵՂԵՌՆԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Այսօր սարսեալ հրաշանան թամբըն երկնայինը
Եւ զարհուրեալ զսիւի հարին երկրային ազինք.
Տեսեալ ըզՀին Եդեմ ի յասպարէզն հանդիսի
Դրժոխաբորբ փչմամբ հըրոյն ախտին Կայենի.
ԸզՊատարագ անգին եւ նոր՝ նորոյս Հաբէլի
Արիւն որոյ յարաժամ առ Տէր բարձրաձայնի.
«Տէր սուրբ, արդար եւ ճըշմարիտ յամենայնի
Մինչ յե՛րբ ոչ խնդրես զիրաւունս դատաստանի
Անմեղական արեան մերոյ ի բնակչաց աշխարհի»:

Ընտրեցին ըզհատումն շրթանց, լեզուաց,
Քան զրկիլ ի խօսից բընակաց Հայկազանց,
Առաւել ընտրեցին ո՛չ ունել խօսարան
Եւ լըռիկ բարբառով մերձենալ առ Արքայն,
Քան մերժել ի շրթանց զայբութեն Մեսրոպեան՝
Ըզլեզու ո՛չ խառնեալ յաշտարակ բաբելեան.
«Տէր սուրբ, արդար եւ ճըշմարիտ յամենայնի
Մինչ յե՛րբ ոչ խնդրես զիրաւունս դատաստանի
Անմեղական արեան մերոյ ի բնակչաց աշխարհի»:

ՀԱՐՅՆ

Որ հաստեցեր ի յաշխարհի զերկիր Հայկեան
Լինել օրրան, նաւահանգիստ լաստին Նոյեան
Այսօր պահեա՛ զերկիրն մեր՝ ի չար հողմոց
Նոր ժողովուրդ՝ փառաբանիչ Քումդ գործոց.
Օրինէ՛ զՀայրդ գթառատ հարցն մերոց:

Առաքեցեր պատկերդ սուրբ առ մեր արքայն,
 Զոյգ աշակերտս յղեցեր ի տուն Հայկեան,
 Որ խաչեցար եւ յաղթեցեր ըզթըշնամին,
 Չարչարակից եղեւ Քեզ ազգըն թորգոմին.
 Օրհնենք զՀայր, օրհնենք զՈրդի եւ զՍուրբ Հոգի:

Որ կամեցար ի մարդկանէ կազմել տաճար,
 Հօր եւ Որդոյ միշտ համագոյ Հոգիդ անճառ,
 Անձեռագործ զվերակերտ Դու կազմեցեր
 Զանմեղ զոհսն յանապատի առոգեցեր.
 Օրհնենք զՀայր, օրհնենք զՈրդի եւ զՍուրբ Հոգի:

ԳՈՐԾՔ

Եկայք, որդիք Հօրն Լուսոյ
 Հայաստանեայց Եկեղեցւոյ,
 Ի յիշատակ սուրբ վկայից
 Միշտ օրհնեցէք զՀայր երկնից,
 Որ գոսա փոխեաց յԻր յարկս
 Ի հրեշտակաց աննինչ կարգս.
 Ամենայն գործք, միշտ օրհնեցէք
 Եւ առաւել բարձր արարէք:

Որք մանկունքդ էք հաւատոյ
 Եւ հետեւորդք Հօրն Որդոյ
 Ի յիշատակ սուրբ վկայից
 Միշտ գովեցէք զԱնձն Բանին
 Քաջամարտկաց Զօրագլխին
 Եւ մարդկութեան Կենարարին.
 Ամենայն գործք, միշտ օրհնեցէք
 Եւ առաւել բարձր արարէք:

Չիք առաւել ի մարդկութեան
 Քան զպատմութիւն վկայութեան,
 Երբ վրկայեալք համագգաբար՝
 Թէ՛ մեծ, թէ՛ փոքրը, թէ՛ տըկար.
 Սակայն Հոգին աստուածային
 Ուղղեաց զգնացս երկնային.
 Ամենայն գործք, միշտ օրհնեցէք
 Եւ առաւել բարձր արարէք:

ՄԵԾԱՅՈՒՄՅԷ

Կամօքն անճառ եւ անքնին
Դու մայր եղեր անբաւ Բանին.
Արդ աղաչեմք՝ լե՛ր բարեխօս
Առ ծնեալն ի քէն Քրիստոս:

Սափոր ոսկի դու կենարար
Եւ յանիծիցն փրկարար.
Արդ աղաչեմք՝ լե՛ր բարեխօս
Առ ծնեալն ի քէն Քրիստոս:

Նահատակքն Հայոց անթիւ
Կատարեցան արի սրտիւ
Եւ բարեխօս առ Տէր եղեն,
Պաշտպան ազգին եւ ապաւէն:

Արդ ձայնակի՛ց լեր այս սրբոց
Ձեռամբ չարին վկայելոց,
Եւ աղաչեմք՝ լե՛ր բարեխօս
Առ ծնեալն ի քէն Քրիստոս:

ՈՂՈՐՄԵԱ՛

Ի տաճարին Միածնաւչ
Երգեմք ըզփառըս մեք անվերջ
Գոչեմք՝ Ամէն, Ալելուիա,
Ամէն, Ամէն, Ալելուիա.
Կեցո՛, փրրկեա՛ եւ ողորմեա՛:

Այսօր ծագեաց լոյսն անանց,
Եւ յիշատակ նահատակաց
Պայծառանայ յեկեղեցիս
Ի փառս սրբոցն եւ ազգիս.
Կեցո՛, փրրկեա՛ եւ ողորմեա՛:

Այսօր երկիրըն հայրենի
Ըզփառս սրբոց տօնախմբի
Հաւատք, որ ետ միակն Տէր
Յոյս փրրկութեան եւ յաւէտ սէր.
Կեցո՛, փրրկեա՛ եւ ողորմեա՛:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՅ

Եկայք, որդիք Հօրն Լուսոյ

(Տէն ԳՈՐԾՔ)

ՄԱՆԿՈՒՆՔ

Եկայք, մանկունք՝ որդիք քաջաց նահատակաց,
 Կալցուք նոցա՝ առ ի պարծանս հայրենեաց
 Պինդ փարեցուք սրբազնագոյն աւանդութեանց,
 Վասն որոց եղին ըզկեանս իւրեանց.
 Եւ վարեցուք մարտի սոցա օրինակաւ
 Եւ կտակօք՝ զոր մեզ ետուն իբր ի գրաւ.
 Կեցո՛ւ զմեզ, Տէ՛ր, ամենայաղթ Քոյդ Նըշանաւ:

Այսօր մանկունք դառնան զինուոր, յառնեն մարտի,
 Նոր պատերազմ եւ նոր հանդէս Աւարայրի,
 Սարդարապատ կոփեաց զանպարտ զինուորս իւր,
 Եւ յԱպարան ոչ ապրեաց զանկոչըն հիւր,
 Ամուր երկիրըն Առձախոյ մերժեաց անուր.
 Բիւր պատերազմ եւ յաղթանակ հաւատոց բիւր.
 Օգնեա՛ մեզ, Տէ՛ր, զի մի՛ եղէց ըզգործ Քո գուր:

ՀԱՄԲԱՐՁԻ

Որ զարհուրեն երկրայինք,
 Պատժապարտեն երկնայինք,
 Եւ մարդկութիւնըն համայն
 Դատապարտէ միաձայն
 'ւ վասն զոհիցըն անմեղ
 Գայ Դատաւորն ահեղ.
 Զի մի՛ երբեք կըրկընի
 Ոճիրն ի մէջ աշխարհի:

Գազանացեալ թըշնամի
 Է «քաջ» ընդդէմ անզէնի,
 Երբ ամբոխիւ ընդդէմ մէկի,
 'ւ չիք զինուոր ինչ կորովի,
 Այնժամ սպանի 'ւ յօշոտի
 Ի գենօցիդն եղեռնի.
 Բայց Դատաւորն բոլորի
 Արդէն նստի յատենի:

Այժմ յառնեն 'նորէն չարին
 Քաջամարտիկքն ազգային[ք],
 Եւ ըզպըսակ յաղթութեան
 Այսօր շնորհի հայութեան,
 Եւ Դատաւորն ամէնի
 Արդէն դատէ յատենի.
 Զի մի՛ երբեք կըրկընի
 Ոճիրն ի մէջ աշխարհի:

ՃԱՇՈՒ

Աստուած անեղ եւ անասիման,
 Անսկիզբ, անվերջ եւ յաիտեան,
 Քոյդ անսասան իշխանութեամբ
 Լէր ապաւէն Դու Հայութեան:

Բանդ Որդի, որ մարմնացար
 Եւ վասն մեր ի խաչ ելար
 Չարչարանօք Քո մեզ փրկեա՛,
 Ժառանգութեանդ արժան արա՛:

Նոյն եւ նման Հօր եւ Որդոյ
 Հոգիդ անճառ եւ համագոյ
 Ի թշնամեաց մեզ ապրեցո՛ր
 Եւ գթութեամբըդ մեզ կեցո՛ր:

РЕЗЮМЕ

В статье епископа Геворга Сарояна «Шараканы мученикам Геноцида» рассматриваются некоторые вопросы гимнографии армянских шараканов. Поскольку Армянская Апостольская Церковь некоторое время не канонизировала святых и не объявляла о введении новых церковных праздников, письменный жанр армянских шараканов не получил дальнейшего развития. Ныне, учитывая канонизацию мучеников Геноцида армян, возникает востребованность восздании новых шараканов. Автор статьи обращается к шаракану епископа Зарега Азнаворяна, посвященный мученикам Геноцида и созданный еще в 1989 году. Во введении епископ Геворг Сароян обращается к «Шараканам мученикам Геноцида» Геворка Мадояна, проректора Духовной Академии «Геворгян», написанный по подобию лучших образцов (гимнографии) армянских шараканов.

SUMMARY

In the article, “Hymns for the Martyrs of the Armenian Genocide” by Bishop Gevorg Saroyan, numerous hymnological issues are discussed such as why has their been a pause in this form of literary genre. The article also mentions that at the present moment the canonization of the Armenian Genocide victims to the sainthood has made it a necessity to create a new hymn. The author gives a great importance to the work of Bishop Zareh Aznavoryan which was published in 1990 under the title “Hymn for the Martyrs of April.” In his introduction Bishop Gevorg Saroyan has suggested to put into circulation Vice Dean Gevorg Madoyan’s version of “Hymns for the Martyrs of the Armenian Genocide,” which has been written with the best examples of Armenian hymnal versifications and rhymes.

ԿԱՐԵՆ ՄԱԹԵԻՈՍՅԱՆ պատմական գիտ. դոկտոր

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայոց Մեծ եղեռնի ժամանակ սկսվել ու դրանից հետո կես դարից ավելի Արեւմտյան Հայաստանում շարունակվել է մշակութային եղեռնը: Իր իսկ բնօրրանում հայ բնակչությանը բնաջնջելուց հետո թուրքական կառավարությունը տասնամյակներ շարունակ ծրագրված կերպով իրականացրել է հայկական մշակութային հետքերի վերացման քաղաքականություն: Գլխավոր թիրախ են դարձել հայ ինքնության հատկանշական արտահայտությունը հանդիսացող քրիստոնեական մշակույթի կոթողները, վանքերն ու եկեղեցիները, որոնց մեծագույն մասը հիմնահատակ ավերվել է: Բնականաբար, ոչնչացել են նաեւ այդ կառույցների պատերին, խաչքարերի ու տապանաքարերի վրա եղած հազարավոր հայերեն արձանագրությունները: Հարկ է նշել, որ վիմագրական այդ ահռելի նյութի մի մասը նախկինում հրատարակված է եղել, որով մասամբ սփոփվում է բնօրինակների կորստյան ցավը, սակայն, անկասկած, հսկայական են նաեւ անհիշատակ կորուստները:

2012-2014 թթ. Արեւմտյան Հայաստան կատարած մեր երեք այցերի ընթացքում հնարավոր եղավ տեսնել եւ լուսանկարել մի շարք վիմական արձանագրություններ, որոնցից անտիպները ներկայացնում ենք ստորեւ՝ համապատասխան ծանոթագրություններով: Հրապարակվում են արձանագրություններ կամ դրանցից հատվածներ Անիի շրջակա Հռոմոսի, Արջո Առճի, Խծկոնքի վանքերից, Բագարանից, Աղթամարից, Մանազկերտից, Օղջին գյուղից, Մշո Սուրբ Կարապետ վանքից եւ Մուշ քաղաքից: Վիմագրերի համառոտագրությունները բացել ենք, սոված տառերը լրացրել կոր՝ (), իսկ մեր վերականգնած տառերը նշել ուղիղ փակագծերում []:

ՀՈՌՈՄՈՍ: Անիի մերձակա Բագրատունի թագավորների դամբարանավայր հանդիսացող այս նշանավոր վանքի արձանագրությունները մի շարք հրատարակություններ են ունեցել¹: 2013 թ. մեր այցելության ժամանակ հա-

1 Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 146-168, Ա. Մխիթարեանց, Պատմութիւն Հռոմոսին վանաց ի Ծիրակ, Վաղարշապատ, 1870 էջ 15-53, հաջորդ հրատարակիչները հիմնականում կրկնել են այս հեղինակների հրատարակածը:

շողվեց գտնել հրատարակություններում բացակայող եւս երեք արձանագրություն:

(Ա.) Ս. Գետրգ եկեղեցու հարավային պատին՝ դռնից աջ, ներքուստ, գրված ներկով՝ ծեփի վրա (նկ. 1)²:

[ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԱՅՍ ԻՄ [ԳԻՐ Է]

...ՈՐ ԵՏՈՒ ԶԻՄ ԳԱՆՁԱ[ԳԻՆ]

[Հ]ՈՌՈՄՈՍԻ Ի ՄԵԴ...

[Հ]ՈԳՈՅՆ ԵՒ ԳՐԵ....:

Այս եկեղեցու պատերին առկա է եւս երկու ներկագիր արձանագրություն: Պահպանված հատվածի բովանդակությունը վկայում է, որ ինչ-որ մեկը վանքին նվիրել է իր գանձագին այգին: Յավոք, նվիրատուի անունը չի պահպանվել, սակայն, գրության սկզբում նրա ներկայանալու հանդիսավոր ոճը հուշում է, որ վերջինս հասարակության վերնախավի ներկայացուցիչ է եղել:

(Բ.) Ս. Գետրգ եկեղեցու արեւմտյան պատի լուսամտուի շրջանակի ներսում, արտաքուստ, փոքրիկ կամարակի վերելում ու երկու կողմում (նկ. 2):

ԵՄ՝ ՅԱ(Ի)ՀԱՆԷՍ ՎԱՐԴ

ԱՊԵՏ ԷԿԵՂ

ԷՑՈ

ՅՍ:

Դժվար է որոշել արձանագրության ժամանակը: Հռոմոսի վանքում Հովհաննես անունով վանահայր հիշվում է Հովհաննես Սմբատ թագավորի 1038 թ. վիմագրում³: Վերջինիս փորագրման տեղը բավականին բարձր է, ինչը, թերեւս, հնարավոր էր իրականացնել եկեղեցու կառուցման ժամանակ, որը կատարվել է ԺԱ. դարի սկզբին՝ մինչեւ եկեղեցին կառուցող Գագիկ Ա. Բագրատունու (989-1017)⁴ մահը: Նկատենք նաեւ, որ մենք գործ ունենք ոչ պաշտոնական արձանագրության հետ, այսինքն՝ գրերը խիստ անկանոն են եւ առավել նման՝ կառուցող վարպետի թողած հիշատակության:

(Գ.) Ս. Հովհաննես եկեղեցու ժամատան հյուսիսային կողմում՝ հիմքի մոտ, կիսով չափ հողի մեջ թաղված քարի վրա, բավականաչափ եղծված, 3 տող (նկ. 3): Երկրորդ տողում ընթեռնելի է հետեւյալը.

2 Այս եւ սույն հոդվածում ներկայացված մի քանի այլ արձանագրությունների վերծանմանը մասնակցել է վիմագրագետ, պատմ. գիտ. թեկնածու Արսեն Հարությունյանը:

3 Տե՛ս Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 146:

4 Գագիկ Ա. Բագրատունու մահվան թվականը հայագիտության մեջ ընդունված է 1020-ը, սակայն, ըստ աղբյուրագիտական նոր տվյալների, թագավորը մահացել է 1017 թվականին (տե՛ս «Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրություն», աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 182, 389-390):

...ՈՐԴԻ... [Ն]ՈՐՈԳԵԱ ԶՀՈԳԻ ԽՈՐԻՇԱՀ[Ի]:

«Խորիշահ» անունը հիշատակվում է Հռոմոսի եւս երկու վիմագրում՝ 1234 թ., որտեղ հիշվում է որպես Զմրուխտ Խաթունի մայրը (կին՝ Քրդի), եւ 1245 թ. մեկ այլ արձանագրության մեջ, որտեղ այդ անվամբ հանդես եկողը ունի Իշխանի կինն է⁵:

ԽԾԿՈՆՔ: Ժ.ԺԳ. դդ. այս վանական նշանավոր համալիրի վիմագրերը հրատարակել է Ն. Սարգիսյանը⁶, որոշ արձանագրություններ էլ լրացրել է Կարապետ Յովհաննանյանը (Կրպէ)⁷:

(Դ.) Վանքի հնագույն կառույց համարվող Ս. Կարապետ եկեղեցին այժմ ավերված է: Պահպանված միակ հյուսիսարեւելյան կիսականգուն պատի անկյունամասում՝ քանդակագարդ երիզի տակ, ներքուստ, առկա է արձանագրության հատված (նկ. 4):

... ԳՆԵՑԻ ԶԳ...
...Ի ՀԱՍԻՑ ԱՐ... ԵՏՍ...
...ԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ...
Ի ԱԶԱՏԵՑԻ, ՈՐ Ի ԴԱՇ[Տ]...

Կ. Յովհաննանյանն այս եկեղեցու արձանագրություններից մեկի գտնվելու տեղի առնչությամբ նշում է. «Սուրբ Կարապետի ձախ անկեան վերին մասում, քանդակուն գոռնիզի ներքեւ փորագրուած է 11 տող, որ իսպառ փշրուած է եւ տեղ տեղ գրեթէ միանգամայն անվերծանելի է»⁸: Արձանագրության՝ զարդերիզի կամ քիվի (գոռնիզ) տակ գտնվելու հանգամանքը ենթադրել է տալիս, որ վերը բերված հատվածն այդ արձանագրությունից պիտի լինի: Սակայն, ցավոք, հեղինակի վերծանած ու ներկայացրած մասի եւ մեր բերած հատվածի միջեւ համընկնումներ չկան: Ամեն դեպքում, վկայաբերում ենք Կ. Յովհաննանյանի հրատարակած արձանագրությունը, մանավանդ, որ այն 1005 (ըստ Ն. Սարգիսյանի՝ 1006)⁹ թվականից է եւ պատկանում է Անիի Կատրանիդե¹⁰ թագուհուն:

5 Տե՛ս Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 149-150, 153:

6 Տե՛ս անդ, էջ 208-214:

7 Տե՛ս Կրպէ, Խծկօնք, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1895, հմր. I, էջ 41-48:

8 Անդ, էջ 42:

9 Ամենայն հավանականությամբ, այս արձանագրությունն է նկատի ունեցել Ն. Սարգիսյանը՝ գրելով, թե այն գտնվում է եկեղեցու հարավային կողմում՝ «կես մի եղծեալ եւ կես մի խափանեալ... սակայն թուական մի երեւեր անդ՝ ՆԾԵ» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 212):

10 Հայ պատմիչներն այս թագուհու անունը գրում են Կատրանմիդե ձեւով, բայց Անիի Մայր տաճարի արձանագրության մեջ եւ այստեղ Կատրանիդե է:

«Ճանուն Ա(ստուծո)յ... նեգե... յն այգին
որ Մարտի(րոսի) այգի... այլ ուր ուր
Հաջի... եւ ետու սուրբ եկեղեց(ւոյս)... ի ձեռն Ա(ստուա)ծա
պատիւ Տն. Անանիայի առաջնորդ...
Հրամանաւ բարեպաշտ եւ Ա(ստուա)ծա(սէր) Թագուհոյ Կատրանիդէ
... սուրբ ուխտս ի Թագաւորութեանն Գագկա Շահայնշահի
ի: ՆԾԴ: (1005) Թուականիս... ի յիշատակ Հոգոյ զբարեկենդանին
զուրբաթն... եւ յամենայն եկեղեցիս տայ իմ անուն կատարել:
Արդ՝ եթե ոք աւտարաց հակառակ կա եւ զայն այգին յայս եկե-
ղեցոյս աւտարացուցանէ ի մեծաց կամ ի փոքունց, նզովեալ լիցի յԱ(ստու-
ծո)յ եւ յամենայն սրբոց եւ Յուդայի անիծ(իցն) պարտական եղիցի. Հաստա-
տուն է կամաւքն Ա(ստուծո)յ»¹¹:

Հնարավոր է, որ արձանագրության այժմյան պահպանված հատվածը եղել է առաջին տողերի վերջամասում, որը հրատարակիչը չի կարողացել վերձանել: Այս երկու տեքստերը միմյանց կապող հանգամանք կարելի է համարել ԺԱ. դ. սկզբին այդ շրջանի հոգևոր առաջնորդ Անանիա եպիսկոպոսի հիշատակությունը, որը, սովորաբար, անվանվում է «Արշարունեաց եպիսկոպոս», եւ հնարավոր է, որ պահպանված հատվածում նույնպես նա է հիշատակվում՝ «[ԱՐՇԱՐՈՒՆ]ԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ...»:

ԱՐՋՈ ԱՌԻՃ: Անիի մերձակա այս վանքն այժմ իսպառ ավերվել է: Եթե Ներսես Սարգիսանցի՝ ժամանակին հրատարակած Հռոմոսի ու Խծկոնքի արձանագրությունների զգալի մասն այս կամ այն չափով պահպանվել է, ապա Արջո Առիճի հրատարակված ինը մեծ ու միջին չափի արձանագրություններին¹² ոչ մեկի հետքն անգամ չկա:

(Ե.) Մեր այցելության ժամանակ հնարավոր եղավ միայն մեկ համառոտագրված անուն գտնել վանքի նախկին պարսպի մուտքի մոտ՝ կոտրված խաչաքանդակի վրա (նկ. 5):

Ք(ՐԻՍՏՈ)Ս:

ԲԱԳԱՐԱՆ: Բագրատունյաց առաջին թագավոր Աշոտ Ա-ի (885-890)¹³ նստոց Բագարանում մի քանի եկեղեցի կար, որոնց պատերին եղել են նաեւ բազմաթիվ վիմական արձանագրություններ: Միջնադարյան եկեղեցիներն այժմ հիմնահատակ ավերված են: Սակայն, բնակավայրի արեւմտյան

¹¹ Կրպէ, Խծկոնք, էջ 43:

¹² Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 190-192:

¹³ Աշոտ Ա-ին նվիրված նոր ուսումնասիրության մեջ Ա. Եղիազարյանը, հենվելով Թովմա Արծրունու վկայության վրա, առաջ է քաշում այն տեսակետը, որ Աշոտի գահակալումը տեղի է ունեցել 887 թ. (Ա. Եղիազարյան, Աշոտ Ա Բագրատունի թագավոր Հայոց, Երևան, 2014, էջ 66-68):

կողմում՝ ձորի մեջ գտնվող ժայռերի վրա, պահպանվել է երկու արձանագրություն, բարեբախտաբար, երկուսն էլ թվակիր:

(Զ.) Վիմագրերից մեկը ժայռին փորագրված խաչի ստորին թեւի երկու կողմում է՝ համառոտագրված, իսկ թվագիրը՝ եռաստիճան պատվանդանին. (նկ. 6):

Ս(ՈՒՐ)Բ ԳՐ(ԻԳՈՐ)

ԶԴ (1255):

(Է.) Երկրորդ արձանագրությունն ավելի ընդարձակ է, դարձյալ ժայռի վրա, երեք փորագիր խաչերի ձախ կողմում (նկ. 7):

ԹՎ(ԻՆ) ԶԻԷ (1278)

ԵՍ՝ ԴԱԻԻԹ ԱԲԵՂԱ

Յ, ԿԱՆԿՆԵՑԻ Զ

ԽԱԶՍ Ի ՎԵՐԱՅ Հ

ԱԻՐ ԻՄՈՅ:

Հիշյալ արձանագրություններն արժեքավոր են հատկապես այն պատճառով, որ մինչեւ այժմ Բագարանից հայտնի թվակիր արձանագրությունները եղել են 1233-1235 թվականներից (պատկանում են Մխիթար վանահորը): Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Ղ. Ալիշանը ենթադրել է, որ, գուցե, այդ թվականներից հետո՝ «յետ սակաւ ամաց աւերեցաւ տեղին կամ ի սասանութենէ երկրին, կամ յարշավանաց Թաթարաց»¹⁴: Վկայակոչված 1255 եւ 1278 թվակիր արձանագրությունները, ինչպես նաեւ երկրորդ վիմագրում Դավիթ աբեղայի հիշատակությունը, հիմնովին հերքում են վերոնշյալ ենթադրությունը Բագարանի՝ ԺԳ. դարի երկրորդ կեսին ամայանալու վերաբերյալ¹⁵:

ԱՂԹ-ԱՄԱՐ: Գագիկ Արծրունի թագավորի՝ Ժ. դարի սկզբին կղզում կառուցած մայրաքաղաքը, հետագա դարերում լինելով նաեւ կաթողիկոսական նստավայր (Աղթամարի կաթողիկոսություն), հարուստ է հուշարձաններով, խաչքարերով, տապանաքարերով, բնականաբար, նաեւ արձանագրություններ:

14 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 69: Ալիշանի տեսակետն անցել է նաեւ Ս. Էփրիկյանի «Բնաշխարհիկ բառարան», որտեղ 1235 թ. արձանագրության մասին նշումից հետո ասվում է. «Որովհետեւ այս թուականէն վերջ ուրիշ արձանագրեր չկան կր կարծուի, թե քիչ տարի վերջ սկսեր է ամայանալ եւ աւերիլ Բագարան, կամ մեծ երկրաշարժէ մը եւ կամ թաթարաց արշավանքների» (Ս. Էփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1905, էջ 357):

15 Այս փաստը հաստատվում է նաեւ Կյուրեղ վարդապետ Սրապյանի 1878 թ. կազմած (1970 թ. հրատարակված) տեղեկագրի տվյալներով, որը վկայաբերում է Բագարանի եկեղեցիներից մեկի վրա եղած ՉԺ. (1261) թվականի վիմագրի հատված, նաեւ նշում երկու «մահարձան» (հավանաբար, խաչքար նկատի ունի) ՉԲ. (1253) թվականով (Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1970, թ. 2, էջ 103-104):

րով: Դրանցից գլխավորները՝ հավաքված տարբեր աղբյուրներից, իր գրքում ի մի է բերել Համագասպ Ոսկյանը¹⁶: Սակայն, պետք է նկատել, որ նախորդ հրատարակիչները անուշադրության են մատնել Ս. Խաչ եկեղեցու պատերին եղած, ուխտավորների, երբեմն նաև՝ տեղի միաբանների թողած բազմաթիվ հիշատակագրությունները: Դրանք կարելի է տեսնել կառույցի արեւմտյան, հյուսիսային որմերին, իսկ առավել հաճախ հարավային պատի՝ դռնից արեւմուտք ընկած հատվածում, որտեղ ուխտավորների թողած խաչաքանդակներին կից արձանագրությունների թիվը մի քանի տասնյակի է հասնում: Որոշ արձանագրությունների մոտ եղած թվականները ցույց են տալիս, որ այդ վիմագրերը ստեղծվել են ԺԵ. դարից սկսած:

2012 թ. կղզում կարճ ժամանակով գտնվելու ընթացքում մենք լուսանկարեցինք այդ արձանագրությունների մի մասը, իսկ վերադարձին Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպությունում (RAA) հետաքրքրվեցինք, թե արդյո՞ք իրենք ունեն ավելի շատ լուսանկարներ: Պարզվեց, որ ոչ միայն ունեն, այլև առաջիկայում պատրաստվում են հրատարակել ամբողջը: Ավելալելով շուտով տեսնել այդ հրատարակությունը, այնուամենայնիվ, ստորեւ ուզում ենք ներկայացնել այդ հիշատակագրություններից երկու թվակիր նմուշ:

(Ը.) Ս. Խաչ եկեղեցու արեւելյան պատին՝ երեք մեծ եւ մեկ փոքր խաչաքանդակների ստորին մասում (թվականը խաչերի արանքում) պահպանվել է հետեւյալը (նկ. 8):

ՊԻՋ (1377)

ԶՊԱՏՈՒԱԿԱՆ ԿՐԱԻՆԱ

ԻՈՐՔՍ ԶՍՏԵՓԱՆՈՍ ԵՒ Զ

ԹՈՒՄԱ ԵՒ ԶԾՆԱԻՂՍ ՆՈ

ՑԱ ԵՒ ԶՅՈՒՍԼՈՒՆ ՀԱԻ

ԱՏԱԻՈՐ ՅԻՇԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս:

Բարեբախտաբար, ձեռագրերի հիշատակարաններում պահպանված տեղեկությունները թույլ են տալիս պարզել, թե ովքեր են արձանագրության մեջ հիշատակված անձինք: Աղթամարում 1371 թ. ընդօրինակած ճաշոցի հիշատակարանում Զաքարիա գրիչը տեղի կաթողիկոսի անունից հետո նշում է վանքի ինը միաբանի անուն, որոնցից երկրորդն ու երրորդն են՝ «գՍտեփանոս, գԹումայ...»¹⁷: Իսկ 1389-ին Ստեփանոսը (Աղթամարի միայնակյաց) ճամբընտիր է ստացել եւ հիշատակարանում նշում է ծնողներին (Մկրտիչ եւ

16 Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա., Վիեննա, 1940, էջ 100-133:

17 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 495:

Խուանդ) եւ երկու քույրերին՝ որոնցից առաջինին կոչում է Ուսլուն-Մէլիք¹⁸: Կարծում ենք, որ արձանագրության մեջ հիշվում են հենց այս մարդիկ:

Առանձնահատուկ է Ուսլունի պարագան, նախ այն պատճառով, որ ԺԵ. դարից հայ իրականության մեջ հիշատակվող այս կանացի անձնանունը (թուրքերենից թարգմանաբար նշանակում է խելոք, խելացի)¹⁹, այստեղ առաջին անգամ է հանդիպում Յուսլուն ձեւով: Բացի այդ, հետաքրքրական է վերջինիս հիշատակությունը որպէս «հաւատաւոր»: Հայկազյան բառարանում այդ բառը բացատրված է նաեւ որպէս հոմանիշ միանձնուհի բառին՝ «Կուսան, օրիորդ կամ կին հաւատով եւ հաւատարմութեամբ ուխտադիր Աստուծոյ, միանձնուհի»²⁰: Վարդան Հացունին, անդրադառնալով հայ միանձնուհիների հանդերձներին, իր գրքի համապատասխան ենթագլուխը խորագրել է «Հաւատաւորք», իսկ տեքստի մեջ կիրառել «*հաւատաւոր*» եւ «*կուսան*» եզրերը²¹: Փաստորեն, վերոնշյալ արձանագրությունը վկայում է, որ ԺԴ. դարում Աղթամարում (որը վաղը էր, ոչ թե փակ մենաստան) նաեւ միանձնուհի է եղել:

(Թ.) Արեւելյան պատին, խառն գրով (նկ. 9):

ՅԻՇԵՅ(Ե)-Ք Ի
Բ(Ա)ՐԻ ԱՍԿ(Ա)ՆԴ(Ա)ՐԻ
ՈՐԴԻ ՄԼՆ(Ա)ԶՆ
ԹՎ(ԻՆ) ՌԾԲ (1603):

Հաշվի առնելով այն, որ գրիչը բառամիջի «ա» տառը սղելու սկզբունքով է առաջնորդվում, կարծում ենք, որ վերջին անունը պետք է «Մլնագ» կարդալ: Առաջին հայացքից թվում է, թե անվան վերջին տառից առաջ մեկ այլ տառ է եղել, սակայն վերին մասում պահպանված մասնիկը ցույց է տալիս, որ ցանկացել են հենց Ն փորագրել, բայց քարի՝ այդ հատվածի վնասվածության պատճառով, այն մի փոքր հեռու են գրել: «Մլնագ» անուն Հրաչյա Աճառյանի անձնանունների բառարանում չի հիշատակվում: Հնարավոր է, որ այստեղ նշված Մլնագը Մալնագար անվան²² համառոտումն է: Այդ դեպքում արձանագրության մեջ այն պետք է վերականգնել՝ «Մ(Ա)ԼՆ(Ա)Զ(ԱՐ)Ն»: Արձանագրության մեջ հետաքրքրական ու ինքնատիպ է նաեւ «յիշեցէք ի բարի» հիշատակարանային ձեւակերպումը:

ՄԱՆԱԶԳԵՐՏ: Բնակավայրի բոլոր հայկական եկեղեցիներն ու գերեզմանոցները հիմնովին ավերվել են:

18 Տե՛ս անդ, էջ 579:

19 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երեւան, 1948, էջ 205:

20 «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837, հ. Բ., էջ 78:

21 Տե՛ս Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 434-442:

22 Մալնագար անունը հիշատակարաններում հանդիպում է ԺԷ. դարում, հնագույն վկայությունը 1622 թվականից է («պարոն Մալնագար»): «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ», կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. Բ., Երեւան, 1978, էջ 73:

(Ժ.) Բերդի ներսում այժմ դրված է գրեթե բոլոր նիստերն արձանագիր սուրանկյուն օրորոցաձեռն տապանաքար, որն ինչպես տեղում մեզ ասացին, գերեզմանոցից է այստեղ բերվել: Կարելի է թվագրել ԺԶ.-ԺԷ. դդ.: Յավոք, մեր կարճատեւ այցելության ժամանակ (2014 թ.) արձանագրության միայն մի հատվածն էր ընթերցման եւ լուսանկարման համար նպաստավոր լուսավորությամբ (վերին աջակողմյան նիստը), որի բովանդակությունը հետեւյալն է (նկ. 10).

...և (40): ԹՎԻՍ ԵՄ՝ Վ[ԱՐ]ԴԻԿՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ Ի
[ԲԱ]ՐԷԽԱԻՍՈՒԹԻԻՆ ԻՆԶ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՑ ԻՄՈՑ Ի...

Քարի նեղ նիստերից մեկին, որ, հավանաբար, արեւմտյան կողմում է եղել, կիսաեղծ խաչաքանդակ կար, իսկ հակառակ կողմում՝ արձանագրություն:

ԾՆՈՂ
ՈՐՈՑ ԶՎ
ԱՐԴԻԿՍ ԵՒ Զ
[Է]ՐԻԿՍ Ի[ԻՐ]:

ՕՂԶԻՆ (Օբշույան): Մանագկերտից շուրջ 7 կմ արեւմուտք գտնվող գյուղ է, որի անունը, ըստ ավանդության, առաջացել է «ողջույն» բառից²³: Ունեցել է եկեղեցի, որն այժմ գոյություն չունի:

(ԺԱ) Գյուղի հարավ-արեւելյան մասում՝ ժայռերի վրա, առկա են փորագիր խաչեր, որոնց մոտ պահպանվել է կարճառոտ արձանագրություն (նկ. 11):

ԿԱՆԿՆԵՑԱԻ
ԽԱԶՍ:

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ (ՄՇՈ): Գրիգոր Լուսավորչի ձեռքով հիմնված հայկական քրիստոնեական առաջին եկեղեցիներից մեկը: Յեղասպանությունից հետո խոշոր վանական համալիրն ամբողջովին կանգուն էր: Հետագայում թուրքական իշխանություններն այստեղ են բնակեցնում մի քրդական ցեղ եւ ցուցում տալիս, որ շինությունների քարերով իրենց համար տներ կառուցեն: Այդպես կարճ ժամանակում վանական համալիրն ամբողջովին վերանում է: Այժմ որոշ տեղերում պահպանվել են նախկին կառույցների հիմքերն ու մի քանի կիսավեր պատ:

²³ Տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 477:

Հարուստ պատմություն ունեցող վանքում եղել են նաև մեծ թվով արձանագրություններ, որոնց մի մասը հրատարակված են կամ հիշատակված գրականության մեջ, մասնավորապես՝ Համագաստ Ոսկյանի գրքում²⁴։ Զանի որ վանքի քարերով կառուցվել են շրջակայքում գտնվող քրդերի տները, հետեւաբար դրանց պատերին կարելի է տեսնել վանքի կառույցներին պատկանած քանդակագարդ բեկորներ, ինչպես նաև մի շարք վիմագրեր։

(ԺԲ.) Վանքի արեւելյան կողմի տներից մեկի պատի մեջ ագուցված է թեք դրված խաչքարի ստորին մասը, որի վրա պահպանվել է ամբողջական արձանագրությունը (նկ. 12)։

Ի ԹՎ(ԻՆ) ԶԿԷ (1518), ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ ՎԱՐ(ԴԱ)Պ(Ե)ՏՍ ԵՒ ԽՈՃ
Ա ԽԱՐԻՓՇԱՆ, ՈՐ ԿԱԿՆԵՑԱՔ ԶԽԱԶՍ Ի ՓՐԿՈՒ
ԹԻ(ԻՆ) ՀՈԳՈ ԻՄՈՅ ԵՒ ՀԵՐԱՊԵՏԻՆ, ՈՐ ԻՄ ՀՈԳՈ ԵՂ
ԲԱՅՐ Է, ԵՒ Ի ԵՂԲԱՐՆ ԻՄՈՅ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊ(ԻՍ)Կ
(ՈՊՈ)ՍԻՆ, ԱՐԱՊՇԻՆ, ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՔԱՐԻՄԻՆ, ԳԱՐԻԽ(Ա)Ն[ԻՆ]։

Արձանագրությունը գրված է Գրիգոր վարդապետի անունից։ Թեև անունից հետո նշվում է ՎԱՐՊՏՍ, որ կարելի է ընթերցել նաև իբրեւ «վարպետ», սակայն ավելի հավանական է «ՎԱՐ(ԴԱ)Պ(Ե)ՏՍ» վերականգնումը։

Կարապետ վարդապետ Լուսարարյանը Ս. Կարապետի վանահայրերի գավազանագրքում վկայաբերում է 1509 թվականի մի հիշատակարանի հատված, երեք վանահայրերի անուններով։ Ձեռագրի գրիչը խնդրում է հիշել «առաջնորդացն Ս. Կարապետի վանուց՝ Տ. Մելքիսեդեկի, Տ. Յովսեփայ, Տ. Ստեփաննոսի, քաջ ռաբունապետին Տ. Գրիգորի...»²⁵։ Հնարավոր է, որ այստեղ նշված Ստեփանոսն ու Գրիգոր ռաբունապետը ներկայացված արձանագրության մեջ հիշված Ստեփանոս եպիսկոպոսն ու Գրիգոր վարդապետն են։

(ԺԳ.) Վանքի հյուսիսային կողմում գտնվող բնակելի տան պատի մեջ ագուցված ամբողջական մարմարյա խաչքար (նկ. 13)։ Խաչաթեւերի վերին անկյուններում՝

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ

Արմավազարդի ներքին անկյուններում՝

Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս

Ներքեւում՝

24 Տե՛ս Հ. Ոսկեան, Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 134-244։

25 Կ. Լուսարարեան, Գաւազանգիրք յառաջնորդութիւնք վանահարց ուխտիս Ս. Կարապետի Տարօնոյ, Երուսաղեմ, 1912, էջ 79-80։

[ՍԲ] ԽԱԶՍ ԿԱՆԳՆ(Ե)Ց(Ա)Ի Բ(Ա)ՐԵԽՈՍ
ԱՌ Ա(ՍՏՈՒԱ)Ծ, Վ(Ա)Ս(Ն) ԱԲՐԱՀԱՄ Վ(Ա)ՐԴ(Ա)
ՊԵՏԻՆ Ե(Ի) ԾՆ(Ո)Ղ(Ա)Ց ՆՈՐԻՆ.
Յ(Ի)Շ(Ե)Ց(Ե)Ք Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս, Թ(Ո)Ի(ԻՆ) ՌՃԾԵ (1706):

Խաչքարը կանգնեցվել է որպես բարեխոս՝ Աբրահամ վարդապետի ու նրա ծնողների համար: Հետաքրքրական է Հ. Ոսկյանի հայտնած տեղեկությունն այն մասին, որ գլխավոր եկեղեցու բեմի աջ կողմը «զարդարուած է մարմարեայ խաչքարերով», որոնցից երեքի արձանագրությունները նա վկայաբերում է: Դրանցից մեկը հետեւյալն է. «Կանգնեցաւ խաչս բարեխաւս առ Աստուած վասն փրկութեան հոգւոյ եւ մեղաց թողութեան Աբրահամ վարդապետին, սպասատրին Սրբոյ Կարապետին, եւ ծնողացն՝ Սարգսին եւ Շահումին: Թուին ՌՃԿԷ»²⁶: 1718 թվականով այս խաչքարը, կարծում ենք, նույն Աբրահամ վարդապետին է վերաբերում, բայց վիմագիրն ավելի հարուստ բովանդակություն ունի: Ամենայն հավանականությամբ այս վարդապետը հետագայում Հայոց կաթողիկոս դարձած Աբրահամ Բ. Մշեցին (կամ Խոշաբեցին) է, որն աշակերտել է Վարդան Բաղիշեցուն եւ Գրիգոր Շղթայակիր պատրիարքին (վերջինիս քրոջ որդին էր): Աբրահամը վարդապետական աստիճան է ստացել 1703 թ., հաջորդ տարվանից հաստատվել Մշո Ս. Կարապետ վանքում, 1717-1730 թթ. եղել է վանահայր, իսկ 1730-1734 թթ.՝ Ամենայն Հայոց կաթողիկոս²⁷:

(ԺԴ.) Վանքի հյուսիսային կողմում՝ ագուցված բնակելի տան պատին (նկ. 14):

ԽԱԶՍ ՅԻ
Շ(Ա)Տ(Ա)Կ Է ՄԷՄ
[Ա]Ր ԱԻԱՔԻՆ
[ԵԻ] Հ(ԱՆ)ԳՈՒՑ(ԵԱ)Լ
[ԿՈ]Ղ(Ա)ԿՑ(Ի)Ն Ե(Ի) ԵՂԲ(ԱԻ)Ր ԱՐ...

Արձանագրությունը ձոնված է ճարտարապետ (կամ շինարար վարպետ) Ավագի ու նրա կնոջ հիշատակին:

Ս. Կարապետ վանքի շրջակա տների պատերին կան նաեւ արձանագրությամբ քարերի այլ փոքր բեկորներ, որոնց բովանդակությունը չի հասկացվում, ուստի այստեղ չենք ներկայացնում:

Մուշ քաղաք: Մուշի բոլոր հայկական եկեղեցիները քանդված են եւ դրանց տեղում կամ շրջակայքում հայկական վիմագրական նյութ գտնել չհաջողվեց: Միակ պահպանված նշանակալից շինությունը, որը զբոսավարները քաղաք

26 Հ. Ոսկեան, Տարօն-Տուրուբերանի վանքերը, էջ 138:

27 Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, Խ. Բ., Մ. Էջմիածին, 2001, էջ 3321-3324: Մ. Օրմանյանի գրքում Կաթողիկոսի ծնողների անունները չեն նշված: Դրանք չհաջողվեց գտնել նաեւ մեզ հասանելի գրականության մեջ:

այցելող հայկական խմբերին ներկայացնում են իբրեւ Ս. Մարինե եկեղեցի, իրականում աշխարհիկ կառույց է (հավանաբար թեմական առաջնորդարանի շենքը)²⁸:

(ԺԵ.) Զարմանալի է, բայց փաստ, որ հայերեն հակիրճ արձանագրություն է պահպանվել հին քաղաքի կենտրոնական թաղամասում գտնվող Ալադին Բեյի մզկիթի (1745 թ.) մինարեի վրա (նկ. 15):

**ԵՐԱՆՈՍ ՄԵ-
ՄԱՐ ՌՃՂԷ (1748)
ԹԻ:**

Արձանագրությունը թեպետ կարճառոտ է, սակայն ամբողջական տեղեկատվություն է պարունակում՝ անուն, մասնագիտություն եւ թվական: Երանոսը (Իրենիոս անվան հայկական ձեռափոխում) ԺԴ-ԺԵ. դարերից ավելի հաճախ հայ իրականության մեջ հանդիպող անձնանուն է: «Մեմար»ը՝ մեյմար՝ նշանակում է ճարտարապետ (բառն արաբական ծագում ունի, անցել է պարսկերենին՝ me'mār 'architect', եւ թուրքերենին՝ mimar 'architect')²⁹:

«Մեյմար» անվանումը հաճախ է հանդիպում հայկական արձանագրություններում: Օրինակ, Վանի մոտ գտնվող Վարազավանքում 1648 թ. մի գավիթ է կառուցել Մայմար Տիրատուրը (ԺԹ. դարում այն գործածվել է որպես եկեղեցի Ս. Գեորգ անունով): Ռշտունյաց գավառի (Վանա լճից հարավ) Էրեմերա Ս. Աստվածածին վանքի պարիսպը 1663-ին կառուցել է Գրիգոր մայմարը, որի անունը պահպանվել է արձանագրության մեջ. «Շինեցաւ պարիսպս ձեռամբս մեմար Գրիգորին»³⁰: Ս. Էջմիածնի զանգակատունն ու Մուղնու եկեղեցին կառուցած ճարտարապետ, ծնունդով Վասպուրականցի Սահակ Հիզանցո՝ Մուղնի գյուղի գերեզմանոցում պահպանված տապանագրում (1667 թ.) նա կոչվում է՝ «ՄԵՅՄԱՐ ՊԵՏ»³¹, թերեւս, ճարտարապետների կամ շինարար վարպետների պետ իմաստով: Ինչպես վերելում տեսանք, Մուշի Ս. Կարապետ վանքի վիմագրերից մեկում էլ հիշվում է մեյմար Ավագը:

Այսպիսով՝ ըստ վերը բերված արձանագրության՝ հայ ճարտարապետ Երանոսը Մուշի Ալադին Բեյի մզկիթի մինարեն կառուցել է 1748 թ. եւ համապատասխան վիմագիր թողել մայրենի լեզվով: Նշելի է նաեւ, որ կառույցը զարդարված է գեղաքանդակ գոտիներով ու կամարներով:

28 Ուղղանկյունաձև կիսավեր այս շինությունը եկեղեցիներին հատուկ արեւելք-արեւմուտք առանցքի փոխարեն հյուսիս-հարավ դիրքով է, չունի խորան, ճակատը եկեղեցական շինությունների ոճով չէ եւ այլն:

29 Lambton, Persian vocabulary, Cambridge, 1961, էջ 154, 197:

30 Ս. Բարխուդարյան, Միջնադարյա հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1963, էջ 111, 113:

31 Ս. Մաղումյան, Երբ եւ ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը, Էջմիածին, 1976, Ե., էջ 30, Կ. Մաթեոսյան, Մուղնու Մուրք Գեորգ վանքը, Երեւան, 2000, էջ 43:

РЕЗЮМЕ

В 2012-2014 гг., во время трех посещений автора в Западную Армению удалось исследовать ряд ранее неизданных эпиграфических надписей, которые представляются в этой статье, с соответствующими комментариями. Представлены надписи из монастырей региона Ани - Оромос, Арджо-Арич, Хцконк, из Багарана (1255 и 1278 гг.), Ахтамара (1377 и 1603 гг.), Маназкерта, Огджина, из монастыря Св. Карапета в близи Муша (1518 и 1706 гг.) и из города Муш (1748 г.). Некоторые надписи содержат интересную информацию. Например, надпись в Муше свидетельствует о том что армянский архитектор (меймар) Еранос построил минарет мечети Аладин Бей.

SUMMARY

During three trips to Western Armenia in 2012-2014 the author researched a series of lithographic inscriptions listed below in this article with relevant comments. Lithographic inscriptions are presented from the monasteries in the region Ani: Horomos, Arjo-Arich, Khtskonk, from Bagaran (1255, 1278), Aghtamar (1377, 1603), Manzikert, Oghjin, Mush Saint Karapet monastery (1518, 1706) as well as from the city of Mush (1748). Part of the inscriptions provides interesting insights. For example, the inscription found in Mush reads that Armenian architect (mimar) Yeranos built the minaret of Aladdin Bey mosque.

СОДЕРЖАНИЕ

Вместо редакционной статьи - 24 Апреля - Священная Чаша крови армянских мучеников	5
--	---

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ. БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ

Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II по случаю открытия Ереванского центра Всеобщего Армянского Благотворительного Союза	9
Завет Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II в связи с праздником Св. Воскрешения Господа нашего Иисуса Христа	12
Поздравительное послание Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II в связи с праздником Благовещения	16
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II по случаю повторного открытия часовни св. Григория Просветителя в Неаполе и освящения хачкара, посвященного столетию Геноцида армян	17
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II во время литургии в Соборе Святого Петра в Риме в связи со столетием Геноцида армян	20
Слово приветствия и благословения Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II на глобальном форуме “Против преступления геноцида”, проводимом в связи со столетием Геноцида армян	23
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II на заседании подсекции глобального форума “Против преступления геноцида”, проводимом в связи со столетием Геноцида армян	26
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II при благословении земельного участка под строительство церкви в Ереванском городском пантеоне	29
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II при проведении бдения	31
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II при проведении чина канонизации – причисления к лику святых жертв и мучеников Геноцида армян	33
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II по случаю Дня поминовения мучеников Геноцида армян	36

РЕЛИГИЕВЕДЕНИЕ

Проповедь епископа Мушега Бабаяна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина при проведении чина Затемнения	38
Проповедь монаха Минаса Ахвердяна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина на литургии Воскресенья о Добром Пастыре	42

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АМАЯК АРУТЮНЯН - Насилие над детьми в годы Геноцида армян	44
АРМИНЕ ЕПРИКЯН - Деятельность Главной распорядительной комиссии братской помощи в годы Первой мировой войны	56
МАРИНЕ БЕЖАНЯН - Самооборона Мараша 1920 г. и армянские легионеры	68
МАГДА ДЖАНПОЛАДЯН - Тема Геноцида в русской поэзии XX века	76
ТАДЕВОС ТОНОЯН - Песня как высшая степень метафоризации и символизации речи	93

СООБЩЕНИЯ

ЭДИК МИНАСЯН - Героическая самооборона Васпуракана 1915 г.	101
АВЕТИС АРУТЮНЯН - Эпизоды из духовно-религиозной и церковной жизни Вана	116
ЕПИСКОП ГЕВОРГ САРОЯН, ГЕВОРГ МАДОЯН - Шараканы (духовные стихис), посвященные мученикам Геноцида армян	130
КАРЕН МАТЕВОСЯН - Уцелевшие лапидарные надписи из Западной Армении	142

CONTENTS

Instead of editorial - April 24 is the chalice of the Armenian martyrs' blood	5
--	---

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the inauguration of AGBU Yerevan center	9
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Resurrection of our Lord and Savior Jesus Christ	12
Message of congratulation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Annunciation	16
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the re-opening of St. Gregory the Illuminator Chapel of Naples and of the blessing of the cross-stone dedicated to the 100 th anniversary of the Armenian Genocide	17
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 100 th anniversary of the Armenian Genocide during the Divine Liturgy celebrated at St. Peter's Basilica of Rome	20
Greetings and message of blessings of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the opening of "Against the Crime of Genocide" global forum organized on the occasion of the 100 th anniversary of the Armenian Genocide	23
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the session of the subsection of "Against the Crime of Genocide" global forum organized on the occasion of the 100 th anniversary of the Armenian Genocide	26
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the blessing of the Church ground at the city pantheon of Yerevan	29
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the vigil service	31
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the canonization ceremony of the Armenian Genocide martyrs	33
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the commemoration day of the Armenian Genocide	36

RELIGIOUS STUDIES

Sermon delivered by Bishop Moushegh Babayan at the Passion service celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin.....	38
Sermon delivered by Rev. Fr. Minas Hakhverdyan during the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin on Red Sunday	42

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

HMAYAK HAROUTIUNYAN - Violence against Armenian children during the years of the Armenian Genocide	44
ARMINE EPRIKYAN - Activity of the central committee of “Brother Help” during the years of the First World War	56
MARINE BEZHANYAN - Self-defense of Marash in 1920 and Armenian legionnaires	68
MAGDA JANPOLADYAN - Genocide theme in the Russian poetry of the 20 th century	76
THADEOS TONoyAN - Song - the supreme degree of speech formation and symbolization	93

ESSAYS

EDIK MINASYAN - Struggle of Vaspourakan in 1915	101
AVETIS HAROUTIUNYAN - Episodes from the spiritual-religious and church life of Van	116
BISHOP GEVORK SAROYAN, GEVORK MADOYAN - Hymns dedicated to the Armenian Genocide martyrs	130
KAREN MATHEVOSYAN - Lithographic pieces from Western Armenia	142

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրականի փոխարեն - Ապրիլի 24-ը հայ նահապաղաց արեան սկիհն է	5
--	---

ՎՅՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՆՈՒԹԵՄՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ՀԲԸՄ երեսնայան կենտրոնի բացման առիթով	9
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պարզամը Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության փոնի առիթով	12
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձն Ավետման փոնի առիթով	16
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Նեապոլի Ս. Գրիգոր Լուսավորիչ մապրան վերաբացման եւ Հայոց ցեղասպանության 100-ամյա փարելիցին ձոնված խաչքարի օրհնության առիթով	17
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-ամյա փարելիցի առիթով Հռոմի Սուրբ Պետրոսի փաճարում մապրուցված Պապարագի ընթացքում	20
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ փարելիցի առիթով կազմակերպված «Ընդդեմ Յեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումին	23
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ փարելիցի առիթով կազմակերպված «Ընդդեմ Յեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի ենթաբաժնի նիսրի ընթացքում	26
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Երեանի քաղաքային պանթեոնում եկեղեցու հողօրհնեքի առիթով	29
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը հսկման արարողության ժամանակ	31
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության նահապաղակների սրբադասման արարողության ընթացքին	33
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության հիշապակի օրվա առիթով	36

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

S. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Խավարման կարգի ընթացքում	38
S. Մինաս աբեղա Նախկերդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Կարմիր կիրակիին մաքուրցված Ս. Պապարագին	42

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՄԱՅԱԿ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Մեծ Եղեռնի փարիներին հայ մանուկների նկարմամբ կիրառված բռնությունները	44
ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ - Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի գործունեությունն Առաջին աշխարհամարտի փարիներին	56
ՄԱՐԻՆԵ ԲԵԺԱՆՅԱՆ - Մարաշի 1920 թվականի ինքնապաշտպանությունը եւ հայ լեզեռնականները	68
ՄԱԳՂԱ ԶԱՆՓՈՒԿՅԱՆ - Յեղասպանության թեման Ի. դարի ռուս պոեզիայում	76
ԹԱԳԵԲՈՍ ՏՈՆՈՅԱՆ - Երգը՝ խոսքի կերպավորման եւ խորհրդանշայնացման բարձրագույն աստիճան	93

ՆԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ - Վասպուրականի հերոսամարտը 1915 թվականին	101
ԱՎԵՏԻՍ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Դրվագներ Վանի նահանգի հոգևոր-կրոնական եւ եկեղեցական կյանքից	116
ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆ, ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ - Շարականք նահապակացն Մեծի Եղեռնի	130
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՖՈՍՅԱՆ - Վիմագրական նշխարներ Արեւմտյան Նայասարանից	142

Նրադարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համարարան)
գիտությունների երաշխադրութեամբ եւ որոշմամբ

ԽՄԲԳԲՈՒԵԱՆ ՆԱՅԷՆ՝
ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Բ. ՎԱԳԱՐՇԱԿԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ-ՆԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԼԻԷՍԻ ԽՄԲԳԲՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review «Etchmiadzin».

Web կայքի հասցեն՝ www.etchmiadzine.am
Էլ. փոստ՝ mayratoriamsagir@gmail.com **կամ** etchmiadzinamsagir@gmail.com
Ամսագրի արխիւն ամբողջական կերպով՝ www.tert.nla.am

Նեո. (+374-10) 517-296/174

Ստորագրում է տպագրութեան՝ 22. 05. 2015 թ.

Չափեր՝ 70x100 1/16: Ծաւալը՝ 10 փպ. մամուլ: Թիւրքը՝ օֆսէթ: Տպաքանակը՝ 400:



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱԿԱՆ